ԴԱՎԻԹ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՍԻՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ



Միշտ էլ ամենամեծ ցավը փոքրիկ է նա, ում ամենաշատն ենք սիրում:
Միշտ էլ այդ ցավը փորձում ենք անտեսել. չէ՞ որ սիրում ենք...
Միշտ էլ չի պատկվում, որովհետև ցավը սրտում հանգիստ ապրել անհնար է.
պիտի դուրս գա, որ խաղաղ շնչես:

Գոհար Նավասարդյան

ՍԻՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

(վիպակ)

Գյումրի
Հեղինակային հրատարակություն
2021

ՀՏԴ 821.19-31 Նավասարդյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Ն 380

Նավասարդյան Գոհար
Ն 380 Սիրելուց հետո ... : Վիպակ / Գ. Նավասարդյան.- Գյումրի.:
Հեղ. հրատ., 2021.-168 էջ:

Այն, որ սիրահարվածությունից հետո գալիս է սերը, բոլորը գիտեն, բայց թե ինչն է հաջորդում սիրուն, շատերի համար է հանելուկ: Ինչպես հեղինակի նախորդ երկու ստեղծագործությունները՝ «Ինձ պիոններ չնվիրես», «Հուշացած ակնթարթներ», այնպես էլ այս վիպակը սիրո գեղեցիկ պատմություն է, բայց եթե նախորդ գրքերում սիրահարվածության երանավետ շրջանը կամ արդեն հեռացումից հետո ապրված զգացողություններն են, ապա այս գրքում նկարագրվում է, թե ինչ է լինում սիրելուց հետո: Գիրքը սովորեցնում է խնամել սերը, չհամարել այն ուղղակի պարտականություն կամ բեռ, որովհետև այս զգացմունքը մեռնում է, երբ հարաբերություններում վաղուց կյանք չկա և, մյուս կողմից, կարող է շունչ առնել, եթե ինքներս ուզենանք... Վերջինս վիպակում հնարավոր է դառնում միայն կարոտի և կապվածության վախը հաղթահարելու շնորհիվ, որը պիտի բերեր որոշման՝ սիրած մարդուց հեռանալու: Վիպակում ցույց է տրված, որ հենց այդ որոշումը, ինչպես նաև պատահականությունները կամ գուցե ճակատագիրը իրենց հերթին գիտակցել են տալիս, որ յուրաքանչյուր հաջորդ րոպեն կարող է և չսկսվել, ինչը սթափեցնում է մարդուն՝ ստիպելով կյանքին այլ աչքերով նայել:

թվագրել է 1915.ին Կայֆ

ՀՏԴ 821.19-31 Նավասարդյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-0-3879-7

© Նավասարդյան Գ., 2021

Գրադարանը, որ տարվա այս եղանակին սովորաբար լի էր լինում ընթերցողներով, տարօրինակ կերպով գրեթե դատարկ էր: Հին ու նոր գրքերի բույրերը խառնվել էին իրար: Օդն ասես լի էր գրքերի սիրված տողերով, ու զգացվում էր հայտնի ստեղծագործությունների հերոսների շունչը: Գրքերը, պահարաններում շարված, սպասում էին իրենց ընթերցողներին: Ինչ խոսք, դրանց մեծամասնությունը երբեք գրադարակներում երկար չէր մնում, բայց կային նաև այնպիսիները, որոնց հազվադեպ էին ընթերցողի ձեռքեր դիպչում: Դրանց բույրին փոշու ծանր հոտն էլ էր գումարվել, ու դրանք բացելիս և ամուր փակելիս փոշու մի տեսանելի ամպիկ էր դուրս պրծնում գրքից: Այս սենյակին հատուկ լռությունը ժամանակ առ ժամանակ միայն գրքերի էջերը թերթվելիս էր խախտվում: Եվ սենյակն այնքան ընդարձակ ու բարձր էր, որ ամեն մի էջի շրջվելու ձայնն օդում արձագանքվում էր:

Ընթերցասրահում ընդամենը երկու ընթերցող կար: Պատուհանի մոտ դրված սեղաններից մեկի մոտ մի աղջիկ էր նստած: Կարդացած գիրքն ամբողջովին կլանել էր նրան: Կարդում էր լարված, հաճախ նկատելի արագությամբ էջերը թերթելով, մյուս էջում գրվածը վայրկյան առաջ շուտ իմանալու ցանկությամբ: Շատերը մտածում են, որ հապճեպ ընթերցված գիրքը նստվածք չի թողնում ու որոշ ժամանակ անց կարդացածից շատ քիչ բան են հիշում, բայց պետք է փաստել նաև, որ հետաքրքիր ու ձգող ստեղծագործություններն են ընթերցողներն ուզում հնարավորինս արագ կարդալ, իսկ տպավորությունները շուտ խամրել չեն կարող: Այս օրիորդն ամեն մի բառը կլանելով ու մեծ ոգևորվածությամբ էր կարդում՝ հաճախ ժամացույցին նայելով: Ամենայն հավանականությամբ շտապում էր, չէր ուզում ուշանալ, բայց և ուզում էր ինչքան հնարավոր է շատ կարդալ: Միևնույն ժամանակ նաև վախենում էր, որ կարող է գրքով տարվել ու չնկատել, թե րոպեներն ինչպես են անցնում: Դրա համար էլ անհանգիստ էր ու ամեն անգամ ժամացույցին նայելուց հետո շունչ էր քաշում, որ կարող է մի փոքր ևս կարդալ:

Աղջկանից մի քանի սեղան այն կողմ մի երիտասարդ էր նստած: Բժշկական ինչ-որ գիրք էր թերթում, բայց նկատելի էր, որ ոչ մի էջի մի քանի վայրկյանից ավել չէր նայում: Կամ գրքում եղած տեղեկությունը նրան ծանոթ էր, ու թերթում էր՝ զուտ նորություն գտնելու համար, կամ ուղղակի ժամանակն առաջ տալ էր պետք: Ակնհայտ երևում էր, որ

կենտրոնացած չէ գրքի վրա: Մեկ պատուհանից դուրս էր նայում, մեկ՝ գրապահարաններին, մեկ էլ՝ իրենից քիչ հեռու նստած աղջկան՝ զուտ գրքից բացի այլ ուղղությամբ նայելու համար:

Ընթերցասրահում հեռախոսի զանգի ձայն լսվեց ու անմիջապես անջատվեց: Վայրկյաններ անց հնչեց ևս մեկը, որը նորից կիսատ մնաց: Երրորդ զանգի ժամանակ աղջիկը վերցրեց հեռախոսն ու շշնջաց.

– Հնարավո՞ր է՝ վաղը տեսնվենք:

Ըստ երևույթին, ասացին, որ հնարավոր չէ:

– Լավ, այդ դեպքում մի ժամից եկեք,– կամաց պատասխանեց օրիորդն ու անջատեց հեռախոսը:

Ապա զայրացած գլուխը տարուբերելով՝ փակեց գիրքը, արագ վերցրեց պայուսակն ու բաճկոնը և քայլերն ուղղեց դեպի ելքը: Անցավ երիտասարդի սեղանի կողքով, որն ակամայից նայեց իր հետևից: Աղջիկը մի քանի քայլ գնաց առաջ, ու ձեռքից ինչ-որ բան ընկավ գետնին: Քանի որ երիտասարդը տարված չէր ընթերցանությամբ, միանգամից նկատեց դա, վեր կացավ, մոտեցավ ընկած իրին ու վերցրեց. թևնոց էր՝ չափազանց նուրբ, տերևների ոճավորմամբ:

«Հաստատ չնկատեց, պիտի վերադարձնեմ նրան»,– մտածեց երիտասարդը, գիրքը վերցրեց, հանձնեց ու դուրս եկավ գրադարանից: Շագանակագույն վերարկուով աղջիկն արդեն փողոցն էր անցնում: Տղան քայլերն արագացրեց, հատկապես երբ տեսավ, որ աղջիկը մոտեցավ կանգառին: Ամեն վայրկյան կարող էր երթուղային նստել, ու ինքն այլևս չէր կարողանա թևնոցը հետ վերադարձնել: Մի երթուղային մոտեցավ կանգառին, վերջին մի քանի մետրը երիտասարդը վազեց: Հասավ անծանոթուհուն հենց այն ժամանակ, երբ վերջինիս ոտքն արդեն ավտոբուսի աստիճանին էր: Երիտասարդն աղջկա թևից բռնեց: Օրիորդը շփոթված շրջվեց, տղան էլ շփոթվեց:

– Կներե՛ք, ուրիշ տարբերակ չունեի ձեզ կանգնեցնելու: Սա պիտի ձեզ տայի,– շնչակտուր ասաց երիտասարդն ու ձեռքի ափը բացած առաջ մեկնեց:

Աղջիկն առանց երթուղայինի աստիճաններից իջնելու տեսավ իր թևնոցն ու զարմացավ:

– Գրադարանում ընկավ գետնին, տեսա ու վերցրի,– ավելացրեց տղան ու նայեց օրիորդի դեմքին, նկատեց նրա խոշոր շագանակագույն

աչքերը, որոնք այնքա՛ն ներդաշնակ էին նույն գույնի մազերի ու վերարկուի հետ:

Անծանոթուհին իր սառը մատներով զգուշությամբ վերցրեց թևնոցը, շնորհակալություն հայտնեց ու մի անգամ էլ ժպտաց: Երիտասարդը նորից նրա աչքերին նայեց, որովհետև, որպես կանոն, նոր մարդու հետ ծանոթանալիս միշտ նախ աչքերին էր նայում: Նկատեց, որ աղջիկը հենց աչքերով ժպտաց... Տղան էլ ժպտաց:

Երթուղայինի դռները փակվեցին: Տղան կանգառում մնաց մենակ: Անիվներն առաջ շարժվեցին, ու երիտասարդը զգաց, որ անծանոթ գրքասերի մատներն այնքան սառն էին, որ իր տաք ափի մեջ դեռ զգալ էին տալիս իրենց շունչը:

Օգտվելով առիթից, որ շաբաթվա մեջ սա իր միակ ոչ աշխատանքային օրն է՝ երիտասարդը քայլեց դեպի մոտակա պողոտան: Այստեղ նստեց մի քիչ, ահագին թեթևացած զգաց իրեն, հոգնածությունը մոռացավ: Երեկո էր, երբ տուն հասավ: Ձրի ծորակը բացեց, բաժակը վերցրեց ձեռքը, մի պահ մարմինը սարսռաց: Վայրկյանական հիշեց գրադարանի աղջկա սառը մատները, հետո աչքերը ու շշնջաց.

– Իմ տեսած այդքան աչքերի մեջ նրա աչքերն այնքա՛ն ուրիշ էին...

Սպիտակ պատերով սենյակն աստիճանաբար սկսեց մթնել: Դուռը բացվեց, ու միջանցքի պայծառ լույսից մի փունջ ընկավ մթնշաղով լցված սենյակի մեջ: Մի բարձրահասակ բժիշկ ներս մտավ, ձեռքը գցեց լուսամփոփին. սենյակը միանգամից լուսավորվեց: Հետո սեղանի դարակից հանեց գրանցամատյանը, հաջորդ օրվա այցելուների շարքում ևս մեկ անուն ավելացրեց, մի քանիսի տակ ընդգծեց ու լսելի ձայնով ասաց.

– Յոթ վիրահատություն:

Սա վաղվա վիրահատությունների թիվն էր: Շաբաթվա մեջ երկու օր էր հատկացնում վիրահատություններին: Դրանք սովորաբար, ի տարբերություն մնացած օրերի, ավելի լարված էին անցնում: Մատյանը փակեց, մոտեցավ հայելուն, նկատեց, որ համազգեստի կոճակները թուլացել են, կտորի թարմությունն էլ արդեն առաջվանը չէ: Որոշեց հենց այսօր էլ գնալ ընկերոջ խորհուրդ տված նորաձևության տունն ու նոր համազգեստ պատվիրել: Նայեց ժամացույցին, հիշեց, որ այդ սրահը ժամը ութին փակվում է: Յոթն անց երեսուն էր:

«Մի կանգառ է ընդամենը, կհասցնեմ, եթե ուզեմ»,– ասաց ինքն իրեն, զգեստափոխվեց, պահարանից վերցրեց վերարկուն, լուսամփոփն անջատեց ու դուրս եկավ սենյակից:

Հոկտեմբերի վերջին օրերն էին: Օդն արդեն սառն էր, բայց զգում էր, որ քայլելն իր մարմնին դուր է գալիս: Ցավոք, ստիպված էր ավելի արագ գնալ, որ հասցնի համազգեստ պատվիրել: Սրահի փակվելուն ընդամենը հինգ րոպե էր մնացել, երբ բժիշկը կանգնեց դրա աստիճանների մոտ: Ապակե պատերից այն կողմ լույսը դեռ վառվում էր: Երիտասարդ բժիշկը ներս մտավ այն պահին, երբ դիզայները սրահի մի անկյունում դրված հայելու առաջ վերարկուն էր հագնում, որ դուրս գա:

– Կներեք,– ասաց բժիշկն առաջ գնալով,– երևի արդեն փակում եք սրահը, բայց, հուսով եմ, կլսեք ինձ, ավելի շուտ գալ չէի կարող:

Հայելու մոտ կանգնած աղջիկը շրջվեց ու գալով դեպի այցելուն՝ ասաց.

– Սրահն արդեն փակ է, բայց, իհարկե, կլսեմ ձեզ, ասեք:

– Ես եկել եմ... Եկել եմ, որ...

Երիտասարդը պապանձվեց, երբ տեսավ, որ դիզայներն այն աղջիկն է, որին տեսել էր օրեր առաջ գրադարանում:

Աղջիկը, տեսնելով նրան, նույնպես ճանաչեց, բայց ձևացրեց, թե առաջին անգամ է տեսնում իր առջև կանգնած մարդուն:

– Լսում եմ ձեզ, ինչո՞վ կարող եմ օգնել,– ասաց դիզայները՝ սպասելով, որ այցելուն կհիշի գրադարանի միջադեպն ու կխոսեն այդ մասին:

– Ես ուզում եմ բժշկական համազգեստ պատվիրել: Ինձ խորհուրդ են տվել ձեր սրահ գալ,– գրեթե կմկմալով պատասխանեց երիտասարդը՝ օրեր առաջ տեղի ունեցած իրենց հանդիպման մասին և ոչ մի բառ չասելով:

– Բարի, հուսով եմ՝ գոհ կմնաք: Նստեք, ես մի րոպեից կմոտենամ:

Երիտասարդն ասես հենց այս արտահայտությանն էր սպասում: Ժամանակ կունենար հետաքրքիր պատահականությունը վերլուծելու համար: Այն աչքերի տիրուհին, որոնք մի քանի օր է՝ իրեն հանգիստ չէին տալիս, հենց այն դիզայներն է, որի մոտ խորհուրդ էին տվել գալ...

Աղջիկը մտավ հանդերձասրահ: Սա միակ տեղն էր, որտեղ կարող էր մի քանի վայրկյանով առանձնանալ նոր այցելուից՝ հենց նրա մասին մտածելու ու այցի նպատակը ծանր ու թեթև անելու համար:

– Ախր ինձ ո՞նց է գտել,– մտքում սկսեց ինքն իրեն հարցեր տալ,– կամ եթե պատահականություն է, ինչի՞ չասաց, որ հիշում է ինձ, իսկ եթե չի հիշում... Ա՛յ քեզ գլուխկոտրուկ:

Քառակուսի, ընդամենը երկու ոտնաչափ լայնություն ու երկարություն ունեցող տարածությունում աղջիկն անընդհատ հետ ու առաջ էր քայլում: Կանգ առավ, նայեց հայելուն, ափերը, որոնք միշտ սառն էին, դրեց երեսին. այտերն այրվում էին: Աչքերը մի պահ փակեց ու խոր շունչ քաշեց, ինքն իրեն համոզեց, որ ամեն ինչ կարգին է.

– Հետո՞ ինչ, որ շուտ տպավորվող ես ու չնկարագրվելու չափ էմոցիոնալ: Սա զուգադիպություն է ու պատահական հանդիպում,– մտածեց դիզայներն ու վստահ քայլվածքով դուրս եկավ հանդերձասրահից:

Մինչ նա կմոտենար, բժիշկն ուշադրությամբ շուրջբոլորն էր զննում: Պատերին նկարներ էին փակցված՝ հիմնականում աբստրակտ ոճի: Նկարներում գույնն էր շատ, ձևերը, ինչ խոսք, գեղեցիկ էին, բայց ոչ ընկալելի: Ժամանակ էր պետք յուրաքանչյուր նկարի մեջ խորանալու, դրա իմաստն ամբողջովին հասկանալու համար: Սրահի անկյունում մի

գրասեղան կար, վրան՝ նոթատետր, գրչաման, որի մեջ ամեն ինչ կար՝ բացի գրիչից: Տարբեր փափկության մատիտներ էին, հաստ ու բարակ վրձիններ, կավիճներ: Գրչամանի կողքին քորոցների ու ասեղների մի բարձիկ էր դրված, դե, իսկ սրահը շնչում էր թարմ կտորների անուշ բույրով, որը դժվար թե որևէ մեկի համար տհաճ լիներ:

Դիզայները մոտեցավ այն պահին, երբ երիտասարդը վերջերս ցուցադրված ամառային հավաքածուի ամսագիրն էր ուզում նայել:

– Կներեք, եթե սպասեցրի,– ասաց աղջիկը մոտենալուն պես:

– Ներողության կարիք չկա, կարևորը՝ սրահը չփակեցիք,– ամսագիրն առանց բացելու տեղը դնելով՝ պատասխանեց այցելուն:

– Սովորաբար ժամը ութին փակում ենք, բայց երբ ներսում հաճախորդ կա, իհարկե դուրս չենք հրավիրում: Ձեզ ինչպիսի՞ համազգեստ է պետք: Օրինակներ ցույց տա՞մ, թե՞ դուք կառաջարկեք ձեր տարբերակը:

– Երևի ցույց տաք: Այդպես ավելի հեշտ կկողմնորոշվեմ:

– Ճիշտ եք, բժիշկների պարագայում համազգեստի ընտրության հնարավորությունն այնքան էլ լայն չէ, բայց մի քանի դետալների կիրառմամբ ինքնատիպ ինչ-որ բան հաստատ կարելի է ստանալ:

– Տեսնենք,– թերահավատորեն ասաց երիտասարդը, ու աղջիկը զգաց, որ իր ասածին այդքան էլ չհավատացին:

Դիզայները գրասեղանի դարակից մի ալբոմ հանեց, թերթեց, բժշկական համազգեստների բաժնին հասավ ու ալբոմը մեկնեց հաճախորդին.

– Կարող եք ընտրել: Եթե նկարներից ինչ-որ մեկի ձևը հավանեք, կկարվի նույնությամբ: Գույնն ու կտորը կարող եք փոխել: Ու, առհասարակ, ցանկացած միտք կարող ենք իրագործել:

Բժիշկը վերցրեց ալբոմը, սկսեց թերթել, մի քանի նկարի վրա կանգ առավ, երկար նայեց, հետո թերթեց մինչև վերջին համազգեստը, նորից հետ գնաց ու ընտրելով մեկը՝ ալբոմի բացած էջը պարզեց դիզայներին.

– Երևի սա ընտրենք:

Օրիորդը, որ այս ընթացքում գնացել էր գրասեղանի մոտ ու նոթատետրի մեջ ինչ-որ բան էր փնտրում, բայց դրան զուգահեռ աննկատելիորեն հետևում էր իր նոր հաճախորդին, նոթատետրը ձեռքին մոտեցավ նրան: Վերջինս առանց շրջվելու ալբոմն ու իր գլուխը թեքեց

դեպի դիզայները: Աղջիկն ակամայից հայտնվեց բժշկի թիկունքում ու ստիպված էր պարանոցով ձգվել, որպեսզի տեսնի, թե ինչ համազգեստ է ընտրվել: Երիտասարդ բժիշկն ասես միտումնավոր չէր շրջվում: Բազկաթոռների ու պահարանի դասավորվածությունն այնպիսին էր, որ դիզայները դրանք շրջանցել չէր կարող, մինչդեռ բժիշկը հեշտությամբ կարող էր շրջվել ու ցույց տալ նկարը: Օրիորդը նորից գլուխն առաջ տարավ, բայց նկարը տեսնելուց առաջ նախ որսաց բժշկի օծանելիքի բույրը: Բերգամոտի անուշ հոտն աղջկա քիթը խուտուտ տվեց. սա նրա ամենասիրելիներից էր: Դեռ հաճելի բույրը չվայելած՝ միանգամից սթափվեց, որովհետև զգաց, որ շատ մոտ է կանգնած իր այցելուին: Կտրուկ շրջվեց ու գնաց գրասեղանի մոտ: Ասաց, որ բժիշկն ալբոմն այնտեղ տանի: Համազգեստի նկարը տեսնելով՝ օրիորդը ողջունեց կատարված ընտրությունը, հետո դարակից վերցրեց սանտիմետրաժապավենը, թուղթ ու մատիտ ու մոտեցավ երիատասարդին.

– Վերարկուն կհանե՞ք:

– Ինչի՞:

– Որ համազգեստը կարելուց հետո չհագնեք ու ասեք, որ մեծ է ստացվել,– ժպտալով բացատրեց դիզայները:

– Հա, ճիշտ եք, մտքերով ուրիշ տեղ էի:

– Դռան մոտ կախիչ կա:

– Թող էստեղ մնա, ոչինչ:

Երիտասարդը վերարկուն դրեց բազկաթոռին ու մոտեցավ դիզայներին: Վերջինս խնդրեց հանգիստ ու անշարժ կանգնել, ինչից տղան ավելի լարվեց: Օրիորդը, սանտիմետրաժապավենը ձեռքին, մոտեցավ այցելուին: Նրանց միջև ընդամենը մեկ ոտնաչափ հեռավորություն էր: Պարանոցի շրջագիծը չափելու համար դիզայները ժապավենն այցելուի ծոծրակի հետևով իր աջ ձեռքից փոխանցեց ձախին: Ստացվեց այնպես, որ աղջկա ձեռքը բժշկի ծոծրակի մոտ կիսապտույտ կատարեց՝ մատները հպելով ծոծրակին: Բժիշկը մի պահ սարսռաց, որովհետև իրեն հպվող օտար մատները շատ սառն էին: Օրիորդը զգաց դա ու մատներն արագ հետ քաշեց, չափսերը գրի առավ ու շարունակեց իր աշխատանքը: Ժապավենի սկիզբը կրկին պահելով աջ ձեռքում՝ այն անցկացրեց թևատակով ու, ժապավենը փոխանցելով ձախ ձեռքին, այն բերեց կրծքավանդակի կենտրոն: Աղջիկն ակամայից ձեռքերով

գրեթե գրկեց իր այցելուին: Բժիշկն այս անգամ տարօրինակ ջերմություն զգաց: Նա քարացած նայում էր իր առջև կանգնած փոքրամարմին աղջկան, որին հնարավորություն ուներ այսքան մոտիկից ուսումնասիրելու: Նրա ձեռքերին էր նայում, որոնք վարպետորեն աշխատում էին ժապավենի հետ, դիպչում իր ուսերին, թիկունքին: Նրա աչքերին էր նայում, որոնցից հայացքը միանգամից կտրելը մեղմ ասած դժվար էր: Անետը տարբերվող ու տպավորվող դիմագծեր ուներ: Դեմքի վրա ամենահետաքրքիրը այտերի փոսիկներն էին, որոնք հայտնվում էին ոչ միայն ժպտալիս, այլև խոսելիս: Երեսի օվալը վերևից ավարտվում էր ճակատը ծածկող մազափնջով, որն աղջիկը շփոթվելիս հաճախ էր այս ու այն կողմ տանում: Իսկ Անետի բույրը... Ռոբը զգում էր, որ դա օծանելիք չէ, աղջկա մարմնի բնական բույրն է, որն ավելին էր, քան ամենաթանկարժեք օծանելիքները: Աղջիկը նկատեց Ռոբի հայացքն ու հետ գնաց: Նա սովորականի համեմատ կաշկանդված էր իր աշխատանքն անում: Սա առաջին դեպքն էր, որ ամեն մի չափսը վերցնելիս մի անհարմար բան էր ստացվում: Թիկունքի լայնության չափսը վերցնելիս աղջիկը երիտասարդի մեջքի կողմում էր ու կարողացավ ազատ խոր շունչ քաշել. ևս մի քանի վայրկյան, և այս տարօրինակ հաճախորդը սրահից դուրս կգար: Նորից առաջ գալով՝ դիզայները խնդրեց բժշկին թևը թեթև ծալել, որպեսզի թևի երկարության չափը ճշգրիտ լինի: Համազգեստի ընդհանուր երկարությունը ևս որոշելուց հետո աղջիկը բժշկին մի քանի կտորի տեսակ ցույց տվեց, ընտրեցին դրանցից մեկը, հետո գույնը: Դիզայները նորից նայեց գրի առած չափսերը. ոչինչ բաց չէր թողել: Այցելուին չափափորձման կանչեց մեկ շաբաթից:

– Իսկ ավելի շուտ հնարավոր չէ՞,– հարցրեց բժիշկը:

– Չեմ կարծում, ծանրաբեռնված օրեր են: Հուսով եմ՝ մի շաբաթից կկարողանաք լեգալային տարբերակը փորձել: Հեռախոսահամար թողեք, եթե ավելի շուտ պատրաստ լինի, կզանգենք:

Երիտասարդը գրպանից իր այցեքարտը հանեց ու մեկնեց դիզայներին: Աղջիկը վերցրեց ու դրեց գրչատուփի մոտ:

– Ամեն դեպքում կսպասեմ Ձեր զանգին, գուցե ստացվի ու շուտ կանչեք,– ասաց բժիշկն ու վերարկուն ձեռքը վերցնելով՝ ավելացրեց,– ի դեպ, շատ սիրուն ու ինքնատիպ անուն ունեք, Անետ:

– Որտեղի՞ց գիտեք,– շփոթված հարցրեց դիզայները:

– Ձեր վզնոցը նկատեցի,– ժպտալով պատասխանեց երիտասարդը:

– Ա՛հ, շնորհակալ եմ, մոռացել էի վզնոցի մասին:

– Ձեզ սազում է:

Անետի աչքերը զարմացած արտահայտություն ստացան:

– Անունն էլ, վզնոցն էլ,– ժպտալով ասաց բժիշկը, հաջողություն մաղթեց, վերցրեց վերարկուն ու դուրս եկավ սրահից:

Անետը միանգամից վազեց գրասեղանի մոտ ու վերցրեց հաճախորդի տված այցեքարտը: Ասես նրա դուրս գալուն էր սպասում, որ ուսումնասիրի այն. *Ակնաբույժ Ռ. Արամյան.* կարդաց դիզայներն ու ժպտաց: Ինքն էլ չգիտեր՝ այդ ժպիտն ինչի համար նկարվեց իր դեմքին կամ ում էր ուղված: Այդ պահին դուռը բացվեց, ու ներս մտավ հենց նա, ում պատճառով հայտնվել էր ժպիտը: Բժիշկն էր.

– Հեռախոսս մոռացել եմ, երևի վերարկուիցս ընկել է բազկաթոռին,– ասաց երիտասարդը՝ նայելով մեկ Անետի ձեռքի այցեքարտին, մեկ նրա դեմքին, որի վրայից ժպիտը հազիվ էր հեռացել:

Աղջիկը բազկաթոռի վրայից վերցրեց հեռախոսն ու տվեց բժշկին: Վերջինս շնորհակալություն հայտնեց, ևս մեկ անգամ նկատելիորեն աչքը գցեց իր այցեքարտին, որն աղջիկը խնամքով փորձում էր ափի մեջ թաքցնել, հետո նորից օրիորդի աչքերին նայեց, որոնց մեջ շփոթմունք նկատեց, լուռ ժպտաց ու դուրս եկավ: Անետը նստեց բազմոցին, այցեքարտը բարկացած մի կողմ նետեց ու սկսեց նախատել իրեն այն բանի համար, որ հաճախորդի դուրս գալուն պես դա ձեռքը վերցրեց:

– Ամեն ինչ փչացրիր, Անե՛տ,– շշնջաց ինքն իրեն, վերարկուն հագավ, պայուսակը վերցրեց ու դուրս եկավ նորաձևության տնից:

3

Ու սերը սրտի մեջ մտավ, հարմար տեղավորվեց, հետո հասավ գլխին և այնտեղից վանելով բոլոր մտքերը՝ սկսեց միայնակ իշխել։

Ամի շաբաթ էր անցել այն օրից, ինչ բժիշկ Արամյանը եղել էր դիզայների մոտ: Այս օրերին նրա մոտ ոչինչ չէր փոխվել, նույն ծանրաբեռնված առօրյան էր, նույն լարված ու կենտրոնացում պահանջող աշխատանքը: Հիվանդները սովորականի նման շատ էին, վիրահատությունները նախկինի նման նշանակվում ու բարեհաջող ավարտվում էին: Միայն մի բան էր փոխվել. ամեն այցելուի աչքերին նայելիս բժիշկն ակամայից հիշում էր Անետի խոշոր շագանակագույն աչքերը: Անկախ իրենից նույն գույնի աչքեր էր փնտրում, բայց չէր գտնում... Այս օրերի ընթացքում բժիշկը հաճախ էր հիշել դիզայների ժեստերը, նուրբ մատներն ու դրանց սառնությունը, այն շփոթված հայացքը, երբ ինքը հետ եկավ նորաձևության տուն՝ հեռախոսը վերցնելու, ու տեսավ իր այցեքարտն աղջկա ձեռքին: Կարելի է ասել՝ բժիշկը ժամ առ ժամ սպասում էր դիզայների զանգին, բայց իրեն ոչ թե համազգեստն էր հետաքրքրում, այլ ուզում էր նորից տեսնել աղջկան:

Երբ դիզայների ասած օրերի քանակը լրացավ, և տղան ոչ մի զանգ չստացավ նրանից, որոշեց անձամբ գնալ սրահ: Տնից դուրս եկավ, ավտոտնակից հանեց իր անբաժան ընկերոջը, որը վարում էր ուսանողական առաջին տարիներից, ու ճանապարհ ընկավ: Մոտոցիկլետը սլացավ քաղաքի լայն փողոցներով ու խաչմերուկներով, ապա կանգ առավ նորաձևության տան մոտ: Ռոբը նայեց ժամացույցին, սրահի փակվելուն դեռ տասը րոպե ժամանակ կար: Իջավ մոտոցիկլետից ու քայլեց դեպի սրահի աստիճանները: Երբ ներս մտավ, դիզայները, որ շփոթվեց, բայց փորձեց ցույց չտալ իր շփոթմունքը, մի կնոջ հետ էր զրուցում: Երիտասարդը բարևեց ու առաջ եկավ: Գնաց դեպի մանեկենները, որոնց վրա ինչպես կանացի, այնպես էլ տղամարդու հագուստ էր ցուցադրված: Մոտեցավ սև կոստյումին, կտորը շոշափեց, հավանեց, բայց չհասցրեց երկար ուսումնասիրել այն.

– Կարող եք այն կողմում նստել, պիտի սպասեք մի փոքր,– սիրալիր ձայնով ասաց դիզայները՝ ցույց տալով անկյունում դրված բազմոցները:

Բժիշկը ժպտալով քայլեց դեպի ցույց տրված հատվածն ու նստեց: Բազկաթոռն այնքան փափուկ ու հարմարավետ էր, որ երիտասարդը գլուխը հենեց թիկնակին ու աչքերը փակեց այնպես, ինչպես իր տանը կաներ: Մի քանի րոպե այդ դիրքում մնաց, հետո հանկարծ մտածեց, որ հոգնածությունից կարող է և հենց այդտեղ քնել, արագ մարմնով

առաջ եկավ ու սթափվելու համար գլուխը նկատելիորեն աջ ու ձախ թափահարեց: Այս րոպեների ընթացքում դիզայները, հաճախորդի մոտ զգալ չտալով, որ հետաքրքրված է իրեն սպասող այցելուով, մի քանի անգամ հասցրեց նայել նրա կողմը. զգաց, որ հոգնած է: Մի քանի օր է, ինչ մտածում էր իր նոր հաճախորդի մասին, պատկերացնում էր, թե ինչքան գոհ պիտի մնա իր կարած համազգեստից, բայց և միշտ շիկնում էր, երբ հիշում էր այցեքարտի պատմությունը:

Ռոբերտը սթափվեց, երբ լսեց հաճախորդի ձայնը, որ արդեն դռանն էր մոտենում.

– Ուրեմն չորեքշաբթի, Անետ ջան:

– «Անետ...»,– մտքում ասաց բժիշկն ու խոստովանեց, որ այդ աչքերն ու ձեռքերն ունեցող աղջկան ուրիշ ոչ մի անուն այդքան չէր սազի, որքան սա:

Հաճախորդի դուրս գալուն պես Անետը մոտեցավ երիտասարդ բժշկին ու ասաց, որ նրա համազգեստի լեգալային տարբերակը պատրաստ է, ու կարող է փորձել:

– Իսկ եթե պատրաստ էր, ինչի՞ չէիք զանգում,– հարցրեց այցելուն:

– Ճիշտն ասած, այցեքարտը չէի գտնում,– կմկմալով պատասխանեց Անետը:

– Իրո՞ք:

– Հա՛, կորցրել էի:

Բժիշկը չհավատաց, բայց դիզայները չէր ստում: Այն օրը, երբ բարկացած մի կողմ նետեց այցեքարտը, հետո այդպես էլ չգտավ դա: Դիզայները զգաց, որ իրեն չհավատացին, բայց ավելին ասել չէր կարող, պահարանից բերեց համազգեստի նախնական տարբերակն ու խնդրեց փորձել: Բժիշկը վեր կացավ նստած տեղից, վերցրեց առաջին հայացքից իրեն տարօրինակ թվացող կտորն ու հագավ այն: Դիզայները պտտվեց երիտասարդի շուրջը, ուսումնասիրեց հագուստը բոլոր կողմերից, խնդրեց թևերը վերև բարձրացնել, հարցրեց՝ արդյո՞ք հարմար են թևի, համազգեստի երկարությունները, և արդյո՞ք չի նեղում հագուստը՝ թևերը ծալած վիճակում աջ ու ձախ թեքվելիս: Բժիշկն ասաց, որ ամեն ինչ կարգին է: Հետո դիզայները մոտեցավ գրասեղանին, բարձիկի վրայից քորոցներ վերցրեց ու նորից եկավ այցելուի մոտ: Համազգեստի օձիքի ձևը քորոցով ամրացնելու միջոցով

փոխեց: Բժիշկն ուշադիր հետևում էր Անետի շարժուձևին: Վերջինս դա նկատում էր ու կաշկանդվում: Երիտասարդը չէր էլ թաքցնում իր հետաքրքրված հայացքը: Ու նորից այս հոտը, որը վայրկյաններ ավել շնչելու համար Ռոբը պատրաստ էր տասնյակ համազգեստներ պատվիրել, բայց և որը շնչելիս հազիվ էր իրեն տիրապետում, որ չգրկի Անետին: Օձիքի աջ կողմի քորոցն ամրացնելիս շփոթմունքից Անետը մատը ծակեց, բայց ձևացրեց, թե չի նկատել: Բժիշկը, իհարկե, օրիորդից առաջ նկատեց դա: Առաջին վայրկյանին ձայն չհանեց, բայց երբ արյունի կաթիլը տեսավ, բռնեց Անետի ձեռքն ու զգուշությամբ իջեցրեց իր օձիքի մոտից: Գրպանից մի թաշկինակ հանեց ու սրբեց արյունը՝ հայացքը չկտրելով աղջկա աչքերից, որոնք սովորականից ավելի խոշոր էին երևում, որովհետև Անետը հասակով տղայից կարճ էր, ու նրա դեմքին նայելու համար հայացքը ստիպված էր վերև բարձրացնել: Բժիշկը բավականին գեղեցիկ տղամարդ էր: Ոչ արտահայտիչ արծվաքիթը դեմքին խրոխտ արտահայտություն էր փոխանցում, իսկ հայացքը միշտ խոսուն էր ու ինքնավստահ: Աղջիկը չհասկացավ, թե ինչպես իր հաճախորդն իրեն թույլ տվեց սա անել, ու չհասկացավ նաև, թե ինքն ինչու չարգելեց հաճախորդին, բայց վայրկյանական հետ քաշվեց ու ասաց.

– Ես կսրբեմ, թողեք:

– Արդեն կարիք չկա, բայց լավ կլինի ապահովության համար հականեխեք:

– Դե չէ, դատարկ բան է,– ասաց դիզայներն ու փոխեց օձիքի ձախ կողմի ձևը, ապա իր արածից գոհ դեմքի արտահայտությամբ ասաց.

– Այսպես ավելի լավ է, հաջորդ չափափորձումը՝ երեք օրից:

– Նորի՞ց պիտի փորձեմ: Իսկ ինչ կարիք կա:

– Ապահովության համար ձևաններով կարված տարբերակն էլ պիտի փորձեք: Դրանից հետո նոր վերջնական կկարենք:

– Լավ, ոնց ասեք, դուք ինձնից լավ գիտեք:

Աղջիկը ժպտաց:

– Ինչ սիրուն ժպիտ ունեք,– առանց մտածելու միանգամից ասաց բժիշկը:

Անետը շփոթվեց, բայց փորձեց ցույց չտալ շփոթմունքը:

– Շնորհակալ եմ,– ասաց օրիորդն ու աչքը գցեց ժամացույցին:

– Հասկացա, սրահը փակելու ժամանակն է: Ես մոտոցիկլետով եմ, թե չէ կառաջարկեի Ձեզ տուն ուղեկցել:

– Մոտոցիկլետո՞վ,– զարմանքը թաքցնել չկարողանալով՝ հարցրեց Անետը:

– Զարմացա՞ք, իսկ ես արդեն սովոր եմ, որ բոլորը զարմանում են:

– Չէ՛, ուղղակի...

– Ուղղակի մոտոցիկլետ վարող բժիշկ երբեք չեք տեսել կամ մտածում եք, թե ո՞ր կարգին մարդը կվստահի իր տեսողությունը մի բժշկի, որն ավելի շատ բայքերի է նման, քան ակնաբույժի:

– Չէ՛, չէ՛, ես նման բան չասացի:

– Ես էլ նույնը կմտածեի, բայց արի ու տես, որ մարդիկ վստահում են,– ժպտալով ասաց ակնաբույժը, ապա ավելացրեց,– վստահ եմ, որ չեք նստի մոտոցիկլետ, մի ուրիշ անգամ Ձեզ անպայման կուղեկցեմ:

– Չէ՛...

– Այսինքն կնստե՞ք:

– Չէ՛, ուզում եմ ասել ուղեկցելու կարիք չկա:

– Կա՛, կա՛:

Անետն ուզում էր մի բան ասել, բայց իր տարօրինակ հաճախորդն այնպիսի տոնով ասաց վերջին բառերը, որ իրեն էլ թվաց, որ ուղեկցելը պարտադիր է: Բժիշկը հաջողություն մաղթեց ու դուրս եկավ սրահից: Անետը սպասեց, որ այցելուն աստիճաններից իջնի ու վազեց ապակիների մոտ: Ակնաբույժը մոտեցավ մոտոցիկլետին, նստեց, դրեց սաղավարտն ու շարժիչը գործի գցեց: Ընթացքից առաջ նայեց սրահի ապակիներին, ասես գիտեր, որ Անետն իրեն է նայում: Գլխով արեց ու ժպտաց: Անետն արագ հետ քաշվեց ապակուց՝ նորից իրեն պարտված զգալով. հիշեց այցեքարտի պատմությունը:

– Գրողը տանի, սա էլ արդեն երկրորդ անգամ ինձ մատնում եմ...

4

Հետո սերը դուրս եկավ իր սահմաններից, լցվեց շուրջը՝
օդի մեջ, ամենուր... Սկսեց բղավել իր մասին,
բոլոր հնարավոր ու անհնար ձևերով նկատել տալ իրեն:

Վիրահատությունը նոր էր ավարտվել, երբ ակնաբույժ Արամյանի հեռախոսի զանգի ձայնը լսվեց: Բժիշկը հանեց ձեռնոցներն ու վերցրեց հեռախոսը:

– Ալո, Ռոբերտի հետ եմ խոսում:

– Այո՛, ես եմ:

– Ձեզ Անետն է անհանգստացնում՝ նորաձևության տնից: Ուզում եմ խնդրել, որ եթե հնարավոր է վաղվա փոխարեն այսօր գաք չափափորձման, վաղը սրահը փակ է լինելու:

– Ինձ համար տարբերություն չկա: Աշխատանքից հետո կգամ:

– Շատ լավ, շնորհակալ եմ:

Հեռախոսն անջատելուն պես բժշկի դեմքին ժպիտ երևաց: Այդպես ժպտալով էլ դուրս եկավ վիրահատարանից: Միջանցքով անցնելիս տեսավ իր հիվանդասենյակի մոտ գոյացած հերթը, ու ժպիտն անհետացավ. աշխատանքային օրվա ավարտին դեռ շատ կար... Բժիշկը մտավ իր սենյակ ու կանչեց առաջին հիվանդին, որին հաջորդեցին մյուսները: Աստիճանաբար հերթը նոսրացավ: Ժամը յոթն էր: Վերջին հիվանդին ճանապարհեց, սովորության համաձայն՝ գրանցամատյանում նայեց վաղվա հիվանդների ցանկը, լույսը հանգցրեց ու դուրս եկավ սենյակից: Տասնհինգ րոպե անց արդեն նորաձևության տան մոտ էր:

Անետը սիրալիր ընդունեց նրան: Համազգեստի վրա վերջին շտկումներն էր անում, երբ բժիշկը ներս մտավ:

– Խնդրեմ, կարող եք փորձել, այն կողմում հանդերձասրահ կա,– ձեռքը դեպի սրահի անկյունը մեկնելով՝ ասաց դիզայները:

Ռոբը գնաց ցույց տրված ուղղությամբ ու րոպեներ չանցած՝ համազգեստը հագին դուրս եկավ: Անետը ուշադիր նայեց բոլոր հատվածներին: Ոչ մի փոխելու բան չկար:

– Ինձ դուր է գալիս, իսկ Ձե՞զ,– հարցրեց դիզայները:

– Ինձ էլ, հատկապես կտորի գույնը:

– Հա՛, Ձեզ սազում է,– ասաց օրիորդը, ինչպես սովորաբար ասում էր իր հաճախորդներին:

Չհասցրեց էլ իր ասածը վերլուծել, երբ բժիշկը միանգամից պատասխանեց.

– Իսկ Ձեզ առհասարակ բոլոր գույներն են սազում:

– Շնորհակալ եմ,– թեթև ժպտաց Անետն ու մտքում նախատեց ինքն իրեն՝ այս այցելուին հաճոյախոսություն անելու համար: Պիտի նախքան խոսելը մտածեր, որ սա հերթական հաճախորդներից չէ: Թեմայի շարունակությունը կանխելու համար Անետը կտրուկ ասաց, որ երկու օրից բժիշկը կարող է վերցնել համազգեստը: Վերջինս հանեց համազգեստը, վերցրեց վերարկուն, հաջողություն մաղթեց ու դուրս եկավ սրահից: Նստեց մեքենան, բայց որոշեց սպասել: Բոպեներ չանցած՝ Անետը լույսը հանգցրեց ու դրսից փակեց նորաձևության տան դուռը: Աստիճաններից նոր էր իջել, երբ լսեց իր անունն ու շրջվեց. բժիշկն էր:

– Այս ժամերին արդեն ցուրտ է, կարող եմ Ձեզ տուն տանել, եթե դեմ չեք:

Անետը շփոթվեց, բայց առանց վայրկյան անգամ մտածելու՝ մերժեց:

– Ի՞նչ վատ բան կա դրանում:

– Չէ՛, վատ բան չկա, ուղղակի քայլել եմ ուզում:

– Ինչ-որ խնդի՞ր կա: Համ էլ համազգեստի հետ կապված մի հարց ունեմ, ուզում եմ՝ քննարկենք:

– Դուք հենց նոր սրահում էիք, ոչինչ չասացիք:

– Հա՛, մոռացել էի, բայց կարևոր է: Նստենք մեքենան կասեմ:

Անետը մերժել կամ համաձայնել չհասցրեց: Երիտասարդը բացեց մեքենայի դուռն ու ձեռքով ցույց տվեց, որ աղջիկը նստի: Մեքենան դանդաղ շարժվեց կայանատեղիից: Առաջին վայրկյաններին Անետը մտածեց, որ մերժելն առնվազն անքաղաքավարություն կլիներ, հատկապես երբ ասվել էր, որ համազգեստի հետ կապված հարց կա: Հետո մտածեց, որ եթե չնստեր, կմատներ իրեն, կասկածելու տեղիք կտար, առանց այն էլ գիտեր, որ բժիշկը մի քանի անգամ նկատել է իր շփոթմունքը: Աղջիկը մտքում խոսում էր ինքն իր հետ ու վստահեցնում, որ չմերժելն ամենաճիշտ որոշումն էր: Պատուհանից դուրս էր նայում, փորձում էր չնայել երիտասարդի կողմը: Ուզում էր՝ ճանապարհն արագ սլանա, ու ինքը իջնի մեքենայից, որ այս ծանոթ–անծանոթ հաճախորդը ոչ մի վայրկյան իր շփոթմունքը չնկատի:

– Անե՛տ ջան, ուզում եմ մի բան մտածենք, որ համազգեստս սովորական բժշկական համազգեստից թեկուզ մի քիչ տարբերվող լինի:

– Օրինակ ի՞նչ,– զարմացած հարցրեց Անետը՝ հասկանալով, որ հաճախորդն իրոք չէր ստում և հարց ուներ:

– Անկեղծ ասած, անընդհատ նույնությունն ինձ համար չէ: Հոգնում եմ ստանդարտներից: Առանց այն էլ ամբողջ օրը որ կողմ նայում եմ՝ նույնօրինակ համազգեստներ են շուրջս: Դրա համար Ձեզ մոտ եկա, որ իմը գոնե նորություն լինի, բայց միայն կտորի տարբերությունը քիչ է:

– Ախր ընդունված ձևը դա է, խորքային փոփոխություններ չենք կարող անել:

– Գիտեմ, բայց կարծում եմ՝ թեկուզ չնչին ոչ ստանդարտ մոտեցումը կարող է ինչ-որ բան փոխել:

– Կա նման բան, փոքր դետալները կարող են զգալի դինամիկա մտցնել ցանկացած հագուստի մեջ:

– Ես գիտեմ, որ եթե ուզենաք, մի բան կմտածեք:

Անետը ժպտաց: Բժիշկը որսաց այդ ժպիտը, որից ենթադրեց, որ աղջիկն ուրախ է, որ ինքը վստահում է նրան՝ որպես մասնագետի: Մինչդեռ դիզայներն իրականում ժպտաց, որովհետև զարմացավ, որ իր հաճախորդն այդքան վստահ է իր ուժերին:

– Որտեղ եք ապրում,– հանկարծակի հարցրեց երիտասարդը:

– Ինչ:

– Չգիտեմ, թե ուր գնամ: Ասեք, որ այդ ուղղությամբ գնանք:

Աղջիկը նորից շփոթվելով ասաց այն թաղամասի անունը, որտեղ ապրում է:

– Ամենայն հավանականությամբ խցանում կլինի:

– Գիտեմ, նորմալ է այս ժամի համար: Բոլորն աշխատանքից տուն են գնում: Աշխատանքային օրերին միշտ այսպես է:

– Այսինքն սովոր եք արդեն:

– Դե հա, ուրիշ տարբերակ չկա, եթե ոտքով տուն գնալը չես ընտրում: Շաբաթ–կիրակի օրերին ավելի հանգիստ է երթևեկությունը:

– Ազատ օր չունեք փաստորեն:

– Չէ, ամեն օր աշխատում եմ: Ոչ աշխատանքային օրերին սրահի հաճախորդներն ավելի շատ են: Սպասում են շաբաթվա վերջին, որ իրենցով զբաղվեն: Դա գիտակցելով էլ սրահը շաբաթ և կիրակի օրերին էլ ենք բացում:

– Ու հանգստանալու ժամանակ չեք ունենում:

– Ամբողջովին ազատ ոչ մի օր չեմ լինում, բայց կան օրեր, որ համեմատաբար թեթև գրաֆիկ ունեմ:

– Ու հասցնում եք գրադարան գնալ:

Անետը հանկարծակիի եկավ: Երևի մտածում էր, որ եթե սրահ գալու առաջին օրն այդ հանդիպման մասին չեն խոսել, ուրեմն էլ երբեք չեն խոսելու:

– Դե՛ հա,– կմկմալով պատասխանեց աղջիկը:

– Չգիտեմ՝ Դուք ինձ հիշում եք, թե չէ, բայց ես Ձեզ շատ լավ եմ հիշում, հատկապես Ձեր աչքերը: Երևի մասնագիտական է: Անծանոթ մեկին տեսնելիս առաջին հերթին աչքերին եմ նայում: Ձեր աչքերն էնքան սիրուն են... Հա, մեկ էլ սառը մատներն էին տպավորվել:

Անետը նորից շփոթվեց: Չգիտեր, թե ինչ ասեր, ինչպես պահեր իրեն: Մեքենան կանգ առավ խճուղու մեջտեղի հատվածում: Ավտոմեքենաների շարասյան վերջը չէր երևում:

«Գրողը տանի, հենց հիմա՞ պիտի սկսվեր խցանումը»,– մտածեց Անետն ու շրջվեց դեպի պատուհանը, բայց չհասցրեց դուրս նայել:

– Մատներդ միշտ սառն են, հա՞: Երբ թևնոցն ափիցս վերցրիր, սառնությունից մարմնովս դող անցավ: Նույնը զգացի նաև անցյալ անգամ նորաձևության սրահում, երբ մատներդ ծոծրակիս դիպան,– շարունակեց ակնաբույժը:

Անետի այտերն այրվեցին: Սա ամենահամարձակն էր, որ կարող էր լսել իր տարօրինակ հաճախորդից: Աղջկան զարմացրեց ոչ միայն երիտասարդի ասածը, այլև այն, որ տղան միանգամից «դու»-ի անցավ: Սրան Անետն ընդհանրապես չէր սպասում ու սրանից ամենաշատը շփոթվեց: Բժիշկը միանգամից զգաց դա ու փորձեց շտկել իրավիճակը.

– Նեղվելու բան չասացի իրականում: Եթե մատները միշտ սառն են, ուրեմն վերջույթներին բավականաչափ արյուն չի հասնում: Կարող ես հետազոտվել ու խնդրին լուծում տալ:

– Ինձ չի խանգարում,– կտրուկ ասաց Անետը:

– Դե հա, բայց խնդիր է ամեն դեպքում:

Աղջիկը մի հեգնական հայացք գցեց բժշկի կողմը՝ առանց աչքերին նայելու:

Մթության մեջ միայն մեքենաների լուսարձակների աչք ծակող լույսերն էին երևում: Ժամանակն ասես կանգ էր առել: Մեքենաները գրեթե տեղից չէին շարժվում: Անետը վայրկյան առաջ ուզում էր

իջնել մեքենայից, բայց խցանումն ասես իրեն հակառակ էր ձգձգվում: Մինչ աղջիկը պատուհանից դուրս էր նայում, բժիշկն ուշադրությամբ նրան էր զննում: Աղջկա երկար շագանակագույն մազերը ծածկել էին արմունկներն ու ասես թաքցնում էին նրա դեմքը երիտասարդից: Սա Անետի օգտին էր, հնարավորինս գլուխը թեքել էր դեպի պատուհանը, մազերն էլ օգնում էին նրան, որ բժիշկը նրա հոգեվիճակը նկատել չկարողանա: Մինչդեռ վերջինս զգում էր աղջկա ծանր շնչառությունը: Ուզում էր մի բան ասել՝ լությունը խախտելու համար, բայց չգիտեր, թե ինչ:

Մի քանի վայրկյանը մեկ մեքենաների ազդանշանների ձայնն էր լսվում, բայց նկատելի շարժ չկար: Բժիշկը ժամանակ առ ժամանակ ապակին իջեցնում էր ներքև: Մաքուր օդը ներս էր թափանցում ազդանշանների աղմուկի հետ: Այս ընթացքում Անետը խոր շունչ էր քաշում՝ վստահ լինելով, որ աղմուկի մեջ դա լսելի չի լինի: Բժշկի աչքերը նորից նկատեցին աղջկա մատները: Այնքան սպիտակ ու նուրբ էին: Այս նրբությունն ավելի զորեղ էր, քան ցանկացած ուժ: Ռոբը չէր կարողանում աչքը կտրել օրիորդից: Անետը պատուհանից դուրս էր նայում ու անհանգիստ շարժումներով մատներն էր սեղմում: Տղան պատկերացրեց, որ դրանք էլի սառն են, մի պահ ուզեց բռնել աղջկա ձեռքը, բայց չհամարձակվեց:

Նվագարկիչը միացավ, ու մի ֆրանսերեն երգ որոշեց սավառնել մեքենայի փոքր տարածության մեջ: Աղջիկը մտքում սկսեց երգել երգչի հետ: Վայրկյաններ անց զգաց, որ լարվածությունն անցել է: Սա բժիշկն էլ զգաց ու առիթից օգտվելով՝ ասաց.

– Մենք կարգին ծանոթներ էլ չենք: Առաջարկում եմ՝ ծանոթանանք: Գոնե խցանումից մի օգուտ կլինի:

– Պարտադի՞ր է, որ մենք ծանոթանանք,– կտրուկ հարցրեց Անետը:

Սա ավելի շատ ոչ թե հարց էր, այլ հանդիմանական պատասխան, բայց երիտասարդն արագ փոխեց մթնոլորտը.

– Հա, ի՞նչ կա որ: Ես Ռոբերտն եմ, բայց բոլորն ինձ Ռոբ են ասում: Մի տարի է, ինչ ավարտել եմ բժշկական համալսարանն ու որպես ակնաբույժ եմ աշխատում: Իմ մասնագիտությունը շատ եմ սիրում: Ինձ չեմ պատկերացնում առանց դրա: Ես ինձ լավ եմ զգում, որ կարողանում եմ մարդկանց օգնել, նրանց տալ այն ամենակարևորներից

մեկը, որ ունենք՝ տեսողությունը: Իսկ դու՞ ինչ կասես: Անունդ գիտեմ, բայց միայն դա քիչ է՝ ծանոթներ համարվելու համար: Հա, մեկ էլ գիտեմ, որ կարդալ ես սիրում: Ես տեսել եմ, թե ինչքան տարված էիր գրքով:

– Ուրիշ չգիտեմ, թե ինչ ասեմ: Գիտեք այն, ինչ պետք է:

– Այդքան պաշտոնական: Ախր միասին խցանման մեջ ենք:

– Հետո՞ ինչ:

– Դե, կարելի էր ժամանակն արդյունավետ օգտագործել:

– Ես երևի իջնեմ, ոտքով կշարունակեմ ճանապարհը,– ասաց Անետը՝ ձեռքը գցելով դռան բռնակին:

– Չէ՛, չէ՛, կշարժվենք ուր որ է: Ինչ շուտ ես բռնկվում, վատ բան չասացի իրականում:

Աղջիկը նորից լռեց: Եվս մի քանի րոպե, և մեքենաները սկսեցին առաջ գնալ: Ասես երկրագունդը կանգ էր առել ու նորից սկսեց շարժվել: Շարասյունը հասավ խճուղու ավարտին ու խաչմերուկից մեքենաները գնացին տարբեր ուղղություններով: Մոտ հինգ րոպե անց մեքենան կանգ առավ այն փողոցի մոտ, որի մասին Անետը սկզբում ասել էր:

– Հաջողություն,– ասաց Անետն ու պատրաստվում էր իջնել, բայց բժիշկը բռնեց ձեռքից:

Անետը ցնցվեց՝ մտածելով, որ այս երեկոն վերջ չունի:

– Չգիտեմ, թե ինչի համար, բայց ուզում եմ ներողություն խնդրել քեզնից: Ինձ թվում է՝ նեղացրել եմ քեզ:

– Ոչ մի նման բան:

– Հաստա՞տ:

– Հաստատ:

– Ամեն դեպքում կներես, եթե անգամ թեկուզ մի փոքր նեղացրի քեզ այս մի ժամվա ընթացքում: Երևի տուն ուղեկցելու միտքն էլ լավ գաղափար չէր, ու ոչ թե օգնեցի, այլ անհանգստացրի քեզ, բայց նման մտադրություն չունեի:

– Ամեն ինչ կարգին է:

– Ուրեմն, կտեսնվենք երկու օրից:

– Հաջողություն:

– Առայժմ:

Անետն իջավ մեքենայից ու արագ քայլերով անցավ փողոցը: Ռոբը, պատուհանն իջեցնելով, գլուխը հենեց թիկնակին: Դեմքին մի գոհունակ ժպիտ հայտնվեց. չէ՞ որ արդեն սկսել էր զգալ տալ, որ հետաքրքրված է Անետով: Մեքենան մի քանի րոպե կանգնած մնաց, հետո շարժվեց ու կորավ մեծ քաղաքի փողոցներում:

5

Երբ սերը տեսավ, որ գիտեն իրեն, գոհունակ ժպտաց
հաղթողի ժպիտով, որովհետև սերը նախ և առաջ
նպատակ է, հետո նոր՝ երջանիկ լինելու ցանկություն:
Ապա փորձեց իր չափի մի զգացմունք կորզել դիմացինից.
չէ՞ որ սերը գեղեցիկ է, երբ փոխադարձ է...

Երբ անընդհատ ինչ-որ ակնթարթի ես սպասում, թվում է՝ ժամանակը կանգ է առնում: Անետի համար ժամանակն ասես կանգ էր առել: Նա փորձում էր չմտածել, որ շուտով նորից հանդիպելու է իր տարօրինակ հաճախորդին, բայց չէր ստացվում: Իր ասած երկու օրից ևս երկու օր էր անցել, բայց բժիշկը դեռ սրահ չէր եկել, չնայած որ պատրաստ էր միայն համազգեստը, բայց այն ինքնատիպ ու տարբերվող դարձնելու խնդրանք-առաջարկը դեռևս անկատար էր: Ամեն օրվա ավարտին սրահը փակելիս Անետը հանգստացած շունչ էր քաշում, որ այսօր ևս ակնաբույժին չտեսավ, բայց և անհանգստությունը մեծանում էր, որովհետև զգում էր, որ այդ հանդիպումն ավելի է մոտենում: Բնույթով Անետը շատ տպավորվող էր ու էմոցիոնալ: Իր հետ տեղի ունեցած և ոչ մի նշանակալի դրվագ չէր մոռանում, իսկ առավել հուզականները ահագին երկար ժամանակ հաճախակի հիշում էր՝ ինքն իրեն հարցեր տալով, պատասխաններ փնտրելով, կռվելով ինքն իր հետ: Նրա ականջներում շարունակ բժշկի խոսքերն էին հնչում ու այն երաժշտությունը, որը սուլում էր նվագարկիչը: Հաճախ երիտասարդի ներողությունն էր հիշում ու այդ վայրկյաններին մի տեսակ խաղաղվում էր, ներում էր իր հաճախորդի՝ առանց իր թույլտվության դիզայներ-այցելու հաղորդակցման սահմանը խախտելը: Երբեմն Անետն ուզում էր զանգել նրան, ասել, որ համազգեստը պատրաստ է, ու կարող է գալ և վերցնել: Մտածում էր, որ աշխատակցի մոտ կթողնի ու էլ ստիպված չի լինի տեսնել նրան, բայց հետո արագ մտափոխվում էր: Ինչ խոսք, Անետը հետաքրքրված էր այս երիտասարդով, բայց նրա անկանխատեսելի համարձակությունից կաշկանդվում էր: Մտածում էր նաև այն մասին, թե ինչու բժիշկը չի գալիս սրահ: Դիզայներն անգամ չգիտեր՝ ուզում է համազգեստը հանձնել հաճախորդին ու էլ երբեք չհանդիպել նրան, թե՞ օրերն այսպես էլ անցնեն, միայն թե հանդիպման մի ակնկալիք լինի...

***

Հոգնած օրվա ավարտից հետո Անետը նստած էր իր աշխատանքային սեղանի մոտ, որի վրա մի ճերմակ թուղթ էր դրված ու մի հասարակ մատիտ, որն արդեն կարճացել էր շատ օգտագործվելուց: Ահագին երկար ժամանակ Անետը նայում էր ապակիներից դուրս, հետո

մատիտը վերցրեց ձեռքը: Կարծես թե մատները դեռ չգիտեին, թե ինչ էին նկարելու, բայց անորոշությունը կարճ տևեց: Վայրկյաններ հետո դրանք վստահ շարժումներով սկսեցին իրենց գործը: Գծերն ու կորությունները արագ շարվեցին թղթի վրա: Մի քանի րոպե, և ձեռքը զգուշությամբ հեռու գնաց թղթից: Անետն իր աչքն էր նկարել: Երբ փոքր-ինչ հեռու եկավ նկարից ու նայեց դրան, մի քանի շտկում ևս արեց ու շշնջաց.

– Կարծես թե գիտեմ՝ ինչ պիտի անեմ:

Հեռախոսը վերցրեց ու զանգեց բրոշներ պատրաստող իր համակուրսեցուն: Խնդրեց աչքի ձև ունեցող մի բրոշ ձուլել, բայց թողնել սպիտակ կերամիկայի տեսքով: Ընկերուհին սիրով համաձայնեց օգնել ու հաջորդ օրը կանչեց իր արվեստանոց՝ բրոշը վերցնելու:

Հաջորդ օրը բրոշը վերցնելուն պես Անետն արագ գնաց սրահ: Աշնան արևի վերջին շողերը նորաձևության տան ապակե պատերից ընկել էին ներս ու հաճելիորեն տաքացնում էին սրահի տարածությունը: Անետը գրասեղանի մոտ նստեց, արագ պայուսակից հանեց բրոշն ու դրեց սեղանին, որի վրա մի փոքր հայելի էր դրված: Սա աղջիկն անմիջապես նկատեց, որովհետև հայելին այնպիսի դիրքով էր դրված, որ արևի լույսն անդրադառնում էր նրա մեջ ու ընկնում Անետի աչքերին: Դիզայները մատներով բռունցքներ արեց, դրանք իրար վրա դրեց սեղանին ու կզակը հենեց բռունցքներին: Դեմքն այժմ հենց հայելու դիմաց էր: Անետն անթարթ նայում էր հայելուն, որի կենտրոնական մասում իր աչքի պատկերն էր՝ խորը, բայց և պարզ ու հասարակ: Ահագին ժամանակ այս դիրքում մնալուց հետո աղջիկը պահարանից ներկեր ու վրձիններ բերեց: Բացեց շագանակագույն ներկի սրվակն ու մի փոքր քսեց թղթի վրա: Հետո ջրով նոսրացրեց այն ու սկսեց ներկել բրոշը: Մի քանի րոպե անց բրոշն ավարտուն տեսք ուներ: Խոշոր շագանակագույն աչք էր՝ խորը ու խոսուն հայացքով: Անետը հենց իր աչքն էր նկարել բրոշի վրա: Մի պահ ուզեց մաքրող նյութով սրբել ներկն ու ուրիշ գույնով ներկել, բայց աչքն այնքան բնական ու գեղեցիկ էր ստացվել, որ չկարողացավ դա անել: Բրոշը դրեց սեղանի մի անկյունում՝ չորանալու ու անցավ մյուս գործերին:

Աշխատանքային օրը մոտեցավ ավարտին: Անետը հագնվեց ու դուրս եկավ սրահից: Դեռ դուռը չէր հասցրել փակել, երբ լսեց հազիվ ծանոթ մի ձայն.

– Հուսով եմ՝ ինձ ճանապարհելուց հետո նոր կփակես սրահը:

Մինչ Անետը կշրջվեր, որպեսզի համոզվեր՝ բժշկի ձայնն է, թե չէ, սիրտն սկսեց արագ աշխատել: Այս ընթացքում տղամարդը բարձրացավ սրահի աստիճաններն ու կանգնեց Անետի կողքին:

– Բարև: Կարող ենք, չէ՞, ներս անցնել:

Անետը տեսավ իր կողքին կանգնած ակնաբույժին ու շփոթված գլխով արեց, որովհետև սրահից դուրս գալիս մտածում էր, որ իր հաճախորդն այսօր էլ չեկավ: Մինչ Անետը հենց նոր փակած դուռը կբացեր, Ռոբը հարցրեց՝ պատրա՞ստ է արդյոք իր համազգեստը:

– Վաղուց է պատրաստ,– պատասխանեց Անետն ու ներս մտավ:

Ռոբը հետևեց նրան: Դիզայները գնաց դեպի սրահի խորքն ու վայրկյաններ անց առաջ եկավ՝ կախիչով համազգեստը ձեռքին: Զգուշությամբ վրայի պաշտպանիչ թաղանթը հանեց ու պատվերը մեկնեց այցելուին:

– Խնդրեմ, ճիշտ կլինի փորձեք նոր վճարեք:

– Ոնց ասես:

Անետը նկատեց, որ իր հաճախորդը շարունակում է իր հետ «դու»-ով խոսել, բժիշկն էլ իր հերթին զգաց, որ աղջիկը համառորեն չի անցնում «դու»-ի: Երիտասարդը քայլեց դեպի հանդերձասրահ ու մի քանի րոպե անց զգեստափոխված դուրս եկավ՝ քայլելով դեպ հայելին:

– Շատ լավ է, միայն թե խնդրանքս երևի թե չի ստացվել կատարել,– ասաց Ռոբը՝ հայելու մեջ իրեն տարբեր կողմերից նայելով:

– Ահ, քիչ էր մնում մոռանայի: Մի րոպե սպասեք,– ասաց դիզայներն ու գնաց դեպի գրասեղանը: Վերարկուն հանեց ու կախեց կախիչից, գրասեղանից վերցրեց բրոշն ու նորից հետ եկավ:

– Սա եմ պատրաստել, պիտի ամրացնենք ծոցագրպանի մոտ,– դեռ բժշկին չմոտեցած՝ ասաց Անետը՝ ձեռքը մեկնելով նրան:

– Դա ի՞նչ է,– զարմացավ Ռոբը:

– Բրոշ է՝ աչքի տեսքով:

– Այ քեզ մտքի թռիչք: Ասում էի, չէ՞, որ եթե ուզես, մի բան կմտածես,– ասաց բժիշկը՝ Անետի ձեռքից բրոշը վերցնելով:

Աղջիկը ժպտաց, ուրախացավ, որ իր աշխատանքը հավանության արժանացավ:

– Ցնցող է,– երկարացնելով ասաց Ռոբը՝ աչքերին չհավատալով, ապա շարունակեց,– ես էլ մտածում էի՝ ինչ պատրվակներ պիտի հորինեմ աչքերդ նորից տեսնելու համար: Միտումնավոր ես արել, չէ՞:

Անետը շիկնեց, ուզում էր ասել, որ իրականում պատահաբար է իր աչքերի գույնը ստացվել, ուզում էր պատմել, որ հայելին է մեղավոր, բայց չհասցրեց:

– Էական էլ չէ: Ուղղակի ընտիր է,– ասաց Ռոբը՝ չնկատելու տալով Անետի շփոթմունքը,– ինչպե՞ս ս պիտի ամրացնենք:

– Դուք հանեք համազգեստը, ես կամրացնեմ:

– Չէ, ավելի լավ է էսպես փորձիր, որ տեսնենք, թե որ հատվածում հարմար կլինի,– ասաց Ռոբն ու բրոշը ձեռքին քայլեց դեպի հայելու կողմը:

Անետը հետևեց նրան:

– Օրինակ էստեղ, չէ՞, ավելի լավ է այ էստեղ,– ասաց ակնաբույժը՝ ծոցագրպանի վերևի հատվածի վրա բրոշը պահելով ու դեպի դիզայները դառնալով:

– Լավ է, չէ՞:

– Ըհը, լավ է,– պատասխանեց Անետը, որ այժմ կանգնած էր երիտասարդի կողքին՝ հայելու դիմաց: Ինչ խոսք, արտասովոր տեսարան էր: Առաջին անգամ իրար կողքի կանգնած էին, ու աղջիկը չգիտեր, թե ինչպես հայելուց թաքցներ իր վարդագունած այտերը: Նա սպասում էր, որ բժիշկը վերջապես բրոշն իրեն տա, բայց վերջինս դեռ չէր կողմնորոշվում, թե որտեղ պիտի այն ամրացվի:

– Տվեք տեսնենք,– ասաց Անետը՝ ձեռքը մեկնելով բժշկին:

Բժիշկը բրոշը դրեց աղջկա ափի մեջ ու նորից զգաց դրա սառնությունը:

– Նորից սառն են,– շշնջաց Ռոբը:

Անետը նորից շփոթվեց, բրոշը վերցրեց ու կանգնեց հաճախորդի դիմաց: Բրոշի հակառակ կողմում երկու բարակ երկաթե կեռիկներ կային: Անետը մկրատով փոքր անցքեր բացեց գրպանի վերևում, որպեսզի կեռիկները տեղավորվեին դրանց մեջ: Կանգնած էին դեմ դիմաց: Ռոբը զգում էր Անետի ծանր շնչառությունը: Անետը զգում էր

Ռոբի՝ իրեն արդեն ծանոթ ինքնավստահ հանգստությունը, որից ինքն ավելի էր շփոթվում: Լարված լռությունը հանկարծ խախտվեց. բրոշն Անետի ձեռքից ընկավ հատակին: Երկուսով միաժամանակ կռացան բրոշը վերցնելու: Աղջիկը ձեռքը տարավ դեպի բրոշն ու վերցրեց այն: Ռոբը բռնեց Անետի ձեռքը. նորից սարսռաց: Աղջիկն առանց կանգնելու դանդաղ գլուխը վերև հանեց ու աչքերը հառեց երիտասարդի դեմքին: Ռոբը, Անետի աչքերին նայելով, ձեռքը բռնած վերև հանեց նրան: Դիզայներն արագ ձեռքը հեռու տարավ, հապճեպ մոտեցավ բժշկին, բրոշն ամրացրեց համազգեստին ու հետ քաշվեց:

– Ընտիր է,– ասաց Ռոբը՝ նորից դեպի հայելին դառնալով,– սա ամենալավ բանն էր, որ կարող էիր մտածել: Աչքերդ միշտ հետս կլինեն: Օրվա մեջ, ուզենամ էլ, չեմ մոռանա: Ինձ էլ հենց դա է պետք: Երանի թե միտումնավոր արած լինես:

Անետը խառնվեց իրար, նման խոսքերի չէր սպասում, կտրուկ շրջվեց ու գնաց վերարկուն վերցնելու: Ռոբը քայլեց դեպի նա՝ ասելով.

– Կսպասե՞ս մի րոպե: Քեզ մի բան եմ ուզում ասել:

Անետը շրջվեց ու կանգ առավ: Ռոբը մոտեցավ նրան, կանգնեց դեմ դիմաց ու, նայելով աչքերի մեջ, ասաց.

– Չգիտեմ՝ ինչպես կարձագանքես, բայց պիտի ասեմ: Ինձ դուր ես գալիս: Ոնց որ թե սիրահարվել եմ քեզ:

Անետի առանց այն էլ խոշոր աչքերն ավելի խոշորացան: Կտրուկ շրջվեց՝ ապրումները թաքցնելու համար: Հա՛, հետաքրքրված էր իր հաճախորդով, ու այնպես էր ստացվել, որ ահագին ժամանակ է, ինչ ոչ մի օր չէր անցնում առանց նրա մասին մտածելու, բայց, ինչ խոսք, դեպքերի նման զարգացման չէր սպասում: Անետը կանգնած էր ապակե պատերի մոտ ու դուրս էր նայում: Քաղաքը հետզհետե մթնում էր: Երևում էին միայն մեքենաների լույսերը: Ռոբը մոտեցավ աղջկան ու կանգնելով նրա թիկունքի հետևում՝ շարունակեց.

– Ենթադրում էի, որ անակնկալի կգաս, բայց մեկ-մեկ էլ մտածում էի, թե արդեն գլխի ես ընկել: Չեմ կարող ասել, թե առաջին հայացքից եմ քեզ սիրահարվել, ինքս էլ չգիտեմ, թե մեր որ հանդիպման ժամանակ է դա եղել, բայց կարևոր էլ չէ: Կարևորն այն է, որ գիտեմ, թե ինչու ամբողջ օրը մտքիցս դուրս չես գալիս: Ու մեկ էլ գիտեմ, որ աչքերդ էին մեղավոր...

Անետը աչքերը կախեց... թվագրել է 1915. ուշ նշում

– Ճիշտ եմ ասում, ինձ աչքերդ են գրավել: Հավատա, անսահման երջանիկ կլինեմ, եթե զգացմունքներս չանտեսես, ու աշխարհով մեկ կլինեմ, եթե պատասխանես դրանց:

Անետը լռում էր: Անշարժ կանգնած՝ նայում էր դուրս: Ծառերի ճյուղերը, որ գրեթե առանց տերևի էին մնացել, շարժվում էին քամուց: Անետի մտքերն էլ էին ճյուղերի պես իրար խառնվել: Չգիտեր, թե ինչ ասեր: Ռոբը տեսնում էր աղջկա հոգեվիճակը, բայց չէր զղջում անկեղծանալու համար. չէ՞ որ երբ սկսում ես սիրել, ինքդ քեզ դա խոստովանելուց հետո ուզում ես նաև նրան խոստովանել, ում ուղղված է սերդ: Այդպես ավելի ես խաղաղվում ու ազնիվ ես դառնում քո, Նրա ու Սիրո առաջ...

– Մի բան ասա: Հաստատ ինչ-որ բան մտածում ես: Ասա՝ իմանամ: Ասում են՝ դեպի սիրտ տանող ամենամաքուր ու կարճ ճանապարհը անկեղծությունն է: Ես անկեղծ եմ հետդ, ուզում եմ՝ դու էլ անկեղծ լինես,– շշնջաց Ռոբը՝ Անետին նայելով:

– Ես... Ես ուղղակի...

– Դու ուղղակի չէիր սպասում, որ քեզ սիրո խոստովանություն կանեմ: Ես էլ չէի սպասում: Եթե անկեղծ՝ մտադրված չէի եկել: Սովորաբար որոշումներ կայացնելուց առաջ երկար-բարակ մտածում եմ, բայց սա էդ դեպքը չէր: Մտածելու բան էլ չկար, որովհետև ես կասկածներ չունեմ: Սիրահարվել եմ քեզ ու գիտեմ, որ ինձ հենց դու ես պետք:

– Բայց մենք իրար չենք ճանաչում:

– Ես քեզ ճանաչում եմ էնքան, ինչքան պետք է՝ հասկանալու համար՝ քեզ իմ կողքին պատկերացնում եմ, թե՞ չէ: Այ դու ինձ չես ճանաչում, բայց կուղղենք սխալը, եթե ուզես:

Անետը նորից լռում էր:

– Կուզե՞ս,– հարցրեց Ռոբը ու, տեսնելով, որ աղջիկը դժվարանում է պատասխանել, մի քայլ առաջ եկավ, հենվեց ապակուն ու ասաց.

– Ես կսպասեմ, ինչքան պետք լինի, ու մեծ հույս ունեմ, որ ժամանակն անտեղի չի անցնի: Բայց քանի ինձ չես ճանաչում, զգացմունքներիս պատասխանել չես կարող, դրա համար կշփվենք, մինչև հասկանաս, թե սիրտդ ինչ է ուզում:

– Պարտադրում ես,– հարցական հայացքով ակնաբույժին նայեց Անետը:

– Չէ՛, քո պատասխանն եմ հեշտացնում: Եթե հարցնեմ՝ շփվենք, թե չէ, պիտի նորից դժվարանաս պատասխանել, դրա համար էլ միանգամից առաջարկում եմ, ոչ թե հարցնում:

Անետի հեռախոսի ձայնը լսվեց: Մինչ աղջիկը քայլեց դեպի պայուսակը, Ռոբը նկատեց, որ իր հետ առաջին անգամ «դու»-ով խոսեցին: Սա արդեն իսկ առաջընթաց էր:

– Արդեն դուրս եմ գալիս, պա՛պ ջան, հանկարծակի գործեր եղան: Չէ՛, չէ՛, դու մի՛ արի, ես կգամ,– ասաց Անետը, հեռախոսն անջատեց ու վերարկուն վերցրեց ձեռքը:

– Ես կտանեմ քեզ,– միանգամից ասաց Ռոբը:

– Իսկ դու մի՞շտ ես ամեն ինչ բոլորի փոխարեն որոշում,– մի հեգնական հայացք բժշկի դեմքին ձգելով՝ հարցրեց Անետը:

– Դե, չգիտեմ... Եթե հարցնեի, ու անգամ ուզենայիր էլ, հաստատ չէիր բարձրաձայնի:

– Փաստորեն ոչ միայն որոշում ես, այլև մտածում ես դիմացինի փոխարեն: Ինչ տեսնում եմ՝ ամեն ինչի պատասխանն ունես:

Անետը քայլեց դեպի ելքը, Ռոբը հետևեց նրան: Մինչ աղջիկը դուռը կկողպեր, Ռոբը վազեց դեպի մեքենան ու բացեց դուռը: Անետը նստեց, ու շարժվեցին: Ճանապարհին աղջիկը մտածում էր, որ կարող էր հեշտությամբ մերժել ու չնստել մեքենան, բայց, չգիտես թե ինչու, մտքով անգամ չանցավ: «Տարօրինակ ներգործություն ունի էս տղան, ու դա հերքելն անիմաստ է»,– ասաց մտքում՝ շարֆի ծոփքերի հետ խաղալով: Բարեբախտաբար, խնդրահարույց խաչմերուկում խցանում չկար: Տասը րոպե չանցած՝ մեքենան կանգ առավ Անետենց փողոցում: Ամբողջ ճանապարհին Ռոբը միտումնավոր ոչինչ չասաց, բայց երբ կանգ առան, դարձավ աղջկան.

– Չե՞ս կարծում, որ ինչ-որ բան ենք մոռացել:

– Ի՞նչ,– զարմացավ Անետը:

– Համազգեստս,– ժպտալով ասաց երտասարդը:

Անետն էլ ժպտաց: Իրոք, իրենց ծանոթության մեղավորին մոռացել էին:

– Գումարն էլ չեմ վճարել,– շարունակեց Ռոբը:

– Ոչինչ:

– Կհանդիպենք ուրեմն:

Անետը ոչինչ չասաց, հաջողություն մաղթեց ու իջավ մեքենայից: Դեպի տուն տանող կարճ ճանապարհը նա շատ դանդաղ քայլերով անցավ՝ փորձելով ըմբռնել տեղի ունեցածը: Փորձեց նաև դեմքին խաղաղ արտահայտություն տալ, որպեսզի ընտանիքի անդամները չհասկանան, որ անհանգիստ է: Երբ տուն մտավ, ջերմ մթնոլորտն անմիջապես արեց իրենը: Անետին իր գիրկն առավ, հանգստացրեց ներաշխարհը, բայց ծնողները, իհարկե, զգացին, որ իրենց աղջիկն այսօր սովորականին նման չէ. չէ՞ որ ծնողները միշտ ամեն ինչ զգում են...

6

Ապա հանդարտվեց Սերը, կծկվեց սրտի մի անկյունում ու լռեց՝ մտածելով, որ կարևորի մասին չեն աղմկում, իսկ սերը ամենակարևոր զգացմունքներից մեկն է:

Մինչդեռ չեն աղմկում սիրո մասին, բայց ցույց են տալիս այն. չէ՞ որ այս ամենամաքուր ու ամենապարզ զգացմունքը միևնույն ժամանակ ամենանուրբն էլ է. կոտրվեց, էլ չի սոսնձվի:

Կիսաշրջազգեստը գրեթե պատրաստ էր: Ամբողջական տեսքի համար միայն երկու կոճակ էր պակասում: Անետը գրասեղանի դարակին մոտեցավ, որ կոճակներ ընտրի: Կոճակների տուփը վերցրեց, փնտրեց իր ուզածը, գտավ, բայց մի բան էլ նկատեց: Փոքր ծրար էր՝ խնամքով փակված: Ծրարը զգուշությամբ բացեց ու ժպտաց. Ռոբի համազգեստի բրոշներից էր: Քանի որ Ռոբը դրանք հաճախակի կորցնում կամ կոտրում էր, վերջին անգամ Անետը մի քանի հատ էր պատրաստել տվել:

– Երեք տարի, Ռո՛բ: Երեք տարի է, ինչ միասին ենք: Թվում է՝ մի ամբողջ կյանք ճանաչում ենք իրար, բայց մեկ-մեկ էլ տպավորություն է, ասես շատ կարճ ժամանակ է անցել մեր ծանոթության օրից: Ինչքան բան է եղել էս տարիների ընթացքում, ինչերի միջով եմ անցել, քանի անգամ եմ հիասթափվել ու նորովի սիրահարվել քեզ... Թվում է՝ այլ տարբերակ չկա, միշտ միասին ենք լինելու, բայց... «Բայց»-երն էնքան շատ են...

Անետը նայեց ժամացույցին: Եթե հիմա դուրս չգար, հաստատ կուշանար: Բրոշները նորից դրեց ծրարի մեջ, կոճակները թողեց սեղանին, փակեց սրահն ու նստեց առաջին պատահած տաքսին:

***

Սրճարանը գրեթե դատարկ էր: Շրջանաձև սրահում ընդամենը չորս-հինգ զբաղված սեղան կար, մնացածը հանգիստ սպասում էին իրենց այցելուներին: Սեղաններից մեկի մոտ մի երիտասարդ էր նստած, ձեռքին գարեջրի բաժակ կար, աչքերում՝ հոգնածություն: Մի աղջիկ ներս մտավ, աչքերով փնտրեց, գտավ երիտասարդին ու վազեց դեպի նա: Տղան վեր կացավ, ու գրկեցին իրար:

– Կարոտել էի,– շշնջաց տղան:

– Ես էլ,– ասաց աղջիկն ու նստեց,– մտածում էի՝ մոտոցիկլետով կլինես:

– Չէ, էնքան հոգնած եմ, որ չէի կարողանա վարել, ոտքով եմ:

– Հիշո՛ւմ ես՝ ինչքան էիր սիրում: Ինձ թվում էր՝ մինչև կյանքիդ վերջը միակ փոխադրամիջոցդ է լինելու:

– Էլի եմ սիրում, բայց էլ ամենօրյա չէ:

– Հա, պարզվում է՝ նախասիրություններն էլ են անցողիկ: Լավ, ավելի լավ է թռիչքից պատմիր: Շա՛տ ես հոգնել:

– Նկարագրել չեմ կարող: Հոգնելն էն խոսքը չէ: Լավ է, որ ուրբաթ է. մինչև երկուշաբթի կհասցնեմ մի քիչ հանգստանալ:

– Ճիշտ ես: Կհանգստանաս ու թարմ ուժերով կգնաս աշխատանքի:

– Հա, հուսով եմ՝ կլինիկայում ամեն ինչ կարգին է:

– Հաստատ կարգին կլինի: Միակ տարօրինակությունը երևի այն է, որ երկու շաբաթ ամեն օր ընդմիջման ժամին մի աղջիկ ակնաբուժական բաժանմունքի միջանցքով դեպի Արամյանի սենյակ չի վազել: Անսովոր էր, եթե անկեղծ: Մի տեսակ սովորություն է դարձել, ու դա չանելը դժվար էր:

– Իհարկե, դժվար կլինի: Ինձ համար էլ տարօրինակ էր, որ ամեն օր ընդմիջումից հետո քեզ չեմ ստիպում սրահ գնալ, որ այցելուների հերթ չգոյանա դռան մոտ:

– Երկու շաբաթ էր ընդամենը, Ռոբ, բայց ոնց որ երկար ժամանակ անցած լինի: Հուսով եմ՝ գոնե տեղին էր գնալդ:

– Տեղին էր, վերապատրաստումները միշտ էլ արդյունավետ են: Դրանք պարտադիր են տեղում չդոփելու ու նորությունները յուրացնելու համար:

– Կա՞ր նորություն:

– Իհարկե, ու աննախադեպ:

Երիտասարդի հեռախոսին հաղորդագրություն եկավ, հետո ևս մեկը, երրորդը, մի քանիսը իրար հետևից: Աղջիկն ուշադրություն չդարձրեց, բայց երբ Ռոբը հեռախոսը ձեռքն առավ, տարված ու ժպիտով սկսեց պատասխանել հաղորդագրություններին, խոսակցությունը շարունակելը դժվարացավ, որովհետև տղան արդեն չէր լսում Անետին: Վերջինս լռեց, սառը թեյից մի կում արեց ու սկսեց շուրջբոլորը նայել: Կողքի սեղանին մի երիտասարդ էր նստած: Մեկը մյուսի հետևից ծխախոտ էր հանգցնում մոխրամանի մեջ: Կարմրած աչքերն արցունքախոն էին, արտահայտիչ երակներով ձեռքերը դողում էին: Պատուհանի մոտ դրված սեղանի մոտ մի ընտանիք էր նստած: Տղամարդը քառասունին մոտ կլիներ, կինը՝ մի քիչ ավելի երիտասարդ: Գրեթե չէին խոսում իրար հետ, խոսելու ժամանակ էլ կցկտուր արտահայտություններ էին անում ու կտրուկ եզրափակում՝ կարծիքների բախումից խուսափելու համար: Այսպես միշտ լինում է, երբ դադարում են սիրել... Կարծիքներն ամենահասարակ հարցի շուրջ էլ բախվում են... Մոտ տասը

տարեկան երեխան ինչ-որ բան էր ուտում ու տխուր աչքերով նայում մեկ հորը, մեկ մորը:

– Ինչի՞ ես ժպտում,– հարցրեց Ամետը, երբ հայացքն ընկավ Ռոբի դեմքին ու տեսավ, որ վերջինս մտքերով դեռ ուրիշ տեղ է:

– Հիվանդներս են, Ա՛ն: Սոցցանցերում գրառում էի արել, թե ինչ նորույթ ենք ունենալու կլինիկայում շուտով, հետաքրքրված հարցուփորձ են անում:

– Իսկ դու նրանց հետ հավասար ուրախանում ես:

– Իհարկե, որ իմանաս ինչ է հնարավոր անել նոր սարքավորումներով, դու էլ կուրախանաս:

– Եթե բոլոր հիվանդները քեզ նման բժիշկ ունենային, կերազեին անընդհատ հիվանդանոցներ այցելել:

– Վերջացրու՛: Ո՞վ է երազում բժշկի գնալու մասին: Երանի հիվանդները գնալով միայն պակասեն:

– Երանի...

– Ինչ կուզես: Սիրածդ թխվածքից պատվիրենք,– ևս մի քանի րոպե հեռախոսը փորփրելուց հետո հարցրեց Ռոբը:

– Չէ, ճիշտն ասած ուզում եմ դուրս գանք: Քայլելն ավելի հաճելի կլինի, քան էստեղ նստելը:

– Ոնց կուզես, դուրս գանք ուրեմն:

Դրսում, իրոք, հրաշալի եղանակ էր: Թեթև, մաքուր օդ, տաք ու հաճելի քամի: Այն էր, ինչ պետք էր հանգիստ քայլելու համար: Ռոբը միանգամից հասկացավ, թե ինչու էր սրճարանն այդքան դատարկ: Որովհետև բոլորը դրսում էին, մարդիկ կարոտել էին գարնանը: Երբ մեկնեց արտերկիր, գարունը նոր էր սկսվում, իսկ հիմա՝ երկու շաբաթ հետո, թվում է՝ այս քաղաքում միշտ գարուն է եղել...

Քայլում էին դանդաղ՝ չորս կողմը նայելով, առանց խոսելու: Աղջիկը մտքերով հեռու էր, հաճախ խոր շունչ էր քաշում, Ռոբն էլ առանձնապես հաճույք չէր ստանում քայլելուց: Նա ուզում էր մի լավ բան անել Ամետի համար, գիտեր, որ աղջիկը դրան է սպասում, բայց այնքան հոգնած էր, որ ուզում էր րոպե առաջ տուն հասնել ու պառկել: Ամետը մտածում էր գրկել Ռոբին, նորից ասել, որ կարոտել է, բայց մի բան խանգարում էր... Երկուսն էլ չգիտեին, թե ինչից է գալիս այն սառնությունը,

որը խանգարում էր առաջվա նման շփվել իրար հետ: Երկուսն էլ ժամանակ առ ժամանակ մտածում էին դրա մասին, բայց չէին կարողանում պատճառները հասկանալ ու քայլեր ձեռնարկել: Երևի խնդիրը նրանում էր, որ մեկը մյուսից էր օգնություն ակնկալում, յուրաքանչյուրը մտածում էր, որ դիմացինը մի քայլ կանի հարաբերություններին նոր շունչ տալու համար, բայց ոչ ոք ոչինչ չէր անում...

Եվս մի քանի րոպե լռելուց հետո Անետը հարցրեց, թե ինչ ակնաբուժական նորամուծության մասին էր խոսում Ռոբը սրճարանում: Սա հարցրեց ուղղակի մի թեմայից խոսելու համար, բայց Ռոբն ասաց, որ երկար պատմություն է, երբ արդեն կլինիկայում լինի տեխնիկան, կխոսի այդ մասին: Անետն էլ ոչինչ չասաց: Ճանապարհը երկարեց, անգամ ձանձրալի դարձավ... Անետը հիշեց այն խցանումը, որի ժամանակ վայրկյաններն էր հաշվում, թե երբ պիտի իջնի մեքենայից: Այն ժամանակ դեռ իրար չէին ճանաչում, իսկ հիմա...

Երբ հասան Անետենց փողոցի մոտ, Անետը լուռ ձգվեց դեպի Ռոբը, այտը համբուրեց ու դանդաղ քայլեց դեպի իրենց տան կողմը: Սա սովորական ժեստ էր դարձել, առաջ այդ մի համբույրի մեջ այնքա՛ն բան կար՝ սեր, որ բառերով չէր նկարագրվում, բայց տեղավորվում էր այդ մի համբույրի մեջ, ուժ, որ օգնելու էր դիմանալ մինչև հաջորդ օրը... Իսկ հիմա դա ուղղակի սովորություն էր, որի մեջ ոչինչ չէր մնացել՝ անցյալի զգացողությունները հիշեցնելու հատկությունից բացի: Աղջկա գնալուն պես Ռոբը շրջվեց՝ արագ քայլերով հասնելով անկյունում կանգնած տաքսիին: Նստեց, գլուխը հենեց թիկնակին ու գրեթե ամբողջ ճանապարհին աչքերը չբացեց: Տուն մտնելուն պես միանգամից ննջարան գնաց ու ընկավ անկողնուն: Առավոտյան, երբ արթնացավ, հիշեց նախորդ ծանրաբեռնված օրերը, հիշեց նաև, թե ինչպիսի օրեր են սպասվում, ու մի կերպ իրեն ստիպելով՝ գնաց լողասենյակ:

7

Իսկ հետո եկան զգացողություններ, որոնք նկարագրելը դժվար է,
որովհետև մենք հազար ու մի բառ ենք իրար կպցնում՝
մեր սիրո ձևն ու չափը ցույց տալ կարողանալու համար,
բայց գրեթե երբեք չենք խոսում չսիրելու մասին...
Դա ոչ միայն նկարագրելն է դժվար, այլև ընդունելը:
Հաճախ մենք ինքներս չենք զգում, թե երբ դադարեցինք սիրել...

***

Սերը քչանում է, երբ իրար հետ անցկացրած ժամանակը
քիչ է անգամ հնարավորության դեպքում, երբ նկատում ես,
որ ավելի շատ մենակ մնալ ես ձգտում,
քան նրա հետ առանձնանալ, իսկ երբ միասին եք,
ժամանակն առաջ չի գնում, բայց ո՛չ սիրո պատճառով...

Աշխատանքային օրը մոտենում էր ավարտին: Անետն ամբողջ օրը մի շրջազգեստի վրա էր աշխատել: Չնայած որ գործն առաջ էր գնացել, որովհետև հոգեվիճակը սովորաբար աշխատել չէր խանգարում, բայց, այնուամենայնիվ, ուշքն ու միտքն ուրիշ տեղ էին՝ սրահից շատ հեռու: Ուղեղում շարունակ նույն անպատասխան հարցերն էին: Կիսաշրջազգեստը հագցրեց մանեկենին, մի անգամ էլ զննեց աշխատանքը բոլոր կողմերից ու ինքն իր արածին հավանություն տալով՝ քայլեց դեպի հայելին: Պայուսակն ու պիջակը դեռ չէր վերցրել, որ դուրս գա, դուռը բացվեց, ու ներս մտավ Ռոբը՝ Անետի սիրած դաշտային ծաղիկների փունջը ձեռքին: Աղջիկն անակնկալի եկավ, բայց փորձեց ցույց չտալ: Ռոբը դանդաղ մոտեցավ Անետին: Այնպիսի տպավորություն էր, կարծես չգիտեր, թե ինչ ասեր: Եկավ կանգնեց աղջկա դիմաց: Վերջինս տխուր հայացքով նայում էր Ռոբին:

– Ա՛ն, կներես ինձ:

Անետը ոչինչ չասաց:

– Էս ծաղիկները՝ քեզ:

Ռոբը փունջը մեկնեց Անետին, բայց ձեռքն էլ ծաղիկների հետ մնաց օդում:

– Չե՞ս լսում, Ա՛ն: Կներե՛ս:

– Ընդունեցի՛ր սխալդ:

– Լավ էլի, մի՛ սկսի:

– Չե՞ս ընդունել ուրեմն: Բա ներողությունն ինչի՞ համար է: Որ էս վեճն էլ՛ անցնի:

– Ա՛ն...

– Ի՞նչ, Ռո՛բ: Սխա՛լ եմ ասում: Ախր ես քեզ անգիր գիտեմ:

– Հա՛, դու ինձ անգիր գիտես: Դրա համար էլ չպիտի կասկածես:

– Քե՛զ գիտեմ, բայց ոչ շրջապատիդ մարդկանց:

– Ա՛ն, լսի...

– Ծաղիկները բերել ես, որ մոռանամ եղածն ու առա՛ջ անցնենք, բայց չես ընդունում, որ սխալ ես արել: Ուղղակի չես ուզում, որ վիճենք:

– Ա՛ն, ես սխալ էի, բայց դու էլ ճիշտ չէիր: Պիտի լսեիր ինձ:

– Ուրեմն ի՞նչ է դուրս գալիս:

– Չգիտեմ, արի ուղղակի մոռանանք:

– Իրերն են մոռանում, ճանապարհը, հազիվ ծանոթ մեկի անունը, բայց ո՛չ հոգին ցնցող դեպքերն ու մարդկանց:

– Ա՛ն, մի անգամ էլ եմ ասում: Էն, ինչ տեսար երեկ, զուտ հիվանդի շնորհակալության դրսևորումն էր: Ուրիշ ոչինչ:

– Քո բոլոր հիվանդները քեզ ամուր գրկում են ու աչքերը փակո՛ւմ:

– Չէ՛, Ա՛ն:

– Ճիշտ ես, ոչ բոլորը:

– Ա–նե՛տ...

Անետը շրջվեց ու գնաց դեպի սրահի խորքը: Ռոբը, ծաղիկները ձեռքին, մնաց կանգնած: Աղջիկը դանդաղ քայլում էր սրահի ազատ տարածությունում: Բժիշկը մի քանի վայրկյան կանգնեց, հետո խոսելով գնաց դեպի սիրած աղջիկը:

– Ա՛ն, էլ չգիտեմ՝ ինչ ասեմ, որ հավատաս ինձ: Ախր ասելու բան էլ չկա: Սոնան իմացավ, որ իր տեսողական խնդիրը շտկող սարքավորում ենք ունենալու շատ շուտով, բացատրեցի, որ կկարողանա բոլորի նման լիարժեք տեսնել: Ուրախությունից կորցրեց իրեն, վեր կացավ ու փաթաթվեց ինձ: Հենց նույն վայրկյանին դու դուռը բացեցիր:

– Երանի չգայի...

– Ա՛ն, ինչի՞ ես բարդացնում ամեն ինչ: Քեզ հաճելի՞ է չնչին բանը խնդիր դարձնել:

– Հա, իհարկե, երազում եմ նման խնդիրների մասին:

– Բա տես, անտեղի նեղվում ես, ինձ էլ ստիպում չգիտեմ ինչի համար արդարանալ: Մեր միջև ոչ մի բան չկա:

– Եթե մի ռոպե անգամ հակառակը մտածեի, հիմա էստեղ կանգնած չէինք լինի:

– Ես հո գիտեմ, որ հավատում ես ինձ, ուղղակի չեմ հասկանում, թե ինչի ես երկարացնում: Որ ես արդարանամ, թե՞ ինձ մեղավոր զգամ:

– Որովհետև իմ ամենավատ երազում անգամ նման տեսարան չէի պատկերացրել: Իմ փոխարեն դու լինեիր, ինչ կմտածեիր, եթե ներս մտնեիր մի պահի, երբ մի տղայի գրկել ու...

– Լավ, վերջ, նման բան չէր կարող լինել:

– Ինչի՞, ես թույլ չէի՞ տա: Իսկ դու թույլ ես տալիս:

– Ա՛ն, արի էլ չխոսենք էս մասին: Մոռացի ու վերջ:

– Հեշտ չէ, գիտե՞ս:

– Քո բնավորությունն իմանալով՝ գիտեմ, բայց, հավատա՝ չարժի էդքան խորանալ:

Ռոբը նորից մեկնեց ծաղիկներն Անետին.

– Էս ծաղիկներն էլ վերցրու ու արի գրկեմ: Քո սիրածներն են, չէ՞:

– Հա, բայց պարտադիր չէր:

– Պարտադիր չէր, ուզեցի ուրախացնել ու ասել, որ սիրում եմ քեզ:

– Դրանք շատ քիչ են ուրախանալու համար, երբ սիրտդ ուրախ չէ: Ու վերջապես, սերը ծաղիկների հետ ինչ կապ ունի. այն հարգանք է, հավատարմություն ու վստահություն: Մնացածը երկրորդական են:

– Լավ, լավ, արի դուրս գանք, տրամադրությունդ կփոխենք հաստատ: Մոտոցիկլետով եմ:

– Բա ասում էիր՝ նախասիրությունները փոխվում են...

– Գիտեմ, որ սիրում ես: Դրա համար սրանով եկա:

Անետը ծաղիկները դրեց ջրի մեջ ու փակեց սրահը: Քայլեցին դեպի մոտոցիկլետը: Ռոբը նստեց ու վերցրեց սաղավարտը: Անետն էլ նույնն արեց՝ թիկունքից գրկելով Ռոբին: Քամին ու արագությունը տարօրինակ կերպով դուր էին գալիս աղջկան: Մոտոցիկլետ նստելուց հետո միշտ անսովոր թեթևություն էր զգում: Անետն աչքերը փակեց ու գլուխը դրեց Ռոբի թիկունքին: Նրան այնքան ամուր էր փաթաթվել, ասես եթե մի քիչ թույլ գրկեր, ընկնելու էր մոտոցիկլետից: Աղջիկը հանկարծ հիշեց, թե առաջին անգամ մոտոցիկլետ նստելիս ինչքան վախեցած էր ու որքան անհարմար էր զգում գրկել Ռոբին, որովհետև ուրիշ տարբերակ չկար, իսկ իրենք ընդամենը երկրորդ անգամ էին ժամադրվել: Հիշեց, որ ուզում էր դրպե առաջ իջնել մոտոցիկլետից, իսկ կանգնելուց հետո նորից պանալ էր ուզում, որովհետև տպավորություններն աննկարագրելի էին: Իսկ այժմ՝ երեք տարի անց, դա սովորական էր դարձել: Սովորական էր, առհասարակ, ամեն ինչը: Ամեն բան մի օր սովորական է թվում, երբ նոր շունչ չի լինում, հետաքրքրությունները քչանում են, ու առօրյան միապաղաղ է դառնում... Անետը զգում էր, որ ոչինչ առաջվանը չէ: Զգում էր, բայց հաճախ փորձում էր շրջանցել այս միտքը: Չնայած որ անհնար է խուսափել այն մտքերից, որոնք հենց հոգով են զգում: Անետը գիտեր, որ իրենց հարաբերություններն այն չեն, ինչ երեք տարի առաջ էր, գիտեր, բայց ոչինչ չէր կարողանում անել, որովհետև սիրո համար միայնակ չեն պայքարում: Ու ինչքան էլ

որ շատերի համար նախանձելի օրինակ էին կամ իրենք իրենց անգամ չէին խոստովանում, որ այլևս առաջվանը չեն, միևնույն է, դա ակնհայտ էր, հատկապես Անետի համար: Որովհետև կինը ամեն ինչ գիտի: Ամեն ինչ զգում է: Նա տեսնում է, թե իրեն ինչ աչքերով են նայում... Կամ իր աչքերին նայում են, թե՞ չէ...

***

Ամեն զույգ իր սիրած վայրերն ունի: Դրանք կարող են լինել մի քանիսը կամ ընդամենը մեկը: Քանակն էական չէ, կարևորը անկեղծ ու խաղաղ սրտով կողք կողքի նստելն է: Ռոբի ու Անետի սիրելի վայրերից էին բարձրահարկ շենքերի տանիքները: Գրեթե բոլորն անգիր գիտեին: Այս տեղերից կարելի էր երկար հիանալ քաղաքի լույսերով: Մոտոցիկլետը կանգ առավ բարձրահարկ շենքերից մեկի մոտ: Երկուսով իջան ու գնացին դեպի տանիք տանող աստիճանները: Մութ էր ու քամոտ: Տանիքի եզրին ցածր քարե պարիսպ կար՝ ընդամենը երկու շարքով շարված: Մոտեցան դրան ու նստեցին իրար կողքի: Ռոբը ձեռքը տարավ Անետի մեջքին ու գրկելով մոտեցրեց իրեն: Անետն ակամայից գլուխը հենեց տղայի ուսին: Դիմացի շենքի պատուհաններն ասես ինչ-որ բան էին շշնջում, յուրաքանչյուրն իր բնակիչների մասին: Ռոբն էլ էր ուզում ինչ-որ բան ասել, բայց չէր ստացվում: Ահագին լռելուց հետո Անետը միանգամից հարցրեց.

– Ինչի՞ երեկ չեկար:

– Ուզում էի գայի, բայց չհասցրի:

– Օրվա մեջ ոչ մի րոպե՞:

– Վիրահատությունների օր էր:

– Գիտեմ, բա ընդմիջո՞ւմը:

– Չստացվեց գալ, Ա՛ն:

– Եթե շատ ուզեիր, կես ժամ հաստատ ժամանակ կգտնեիր, ուղղակի հիվանդներդ ավելի կարևոր են միշտ:

– Կարևոր են, բայց համեմատել պետք չէ: Յուրաքանչյուրդ ձեր տեղն ունեք:

– Հա՞:

– Հաստատ:

Անետը գլուխը տարուբերեց ու թեքեց դեպի ձախ՝ փողոցի կողմը: Մեքենաների շարժը գնալով պակասում էր:

– Եթե ուզում էիր խոսեինք, ինչի՞ զանգերիս չէիր պատասխանում,– կտրուկ հարցրեց Ռոբը:

– Որովհետև ուզում էի, որ գայիր:

– Քեզ երբեք չեմ հասկանա, Անե՛տ: Քայլող հանելուկ ես:

– Իսկ դու երբեք չես էլ փորձում:

– Փորձում եմ, բայց չի ստացվում:

Անետը նորից գլուխը տարուբերեց: Ռոբը վաղուց գիտեր այս ժեստի նշանակությունը: Այսինքն Անետն իր ասածի հետ համաձայն չէր, բայց իրենը պնդելու ցանկություն չուներ: Կա՛մ անիմաստ էր համարում, կա՛մ գիտեր, որ Ռոբը ուշադրություն չի դարձնելու:

– Ա՛ն, գիտե՛ս՝ ինչից եմ միշտ նեղվում:

– Ինչի՞ց:

– Որ քո կարծիքով՝ միշտ քեզնից կարևոր գործեր ունեմ:

Անետը գլուխը հանեց Ռոբի ուսից ու նայեց նրա աչքերին:

– Քո կարծիքով՝ անկարևոր մեկին կողքիս կպահեի՞:

Բառերը մեխվեցին աղջկա գլխի մեջ: Նախկինում գուցե երբեք ուշադրություն չդարձներ նման արտահայտությանը, բայց այժմ լսեց ու վերլուծեց այն բառացիորեն:

– Այսինքն դո՞ւ ես ինձ կողքիդ պահում: Երբ չուզես, էլ չե՞ս պահի:

– Չխորանաս, Ա՛ն, հայոց լեզվի դաս չէ: Ինձ համար շատ կարևոր ես, ուղղակի աշխատանքս ժամանակիս մեծ մասը գողանում է, բայց միշտ մտքիս մեջ ես: Գիտես, չէ՞:

Անետը գլխով արեց: Ռոբը նորից աղջկա գլուխը մոտեցրեց իրեն:

– Նրան էլի՞ ես տեսնելու,– հանկարծակի հարցրեց Անետը:

– Ո՞ւմ,– զարմացավ Ռոբը:

– Էն աղջկան, հասկացար արդեն:

– Հա, Սոնայի՞ն: Պիտի գա, որ վիրահատենք:

– Դո՞ւ:

– Ինձ մոտ է գրանցված, Անե՛տ, բա ո՞վ վիրահատի:

– Պարզ է:

– Ա՛ն, դա ամենավերջին թեման է, որով պիտի ուղեղդ ծանրաբեռնես: Նա իմ հերթական հիվանդն է ու ուրիշ ոչինչ: Երկու տեսակի աղջիկներ կան՝ դու ու մնացածը: Վերջիններն ինձ չեն հետաքրքրում:

Անետը մի հայացք գցեց Ռոբի երեսին: Ռոբն էլ երկար նայեց աղջկա աչքերին: Ախր դրանք իր սիրած ու այդքան լավ ճանաչած աչքերն էին, որոնց, նկատեց, որ ահագին ժամանակ է, ինչ երկար չէր նայել: Անետը վեր կացավ նստած տեղից ու կանգնեց՝ գլուխը վերև պարզելով: Երկնքին էր նայում: Լուսինն ու աստղերն այնքան լուռ էին, ասես քաղաքի շշուկներին էին ականջ դնում: Դրանցից մեկն էլ իրենցն էր, իրենց սիրո լուռ պատմությունը... Աղջիկը սկսեց քայլել տանիքի վրա: Հաճախակի կանգնում էր, նորից երկնքին նայում ու խոր շունչ քաշում, հետո նորից քայլում էր՝ ոտքերի առաջ նայելով: Եվս մի քանի պտույտ հարթ կտուրի վրա, ու կանգ առավ, նկատեց, որ Ռոբը ոտքերը դրել է քարերին ու դեմքով դարձել դեպի փողոցը: Անետը քայլեց դեպի երիտասարդը ու նրա պես նստեց քարերին, այս անգամ նրանից փոքր-ինչ հեռու, այնպես, որ նրանց արանքում ևս մեկ մարդ կարող էր նստել: Նստած էին լուռ ու մտամոլոր: Երկուսի մտքերն էլ ուրիշ տեղերում էին, երկուսն էլ գուցե ուզում էին խոսել, բայց մի բան խանգարում էր: Քամին Անետի մազերի հետ էր խաղում, շնկշնկում էր, զգալ տալիս իրեն՝ փորձելով օգնել... Երբ տեսավ, որ անօգուտ է, մեծ ուժ գործադրեց: Անետը սարսռաց մի պահ: Ռոբը, թեև մտքերով հեռու էր, պիջակը հանեց ու միանգամից գցեց Անետի մեջքին: Վերջինս նորից զգաց իր սիրելի ջերմությունը, նորից առավ իր ամենասիրած հոտն ու պարանոցն ինչքան հնարավոր էր ծածկեց պիջակով: Ռոբը գլուխը դարձրեց Անետին, նայեց նրան երկար, ուղղեց քամուց խռնված մազերը՝ զգուշությամբ մազերն ականջի հետևում տեղավորելով, ու ասաց.

– Անե՛տ, երևի քեզ առաջին ու վերջին անգամն եմ նման բան ասում: Ուզում եմ՝ միշտ հիշես, ցանկացած իրավիճակում, անկախ նրանից, թե ինչքան ժամանակ անցած կլինի, իմ ու ցանկացած ուրիշ աղջկա միջև երբեք ոչինչ չի կարող լինել, որովհետև ես քեզ եմ սիրում: Իմ սրտին դու ես բաժին հասել. ինձ ուրիշը պետք չէ: Քո աչքերը չափից դուրս շատ եմ սիրում, որ ուրիշ աչքերով տարվեմ... Դու դա գիտես: Քեզ գտել եմ հազարավոր աչքերի նայելուց հետո, ու մտքովդ անգամ թող չանցնի, թե աչքերս էլի պիտի փնտրել շարունակեն. ես գտել եմ իմը:

Անետը ժպտաց: Ինչ խոսք, սիրուն էր հնչում: «Ինչքա՛ն հեշտ ենք մարդկանց սեփականացնում, մի գրքի կամ հագուստի պես,– մտածեց Անետը,– ինչքան հեշտությամբ ենք ինչ-որ մեկին մերը համարում,

մինչդեռ այդպես ուղղակի չի լինում: Չի լինում և վերջ: Մարդն ինչ-որ մեկի չի կարող պատկանել»: Անետը վայրկյանական հիշեց բոպեներ առաջ Ռոբի ասած բառերն ու շշնջաց.

– Ես կողքիդ եմ, որովհետև ինձ քոնն ես համարում...

– Ինչ-որ բա՛ն ասացիր:

– Չէ, ուզում եմ՝ գնանք արդեն:

– Էսքան շո՛ւտ: Քեզնից չէ: Միշտ խնդրում էիր, որ երկար մնայինք:

– Հա, չգիտեմ, տուն եմ ուզում,– ինքն իր ցանկությունից զարմացած՝ ասաց Անետը՝ մտածելով, թե ինչքան են փոխվում մարդիկ՝ անկախ իրենց կամքից: Մի ժամանակ ամեն ինչի պատրաստ էր, որ մի բոպե ավել մնային միասին, ժամանակը կանգ էր առնում, երբ իրար կողքի էին, ու իրեն ոչինչ պետք չէր՝ բացի Ռոբի ներկայությունից: Մի ժամանակ ամեն ինչ ուրիշ էր...

– Վաղը կարևոր օր է,– ասաց Անետը՝ Ռոբին դառնալով:

– Ինչի՞,– զարմացած Անետին նայեց Ռոբը:

– Իսեսի հրուշակարանի բացումն է: Մոռացե՞լ ես:

– Ճիշտ ես, մոռացել էի...

– Դու միշտ ամեն ինչ մոռանում ես:

– Մի՛ սկսի: Ուղղակի մտքերս միշտ խառն են: Լավ, վեր կաց գնանք,– շրջվելով ու ձեռքն Անետին մեկնելով ասաց Ռոբը: Մոտոցիկլետը ներքևում իրենց էր սպասում: Երբ հասան Անետենց տան մոտ, Ռոբը հարցրեց, թե Անետը դեռ նեղացա՞ծ է: Օրիորդն ուսերը թոթվեց:

– Այսինքն դեռ նեղացած ես: Ես զգում եմ, որ քեզ նման չես, բայց ի՞նչ անեմ, որ մտքիցդ հանես էդ հիմարությունները:

– Կանցնի քիչ-քիչ:

– Լավ, դե գնա: Կհանդիպենք վաղը:

Գրկեցին իրար, ու Անետը դանդաղ քայլերով անցավ փողոցը: Ռոբը շարժիչը գործի դրեց՝ սլանալով մթության մեջ:

8

Սերը հոգս է ցնդում, եթե ձեր միջև եղած ազատ տարածությունն ընդամենը օդ է, ուրիշ ոչինչ... Եվ այդ օդը բառերով լցնել անգամ ձանձրանում ես, մինչդեռ մի ժամանակ ժամերով կարող էիր խոսել զգացմունքներիցդ:

– Ինչ լավ անցավ ամեն ինչ, չէ՞, Ինեա՛:

– Հա, շատ: Մենակ ափսոս Ռոբը չկար:

– Դե, ինքը միշտ չի հասցնում ներկա գտնվել, անգամ ամենակարևոր օրերին:

– Ես չեմ նեղանում, Ա՛ն: Իր գործի բնույթն է էդպիսին:

– Ես էլ չեմ նեղանում: Սովորական է դարձել արդեն:

Ինեսը Ռոբի քույրն էր: Ահագին ժամանակ է, ինչ Ռոբը ծանոթացրել էր Անետի հետ, ու վերջիններս մտերիմ ընկերուհիներ էին դարձել: Ինեսն այս երկուսի հարաբերությունների մշտական վկան էր, խորհրդատուն ու հաշտարարը: Եթե մեկը նեղվեր մյուսից, Ինեսին էր բողոքելու, մեկը խորհրդի կարիք ունենար, Ինեսին էր դիմելու: Երկուսի համար էլ հեշտ էր, որովհետև կար մի մարդ, որը երկուսին էլ լավ էր ճանաչում և իր խելամիտ խորհուրդներով կարողանում էր տարբեր իրավիճակներից ճիշտ ելք գտնել: Համեմատաբար դժվար էր Ինեսի համար, քանի որ միշտ աշխատում էր այնպես անել, որ ինչ-որ մեկի օգտին որոշում կայացնելիս մյուսը չտուժեր. չէ՞ որ մի կողմում եղբայրն էր, մյուսում՝ ընկերուհին:

– Ա՛ն, ինձ թվում է՝ վաղը նոր կյանք եմ սկսելու: Արթնանալու եմ, գալու եմ էստեղ ու զբաղվելու եմ իմ սիրած գործով:

– Մինչ այսօր էլ էիր զբաղվում:

– Հա, բայց հիմա ես իմ անկյունն ունեմ, ու էստեղ ամեն ինչ ուրիշ է լինելու:

– Ճիշտ ես, էսպես երևի ավելի կենտրոնացած կաշխատես:

Ռոբի մեքենան կանգ առավ հրուշակարանի դիմաց: Արագ իջավ ու քայլեց դեպի մուտքը: Ինչ խոսք, սպասում էր, որ ուշացած կլինի, բայց չէր մտածում, որ կհասնի այն ժամանակ, երբ այստեղ էլ ոչ ոք չի լինի՝ Անետից ու քրոջից բացի:

– Էս աստիճանի եմ ուշացել, հա՛, արդեն հավաքվում եք: Կներես, Ինեա՛, ավելի շուտ չկարողացա գալ,– ասաց Ռոբը՝ քայլելով դեպի քույրը:

– Ոչինչ, Ռո՛բ, գիտեմ, որ եթե հասցնեիր, կգայիր:

– Եթե մի հիվանդի խնդրեր այսօրվա փոխարեն վաղը գալ, հաստատ կհասցներ,– հանդիմանական տոնով ասաց Անետը, ապա ավելացրեց,– ուղղակի ինքը երբեք ոչ ոքի ոչինչ չի խնդրում:

– Դու հարմար առիթի ես սպասում, որ ինձ դիտողությո՛ւն անես,– զայրացած ասաց Ռոբը:

– Բոլորովին, ուղղակի դու միշտ ուշանում ես կամ ամենավերջին պահին ես հասնում,– պատասխանեց Անետը:

– Լավ, լավ, եկեք չվիճենք, օգնեք արագ կարգի բերենք էստեղ,– առաջարկեց Ինեսը, որ սիրում էր ամեն ինչ հարթել ու այս երկուսի հարաբերություններում խաղաղության աղավնի էր:

Երեքով գործի անցան: Կես ժամ չանցած՝ ասես ոչ մի իրարանցում էլ չէր եղել նորաբաց հրուշակարանում:

– Մի տեղ չգնա՞նք, կնշենք համ էլ,– առաջարկեց Ռոբը:

Ինեսն ուրախությամբ համաձայնեց, իսկ Անետը համաձայնեց զուտ ընկերուհուն չնեղացնելու համար: Որոշեցին գնալ իրենց սիրած սրճարաններից մեկը, որտեղ միշտ հանգստացնող մթնոլորտ էր, ու հաճելի երաժշտություն էր հնչում: Սրճարանը, հուրախություն Ռոբի, մարդաշատ չէր: Նման վայրերից միշտ խուսափում էր, աղմուկից նեղվում էր, միշտ խաղաղ հանգստի էր ձգտում, իսկ ահա Անետի մոտ ամեն ինչ այլ էր: Սիրում էր մարդաշատ վայրեր, բարձր երաժշտություն, պարեր: Ժամերով կարող էր մնալ իրեն դուր եկած միջավայրում ու չձանձրանալ: Ի հակադրություն նրա՝ Ռոբն ամեն ինչից շատ շուտ էր հոգնում: Նստեցին մի քիչ, զրուցեցին, խմեցին, շնորհավորեցին Ինեսին՝ լավ առիթի կապակցությամբ: Հետո Ռոբն Անետին պարելու հրավիրեց: Իրենց սիրած երգն էր հնչում: Ամբողջ պարի ընթացքում Անետը սպասում էր, որ Ռոբը մի բան կասի, բայց տղան ոչինչ չասաց: Անետի մտքում անցած տարիներն էին, իրենց պարերը, որոնց ժամանակ ինքն ավելի շատ Ռոբի բառերն էր լսում՝ իր ականջներին ասած, քան երաժշտությունը: Մեծ հաշվով, կարևոր էլ չէր, թե Ռոբն ինչ էր շշնջում Անետի ականջին պարելիս: Կարևորն այն էր, որ մի բանից խոսում էին. այդպես միայն մտերիմ հոգիներն են անում... Երաժշտությունն ավարտվեց, մոտեցան Ինեսին:

– Ինչ տխուր էիք պարում, ոնց որ մեկը ձեզ ստիպել էր իրար հետ պարել,– բարկացած տոնով ասաց Ինեսը:

Անետը գիտեր, որ դա իրոք այդպես է, իսկ Ռոբը կատակի տվեց ու նստեց սեղանի մոտ: Սառը ըմպելիքը փոքր-ինչ ցրեց խառը մտքերը: Ռոպեներ չանցած՝ Ինեսն Անետին խնդրեց դաշնամուր նվագել:

– Լավ էլի, Ինե՛ս: Թող մնա մի ուրիշ անգամ,– փորձեց առարկել Անետը:

– Իսկ եթե խնդրեմ,– շարունակեց Ինեսը,– գիտես, որ շատ եմ հավանում նվագելդ: Համ էլ էսօր արժի ինձ ընդառաջել:

Անետը հանձնված ժպտաց ու հայացքը գցեց Ռոբի երեսին: Վերջինս բաժակը ձեռքին շուրջն էր նայում:

– Ռո՛բ, Անետը քո թույլտվությանն է սպասում:

– Ես ե՞րբ եմ դեմ եղել: Թող նվագի, եթե ուզում է:

Անետը վեր կացավ ու քայլեց դեպի դաշնամուրը, որը դրված էր ոչ բարձր հարթակի վրա՝ զուտ սրահի ընդհանուր տարածությունից առանձնացված լինելու համար: Մոտեցավ դաշնամուրին, նստեց, նուրբ մատները դանդաղ մոտեցրեց ստեղներին ու սկսեց նվագել: Մեկ, երկու, երեք վայրկյան, և սրճարանի բոլոր այցելուների հայացքները դեպի դաշնամուրն էին ու բարակիրան, փոքրամարմին աղջիկը, որն ասես խոսում էր երաժշտական գործիքի հետ, նրան ինչ-որ բան էր պատմում, խորհուրդ էր հարցնում, մեկ զայրանում էր վրան, մեղադրում, մեկ ներողություն էր խնդրում ու վստահում նորից... Դաշնամուրն Անետի հոբբին էր: Նվագել սովորել էր դեռ փոքր տարիներից: Այս գործիքն իր նեղ օրերի ընկերն էր, զրուցակիցն ու խորհրդատուն, միայն թե քանի գնում հեռանում էին իրարից: Անետը չգիտեր, թե ինչու էր այդպես, բայց զգում էր, որ իրենց կապն էլ առաջվանը չէ: Կարող էր նվագել ցանկացած մեղեդի, կարող էր ինքը ևս ստեղծագործել: Ու, որպես կանոն, միշտ հանգիստ ու խաղաղ երաժշտություն էր դուրս գալիս սև ու սպիտակ ստեղներից: Այս անգամն էլ բացառություն չէր, միայն թե նոտաների մեջ բողոքն ավելի շատ էր: Անետի ներաշխարհն էր պատմվում իր նվագած հնչյունների միջոցով, բայց ոչ բոլորն էին կարող դա հասկանալ: Ինեսը միանգամից նկատեց, որ սա սովորական նվագ չէր: Անգամ զղջաց, որ Անետին խնդրեց նվագել: Ռոբը գրեթե չէր նայում Անետի կողմը, հեռախոսով էր զբաղված, երբ քույրը հարցրեց, թե Անետի հետ ի՞նչ է կատարվում:

– Ոչ մի բան: Կարգին է ամեն ինչ:

– Հաստա՛տ: Տարօրինակ է վերջերս: Դու էլ, եթե ճիշտն ասեմ:

– Մի՛ սկսի, Ինե՛ս: Սուրճդ խմի:

Երաժշտության վերջին ակորդներն այնքան խաղաղված հնչեցին: Ինեսը նայեց Անետի դեմքին: Աչքերը փակ էր նվագում՝ գլուխը վերև բարձրացրած: Ակորդները գնալով խլացան, մի քանի ստեղների ձայնն էլ մարեց, Անետը մատները դանդաղ վերև հանեց դաշնամուրից,

փակեց գործիքն ու վեր կացավ՝ զարմացած կանգ առնելով: Տասնյակ թաց, հիացմունքով ու շնորհակալությամբ լի աչքեր իրեն էին նայում: Սրճարանը հանկարծ թնդաց ծափահարություններից: Անետը վայրկյանական Ռոբին նայեց: Վերջինս իրեն չէր նայում... Աղջիկը թեթև ժպտաց ու արագ հեռացավ դաշնամուրից:

– Ընտիր էր, Ա՛ն, խոսքեր չկան: Գերազանցեցիր ինքդ քեզ, բայց սա ուրիշ նվագ էր՝ անկեղծ ու ներսից եկող,– ասաց Ինեսը՝ ընկերուհու մոտենալուն պես:

– Անկեղծ էր...,– շշնջաց Անետը:

Ինեսն Անետի աչքերում խորունկ տխրություն տեսավ, որն առաջին անգամ էր նկատում: Արդեն վստահ էր, որ ինչ-որ բան այնպես չէ, ու որոշեց, որ անպայման խոսելու է Անետի հետ: Հեռախոսը զանգեց: Ինեսը խոսեց, հետո ասաց.

– Եթե չեք նեղանա, ես ձեզ մենակ թողնեմ, հա՛, ընկերուհիներս տեղ հրավիրեցին: Մի քիչ էլ իրենց հետ նստեմ ու տուն գնամ:

– Կտանենք քեզ,– ասաց Ռոբը, ու դուրս եկան սրճարանից:

Ինեսին իջեցրին մի ակումբի մոտ ու իրենք շարունակեցին ճանապարհը:

– Տեսնում եմ՝ դեռ անտրամադիր ես,– ասաց Ռոբը ճանապարհի կեսն անցնելուց հետո:

– Չէ, կարգին է ամեն ինչ:

– Կիրակի Գերմանիա եմ մեկնում, Ա՛ն:

– Նորի՞ց:

– Հա: Նոր սարքավորումներն արդեն կլինիկայում են, մի քանի դասընթաց է պետք՝ դրանցով վիրահատություններ անել կարողանալու համար:

– Պարզ է:

– Մի շաբաթով եմ գնում: Շուտ կանցնի:

– Ըհը:

– Չես նեղվում, չէ՞:

Անետը գլուխը տարուբերեց, ինչը նշանակում էր՝ չէ:

– Առաջ, երբ վերապատրաստումների էի գնում, լուրը միշտ ծանր էիր տանում:

Անետն այս անգամ գլխով համաձայնության նշան արեց:

– Ինչ-որ բա՞ն է փոխվել, Ա՛ն:

– Դու ես փոխվել...

– Ես:

– Հա, բայց հիմա չեմ ուզում խոսենք: Տուն գնամ, հետո կխոսենք:

– Ոնց կուզես:

Անետն իջավ մեքենայից ու մտքերի մեջ ընկավ. «Մեկ ուրիշն ամեն ինչ կաներ, որ խոսեինք, որ իմանար, թե ինչ նկատի ունեմ դա ասելով, իսկ դո՛ւ... ոնց կուզես... Որովհետև սա ամենահարմար տարբերակն էր քեզ համար: Իսկ եթե ուզենամ ու որոշեմ, որ էլ էսպես չե՛մ ուզում: Ի՞նչ կասես այդ ժամանակ»:

Երբ Ռոբը մենակ մնաց, մտածեց Անետի ասածի մասին: Զգում էր, որ մի բան այն չէ, բայց չէր կարողանում այնպիսի զրույց սկսել, որ Անետը մինչև վերջ անկեղծանա իր հետ: Չէր կարողանում կամ չէր համարձակվում...

«Երևի էս մի շաբաթը ճիշտ ժամանակին եղավ: Իրարից հեռու կլինենք, կհասկանա, թե ինչ է ուզում, ծանր ու թեթև կանի, մտածելու ժամանակ կունենա, կարոտն էլ իր գործը կանի, ու ամեն ինչ իր տեղը կընկնի»,– մտածեց Ռոբն ու խնդրին իրեն հարմար լուծումը գտած համարելով՝ շարժիչը գործի դրեց:

Մարդիկ հաճախ ամեն ինչ թողնում են ինքնահոսի, ապավինում են զգացմունքներին, հույզերին, ժամանակին, բայց հազվադեպ են անձամբ այնպես անում, որ ամեն ինչ լավ վերջանա: Սա մարդկանց մի տեսակ է, որ պայքարել չի սիրում, հեշտին է վազում, պատրաստիին և գոհանում է նրանով, ինչ ունի՝ անկախ այն բանից, ինքն արժանի՞ է իր ունեցածին, կամ ունեցածն ինչքանո՞վ է լավը:

Մութն աստիճանաբար իջնում էր երկրի վրա: Ասես ամբողջ աշխարհը ուր որ է խաղաղվելու էր, մինչդեռ կային մարդիկ, որոնց սիրտը պատրաստ էր դուրս թռչել տեղից...

9

Սերը զրոյանում է, երբ միմյանց նվիրած անկեղծ ժպիտների քանակը հավասար է զրոյի, որովհետև ժպիտը հոգուց է գալիս, իսկ վերջինս կեղծել չի կարող:

Գարնան արևի ճառագայթները ծառերի ճյուղերի արանքից ընկել էին Անետի երեսին: Բակում դրված ճոճաթոռին նստած՝ աղջիկն ինչ-որ գիրք էր կարդում՝ անձնային բարդ հարաբերություններից գլուխ հանելու մասին: Բայց հաճախակի կտրվում էր գրքից ու հայացքն ինչ-որ մի կետի սևեռած՝ երկար նայում նույն ուղղությամբ: Երբ զգաց, որ մտքերը չեն թողնում կենտրոնանալ, գիրքը փակեց ու մի կողմ դրեց: Փոխարենը գրպանից հանեց ականջակալները, հեռախոսով գտավ սիրելի երգերի ցանկն ու ընկղմվեց ճոճաթոռի փափկության մեջ: Ազատ ժամանակն Անետը հիմնականում տանն էր անցկացնում, որովհետև օրվա մեջ, աշխատանքով ծանրաբեռնված լինելիս, հաճախ էր երազում մի բաժակ թեյի ու փափուկ անկողնու մասին: Իսկ տաք եղանակներին տանը փոխարինում էր ծաղկառատ բակը, որն Անետի՝ աշխարհի երեսին ամենասիրած վայրերից մեկն էր: Այուսը, իհարկե, նորաձևության տունն էր, որը մանկության երազանք էր եղել ու որը հայրն իրեն էր նվիրել ավարտելու օրը:

Բակում ամեն ինչ Անետի սրտով էր՝ մաքուր օդ, հանգիստ միջավայր, խաղաղ լռություն: Աչքերը փակած՝ իր սիրելի երգերից մեկն էր լսում, երբ հեռախոսազանգը երաժշտությունն ընդհատեց:

– Ա՜ն, բարի լույս: Լա՛վ ես:

– Բարի լույս, Ինե՛ս ջան, լավ եմ, դո՛ւ:

– Ես՝ էդքան էլ չէ: Ռոբի հետ խոսե՞լ ես:

– Երեկ՝ վայրէջքից հետո, ինչի՞: Ինչ-որ բա՛ն է եղել:

– Իրեն լավ չի զգում, մրսել է երևի: Ես մի երկու ժամով դուրս պիտի գամ, գործեր ունեմ, Ա՛ն, մերոնք էլ քաղաքում չեն: Կարո՞ղ ես Ռոբի մոտ գնալ: Չեմ ուզում՝ մենակ մնա:

– Կարող եմ:

– Հարմար է, չէ՞:

– Հա, հիմա կգնամ, հանգիստ եղիր:

– Ապրես, դե ես վազեմ, դուռը բաց կթողնեմ:

Հեռախոսն անջատելուն պես Անետը միանգամից դուրս եկավ տնից: Քառասուն րոպե չանցած՝ արդեն Ռոբի տան մոտ էր: Ընդամենը երկու անգամ էր Անետն այստեղ եղել՝ Ռոբի ծնողների հետ ծանոթանալու օրը և Ինեսի տարեդարձին: Դռան բռնակը կամաց պտտեց ու ներս մտավ: Հյուրասենյակում ոչ ոք չկար: Թվում էր՝ տանն ընդհանրապես մարդ

չկա, որովհետև խաղաղ լռություն էր: Անետը դանդաղ քայլելով առաջ գնաց: Երբ տեսավ, որ Ռոբը խոհանոցում էլ չէ, գնաց նրա սենյակի կողմը: Դուռը կիսաբաց էր: Անետը նախքան մտնելը ներս նայեց. Ռոբը քնած էր: Ոտնաթաթերի վրա քայլելով՝ առաջ անցավ: Մահճակալի կողքին դրված աթոռի վրա մի սկուտեղ կար՝ վրան մի բաժակ թեյ, մուրաբայով ափսե ու երկու դեղահաբ: Ըստ երևույթին, ջերմիջեցնող էր, որն Ինեսն էր դրել: Անետը սկուտեղը վերցրեց ու դրեց պահարանին, ինքը նստեց աթոռին: Ռոբը հանգիստ քնած էր: Դեմքը հոգնած տեսք ուներ, բայց քունը խաղաղ էր: Անետն ուշադիր նայում էր նրան, ուզում էր հասկանալ, թե իրեն ինչպես է զգում, բայց մտքով անգամ չանցավ արթնացնել: Համոզվելով, որ ամեն ինչ կարգին է՝ սկսեց շուրջբոլորը նայել: Այս սենյակում ընդամենը մեկ անգամ էր եղել, այն էլ՝ մի քանի րոպեով, երբ Ռոբն իրեն ցույց էր տվել տունը, որտեղ ապրում է: Անետը հիշեց, թե ինչքան լարված էր այդ օրը, հիշեց նաև, թե ինչպես այս սենյակում բոլորի հայացքներից հեռու Ռոբը գրկեց իրեն ու ականջին շշնջաց.

– Մի՛ լարվիր, հո քննության չե՞ս եկել: Քեզ ազատ զգա: Ես կողքիդ եմ:

Ռոբի բառերն աղջկան հանգստացրին, ու խաղաղված վերադարձավ հյուրասենյակ: Որովհետև մեզ հաճախ ոչինչ պետք չէ՝ բացի վստահությունից: Ոչինչ պետք չէ՝ բացի մի քանի հասարակ բառից, որոնք սրտեր են հանգստացնում...

Ռոբի մահճակալի հետևի պատին աբստրակտ ոճով նկարված գեղանկարներ էին կախված, իսկ դիմացի պատին Անետի նվիրած նկարն էր: Նկարի ստեղծման պատմությունը հիշելիս Անետի դեմքին միշտ ժպիտ էր հայտնվում: Իրենց ծանոթությունից ու Անետի կարած համազգեստը մի որոշ ժամանակ կրելուց անց Ռոբն Անետին ասել էր, թե բրոշը միայն աշխատանքի վայրում է իր հետ, ու ինքը մի այնպիսի բան է ուզում, որ ամեն օր աչքերը բացելիս Անետի աչքերը տեսնի: Աղջիկը մի մինիմալիստական կտավ էր նկարել՝ կնոջ դեմքի ուրվագիծ՝ միայն խոշոր, արտահայտիչ աչքերով: Հենց իր աչքերն էր նկարել՝ շագանակագույն ու խորը: Ռոբը նկարը տեսնելուն պես ասել էր, որ այն իր մահճակալի դիմացի պատից է կախելու, որ արթնանալիս միանգամից Անետի աչքերը տեսնի: Այդպես էլ արել էր: Իհարկե, Անետը երկար

ժամանակ է, ինչ չէր հարցրել Ռոբին, թե արդյո՞ք աչքերը բացելուն պես նայում էր այս նկարին, թե չէ, բայց, այնուամենայնիվ, դեմքին ժպիտ իջավ. չէ՞ որ անցյալի քաղցր հիշողությունները մեզ այցելության գալիս միշտ էլ իրենց հետ ժպիտ են բերում:

Սենյակի անկյունում Ռոբի աշխատասեղանն էր՝ վրան հաստ թղթապանակներ, մի քանի գիրք ու մի լուսամփոփ: Անետը գիտեր, որ Ռոբը սիրում է մթության մեջ լուսամփոփի լույսով կարդալ: Մոտեցավ աշխատասեղանին ու մի գիրք վերցրեց. «Ինչպես լույս նվիրել մարդկանց»: Վերնագիրը գեղարվեստական էր թվում, բայց Անետը թերթեց գիրքն ու հասկացավ, որ գիրքը ակնաբուժության մասին է, ու «լույս» ասելով պետք էր տեսողությունը հասկանալ: Սեղանի անկյունում Ռոբի լուսանկարչական տեսախցիկն էր դրված: Անետի հայացքն ընկավ դրան: Աղջիկը տխուր ժպտաց: Մի ժամանակ այս տեսախցիկն իր ու Ռոբի ամենաերջանիկ պահերի ականատեսն էր եղել, իսկ հիմա փոշոտված դրված է սեղանի մի անկյունում ու վաղուց է, ինչ ժպիտներ չի նկարել... Անետը հետ եկավ ու նորից նստեց աթոռին: Իր դիմացի պատը մեջտեղից կիսվում էր բաց պատշգամբ տանող դռնով: Որքան էր Ռոբն իր հետ խոսել այս պատշգամբից, ու որքան էր Անետը երազել այդ ժամանակ նրա կողքին լինել՝ հենց նույն պատշգամբում: Բայց վաղուց է, ինչ երկար հեռախոսազրույցներ չէին եղել, ու վաղուց է, ինչ Անետը չէր անհանգստանում Ռոբի համար, որ ցուրտ եղանակին պատշգամբից խոսելիս չմրսի հանկարծ... Սերը քիչ-քիչ կորցնում է իր հմայքը: Կամ ուժը: Կամ հետաքրքրությունը: Ո՞վ գիտի... Ի՞նչ է լինում սիրո հետ ժամանակի ընթացքում, ի՞նչ է լինում շատ սիրելուց հետո, որ ինքդ քեզ չես կարողանում խոստովանել, թե ինչ ես զգում... Անետի համար ոչինչ այլևս առաջվանը չէր, ու ինքը ահագին ժամանակ է, ինչ գիտակցում էր դա:

Աղջկա հայացքը սենյակի անկյուններում թափառելուց հետո կանգ առավ Ռոբի վրա: Ճակատը քրտնել էր, մազերը գրեթե թաց էին: Աղջիկը մոտեցավ ու ձեռքը դրեց ճակատին՝ ստուգելու համար՝ ջերմություն ունի՞ արդյոք: Ռոբը միանգամից ցնցվեց: Իրեն ծանոթ սառնությունն այժմ ջերմությունից այրվող իր ճակատին էր: Աչքերը բացեց ու նստեց անկողնում:

– Ա՞ն, ի՞նչ ես անում էստեղ:

– Գնա՛մ:

– Չէ, նկատի ունեմ՝ երբ ես եկել, ո՞նց:

Անետը պատմեց Ինեսի զանգի մասին, հետո սկուտեղի վրա դրված դեղահաբերից մեկը մեկնեց Ռոբին:

– Հետո կխմեմ: Շո՛ւտ ես եկել:

– Հետո ե՞րբ, երբ ավելի՞ բարձրանա ջերմությունդ: Մի կես ժամ կլինի, ինչ էստեղ եմ:

– Բա ինչի՞ չարթնացրիր:

– Չուզեցի խանգարել:

– Նստել ու ինձ էիր նայում, հա՞:

Սա ասելով՝Ռոբն Անետի ափի միջից վերցրեց հաբն ու մի քանի կում ջրով խմեց:

– Թեյդ սառել է, գնամ նոր թեյ բերեմ,– ասաց Անետը՝ Ռոբի տված հարցից խուսափելով:

– Շոգ է, թեյ չեմ ուզում:

– Գիտեմ, բայց պիտի խմես, որ շուտ կազդուրվես:

– Լավ էլի, Ա՛ն:

– Ես գնացի թեյի հետևից:

– Ոնց տեսնում եմ՝ ուրիշ տարբերակ չունեմ:

Անետը գնաց խոհանոց ու մի քանի րոպեից հետ եկավ՝ տաք թեյի բաժակը ձեռքին:

Ռոբն առանց հակաճառելու խմեց թեյը: Երբ վերջացրեց, բաժակը սկուտեղի մեջ դրեց ու Անետին նայելով՝ ասաց.

– Հիմա մեր միջի բժիշկը դու ես, հա՞:

– Էդպես է ստացվում,– պատասխանեց Անետը,– գոհ չե՞ս:

– Միայն ուրախ եմ,– ասաց Ռոբը՝ Անետի ձեռքը բռնելով: Իր այրվող մարմնին այնքա՜ն էին պետք Անետի սառը ձեռքերը:

Ջերմիջեցնողի ազդեցությունը շատ չուշացավ: Մի քանի րոպե հետո Ռոբի դեմքին ու ճակատին այլևս քրտինքի կաթիլներ չկային:

– Լավ բժիշկ ես,– ասաց Ռոբը՝ Անետի ձեռքը սեղմելով:

– Քեզ նման,– պատասխանես Անետը:

Ռոբը փորձեց վեր կենալ անկողնուց, բայց Անետը չթողեց:

– Մի բան պիտի տամ քեզ, հետո նորից կպառկեմ:

Ռոբը վեր կացավ ու քայլեց դեպի զգեստապահարանի կողմը: Դուռը բացեց ու դեռ չդատարկված ճամպրուկից մի փոքրիկ տուփ հանեց, հետո մոտեցավ Անետին ու տուփը նրան մեկնելով՝ ասաց.

– Քեզ համար եմ բերել: Երեկ էնքան հոգնած էի, որ չհանդիպեցինք: Էսօր պիտի տեսնվեինք, էն էլ էսպես ստացվեց, ու ավելի լավ, որովհետև իմ տանն ես... Տես, հավանո՞ւմ ես:

Անետը զգուշությամբ բացեց տուփը. նուրբ վզնոց էր՝ սպիտակ, գրեթե թափանցիկ քարով:

– Շատ սիրուն է,– ասաց Անետը:

– Տուր ամրացնեմ,– ասաց Ռոբը, վզնոցը վերցրեց ու Անետին շրջեց դեպի հայելին: Ինքը կանգնեց աղջկա թիկունքում, ամրացրեց վզնոցն ու նայեց հայելու մեջ:

– Ոնց որ քեզ համար ստեղծված լինի:

– Անետը ժպտաց, բայց այս ժպիտը ծանոթ չէր Ռոբին: Դրա մեջ այնքա՛ն տխրություն կար, որ Ռոբը միանգամից հայացքը փախցրեց Անետի ժպիտից: Չուզեցա՛վ նրան այդ ժպիտով տեսնել, թե՛ չուզեցավ դրա պատճառի մասին հարցնել: Առաջ, երբ Անետին ինչ-որ նվեր էր տալիս, աղջիկն աշխարհով մեկ էր լինում, ու Ռոբը զգում էր, որ նվերի արժեքն ու ինչ լինելը բոլորովին էական չէին: Անետի համար կարևորն այն էր, որ Ռոբն է տալիս այդ նվերը... Բայց հիմա վզնոցն Անետի պարանոցին ուղղակի փայլում էր, իսկ աղջիկն անտարբեր ժպտում էր այնպես, ինչպես անծանոթներին են ժպտում քաղաքավարությունից ելնելով... Ռոբը նկատեց, որ վերջերս Անետի՝ իրեն ուղղված գրեթե բոլոր ժպիտներն այսպիսին են եղել: Ուղղակի կա՛մ ինքը չի նկատել դրանք, կա՛մ չի էլ նայել Անետի դեմքին: Աղջկա ժպիտները ձևական էին դարձել, ո՛չ իրական, ո՛չ ներսից եկող, ու Ռոբը միայն նոր գլխի ընկավ, որ վաղուց Անետի՝ իր այդքան սիրած ժպիտը չի տեսել... Իսկ աչքերը... Մի՞թե դեմքի վրա ամենագեղեցիկն աչքերը չեն: Դրանք այնքան բան գիտեն, այնքան բան են պատմում մեր մասին: Աչքերը գիտեն՝ մենք երբ ենք ժպտում, երբ ենք տխուր ու անհանգիստ: Աչքերն ամեն ինչ գիտեն, որովհետև սրտից են նայում: Այժմ Անետի աչքերում այնքա՛ն թախիծ կար...

–Ինչ-որ բա՛ն է եղել, Անե՛տ,– հարցրեց Ռոբը, երբ տեսավ, որ թեկուզ ձևական ժպիտն էլ կորավ աղջկա դեմքից,– չհավանեցի՞ր:

– Հավանեցի, շնորհակալ եմ:

– Ուրախ չե՞ս: Գիտե՞ս՝ ինչ երկար եմ փնտրել, էն էլ անծանոթ երկրում:

– Ուրախ եմ:

– Ուրեմն ի՞նչ խնդիր կա:

– Ոչ մի: Քաղցած կլինես: Գնա՛մ մի բան սարքեմ:

– Եթե դու ես սարքելու, կուտեմ հաճույքով:

– Դե դու պառկի, ես մի բան կմտածեմ:

Անետը գնաց խոհանոց, սառնարանը բացեց, մտածեց, թե ինչ կարող է արագ պատրաստել: Հետո մի քանի դարակներում ինչ-որ բան փնտրեց ու գտավ: Շատ չանցած սպագետիի ու սոուսի անուշ բույրը խոհանոցից դուրս սահեց ու հասավ մյուս սենյակներ: Անետը սիրում էր պատրաստել: Սա և՛ օգնում էր քաղցած չմնալ, և՛ հանգստացնում էր: Պատրաստելիս հաճախ էր քթի տակ երգում, մեկ-մեկ էլ ինքն իր հետ բարձրաձայն խոսում էր, թե հիմա ինչ պիտի անի:

– Սա էսպես, մնաց սունկը եփվի:

– Ամենասիրածս մթերքն է սունկը,– լսվեց Ռոբի ձայնը:

– Գիտեմ,– շրջվելով ասաց Անետը,– վաղո՛ւց ես էստեղ:

– Չգիտեմ, միայն գիտեմ, որ արժե ամեն օր հիվանդանալ՝ քեզ պատրաստելիս տեսնելու համար:

– Գժվեցի՞ր:

– Չէ: Շատ սիրուն ես,– հանկարծակի ասաց Ռոբը՝ որպեսզի առաջ ուշադրությամբ Անետին զննելուց հետո առաջացած տպավորությունները թաքցնել չկարողանալով: Անետն իրոք աննկարագրելի գեղեցկություն ուներ: Առանց որևէ զարդարանքի, առանց շպարվելու, հասարակ տնային հագուստով անգամ նա յուրահատուկ փայլ ուներ: Եվ իրոք, գեղեցկությունը հագուստից, դիմահարդարումից ու զարդերից չի սկսվում: Գեղեցկությունը կանացիության, ժեստերի նրբության ու հոգու մաքրության մեջ է: Կինն ամեն տարիքում հեշտությամբ կարող է զարդերի տված հմայքը փոխարինել ընդամենը մի նուրբ, բայց շքեղ ժեստով, եթե իհարկե ինքն ուզենա: Եվ, ինչ խոսք, գեղեցկությունը կնոջ կողքի տղամարդու տված վերաբերմունքի մեջ է... Կինը փայլում է, երբ իրեն սիրում են ու իր մասին հոգ են տանում:

Անետը ժպտաց ու հարցրեց, թե ինչու է Ռոբը վեր կացել:

– Ես լավ եմ արդեն: Բժիշկս փրկեց ինձ,– պատասխանեց Ռոբը, ու սեղան նստեցին:

Ճաշը դեռ չէին ավարտել, երբ դռան զանգը հնչեց. Ինեսն էր: Նստեցին մի քիչ, զրուցեցին, հետո Անետի համար տաքսի պատվիրեցին: Ռոբը դռան մոտ կանգնեցրեց Անետին ու ասաց.

– Թող գրկեմ քեզ, ոնց որ ընկերուհիս չլինես:

Անետը նորից ժպտաց այն նույն ժպիտով: Ռոբը նորից հայացքը փախցրեց Անետից, հետո շնորհակալություն հայտնեց իրեն մենակ չթողնելու համար ու ճանապարհեց դեպի մեքենան: Ամբողջ ճանապարհին Անետը մտածում էր իր ու Ռոբի հարաբերությունների մասին, փորձում էր ցրել մտքերը, բայց չէր ստացվում, անգամ Ռոբի նվիրած վզնոցն էր մոռացել վերցնել, որովհետև անտարբեր էր դարձել ամեն ինչի նկատմամբ: Անտարբերությունը քայքայում է ամեն բան՝ հարաբերությունները, սերը, աշխատանքը, առօրյան: Անտարբեր մարդկանց համար ամեն ինչ ուշ թե շուտ միևնույն է դառնում: Նրանք սառչում են, փակվում իրենց մեջ, փորձում իրենց նեղող սահմաններից դուրս գալ ու քանի չեն կարողանում, այդքան ավելի են առանձնանում բոլորից, ինչքան էլ որ հազվադեպ են մենակ մնում:

10

Սերը քիչ-քիչ անհետանում է, երբ հիասթափությունների պատճառներ են ի հայտ գալիս, որոնք ծածկում են մի ժամանակ նրան սիրելու համար հորինած արդարացումներդ...

— Աչքերը բացեք: Ձեզ լավ եք զգում:
– Հա ոնց որ:
– Տեսնում եք՝ վախենալու ոչինչ չկար:
– Հա, իրոք որ:
– Դե, վեր կացեք, նշանակումներն աշխատասենյակում կանեմ:
Հիվանդը վեր կացավ, տեսողությունը փոքր–ինչ մշուշոտ էր, բայց ոչ այնպես, ինչպես առաջ:
– Խավար է ամեն ինչ, էսպես պիտի լիներ:
– Այո, հինգ–տասը րոպեից կտեսնեք այնպես, ինչպես բոլորը:
Մի քանի րոպե անց օրվա բոլոր վիրահատվածները բժշկի աշխատասենյակում էին:
– Թերթիկի վրա ամեն ինչ գրված է: Առաջին կաթիլներն անելու եք ժամը մեկ, երկրորդը՝ երկու ժամը մեկ: Մի ժամից ամենայն հավանականությամբ ցավեր կունենաք: Ցավազրկողի անունն էլ է գրված: Ձեզ մոտ պահեք, որ միանգամից ընդունեք: Վաղը առավոտյան հանդիպում ենք: Մնացած նշանակումները՝ վաղվա զննումից հետո:
Հիվանդները դուրս եկան սենյակից, բժիշկ Արամյանը նայեց ժամացույցին. հինգ րոպեից ընդմիջում էր:
– Անետն ուր որ է կգա: Վերջապես կարելի կլինի մի բաժակ սուրճ խմել,– բարձրաձայն ասաց Ռոբն ու քայլեց դեպի դուռը, որ դուրս գա սենյակից, բայց չհասցրեց: Դուռը կամաց բացվեց, ու մի աղջիկ հարցրեց, թե կարո՞ղ է ներս մտնել: Բժիշկ Արամյանը ներս հրավիրեց աղջկան ու նստել առաջարկեց: Սոնան էր, որին երեկ վիրահատել էր օրեր առաջ Գերմանիայից բերված սարքավորումներով:
– Ինչպես ես, ինչ–որ խնդի՞ր կա: Քեզ վաղն էի կանչել:
– Չէ՛, ոչ մի խնդիր, ուղղակի ուզում եմ տպավորություններովս կիսվել: Եթե վաղը գայի, գուցե դրանք խամրեին, ու չկարողանայի զգացածս նկարագրել էնպես, ինչպես հիմա:
Ռոբը ժպտաց ու նստեց աղջկա դիմաց:
– Լսում եմ:
– Երեկոյան դեռ գրեթե ոչինչ չէի տեսնում: Առաջվա նման խավարի մեջ էր ամեն ինչ: Ուզում էի ակնոց դնել, բայց հիշում էի, որ ասում էիր՝ էլ չի կարելի: Հուսահատված էի, ու մեջս վախ կար, որ վիրահատությունն արդյունք չի ունենա, բայց երբ քո խոսքերն էի հիշում,

խաղաղվում էի: Առավոտյան, երբ արթնացա, վախենում էի աչքերս բացել: Մտածում էի՝ նորից նույնը պիտի լինի: Բայց ականջներիս մեջ քո ձայնն էր հնչում՝ աչքերդ բաց:

– Այո՛, ես վիրահատությունից հետո բոլոր հիվանդներին էսպես եմ ասում,– նորից ժպտաց բժիշկը:

– Ինձ էլ էիր ասել: Ու բացեցի աչքերս: Լուսաբացը պայծառ էր, ինչպես երբևէ... Մենյակս այնքան լուսավոր էր, ասես բոլոր անկյուններում մեծ հզորությամբ լուսարձակներ էին դրված: Հանկարծակիի եկած՝ չգիտեի ինչ անել: Աչքերս փակեցի նորից: Ինձ թվաց՝ ինչ-որ մի բան սխալ է: Հետո սկսեցի աչքերս շոշափել. արտաքինից ամեն ինչ նույնն էր: Քիչ-քիչ ընտելանում էի իմ նոր աչքերին ու հասկանում, որ ոչինչ պետք չէ անել, ուղղակի ապրել այնպես, ինչպես բոլորը, այնպես, ինչպես չեմ ապրել առաջ, որովհետև չեմ տեսել... Զգացի, որ աչքերիցս արցունքներ են գլորվում: Ուրախության արցունքներ էին, որոնք այնքա՛ն հասարակ պատճառից էին գոյացել. ես ուղղակի տեսնում էի: Հասկանում էի, թե ինչ հասարակ, բայց և առաջնային բանից եմ զրկված եղել երկար ժամանակ: Մենյակիս ամեն անկյունն ագահաբար ուսումնասիրում էի ահագին հեռավորությունից: Ասես առաջին անգամ լինեի ինձ այդքան ծանոթ տարածքում: Ես տեսնում էի ամեն մի մանրուք, հիմա էլ եմ տեսնում, ու քո շնորհիվ: Տարիներ շարունակ ամեն օրս մշուշոտ է եղել, ինչպես լինում է երկարատև անձրևից կամ մառախուղից հետո:

– Ես ասում էի, որ շուտով արև է լինելու, մշուշը ցրվելու է: Միայն հավատալ էր պետք, ու դու հավատացիր:

– Հավատացի: Ուզում եմ քեզ ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնել: Դու ուղղակի հրաշագործ ես:

– Չէ՛, չէ՛, ես ընդամենը իմ աշխատանքն եմ կատարում:

– Ու խոստումը...

– Այո:

– Կարելի՞ է քեզ մի բան նվիրել:

– Դրա կարիքը չկա:

Աղջիկը պայուսակից մի ձեռագործ թևնոց հանեց՝ ասելով, որ անձամբ է պատրաստել ու շատ ուրախ կլինի, եթե բժիշկը հավանի այն:

– Հատուկ քարեր են, էներգիա են հաղորդում, իսկ թելը պաշտպանիչ ազդեցություն ունի: Ուզում եմ միշտ կրես ու եռանդով լեցուն լինես, որ շարունակես մարդկանց լույս նվիրել:

– Լավ, ապրես,– ասաց Արամյանը:

– Անսահման շնորհակալ եմ քեզնից,– ասաց աղջիկն ու միանգամից գրկեց բժշկին: Հետո նայեց Ռոբի աչքերին ու շշնջաց.

– Իմ փրկիչն ես, ուրիշ բառ չեմ կարող գտնել...

Արցունքներն աչքերից հոսեցին: Ռոբը զգուշությամբ սրբեց դրանք ու ժպտալով ասաց, որ ամեն ինչ արդեն անցյալում է, ու պետք չէ լաց լինել:

– Ես չեմ խանգարում:

Ռոբը միանգամից հեռու հրեց իր այցելուին: Վերջինս էլ հանկարծակիի եկավ: Անետը, դռների արանքում կանգնած, չգիտեր, թե ինչպես պահեր իրեն: Արդեն երկրորդ անգամ նույն տեսարանին էր ականատես լինում, ու առաջինը դեռ չէր էլ ստացվում մոռանալ:

– Ա՛ն, ես էլ քեզ էի սպասում: Ներս արի:

– Երևում է՝ ոնց էիր սպասում,– անտարբեր հայացքով ասաց Անետն ու հետ գնաց:

Ռոբը քայլեց դեպի նա, բայց աղջիկը շրջվեց ու միջանցքով վազելով դուրս եկավ բաժանմունքից: Բժիշկը մնաց միջանցքում կանգնած: Կատաղությունից բռունցքով մի քանի անգամ պատին խփեց, հետո սթափվեց՝ հասկանալով, թե որտեղ է գտնվում, իրեն մի կերպ հավաքեց ու գնաց աշխատասենյակ: Սոնան նրան տեսնելուն պես կանգնեց՝ մտահոգված տոնով ասելով.

– Ես երևի իմ կամքից անկախ քեզ անախորժության մեջ գցեցի:

– Ոչինչ, կհանդարտվի, կխոսենք, կհասկանա ինձ: Ուղղակի արդեն երկրորդ անգամ է ինձ մոտ քեզ տեսնում, ու երկու անգամն էլ...

– Աստվա՛ծ իմ, ինչ անհարմար դրություն է: Ես կխոսեմ նրա հետ: Ասա, թե որտեղ գտնեմ նրան: Կխոսեմ ու կբացատրեմ, որ միայն երախտագիտությունից ելնելով էի քեզ գրկել:

– Չէ՛, չէ՛, կարիք չկա: Ամեն ինչ կարգին է: Դու գնա, իսկ ես աշխատանքից հետո ամեն ինչ կշտկեմ:

Ռոբը նստեց գրասեղանի մոտ ու գլուխն առավ ափերի մեջ: Սա արդեն վերջն էր: Անետը հաստատ իրեն չէր հավատա: Ռոբը գիտեր, որ ոչ

մի սխալ թույլ չի տվել, բայց գիտեր նաև, որ Անետն այդպես չի մտածում: Այժմ նորից պետք էր արդարանալ մի բանի համար, որի շուրջ խոսելու ոչինչ չկար, բայց որն արդեն երկրորդ անգամ էր տեղի ունենում: Եվ իրոք, բոլոր իրավիճակների մեջ ամենաանհարմարը չարածի համար արդարանալն է...

Աշխատանքային հաջորդ ժամերն անցան դանդաղ ու լարված: Ռոբի մտքում շարունակ Անետն էր, աչքերի առաջ՝ աղջկա՝ հիասթափությամբ ու թախիծով լի աչքերը: Ոչպե առաջ ուզում էր տեսնել Անետին ու խոսել հետը, բայց լավ գիտեր, որ աղջիկն իրեն չի ուզենա լսել: Աշխատանքն ավարտելուն պես Ռոբը գնաց նորաձևության տուն: Սրահն արդեն փակ էր, չնայած որ դեռ կես ժամ կար փակվելուն: Հեռախոսը վերցրեց, զանգեց Անետին, բայց պատասխան չեղավ: Գնաց Անետենց տան մոտ, նորից զանգեց, նորից անտեղի: Մի պահ ուզեց ներս մտնել, բայց փոշմանեց: Անետի ծնողներին ծանոթ էր, բայց եթե աղջիկը չուզենար իրեն տեսնել, ինքն անհարմար դրության մեջ կհայտնվեր: Տան մոտ ահագին ժամանակ մնալուց հետո որոշեց նորից զանգել, բայց հանկարծ մտածեց, թե ինչ պիտի ասի Անետին, երբ պատասխանի իր զանգին. «Ինչ ասեմ, ֆիլմի պես ասեմ. «Սա այն չէր, ինչ դու մտածում ես», թե՞ «Ես քեզ ամեն ինչ կբացատրեմ»: Գրողը տանի, ինչ հիմար իրավիճակ է: Հենց հիմա ներս կմտնեի, եթե վստահ լինեի, որ կհավատաս ինձ: Բայց վստահ չեմ: Հիմա երևի ամենավերջին մարդն եմ, որին կուզենայիր տեսնել, առավել ևս հավատալ... Ես քեզ լավ գիտեմ: Քեզ նմանների համար ինչ էլ ասեմ, ասածս հորինված հեքիաթ է թվալու: Հատկապես որ երկրորդ անգամ եմ նույնն ասելու»:

Ռոբը նստեց մեքենան ու զանգեց քրոջը: Անետից հարցուփորձ արեց: Ինեսն ասաց, որ այսօր ո՛չ խոսել են, ո՛չ տեսնվել: Սա Ռոբի վերջին հույսն էր: Մտածում էր՝ գուցե քրոջ հետ է Անետը, իսկ այժմ, երբ այդ տարբերակն էլ բացառվեց, անգամ չգիտեր՝ Անետը տանն է, թե ոչ:

– Վաղը կիրակի է,– շշնջաց Ռոբը,– ո՞ւր պիտի փախչես:

Մեքենան արագ սլացավ դեպի բանուկ խաչմերուկը:

Վարագույրի մոտից մի աղջիկ հեռու գնաց, հեռախոսը նետեց մահճակալին ու նստեց հատակին.

– Էսպես էլ չի կարող շարունակվել: Ես հոգնել եմ...

11

Սերն անցել է, եթե քո կողքին այն մարդը չէ, ում սիրել ես անցյալում, որովհետև մենք սիրահարվում ենք նրանց, ովքեր մեզ դուր են գալիս, իսկ երբ մեր ընտրած մարդիկ փոխվում են, մեր զգացմունքներն էլ են փոխվում...

***

Սերն իր տեղը չի գտնում, երբ իրեն չեն հավատում ու կասկածներին են տեղ տալիս: Անկեղծ սիրող մարդու համար անվստահությունն ամենավիրավորականն է:

Լույսը բացվեց քաղաքի վրա: Արևն աստիճանաբար իր երկար շողերը երկնքից ներքև գցեց: Ամետը դժվարությամբ աչքերը բացեց, որովհետև բավականին ուշ էր կարողացել փակել դրանք: Չէ՞ որ հոգին ցնցող իրադարձություններից հետո միտքն անջատելը դժվար է, իսկ միայն աչքերը փակելով չեն քնում: Վեր կացավ, մոտեցավ պատուհանին: Դրսում հաճելի եղանակ էր: Պատուհանը բացեց, որ մաքուր օդը ներս առնի, ու գնաց լվացվելու: Խոհանոցում հայրն ու արդեն պատրաստ սուրճը իրեն էին սպասում:

– Արթնացե՞լ ես, բարի լույս:

– Բարի լույս, պա՛պ ջան:

– Երեկոյան սպասեցի հյուրասենյակում, ննջարանիցդ դուրս չեկար: Միտումնավոր քեզ մոտ չեկա, մտածեցի, որ ուզում ես մենակ մնալ:

– Այ դրա համար էլ քեզ շատ եմ սիրում: Դու միշտ ամեն ինչ հասկանում ես՝ առանց բառերի ու անգամ ակնարկների...

– Լա՛վ ես, ամեն ինչ կարգի՞ն է:

– Որ քո եփած սուրճի հոտն առնում եմ, ուրեմն լավ եմ: Իսկ երեկ ուղղակի տրամադրություն չունեի:

– Ինչ-որ բա՞ն էր եղել:

– Չգիտեմ, պա՛պ:

– Եթե չես ուզում ասել, կհասկանամ:

– Ախ, պա՛պ, քեզնից ի՞նչ պիտի թաքցնեմ կամ ինչքա՞ն:

– Էլի Ռոբի հե՞տ եք վիճել:

– Չենք վիճել, բայց ծանր խոսակցություն է սպասվում:

– Ինչի՞ց ես էդպես եզրակացրել:

– Իրադարձություններից, պա՛պ: Շարունակ ինչ-որ իրավիճակներ են լինում, որոնք հասկանալը կամ մոռանալը դժվար է, իսկ դրանց հետ ապրելը՝ անհնար: Էնքան բան է փոխվել վերջին ամիսների ընթացքում: Ավելի ճիշտ, ոչ թե փոխվել է, այլ ես եմ սկսել սթափ նայել մեր հարաբերություններին: Թե չէ, մեծ հաշվով, ամեն ինչ վաղուց էսպես է: Միապաղաղ առօրյա, որի մեջ շարժ են մտցնում միայն մեր վեճերն ու իր արդարացումները: Վեճերի թեմաներն էլ գրեթե չեն փոխվում: Մենք միշտ նույն պատճառներով ենք վիճում: Էնքան եմ հոգնել, պա՛պ:

– Ես զգում էի, որ վերջերս քեզ նման չես, բայց մտածում էի, որ եթե խորհրդի կարիք ունենաս, ինքդ կխոսես ինձ հետ:

– Խորհրդի կարիք...,– կրկնեց Անետը,– ես գիտեմ, թե ինչ պիտի խորհուրդ տաս, պա՛պ: Սրտիս լսեմ, չէ՞:

– Հա: Հիշո՞ւմ ես, երբ առաջին անգամ ինձ պատմեցիր Ռոբի մասին, էլի նույնը խորհուրդ տվեցի: Դու սրտիդ լսիր ու կհասկանաս, թե որն է ճիշտը: Նա երբեք չի խաբում:

– Միրտս մեկ մի բան է ասում, մեկ՝ ուրիշ: Մեկ գոռում է, որ էսպես ապրել չի կարելի, մեկ վախից կծկված խնդրում է պահել էս սերը, որովհետև իրարից հեռու ավելի դժվար է լինելու: Այ դրա համար էլ չեմ կողմնորոշվում: Դրա համար էլ թվում է, թե էս վիճակից ելք չկա կամ կա, բայց որ ճանապարհն էլ ընտրեմ, էլի երջանիկ չեմ լինելու:

– Բաժանման մասի՞ն ես մտածում: Սա բոլորն էլ կարող են: Հարաբերություններին վերջ դնելը շատ հեշտ է, դրանից հետոն է դժվար...

– Գիտեմ, դրա համար էլ վախենում եմ:Իսկ հիմա հե՞շտ է: Հիմա, երբ նա կողքիս է, բայց ինձ երջանիկ ու խաղաղ չեմ զգում, դժվար չէ՞: Անասելի դժվար է: Եթե հեշտ լիներ, ուղեղումս ամեն վայրկյան բաժանման մասին միտքը չէր լինի: Նա կողքիս է, բայց ոնց որ շատ հեռու լինի ինձնից: Մենք էնքան ենք օտարացել, պա՛պ: Երբեմն իրար կողքի նստած՝ չգիտենք՝ ինչ խոսենք: Մի քանի հարց ու պատասխանից հետո մեր խոսակցության թեմաները սպառվում են: Ես չգիտեմ, թե նրա կողքին ինձ ինչպես պահեմ, որովհետև ինքն էլ իրեն է տարօրինակ պահում: Մեկ–մեկ թվում է՝ անծանոթներ ենք, ու էս զգացողությունը գնալով խորանում է, անընդհատ ուղեղիս մեջ է, անգամ՝ երբ միասին չենք: Ես հավատում էի... Հավատում էի, որ մի օր ամեն ինչ ուրիշ կլինի: Մի օր կարթնանամ, ու խնդիրներ, հարցականներ չեն լինի, ես էլ ուրիշ կլինեմ, աշխարհին այլ աչքերով կնայեմ, Ռոբն էլ ուրիշ կլինի, մեր հարաբերություններն էլ, բայց ոչինչ էլ չփոխվեց: Հակառակը, ամեն ինչ ավելի վատը դարձավ: Մենք օր օրի հեռանում ենք իրարից:

– Նրա հետ խոսե՞լ ես այս թեմայի շուրջ:

– Չէ, դեռ չէ, ու երևի ահագին ժամանակ էլ շարունակեի լռել, եթե մեզ է՛լ ավելի օտարացնող իրավիճակներ չստեղծվեին:

– Իսկ եթե ինքդ փորձես շտկել ամեն ինչ, նոր հետաքրքրություններ գտնես, նոր թեմաներ, որոնց շուրջ երկուսդ էլ կարող եք զրուցել: Գիտե՞ս՝ հաճախ պարտադիր չէ, որ ընդհանուր հետաքրքրություններ ու թեմաներ ունենաք, բայց կարող եք այնպես անել, որ դա ձեզնից

ոչ մեկը չնկատի: Երբ աշխատանքից տուն էի գալիս, մայրդ հարցնում էր, թե օրն ինչպես անցավ: Ես միշտ հոգնած էի լինում, բայց փորձում էի առանց զլանալու պատմել, թե ինչ թեկուզ փոքր ուշադրության արժանի իրադարձություն էր եղել այդ օրը: Թեկուզ մի բան պատմում էի՝ «սովորական» կամ «ամեն օրվա պես» բառերի փոխարեն: Ու մայրդ, անգամ պատմածիս վերջաբանը հաստատ իմանալով, հարցեր էր տալիս: Ես պատասխանում էի՝ ուրախացած, որ մենք օգնում ենք իրար զրուցել ամենահասարակ մի հարցի շուրջ, որն ուղղակի կապում էր մեզ ծանր աշխատանքային օրվանից հետո: Հետո ես էի իրեն նույն հարցը տալիս ու զգում էի, որ ինքն էլ էր նույն կերպ պատասխանում: Պատկերացնո՞ւմ ես՝ ինչ կլիներ, եթե ամեն օր ես հարցնեի, թե ինչ է մայրդ արել ամբողջ օրը, ու նա պատասխաներ՝ ոչ մի կարևոր բան, իսկ իր նույն հարցին ես պատասխանեի, որ օրն անցել է սովորականի պես: Մեկ, երկու, երեք, տասը օր, մեկ ամիս ու վերջ, չէ՞: Սրանից ավել ոչ ես այդ հարցը կտայի նրան, ոչ էլ նա՝ ինձ: Ու ի՞նչ կլիներ: Ծանր օրվանից հետո իրար կտեսնեինք ու ոչինչ չէինք ունենա խոսելու: Նույնը կարող ես ասել, չէ՞:

– Ես փորձել եմ, բայց մենակ ոչինչ չի ստացվում: Հենց էդպես էլ ավարտվում են մեր զրույցները՝ սովորականի պես, ոչ մի նոր բան...

– Իսկ դու քո առօրյայից խոսիր, պատմիր, կարծիք հարցրու, գուցե հարցեր տա, ու զրույցը ստացվի: Գուցե ինքդ նրա պատմածով երբեք չես հետաքրքրվում, դրա համար էլ սկսել է քիչ խոսել: Սովորիր լսել քո սիրելի մարդուն: Այդպես ցույց ես տալիս, որ կարևոր է քեզ համար: Երբ սովորես նրան լսել, ինքն էլ խոսել կսովորի: Տարօրինակ է հնչում, բայց հարաբերությունների հիմքն է սա: Երբ տեսնում ես, որ լսում են քեզ, վստահությամբ ես լցվում դիմացինիդ հանդեպ, նույնն էլ դու ես ուզում անել, ինչքան էլ որ նրա ասածը քեզ հետաքրքիր կամ հասկանալի չլինի:

– Դու չես պատկերացնում, պա՛պ: Ռոբն իր աշխատանքից բացի ուրիշ ոչնչով չի հետաքրքրվում:

– Փաստորեն ձեր հարաբերությունները փրկելու պայքարում մենակ ես մնացել...

– Ինքը ոչինչ չգիտի:

– Երեխա՛ ես: Ոնց եղավ, որ դու գիտես, հասկանում ու զգում ես էս ամենը, իսկ ինքը՝ ոչ:

– Դե, համենայն դեպս, ես չեմ խոսել հետը:

– Գիտեմ, որ առաջին անգամն էլ չէ.

– Հա, հնարավորություն տվեցինք իրար, ու ոչինչ չի ստացվեց: Երբ խոսեցի նրա հետ, ասաց, որ կշտկի ամեն ինչ: Որոշ ժամանակ ամեն ինչ լավ էր, հետո նորից առաջվանը դարձավ, իսկ հիմա իմաստ չեմ տեսնում նրա հետ նորից նույնը խոսելու, նորից հնարավորություն տալու ու անիմաստ ժամանակ ձգձգելու: Ռոբն էնքան է փոխվել, որ ես նրան չեմ ճանաչում: Ես էսպիսի մարդու չեմ սիրահարվել: Ես ընտրել եմ մի ուրիշ Ռոբի՝ ուշադիր, հոգատար, բայց ոչ անտարբեր:

– Մարդիկ փոխվում են ժամանակի հետ, գուցե իրենց կամքից անկախ, այլ գործոնների ազդեցությամբ, բայց փոխվում են ու մտերիմ մարդկանց դեպքում դա անտեսել չենք կարող, որովհետև իրենց բնավորության ու վարքի փոփոխությունները մեզ հետ ունեցած հարաբերությունների վրա էլ են ազդում: Հնարավոր է, որ ինքն էլ չի նկատում, որ փոխվել է, որ խնդիրն իր մեջ է:

– Ու ամենավատն այն է, որ նրա փոխվելն ինձ էլ փոխեց, ինչքան էլ որ չէի ուզում...

– Գուցե նա էլ քեզ մեղադրի նույն բաներում, ինչում որ դու նրան ես մեղադրում: Հարաբերություններ կառուցելը հեշտ է իրականում: Դրանք ամուր պահելն է շատ բարդ, ու սրա համար երկուսն էլ պիտի հավասարապես ջանք գործադրեն: Մեկի պայքարով բան դուրս չի գա: Ու մի բան էլ կա, որի հետ գուցե չհամաձայնես, բայց չեմ կարող չասել: Գուցե Ռոբն էլ մեղավոր չէ: Քեզ ոչ թե պատճառներն են հուսախաբ արել կամ հիասթափեցրել, այլ քո սպասելիքները: Դու իդեալականացրել ես նրան, օժտել անգամ այնպիսի հատկանիշներով, որոնք չունի, բայց ուզել ես, որ ունենա: Այսպես շատերն են անում, հատկապես առաջին անգամ սիրահարվելիս: Կյանքը վարդագույն է դառնում, ու ամեն ինչի կենտրոնում հենց մեր սիրելին է, որն ամենալավն է թվում: Որոշ ժամանակ անց, երբ սթափվում ենք՝ նկատելով, որ մեր սիրելին այնպիսին չէ, ինչպիսին ոչ թե պատկերացրել, այլ երազել ենք, որ լինի, սկսում ենք չհաշտվել նրա «ես»-ի հետ ու հիասթափվել նրանից: Հիասթափությունը ծնվում է ցավից, որը մտնում է սրտիդ մեջ, երբ գիտակցում ես, որ քեզ համար ուրիշ թվացող մեկն իրականում մոլորակի յոթ

միլիարդ մարդկանցից հերթականն է: Հիասթափության ճանապարհն անցած մարդիկ հետ չեն դառնում այդտեղից, որովհետև նորից նույն մարդուն սիրելը, զգացմունքներով լցվելը գրեթե անհնար է: Սա աստիճանաբար է լինում՝ մեր կամքից անկախ. չէ՞ որ ենթագիտակցորեն ենք իդեալականացրել մեր սիրելիին: Սրա համար մենք մեղավոր ենք այնքանով, որ անտեսել ենք նրա իրական հատկանիշները՝ աչք փակելով այն մարդու տեսակի վրա, որն իրականում կա մեր կողքին, իսկ իրենք մեղավոր են, եթե իրապես թաքցրել են իրենց իրական «ես»-ը: Չեմ կարծում, որ Ռոբը վերջիններիս թվին է պատկանում, բայց քեզ իմանալով՝ կարող եմ ասել, որ նկարագրածս քեզնից հեռու չէ: Դու երազկոտ մարդ ես, Անե՛տ: Գուցե տանջվում ես, որովհետև նա քո երազածի պես չէ: Դու միշտ ավելիին ես սպասել, միշտ քիչ է եղել ինչ-որ բան, ու քանի որ կենտրոնացել ես քո ցանկացածի չափ սեր ու վերաբերմունք չստանալու վրա, քեզ երբեք լիարժեք չես զգացել:

Հայրը նուրբ հարցեր էր բարձրացնում: Այո՛, կանայք միշտ մտածում են, որ իրենց ընտրած մարդն ապագայում փոխվելու է դեպի լավը, ու թեկուզ տարիներով սպասում են այդ օրվան: Տղամարդիկ մտածում են, որ իրենք պարտավոր չեն բնավորության կամ վերաբերմունքի մեջ փորձել ինչ-որ բան փոխել, որովհետև կարծում են՝ իրենց սիրել են այնպիսին, ինչպիսին կան, ընտրել են ճանաչելով, բնավորության բոլոր գծերն իմանալով, ուրեմն չեն լքի երբեք: Խնդիրները հաճախ հենց այստեղից են սկսվում, որովհետև չկան մարդիկ, որոնք մեզ ընդունում են այնպիսին, ինչպիսին մենք կանք: Կա՛մ չկան, կա՛մ շատ քիչ են: Նրանք միշտ մեզանից ինչ-որ բան են ակնկալում, սպասում են, որ փոխվենք, որ ինչ-որ բան սովորենք, սովորենք զիջել, լռել, հանդուրժել, ներել, աչք փակել և այլն: Միշտ սպասում են ու երբ տեսնում են, որ մեզ մոտ չի ստացվում, մտածում են, որ իրենց համար չենք: Իսկ եթե դժվարությամբ, ինքներս մեզ դեմ գնալով փորձում ենք ցույց տալ, որ ստացվում է, հետո ավելի վատ է լինում. հավերժ ձևացնելն անհնար է:

Հայրը փորձում էր աղջկան ճիշտ ուղու վրա կանգնեցնել, ոչ թե օգնում էր, որ դուստրը բաժանվելու որոշում կայացնի, այլ փորձում էր հասկացնել, թե որտեղ են սխալվել, որովհետև, ըստ նրա, հարաբերություններում ոչինչ միակողմանի չէր լինում: Եթե բաժանման առաջ են

կանգնած, ու վեճի ակնհայտ պատճառ չկա, ուրեմն ամենայն հավանականությամբ երկուսն էլ ունեն մեղքի իրենց բաժինը: Անետի հայրն այն մարդկանցից էր, որոնք վերլուծում են հարցերն իրենց բոլոր տեսանկյուններից ու խորությամբ, և դժվար է նման մարդկանց հետ զրուցելուց հետո չմտափոխվելը կամ գոնե այլ ուղղությամբ ևս մտածել չսկսելը:

– Կար ժամանակ, երբ ինձ լիարժեք երջանիկ էի զգում, պա՛պ,– մի քանի րոպե լռելուց հետո ասաց Անետը,– հիանալի ժամանակներ էին, բայց, թվում է, երբեք չեն էլ եղել, որովհետև երբ նույն մարդու կողքին քեզ այլևս երջանիկ չես զգում, ավելի ծանր է երջանիկ ժամանակները հիշելը, դրանցից հույս ստանալն ու հետոյի մասին մտածելը: Ես չեմ իդեալականացրել նրան, ընդունել եմ էնպիսին, ինչպիսին կա: Ես էլ իդեալական չեմ, ու նա էլ երբեք չի փորձել բնավորության ինչ-որ գծեր թաքցնել ինձնից: Հա՛, ես ուզում եմ ավելի շատ ուշադրություն ստանալ նրանից, ավելի շատ ժամանակ անցկացնել միասին, բայց ոչ թե ավելին եմ պահանջում, այլ ուզում եմ հին ժամանակների նման լինի ամեն ինչ:

– Գուցե էդպես էլ երբեք չլինի... Կյանքն անընդհատ շարժման մեջ է ու իր փուլերն ունի: Հնարավո՞ր է, որ հիսուն տարեկանում սիրահարվես կողակցիդ հենց այնպես, ինչպես քսանհինգ տարեկանում ես սիրահարվել՝ առաջին անգամ նրան տեսնելիս: Անհնար է, ինչքան էլ որ ֆիլմերում ու գրքերում խոսեն սրա մասին: Սիրահարվածությունը հարաբերությունների և ոչ մի փուլում այլևս չի կրկնվում: Դա ուրիշ շրջան է, վարդագույն, էներգիայով լի մի փուլ, որը տանում է դեպի լուրջ հարաբերություններ կամ ինքնիրեն անցնում է՝ ժամանակի ընթացքում միայն ժպիտ առաջացնելով: Հետո գալիս է սերը, հարգանքը, ամուսնությունից հետո՝ վստահությունը, հավատարմությունն ու նվիրումը: Սրանք չեն սերը: Եթե ասեմ, որ մայրիկիդ սիրում եմ, էսքա՞նը պիտի հասկանաս այդ բառի տակ, թե՞ սիրահարվածությունը, որ լինում է հարաբերությունների ամենասկզբում ու տևում շատ կարճ: Մենք ենք ընտրում՝ դա ինչի վերածենք: Առա՞ջ տանենք՝ դրան մի շարք զգացողություններ գումարելով, թե՞ անընդհատ ուզենանք այդ փուլում մնալ:

– Ավելի խճճվեցի...

– Չէ՛, երբ մենակ մնաս, կմտածես ու կհասկանաս, թե դու ինքդ որտեղ ես սխալվել: Երբ դա հասկանաս, Ռոբին էլ կկարողանաս հասկանալ: Իսկ երբ վստահ լինես, որ դու չես սխալվել, ուրեմն պիտի որոշում կայացնես: Դա ամենաբարդն է:

Անետը վեր կացավ սեղանի մոտից ու մոտեցավ պատուհանին: Այն միտքը, որ պիտի որոշում կայացներ, որը վերաբերում էր միանգամից երկու հոգու ապագայի, նրան վախ էր ներշնչում: Մի քանի րոպե Անետը անշարժ նայում էր պատուհանից դուրս: Հայրն էլ չէր խոսում, հետո վեր կացավ ու մոտեցավ դստերը.

– Ես գիտեմ, թե ինչքան ես սիրում նրան: Անհնար է, որ այդ սերը կորած լինի: Գուցե պակասել է, օր օրի զգում ես դա, գուցե քեզ թվում է, որ էլ չես սիրում, բայց թող ժամանակ անցնի. մեծ զգացմունքները միանգամից չեն անհետանում: Չեմ ուզում՝ տանջվես: Ես գիտեմ նաև, թե Ռոբն ինչքան է քեզ սիրում, բայց եթե դու դա չես զգում, ուրեմն փոխվել է ինչ-որ բան: Բայց մի բան էլ եմ ուզում ասել: Մարդու առաջին թշնամին իր մտքերն են: Մենք ամենաշատը մեր մտքերից ենք հոգնում, մտքերն են, որ մեզ հասցնում են վատ հոգեվիճակի: Հոգնում ենք անընդհատ նույնը մտածելուց, վախենալուց, կասկածելուց, լարվում ենք ծրագրելուց, չստացվելուց, վերլուծելուց, ու ինչ: Ստացվում է, որ ինքներս մեզ տանջում ենք: Գուցե փորձես օգնել քեզ, ուղեղդ այլ բաներով զբաղեցնես ու տեսնես, որ առանց միջամտության ամեն ինչ կարգավորվում է քիչ-քիչ: Դու անընդհատ նույն հարցերի շուրջ ես մտածում, ու Ռոբը քեզնից էլ է սառնություն զգում: Գուցե նա էլ մտածում է, թե դու ինչու ես քեզ էսպես պահում:

– Չի բացառվում...

– Խոստացիր, որ այդ ուղղությամբ կփորձես աշխատել: Ինձ համար այս աշխարհում քո երջանկությունից կարևոր ոչինչ չկա, ուզում եմ միշտ քեզ ժպտալով ու խաղաղ սրտով տեսնել: Դու վաղուց այդպիսին չես: Իմացիր, որ ինչ որոշում էլ կայացնես, ես քո կողքին եմ:

– Գիտեմ...

Հայրն աղջկա գլուխը մոտեցրեց իրեն ու համբուրեց ճակատը:

Անետը հուզվեց ու գլուխը թաքցրեց հոր թևի տակ. դեռ փոքր ժամանակվանից այսպես էր անում: Հետո ամուր գրկեց հորն ու հազիվ լսելի ձայնով շշնջաց.

– Իմ առաջին սերն ես, պա՛պ: Առաջինն ու ամենամաքուրը, ու գիտեմ, որ ինչքան էլ մեկին սիրեմ, զգացածս քո հանդեպ ունեցած սիրո ուժգնությունը չի ունենալու: Ինչքան էլ սիրեմ, նույնը չեմ զգալու, որովհետև քեզ սիրելով եմ աշխարհ եկել:

– Նույնը չես կարող զգալ, դա ուրիշ տեսակի սեր է:

– Գիտեմ, բայց, մեկ է, ամենազգայունն է ու ամենաուժեղը, որովհետև դու իմ ուժն ես ու թուլությունը:

– Իսկ դու իմ ամեն ինչն ես, աղջի՛կս: Կուզե՞ս քայլելու գնանք: Շատ լավ եղանակ է:

– Մի ուրիշ անգամ, պա՛պ, հա՛, գործեր ունեմ, պիտի գնամ:

– Ոնց կուզես: Շուտ կգա՞ս:

– Հա, պիտի որ:

– Դե, զգույշ կլինես:

– Անպայման:

Անետը համբուրեց հորն ու դուրս եկավ խոհանոցից: Հայրը դեռ երկար մնաց պատուհանի մոտ կանգնած: Ծնողները միշտ այսպիսին են. երեխաների մոտ ուժեղ են երևում, խորհուրդներ են տալիս, փորձում ճիշտ ուղու վրա դնել, բայց նրանց թիկունքում շատ խոցելի են ու նրբազգաց: Չէ՞ որ ծնողի համար ամենակարևորը զավակի հոգեկան խաղաղությունն ու երջանկությունն է, իսկ երբ վերջինիս հանգիստը խաթարվում է, ծնողն էլ իր տեղը չի գտնում...

***

Անետը զգեստապահարանը բացեց ու մի քանի րոպե մտածելուց հետո եղանակին հարմար հագուստներ հանեց կախիչներից: Վայրկյաններ անց հագնված մոտենում էր հայելուն, երբ հեռախոսը զանգեց. Ռոբն էր: Անջատեց ու դրեց պայուսակի մեջ, արագ հարդարվեց ու դուրս եկավ տնից: Դեռ մի քանի քայլ չէր արել, երբ Ռոբը հայտնվեց իր առաջ: Անետը հանկարծակիի եկավ: Ասես բացառված էր, որ ինքն ու Ռոբը կարող են հանդիպել:

– Ինչքա՞ն պիտի խուսափեիր ինձնից,– հարցրեց Ռոբը՝ ուղիղ Անետի աչքերի մեջ նայելով:

Անետը ոչինչ չասաց, աջ քայլեց, որ շարունակի ճանապարհը: Ռոբը նորից կանգնեց նրա դիմաց:

– Ա՛ն, պիտի լսես ինձ:

– Ճանապարհ տուր:

– Խուսափելդ ելք չէ:

– Լավ է՝ գոնե կիրակի է, եկել ես: Աշխատանքի լինեիր՝ չէիր գա:

– Պիտի գործս թողնեմ, որ քո սրտո՞վ լինի: Անընդհատ սրանից ես դժգոհում:

– Ինձ համար միևնույն է:

– Միևնույն լիներ՝ միշտ դրա մասին չէիր խոսի: Լավ, սա ուրիշ թեմա է, հետո կքննարկենք: Հիմա ուզում եմ՝ մի տեղ նստենք խոսենք:

– Չեմ ուզում:

– Էս անիմաստ պահվածքդ դուր չի գալիս, Ա՛ն: Պիտի խոսենք, որ հասկանաս:

– Ես վստահ չեմ, որ կհասկանամ, դրա համար էլ խոսելու իմաստ չեմ տեսնում:

– Եթե ճիշտն ասեմ, ես էլ եմ վստահ, որ չես հասկանա, բայց պիտի փորձենք:

Անետը քմծիծաղ տվեց.

– Ծիծաղելի է հնչում, գիտե՛ս: Որովհետև ինքդ էլ ես զգում, որ բացատրելու բան չունես: Գնա՛ կամ թո՛ղ ես գնամ:

– Չէ՛, Ա՛ն, մինչև չխոսենք, չեմ գնա: Էն, ինչ տեսար նորից...

– Նորից շնորհակալական ժեստ էր: Արցունքներն էլ պարտադիր էր սրբելը:

– Գրողը տանի, ախր ո՞նց բացատրեմ, որ հասկանաս, որ հավատաս ինձ:

– Ինձ պետք չէ հավատալ:

– Ինձ է պետք:

– Ինչի՞, որ խիղճդ հանգի՞ստ լինի: Հավատում եմ: Հանգիստ թող ինձ:

– Անե՛տ...

– Թող գնամ, իսկ դու գնա հանգստացիր: Դա ամենակարևորն է: Վաղվանից վեց օր աշխատելու ես:

– Ախ, էս հեգնանքդ... Դու երբեք չես հասկանա ինձ:

– Ես էլ նույնը ասե՛մ:

– Չէ՛:

– Չե՞ս հոգնել էս ամեն ինչից: Ես էնքան եմ հոգնել...

– Հոգնել եմ, ու շատ, բայց ինչ անեմ, եթե միշտ էնպես է ստացվում, որ պիտի արդարանամ մի բանի համար, որում մեղավոր չեմ, որն ինձ-նից կախված չի եղել:

– Ճիշտ է, ոչինչ քեզնից կախված չէ: Ամեն բան քո կամքից անկախ է լինում, ու դու երբեք չես փորձում իրավիճակը քեզ հարմարեցնել: Ինչ լինում է, թող լինի, չէ՞:

– Արի քայլենք գոնե, անցնողները մեզ են նայում:

– Ես գնում եմ, կխոսենք, բայց մի ուրիշ անգամ, հիմա պատրաստ չեմ:

– Ա՛ն, ինչի՞ն պատրաստ չես, մի՛ բարդացրու, պետք չէ էդպես:

– Հավատա՝ չեմ բարդացնում: Ամեն ինչ արդեն իսկ բարդ է:

– Բա արածդ ի՞նչ է: Երեխայի պես ես քեզ պահում: Ախր դու ինձ լավ գիտես:

– Լավ գիտեի...

– Այսի՞նքն:

– Հիմա քեզ չեմ ճանաչում:

– Ի՞նչ ես ուզում ասել: Գժվե՞լ ես:

Անետի դեմքին նորից հեգնական ժպիտ խաղաց, փորձեց մի բան ասել, բայց առաջին վայրկյաններին շուրթերից խոսքեր դուրս չեկան, իսկ հետո զգաց, որ ինչ-որ բան ասելն ավելորդ է: Շրջվեց ու արագ քայլերով անցավ փողոցը: Ռոբն առաջին անգամ իրեն անզոր զգաց: Բարկությունն ու անելանելի թվացող իրավիճակը գլխում քաոս էին ստեղծել, որն ավելի խորացավ, երբ զգաց, որ Անետի համար միակ խնդիրը երեկ իր աշխատասենյակում տեսածը չէ: Զգաց, որ Անետն այլ խոսակցության է պատրաստվում, որը դժվար թե շատ ուշանա: Տեսավ, որ Անետի ներսում փոթորիկ է, ու գիտեր, որ ինչքան էլ իր ընտրած աղջիկը հավասարակշռված է, փոթորիկն ուր որ է դուրս էր հորդելու նրա ներաշխարհից: Միշտ էլ այդպես է. համբերատար մարդիկ երկար լռելուց հետո միանգամից են պոռթկում՝ աչք փակելով անգամ ամենակարևորի վրա, որը միշտ վախեցել են կորցնել: Փողոցն անցավ ու սկսեց քայլել անորոշ ուղղությամբ: Աչքերի առաջ Անետի անտարբեր ու հիասթափությամբ լի հայացքն էր, մտքում՝ նրա սառը խոսքերը:

Ճանապարհը տարավ դեպի իր սիրելի վայրերից մեկը: Այստեղ միշտ հանգստացել էր, կուտակված էներգիան վատնել, լիցքաթափվել, բայց և ուժ ստացել: Երբ տեսավ, որ շենքի դուռը բաց է, շունչ քաշեց. ուրեմն ներսում մարդ կար: Քայլեց դեպի մուտքն ու ներս մտավ՝ գնալով նախապես մտածված ուղղությամբ: Մեծ սրահի դուռը բաց էր: Իր տարիքի մի երիտասարդ ձգումներ էր անում:

– Ութսունութ, ութսունինը...

Երբ վերջինս Ռոբին տեսավ, միանգամից ուզեց վեր կենալ, բայց Ռոբը ձեռքով արեց ու ասաց, որ հանգիստ վերջացնի:

Եվս մի քանի վայրկյան, և հարյուր ձգում: Ռոբը ձեռքը մեկնեց երիտասարդին ու ոտքի կանգնեցրեց նրան: Կարենն էր՝ իր ընկերը, որի հետ փոքր տարիքից բռնցքամարտի էին հաճախել: Մեծ հաջողություններից հետո համալսարան ընդունվելու ամիսներին Ռոբը թողել էր բռնցքամարտը, իսկ ընկերը շարունակել էր առաջ գնալ ու տարիներ անց իր սեփական դպրոց–մարզասրահն էր հիմնել, ուր Ռոբը երբեմն գալիս էր՝ իր սիրած մարզաձևով զբաղվելու:

– Ինչ կա էս կողմերում, հո բան չի՞ եղել,– հարցրեց ընկերը՝ Ռոբին գրկելով:

– Ուրեմն ինչ-որ բան պիտի լինի՞, որ էստեղ գամ:

– Դե, վաղուց չես երևացել:

– Ժամանակս չի ներում: Ինձ որ մնա՝ ամեն օր կգամ:

– Էլ մի: Որ էդքան ուզենայիր, սպորտը չէիր թողնի:

– Համատեղելն անհնար էր, դու էլ գիտես:

– Գիտեմ, բայց սիրողական մակարդակի համար շաբաթական երկու օրն էլ էր հերիք: Դու ուղղակի բժշկությամբ տարվեցիր:

– Ինչ ասեմ, ճիշտ ես...

– Բայց թե գիտես՝ երբ էլ գաս, քեզ սպասում ենք:

– Գիտեմ, Կա՛ր ջան: Պարապմունք չունե՞ս էսօր:

– Առաջին խումբը հենց նոր գնաց: Հաջորդը՝ մի ժամից: Միցումների ենք պատրաստվում: Առանց հանգստի օրեր պահելու մարզվում ենք:

– Այսինքն քանի ազատ է սրահը, ինձ մի անկյուն կհասնի՞:

– Իհարկե, որ հատվածը ուզես:

Ռոբը գլուխը տմբտմբացրեց, ինչը երևի թե շնորհակալ լինելու փոխարեն արեց, ապա վերնաշապիկը հանեց ու մոտեցավ բռնցքամարտի

մարզասարքին: Առաջին մի քանի հարվածները բավական կտրուկ էին, բայց ոչ ծանր: Զգաց, որ հետ է վարժվել: Հաջորդ հարվածներն ավելի դիպուկ էին, որովհետև մտքում իր հետ եղած հիմար իրավիճակն էր, իսկ երբ աչքերը փակեց ու նորից Անետի անտարբեր հայացքը տեսավ, հարվածներն ուղղակի կատաղի դարձան: Ռոբը չգիտեր, թե ինչու է այստեղ, չգիտեր, թե հարվածելուց ինչու է Անետին ու նրա պահվածքը հիշում, բայց այն, որ իր մեջ կուտակված էներգիան ամեն անգամվա նման հարվածների միջոցով դուրս էր գալիս, անվիճելի էր: Ոոպեներն անցնում էին, հարվածների հաճախականությունն ավելի էր արագանում: Դեմքը, մազերը ամբողջովին թաց էին: Քրտինքը այտերով հոսում էր, հասնում պարանոցին: Զգում էր, որ մատներն արյունոտվել են, բայց կանգ չէր առնում:

– Ռո՛բ, Ռո՛բ, չե՞ս լսում: Քեզ հետ եմ: Հերիք է: Ձեռնոցներ չկան ձեռքերիդ:

Ընկերը, տեսնելով, որ Ռոբը չի լսում իրեն, մոտեցավ ու դժվարությամբ հեռու տարավ նրան մարզասարքից:

– Քեզ հետ ի՞նչ է կատարվում, կասե՞ս:

Ռոբը լռում էր: Չորացած շուրթերն իրարից հեռու տարած՝ արագ շնչում արտաշնչում էր:

– Քեզ հետ եմ, Ռո՛բ: Խնդիրնե՞ր ունես: Էս վիճակում երբեք չես եղել:

– Ամեն ինչ կարգին է: Երևի շուտ-շուտ պիտի գամ:

– Հաստատ:

– Ես գնամ արդեն:

– Մի քիչ մնա, կտանեմ քեզ:

– Չէ՛, մեքենաս հեռու չէ:

– Գոնե ձեռքերդ նայենք, մնասել ես ահագին: Վիրակապ պետք կգա:

Ռոբը ձեռքերին նայեց, ճաքերից արյուն էր հոսում, բայց տարօրինակն այն էր, որ մրմռոց չէր զգում: Մեկ-երկու անգամ առանց բռնցքամարտի ձեռնոցի մարզվել էր, ու մնասվածքները զգալ էին տվել, իսկ հիմա ցավ չէր զգում...

– Չէ՛, չէ՛, կլվացվեմ հիմա, ու կանցնի, լուրջ բան չկա:

Ռոբը մի քանի րոպե նստեց, երբ զգաց, որ շնչառությունը փոքր-ինչ կարգավորվեց, լվացվեց ու դուրս եկավ մարզասրահից: Շենքից դուրս գալուն պես մաքուր օդը հպվեց մարմնին: Շնչեց ու զգաց, թե ինչպես օդը լցվեց ողջ մարմնով մեկ: Լավ է, որ քայլերն այստեղ էին բերել, միայն թե չգիտեր, թե այս հանգստությունն ինչքան կտևի:

12

Սերը նահանջում է՝ զգալով, որ հարաբերությունների պահպանման համար տարվող պայքարը նահանջի ճանապարհն է բռնել, և ամեն ինչ դեպի փրկություն տանելու փորձերն արդեն հոգնեցրել են:

Հրուշակարանում տարածվել էր քաղցրավենիքի անուշ բույրը: Ասես սենյակների ամեն մի անկյունում վանիլ էր դրված: Այս կառույցում յուրաքանչյուրն իր գործն ուներ: Թիմն աշխատում էր մեխանիկական սարքավորումների ճշգրտությամբ, ու եթե մեկ րոպե անգամ մեկը թերանար, աշխատանքային պրոցեսը կխախտվեր:

Անետը ներս մտնելուն պես աչքերով փնտրեց Ինեսին ու գտավ: Աղջիկն իր տարերքի մեջ էր: Չնկարագրվող արագությամբ թխվածքաբլիթներ էր ձևավորում: Երբ Անետին նկատեց, ժպտաց ու հայացքով սենյակի անկյունում դրված բազկաթոռները ցույց տվեց: Անետը հասկացավ, որ պիտի սպասի: Նստեց ու մինչ կուսումնասիրեր, թե ով ինչ գործով է զբաղված, Ինեսն իր աշխատանքը փոխանցեց մեկ ուրիշին ու մոտեցավ իրեն:

– Ինչ-որ բան է եղել, Անե՛տ: Չէիր ասել, որ գալու ես,– մոտենալով ու ընկերուհուն գրկելով՝ հարցրեց Ինեսը:

– Հա՛մ եղել է, հա՛մ նոր պիտի լինի,– տխուր ձայնով պատասխանեց Անետը:

– Օհո՛, էս աստիճանի՞, վախեցրիր արդեն:

– Ուշ կվերջացնե՞ս:

– Հա, բայց հիմա ժամանակ ունեմ, կարող ենք խոսել:

– Ռոբի հետ էլ չեմ կարող: Անհնար է: Ինձ թվում է՝ խեղդվում եմ նրա կողքին,– նստելով սկսեց Անետը:

– Ճի՞շտ լսեցի:

– Հա՛, ուզում եմ՝ բաժանվենք, էլ իմաստ չեմ տեսնում:

– Գժվե՞լ ես, Ա՛ն: Միանգամից նման որոշում են կայացնո՞ւմ: Եթե նորից վիճել եք, կհանգստանաք, կխոսեք կանցնի, տաք գլխով պետք չի որոշումներ կայացնել:

– Սա էլ անցնի, չէ՞: Միշտ անցնում են մեր վեճերը, բայց ամեն մեկն իր հետևից լիքը փոփոխություններ է թողնում կամ մեր զգացմունքներից էլ մի բան տանում է հետը: Էնքան քիչ ենք իրար լսում ու հասկանում, որ ինձ թվում է՝ զգացմունքներից էլ ոչինչ չի մնացել:

– Դուք սիրում եք իրար, Ա՛ն: Դժվարությունների պատճառով չի կարելի նման քայլի դիմել:

– Սիրում էինք: Եթե դա սեր էր... Գիտե՞ս, ես դժվարություններից չեմ վախենում, երբեք էլ չեմ վախեցել: Պատրաստ եմ ու հաստատ կարող

եմ ամեն բան հաղթահարել, եթե զգամ, որ մենակ չեմ, որ կողքիս է ու ինձ հավասար պայքարում է: Բայց չեմ զգում նրա ներկայությունը, ինձ ուժ չի տալիս, որովհետև խնդիր չի տեսնում մեր հարաբերություններում, նրա համար կարգին է ամեն ինչ: Ոչ թե դժվարություններ են սրանք, այլ հենց մենք ենք, մեր էությունները իրար չեն համապատասխանում: Գնալով համոզվում եմ: Մեր տեսակներն անհամատեղելի են:

– Ո՞նց: Էդպես չի լինում: Գուցե նա քո երազածի նման չէ, բայց սերը, որը ապրել եք միասին, բաճկոն չէ, որ դեն նետեք ու նորը վերցնեք: Կամ եթե սա չէ սերը, ապա էլ ո՞րն է: Օրինակ էիք բոլորի համար:

– Օրինա՞կ: Հը՛մ... Սիրո օրինակ, որը գնալով դեպի անդունդն է գլորվում:

– Էսպես մի ասա: Մի վեճի պատճառով չի կարելի էսքան հեռուն գնալ:

– Վեճ չկա, Ինե՛ս, չենք վիճել: Չեմ ուզում մտածես, որ ասածներս լուրջ կամ կշռադատված չեն: Ահագին ժամանակ է, ինչ էս մասին եմ մտածում, որովհետև մեր հարաբերություններում ոչինչ առաջվանը չէ:

– Բոլոր զույգերի մոտ էլ լինում են ճգնաժամային իրավիճակներ, որոշ ժամանակ հետո կարգավորվում է ամեն ինչ, ընդամենը պիտի երկուսդ էլ աշխատեք այդ ուղղությամբ:

– Երկո՞ւսս: Ես միշտ եմ պայքարել մեր սիրո համար, իսկ այ Ռոբը... Պայքարում է միայն վեճերը հարթելիս, այն էլ հերթական թեման ևս շրջանցելու համար:

– Անե՛տ, Ռոբը քեզ շատ է սիրում:

– Ես էլ էի էդպես մտածում, բայց հիմա վստահ չեմ: Ավելի ճիշտ, զգացմունքը, որն ունի իմ հանդեպ, հաստատ սեր չէ, ու երևի ես էլ վաղուց այն սերը չեմ զգում, որը կար տարիներ առաջ:

– Հնարավոր չէ, մեծ սերերը միանգամից չեն փոշիանում, դրանց տևողությունն անհնար է կարճ լինի, այն էլ երբ կողք կողքի եք:

– Կողք կողքի...,– գլուխը վեր ու վար անելով կրկնեց Անետը,– դա միայն թվում է: Մենք միասին ենք, բայց հեռու ենք իրարից: Կամ ինչի՞ է պետք էդ սերը, որից միայն հիշողություններ են մնացել, դրանցով հնարավո՞ր է երջանիկ լինել: Մանրադրամի արժեք ունեցող սերեր կան, որ հանցանք է սեր անվանելը: Դրանք ուղղակի չպիտի ծնվեն, չպիտի սկսվեն...

– Մի՛ չափազանցրու, Ա՛ն:

– Քեզ թվում է՝ շատ եմ ուզում, որ էդպես լինի: Ցավով եմ ասում, բայց մեկ-մեկ ոնց որ անծանոթներ լինենք: Ու սա վաղուց եմ զգում...

– Ես նկատում էի, որ քեզ մոտ մի բան էն չէ, հատկապես վերջին օրերին: Ուզում էի հարցնել, բայց հարմար առիթ չէր լինում:

– Սկզբում ձևացնում էի, որ ամեն ինչ կարգին է, հետո հասկացա, որ ո՛չ Ռոբին եմ դրանով լավություն անում, ո՛չ էլ՝ ինձ: Երեխաներ չենք, ու սիրո մեջ ոչինչ պարտադրված չպիտի լինի:

– Իսկ եթե իրոք դժվար ժամանակներ են երկուսիդ մոտ, ու պետք է ուղղակի հանգստանա՞լ իրարից: Խոսե՛ք իրար հետ, խոսե՛ք ձեր մասին, ձեր հարաբերությունների, ձեր ապագայի մասին: Խոսե՛ք ու լսե՛ք իրար. չէ՞ որ սա ամենակարևորն է հարաբերություններում:

– Մի տարի առաջ նորից նույն խնդրի առաջ էինք կանգնած: Խոսեցի, ասացի, թե ինչ եմ զգում, լսեց, թվում էր՝ հասկացավ: Որոշ ժամանակ ամեն ինչ լավ էր, շատ ժամանակ էր հատկացնում մեզ: Հաճախակի էինք տեսնվում, շատ էինք շփվում: Հետո նորից աշխատանքն ու իր հիվանդները դարձան առաջնային: Ծանր օրվանից հետո շտապում է տուն ու կարող է մինչև լույս քնել՝ առանց զանգելու կամ մի բառ գրելու: Ես չեմ մեղադրում, իրոք հոգնում է, բայց մի՞թե հոգնածությունը սիրած մարդու կողքին չպիտի թեթևանա: Սա ավելին չէ՞, քան տաք լոգանքը կամ փափուկ անկողինը: Ես միշտ հոգնած ժամանակ նրան եմ հիշում ու երազում եմ գրկել, որ հանգստանամ... Մի՞թե տանջանքները սիրած մարդու գրկում չեն անհետանում: Դրանք մոռացվում են, հալվում են, երբ վստահելի տաքություն են զգում:

– Սխալ չես...

– Մենք օրերով կարող ենք չխոսել կամ խոսել կցկտուր՝ մի քանի բառով: Եթե ընդմիջմանը չգնամ նրա մոտ, նա չի գա, աշխատանքից հետո կարող է տեսնվենք շատ կարճ ժամանակով: Ուղեղի մեջ էլի հանգստանալն է, որ հաջորդ օրը թարմ ուղեղով սկսի աշխատել:

– Ա՛ն, Ռոբն իրոք շատ է հոգնում, ամբողջ օրը ծանրաբեռնված է, ու, ի տարբերություն մեզ, ոչ թե հագուստի կամ թխվածքի հետ է գործը, այլ մարդու առողջության: Երևի դրա համար էլ իր զգոն լինելն ամենաշատն է կարևորում:

– Այնքան, որ կողք կողքի նստած չենք խոսում իրար հետ: Մեկը մյուսի հետ ինչ կապ ունի: Գուցե պահանջկոտ թվամ, բայց էսպես չէի խոսի, եթե չիմանայի, որ ցանկության դեպքում կարող է ժամանակ գտնել: Ախր հենց նույն աշխատանքի հետ մենք էնքան սիրուն օրեր ենք ունեցել, էնքան հետաքրքիր ժամանակ ենք անցկացրել միասին: Ինչ-որ բան է փոխվել, չէ՞, եթե առաջ մեզ ժամանակ էր հատկացնում, իսկ հիմա՝ չէ:

– Տղամարդիկ շուտ են հոգնում նույնությունից: Գուցե երբ արդեն միասին ապրեք, ամեն ինչ իր տեղն ընկնի,– Անետին ուշադիր լսելուց հետո ասաց Ինեսը:

– Հասկանում եմ՝ ինչ ես ասում, բայց սա էդ դեպքը չէ: Մենք էնքան ենք օտարացել իրարից... Ոնց որ պարտադրված հանդիպենք, չուզենալով շփվենք: Բայց մի՞թե սերը պարտադրված վերաբերմունքի կամ հոգնեցնող պարտականությունների շարան է, կամ թեկուզ չնչին պարտադրանքն ո՞ւմ է հաճելի, որ սերը երկար ժամանակ ենթարկվի դրան այն դեպքում, երբ ամենաշատն է պարզություն սիրում: Ուզում եմ էլ չմտածել՝ սիրո՞ւմ է ինձ, թե՞ չէ, առաջվա համեմատ ինչ-որ բան փոխվե՞լ է, թե՞ նույնն է, ուղղակի ես եմ ավելին ուզում: Բայց հասկանում ես՝ եթե ամեն ինչ առաջվանը լիներ, ես ինձ ամեն օր էս հարցերը չէի տա...

Անետի ուզածը մեծ բան չէր: Մեզ որքան քիչ ժամանակ են հատկացնում, այդքան շատ ենք զգում դրա կարիքը, որքան շատ են անտարբերություն ցուցաբերում, այդքան ուժգին ենք կապվում նրանց, որովհետև մարդը միշտ տենչում է ստանալ իր ուզածը, իսկ երբ չի ստանում, ավելի շատ է կենտրոնանում դրա վրա:

– Ես Ռոբին շատ եմ սիրել,– մի քանի վայրկյան լռելուց հետո շարունակեց Անետը:

– Սիրե՞լ, հիմա չես սիրում:

– Երևի սիրում եմ, բայց վիրավորանքն ավելին է, քան սերը, որ զգում եմ նրա նկատմամբ: Իրոք շատ եմ սիրել նրան, էնքան շատ, որ անգամ երբ ցավեցրել է, ամբողջ սրտով փորձել եմ հասկանալ նրան: Փորձել եմ միշտ, բայց էլ չեմ ուզում: Առանց հարցականների ու գլուխկոտրուկների ապրելն ավելի հեշտ է: Սիրո մեջ ինչ գլուխկոտրուկ: Ինչի՞ պիտի հաճախակի մտածեմ, թե ինձ նեղացնելու պատճառը որն էր, ինչի՞ ինձ ժամանակ չհատկացրին, չլսեցին, չգրկեցին, չքայլեցին հետս, ուղղակի չնստեցին կողքիս: Ես հոգնել եմ, հասկանո՞ւմ ես:

– Հասկանում եմ, բայց ախր ձեր սիրուն պատմությունն էսպես չպետք է ավարտվի: Իսկ եթե մի հնարավորություն էլ տաս Ռոբին, նորից խոսես, ավելի լուրջ:

– Նորի՞ց: Քա՞նի հնարավորություն տամ, քա՞նի անգամ գիջեմ ու ներեմ: Ներում են նրանց, ովքեր ընդունում են իրենց սխալներն ու պատրաստ են թեկուզ ինչ-որ չափով փոխվել: Մի անգամ ներեցի: Ինքս ինձ ասում էի՝ ներիր, որ հետո քեզ չմեղադրես ևս մեկ անգամ չփորձելու համար, որովհետև չարածների համար միշտ էլ ափսոսում են... Ներեցի, գիջեցի, սպասեցի, ու ի՞նչ: Մարդիկ երբեք չեն փոխվում:

Անետը լավ գիտեր, որ երկրորդ անգամ չեն ներում, ուղղակի փորձում են, որ տեսնեն՝ արժե՞ նորից ներել, թե՞ չէ: Իսկ երրորդից հետո սկսում են անընդհատ ներել՝ այդ էջը ևս շրջելու համար: Սա ուժեղների համար չէ, իսկ Անետին թույլ էակ համարելն առնվազն սխալ է: Նորից ներելը, նորից փորձելը կնշանակեր հավերժ հաշտվել այն ամենի հետ, ինչը բառացիորեն իր տեսակի համար չէր: Որովհետև մարդիկ ներելն այլ կերպ են ընկալում: Տրված հնարավորությունն սկզբում մեծ ձեռքբերում է համարվում, հետո՝ որոշ ժամանակ անց, երբ ստանում են նույն վերաբերմունքը, ինչ առաջ, տրված հնարավորությունը չնչին է երևում, գնալով մոռացվում է: Ասես ոչինչ էլ չի եղել, ոչ մի խոստում չի հնչել... Անետը զգում էր, որ ժամանակն է որոշում կայացնելու, որոշում, որը փոխելու էր իր կյանքը, և որոշում, որից խուսափելն այլևս անիմաստ էր:

– Ռոբին հնարավորություն չես տալիս, գոնե ձեր սիրուն տուր: Մի անգամ էլ հավատա դրան: Մի վերջին անգամ... Պիտի հավատաս ու վստահես, որ ձեզ իր հետևից տանի:

– Սիրուն, որը էլ չկա՛:

– Կա, քնեցրել եք ուղղակի:

– Էլ չեմ հավատում մեր սիրուն: Պիտի հավատս վախերիցս ու կասկածներիցս մեծ լիներ, որ ուզենայի նորից փորձել... Իսկ եթե սրանք ու տանջանքներն ավելի շատ են, քան երջանիկ պահերը, ուրեմն գնալու ժամանակն է:

Անետը վեր կացավ ու մոտեցավ պատուհանին: Նայեց դուրս, լռեց մի քանի վայրկյան, հետո շշնջաց.

– Անձրև է գալու:

– Հա՛:

– Հա, մեր հարաբերություններում էլ. մեր սերն ամպոտվել է...

– Սիրո անձրևը ո՞րն է, մի՞թե բաժանումը:

Անետը գլխով արեց:

– Բայց անձրևից հետո ծիածան կա, չէ՞,– իրար խառնված արագ ասաց Իսեսը,– ուրեմն բաժանումից պետք չէ խուսափել, միայն թե դրա անունը փոխենք, «հեռացում» դնենք օրինակ, որովհետև ձեզ ուղղակի ժամանակ է պետք: Չնայած մի քանի ժամն էլ զգալ կտա՝ կկարողանամ առանց նրա առաջ գնալ, թե՛ լավ է նրա հետ, թեկուզ իրար չհասկանալով, բայց միասին:

– Ես գիտեմ, որ առանց նրա դժվար է լինելու, բայց հիմա էլ հեշտ չէ:

– Չգիտեմ էլ, թե ինչ ասեմ: Ռոբի հետ խոսե՞լ ես:

– Դեռ չէ: Կխոսեմ մոտ օրերս: Հուսով եմ՝ կստացվի խոսակցությունն ու կհասկանանք իրար: Հասուն մարդկանց նման կբաժանվենք, ոչ թե դեռահասների:

– Չեմ կարծում, Ռոբը քեզ նման չէ, շուտ է բռնկվում, էս հարցին հաստատ թեթև չի մոտենա:

– Ավելի ծանր կլինի ուրեմն սպասվելիք խոսակցությունը:

– Ա՛ն, հաստա՛տ ես որոշել:

– Երևի:

– Այսինքն կարող է մտափոխվե՞ս:

– Չգիտեմ, ամենադժվարը կապվածությունը հաղթահարելու վախից ազատվելն է: Երբ վստահ լինեմ, որ կկարողանամ պայքարել ինքս իմ դեմ, ուրեմն ճիշտ ժամանակը կլինի: Մինչ օրս միայն դա է ինձ հետ պահել այս որոշումից: Ամիսներ շարունակ վախեցել եմ դրանից ու զգում եմ, որ դեռ կասկածում եմ՝ կկարողանամ առանց նրա, թե՛ չէ: Քեզ թվում է՝ ինձ համար հե՞շտ է: Անհնար է չկարոտել նրան, ով երկար ժամանակ ամեն րոպե մտքումդ է եղել, չկարոտել նրան, ում անկախ ամեն ինչից սիրել ես, սիրել ամբողջ հոգով, նվիրվել անմնացորդ, ապագադ չես պատկերացրել առանց նրա ու այժմ էլ դժվարանում ես պատկերացնել:

Անետի վախն անտեղի չէր: Սարսափելի է կապվել մեկին, ում հանդեպ ժամանակի ընթացքում ոչինչ չես զգում՝ կախվածությունից

բացի, իսկ սերը քիչ-քիչ պակասել է հենց այդ մեկի ցույց տված վերաբերմունքի պատճառով: Հենց սա էլ ամենադժվարն է: Ամեն ինչը հաղթահարելի է թվում՝ բացի կախվածությունից, որովհետև ոչինչ այնպես չի բարդացնում ապրելը, որքան հին սովորությունները թողնելը:

– Չգիտեմ, թե ձեզ ոնց օգնեմ, հանեմ էս վիճակից...

– Ամբնդհատ էնպիսի իրավիճակներ են լինում, որոնք նպաստում են, որ արագ որոշում կայացնեմ: Վերջերս մենք անընդհատ վիճում ենք, դեռ չհաշտված՝ մի նոր վեճի առիթ է լինում: Ռոբը շարունակ արդարանում է, իր ասելով՝ անտեղի, ու ես հոգնել եմ անդադար նույնը լսելուց:

– Ինչ-որ բան կա, որ ես չգիտե՞մ:

– Կա, բայց որոշմանս վրա շատ չի ազդել: Ես վստահում եմ Ռոբին, ուզում եմ հավատալ, որ անկեղծ է ինձ հետ:

– Տարօրինակ աղջիկ ես: Բա ափսոս չէ՞ էդ վստահությունը:

– Ափսոս է, բայց քիչ է շատ:

Ինեսին կանչեցին, գնաց ու մի քանի րոպե հետո հետ եկավ, ներողություն խնդրեց, ասաց, որ էլ չի կարող նստել:

– Խնդրում եմ, լավ մտածիր, սա ոչ թե ասում եմ նրա համար, որ չեմ ուզում Ռոբը տանջվի, այլ չեմ ուզում՝ ժամանակ անց զղջաս արածիդ համար: Ամեն ինչ կարելի է շտկել, եթե ցանկություն լինի, բայց իմացիր, որ ինչ էլ որոշես, ես կողքիդ եմ՝ անկախ նրանից, թե ում դեմ կլինի որոշումդ: Դու գիտես, որ երկուսդ էլ թանկ եք ինձ համար:

– Գիտեմ, ապրես շատ:

– Դե, ես վազեմ, կապի մեջ կլինենք, ամեն քայլ անելուց առաջ երկար մտածիր, խնդրում եմ ուղղակի:

Անետը թեթև ժպտաց, գրկեցին իրար, հրաժեշտ տվեցին, ու Ինեսն անցավ իր աշխատանքին: Անետը որոշեց քայլելով տուն գնալ, որովհետև սա ամենահեշտ բանն էր, որ կարող էր նյարդերը հանգստացնել:

Դրսում մռայլ եղանակ էր: Առավոտյան արևից ոչինչ չէր մնացել: Երկինքն ուր որ է անձրևելու էր, իսկ Անետն այնպես դանդաղ էր քայլում, ասես այս երկնքի տակ չլիներ: Քայլում էր ծանոթ մայթերով ու հիշում, թե քանի անգամներ է Ռոբի հետ քայլել դրանցով, քանի անգամներ են փողոցները լցրել իրենց ներկայությամբ, ժպիտներով ու

զրույցներով, իսկ վերջերս՝ միայն լռությամբ... Այո, վերջին ամիսներն ամեն ինչ փչացրել էին, խամրեցրել անցյալի գեղեցիկ հիշողություններ-ը ու ստվեր սփռել իրենց սիրո վրա: Անձրևի մի քանի կաթիլ ընկավ Անետի դեմքին: Աղջիկն ասես չնկատեց, ոչ քայլերն արագացրեց, ոչ էլ կանգ առավ: Իր հոգում էլ էր անձրև, ու ավելի առատ էր, քան երկնքից թափվողը:

13

Մերը գնալով աննկատ է դառնում, երբ չենք նկատում նրա արածները, որովհետև մեր մտքում շարունակ չարածներն են...

***

Մերը չքվում է, երբ ի չիք են դառնում ներկան լցնող հաճելի զգացողությունները, իսկ միայն անցյալում ապրածը հիշելով երջանիկ լինել հնարավոր չէ:

Երբ մտքերդ խառն են, երբ հոգիդ հանգիստ չէ, ամենադժվար ու գրեթե անհնար բանը քնելն է: Առավոտյան աշխատանքի էր, ծանր օր էր սպասվում, բայց ինչքան էլ որ շատ էր ուզում Անետն ուղեղը հանգստացնել, ոչ մի կերպ չէր ստացվում: Աչքերը փակվեցին միայն լուսադեմին՝ արևի առաջին շողերի հետ: Մեկ-երկու ժամ անց՝ լույսը բացվելուն պես, Անետի կոպերն էլ բացվեցին, որովհետև ինքը միշտ արևի հետ էր արթնանում, երբ սենյակն ամբողջությամբ լցվում էր արևի լույսով: Վեր կացավ, պատրաստվեց, նախաճաշեց ու դուրս եկավ տանից: Կանգառը դատարկ էր: Նստեց նստարանին ու սովորության համաձայն աչքը գցեց դիմացի մայթին կանգնած շինության պատին, որի վրայի գրաֆֆիթին անձրևներից գրեթե մաքրվել էր, բայց մեկ է, ամեն օր գրավում էր իր ուշադրությունը: Ամեն անգամ, երբ Ռոբի հետ էր լինում կանգառում ու վերջինս նկատում էր, որ ինքը նորից այդ պատին է նայում, միշտ զարմացած ասում էր.

– Էնպես ես նայում, ասես նոր իմաստ պիտի գտնես նկարի մեջ կամ առաջին անգամ ես տեսնում:

Անետը գիտեր, թե նկարի մեջ իրեն ինչն էր գրավում, բայց չգիտեր, թե ինչու է ամեն անգամ նույն կլանված հայացքով նայում պատին: Գուցե սովորություն էր դարձել ու անկախ իրենից էր միշտ նույնն անում: Այսօր էլ նստելուն պես նայեց պատին ու աչքերին չհավատաց: Իրեն ուղղված գրություն կար գրաֆֆիթի վերևում. «Հասկացիր ու ներիր ինձ, եթե կարող ես, Անետ»: Տողերն իրենց սիրած ֆիլմից էին, որը հաճախակի նայում էին միասին: Անետի աչքերն արցունքոտվեցին, ուզեց վազել Ռոբի մոտ, գրկել նրան, ասել, որ ներում ու սիրում է, բայց մի բան խանգարեց: Ախր բաժանման մասին մտքերի պատճառը բոլորովին էլ այդ իրադարձությունները չէին: Ճիշտ է, դրանք ավելի սրեցին հարաբերությունները, բայց Անետն իրոք հավատում էր Ռոբին: Նույն րոպեին Ռոբից հաղորդագրություն եկավ. «Ինձ կլսես, չէ՞»: Անետը չպատասխանեց ու բարձրաձավ երթուղային: Ճանապարհին նորից կարդաց հաղորդագրությունը, մի քանի անգամ որոշեց պատասխանել, գրեց, հետո ջնջեց, նորից գրեց, նորից ջնջեց ու այդպես էլ Ռոբն իր նամակի պատասխանը չստացավ:

Երթուղայինը կանգ առավ: Անետն իջավ ու անցավ փողոցը: Նոր էր հասել մայթեզրին, երբ իր անունը լսեց: Շրջվեց ու տեսավ Նանեին՝

իր օգնականին, ով արագ փողոցն էր անցնում, որ հասնի իր մոտ, իսկ ետևից մի երիտասարդ էր քայլում՝ ծաղկեփունջը ձեռքին:

– Ինչ լավ է՝ քեզ տեսա: Փրկեցիր ինձ,– ասաց աղջիկը՝ Անետին մոտենալով:

– Ինչի՞, Նանե՛ ջան, ի՞նչ էր եղել:

– Սրահում կպատմեմ,– պատասխանեց Նանեն ու գրեթե վազելով գնաց դեպի սրահի կողմը: Անետն էլ ինքնաբերաբար քայլերն արագացրեց:

– Կխոսեն վերջապես,– ներս մտնելով ու պայուսակը սեղանին դնելով՝ ասաց Անետը:

– Տանից մինչև էստեղ հետևիցս գալիս էր: Ոչ մի կերպ չէի կարողանում հասկացնել, որ չեմ ուզում իրեն լսել կամ խոսել հետը: Ահավոր համառ է ու ինքնավստահ:

– Ծաղիկներով տղա՞ն:

– Հա, Անե՛տ: Մի խնջույքի էինք մասնակցում միասին, հետո պարզվեց՝ նույն բուհում ենք սովորում, մի օր էլ խանութում պատահաբար հանդիպեցինք:

– Այո, կան մարդիկ, որոնց հետ ճակատագիրը քեզ անընդհատ հանդիպեցնում է՝ ցույց տալու համար, որ ինչ-որ բան այն չէ, հասկացնելու համար, որ եթե ինքը ձեզ նույն ճանապարհի վրա է կանգնեցնում, ուրեմն անպայման պիտի ճանաչեք իրար, այլ տարբերակ չունեք:

– Հա, ու երևի դա անխուսափելի է, եթե ճակատագիրն է որոշել, չէ՞:

– Երևի... Իսկ թե հետո ինչ կլինի, դա ոչ ոք չգիտի...

– Ոչ մի բառ չենք խոսել երբեք, միայն հայացքներով ենք բախվել իրար: Դրանից հետո երկու շաբաթ է, ինչ նկատում էի, որ հետևում է ինձ, էսօր որոշել էր ներկայանալ:

Անետը հիշեց, թե ինչպես առաջին անգամ բախվեցին իր ու Ռոբի հայացքները: Նախ փողոցում՝ ընդամենը մի քանի վայրկյանով, որը դժվար է հանդիպում կոչելը, հետո՝ նորաձևության տանը: Հիշեց ու հերթական անգամ համոզվեց, որ ոչ ոք ինչ-որ մեկի աչքերի մեջ անմտածված չի նայում... Հայացքները երբեք անտեղի չեն բախվում իրար, ու դրանից հետո միշտ շարունակություն է լինում:

Այո, մարդիկ ուղղակի իրար աչքերի մեջ չեն նայում: Պիտի ուզենաս, որ նայես, պիտի ճանաչելու, դիմացինիդ հոգին բացահայտելու

ցանկություն ունենաս, որ աչքերի մեջ նայես ու խորանաս հայացքի հեռուներում, որովհետև աչքերում ամեն ինչ կա մեր մասին, ամեն ինչ գրված է կամ դրոշմված...

– Ու ի՞նչ,– հուշերից հազիվ սթափվելով՝ հարցրեց Անետը:

– Ես իր ժամանակը չունեմ: Հենց էդպես էլ ասացի:

– Ու հուսով ես, որ էլ չի՞ գա:

– Դե, եթե հասկանա, էլ չի գա:

– Եթե նորից գա, ուրեմն ոչ թե չի հասկացել, այլ կարևոր ես իր համար:

– Անծանոթներ ենք մենք, ո՞նց կարող եմ կարևոր լինել:

– Էդպես էլ է լինում: Սկզբում նկատում ենք, զգում, որ հետաքրքրված ենք, կարևորում ենք ինչ-որ մեկին ու փորձում ճանաչել:

– Հա՛ որ:

– Բոլոր տղաներն էլ սկզբում միայն մի նպատակ ունեն՝ ամեն կերպ, բոլոր հնարավոր և անհնար տարբերակներով գրավել նրան, ում նկատել են հարյուրավորների մեջ... Ու գրավել ոչ միայն սիրտը, այլև աչքերը, որ քայլելիս շարունակ իրենց փնտրեն, գրավել միտքը, որ անգամ փակ աչքերով անդադար հիշեն իրենց: Բայց անցնում է ժամանակ, ու երբեմն գործադրած ջանքերը չափից դուրս շատ, հաճախ անգամ անհեթեթ են թվում, որովհետև հետաքրքիր չէ այն, ինչն արդեն ունես, որովհետև ցանկություններն իրականանալուց հետո կորցնում են իրենց գրավչությունը:

Անետի աչքերն արցունքոտվեցին. չկարողացավ թաքցնել:

– Ինչ որ բա՞ն է եղել, Անե՛տ:

– Չէ, ոչ մի բան,– պատասխանեց Անետն ու վերարկուն հանելով՝ մոտեցավ կախիչին:

– Բայց կարևոր է սիրել այնպիսի մեկին, ում հետ ընդհանուր հետաքրքրություններ, բնավորության նման գծեր ունես: Նայում ես նրան ու զգում ես, որ քո տեսակի կրկնօրինակն է: Երևի էսպես հեշտ է ավելի, դժվարությունները քիչ կլինեն, իրար հասկանալ–չհասկանալու հարցերը՝ ևս: Իսկ առանց ճանաչելու սիրելը կամ դա սեր անվանելն ինչքանո՞վ է ճիշտ:

– Սերն օրենքներ չունի: Եթե տարբեր եք իրարից, աշխարհի վերջը չէ: Եթե նրա մեջ քո հոգին ես տեսնում, քո շարունակությունը, քեզ մինչ

ինքը պակասած ամեն ինչը, քո երազանքներն ու ապագան, ուրեմն նա է ճակատագիրդ՝ անկախ նրանից՝ նման եք իրար, թե՞ չէ:

– Տարօրինակ մարդ է, անգամ դեմ դիմաց չենք կագնել, չենք խոսել, բայց ասում է, որ սիրահարվել է: Ու ամենազարմանալին իր համոզելն է, որ հավատամ ասածին: Հո գիժ չեմ:

Անետը ժպտաց: Նանեին շատ էր սիրում: Տարիքով իրենից փոքր էր: Դեռ ուսանող էր, բայց աչքաբաց էր, տաղանդավոր ու միշտ ժպտերես: Սա Անետին շատ էր դուր գալիս: «Այն է, ինչ պետք է»,– մտածել էր Անետն ու աշխատանքի ընդունել Նանեին, իսկ աղջկա շփոթված արձագանքին, թե աշխատանքային փորձ չունի, Անետը ասել էր՝ ոչինչ, կունենաս: Իսկ այժմ մի տարի է, ինչ ինքը Նանեի և՛ տնօրենն էր, և՛ ընկերուհին ու խորհրդատուն:

– Գուցե իրոք չի խաբում, և իր համար կարևոր է, որ հավատաս իրեն, բայց սա հետո կերևա, ժամանակի հետ...

– Էդպես ես կարծում:

– Հա, ժամանակն ամեն ինչ ցույց է տալիս: Մենք ենք որոշում՝ նկատե՞նք իր ցույց տվածը, թե՞ շարունակենք փակ աչքերով ապրել...

– Քիչ է մնում ասես, որ գուցե սիրահարվեմ նրան:

– Դե, ոչինչ էլ չի բացառվում: Գուցե ոչ նրան, բայց երկրագնդի վրա ամեն մեկն իր համար ստեղծված հարազատ հոգին ունի, ում հետ գուցե հաճախակի հանդիպում է, բայց չի նկատում:

Ո՞վ չգիտի, որ սա այսպես է: Գուցե քո երջանկությանն այսօր հանդիպել ես փողոցում, բայց չես էլ նայել նրան: Գուցե տեսել ես նրան սրճարանում, որտեղ անտարբեր հեռախոսդ էիր փորփրում ու չես նկատել: Գուցե միասին նույն ներկայացումն եք դիտել, բայց դահլիճի տարբեր շարքերից: Գուցե հաճախակի նույն երթուղայինից եք օգտվում, բայց ձեր հայացքները դեռ չեն բախվել: Ու դրա համար էլ, երբ մեկին հանդիպում ենք, կարծում ենք, թե առաջին անգամ չենք տեսնում նրան...

– Դա մի օր անպայման կպատահի: Կհանդիպես մեկին, ում, կթվա, թե վաղուց ես ճանաչում: Նրա ձայնը քեզ շատ ծանոթ կթվա, իսկ աչքերը, կմտածես, թե ինչ-որ տեղ տեսել ես... թեկուզ երազներում... Գուցե շատ փորձությունների միջով անցնեք, գուցե երկար ժամանակով հեռու լինեք իրարից, բայց եթե քեզ տեսնելիս նույն զգացողություններն էլ իր հոգին է ունեցել, ուրեմն մեկը վերևից ձեզ նվիրել է իրար, ու դուք

արդեն գիտեք, թե սերը ինչ է... Երբ սիրտդ ինչ-որ բան զգա նրա հանդեպ, անկարող կլինես դրան դեմ գնալ: Կսիրահարվես, թե չէ՝ ինքդ չես որոշելու: Ամեն բան նախ մտքում է սկսվում: Բավական է միայն մտածես նրա մասին, ու մի բան, կաթիլ-կաթիլ հավաքվելով, ձնագնդի պես մեծանալով՝ կդառնա այն, առանց ինչի այլևս չես կարողանա ապրել: Հետո սրտիդ ազդակ կհասնի, ու վերջինս կսկսի արագ բաբախել:

Նանեն ժպիտը դեմքին լսում էր:

– Ապա կզգաս, թե նրան տեսնելիս ինչ էներգիա է գալիս դեպի քեզ,– շարունակեց Անետը,– գալիս, լցվում է հոգուդ մեջ, մտնում սիրտդ, ու դու սկսում ես նորովի ապրել՝ նոր նպատակներ քո առաջ դնելով ու ավելի հաճախ ժպտալով: Սա սիրահարվածության ժամանակաշրջանն է, երբ կյանքդ սկսում է օր օրի փոխվել, ու այդ փոփոխություններն ինքդ քեզ անգամ դժվարանում ես խոստովանել: Դու հասկանում ես, որ սիրահարվել ես, երբ չես ուզում քնել, որովհետև քունն անիմաստ ժամանակ է՝ նրանից հեռու լինելու համար:

Նանեն մոտեցավ ու նստեց Անետի դիմաց՝ ուղիղ նրան նայելով: Վերջինս մատիտով ինչ-որ էսքիզ էր խզբզում թղթի վրա:

– Հետո գալիս է Սերը՝ ճանապարհին ոչինչ նույնը չթողնելով: Նա կողքիդ է, ու քեզ ուրիշ ոչինչ պետք չէ աշխարհից...

– Մենակ ինքն է չէ՞ կարևոր:

Ա՛խ, այդ սերը... Նանեն հետաքրքրված հարցեր էր տալիս Անետին՝ լավ իմանալով, որ աղջիկը կարող է պատասխանել դրանց: Բայց դեռ չգիտեր, որ ամեն մի հոգի սերը յուրովի է զգում ու որ իր զգացած սերը և ոչ մեկի զգացածի նման կարող է չլինել: Դեռ չգիտեր, որ սերը մանրուքների մեջ է...

Սերը հիվանդ ժամանակ քո կողքին նստած լուսացնելն է:

Սերը խնդրելն է, որ քո հանդեպ ավելի ուշադիր լինես:

Սերը քեզ ուրախացնել փորձելն է:

Սերը շտապելն է քեզ մոտ, որ անգամ մեկ րոպե երկար մնաք միասին:

Սերը հոգատարությունն է, որ զգում ես ամեն օր:

Սերը վստահությունն է, որ զգում ես ամեն անգամ նրա աչքերին նայելիս:

Սերը հանկարծ նկատելն է, որ ժպիտը դեմքին քեզ է նայում:

Սերը ընդունելն է, որ նրա փոխարեն ուրիշ ոչ ոք չէր կարող լինել:

Սերը հասկանալն է, որ չես կարող կարող առանց նրա...

– Հա, մենակ ինքն է կարևոր,– շշնջաց Անետը,– գուցե նրա հետ ամենևին էլ հեշտ չլինի, բայց զգաս, տեսնես, վստահ լինես, որ նա հենց քոնն է: Զգաս իր քայլերից, քո հանդեպ ցույց տված վերաբերմունքից, հոգատարությունից, տեսնես, թե ինչքան ուշադիր է այն ամենի նկատմամբ, ինչ քեզ հետ է կապված: Սիրող տղամարդու հոգատարությունից ու ուշադրությունից ավելի գեղեցիկ ու գնահատանքի արժանի վերաբերմունք դժվար է պատկերացնել: Դա ամեն ինչ է կնոջ համար, իհարկե, երբ զգում է, որ անկեղծ է ամեն ինչ: Տղամարդիկ սիրել կարող են, նույնիսկ ավելի շատ, քան կանայք, ուղղակի իրենց զգացածի մասին ոչ բոլորն են խոսում: Իսկ երբ վերաբերմունքով են սերը ցույց տալիս, բառեր պետք էլ չեն: Մի ժեստն ու ժպիտը հազար բառ արժեն... Նա գիտի, որ իրեն միայն դու ես պետք: Էլ ուրիշ ինչ է պետք՝ կյանքից գոհ լինելու համար: Ու կարևորը չզղջաս... Ամեն օր նայես նույն մարդուն ու վստահ ասես, որ նրան ուրիշ ոչ ոքի հետ չես փոխի: Նայես նրան ու հասկանաս, որ հենց ինքն էր լինելու քո կողքին, այլ կերպ ուղղակի անհնար էր: Մի՞թե սա չէ երջանկությունը, ու ոչինչ, որ լիքը խոչընդոտներ կան կամ ամեն բացվող օր նոր խնդիր է բերում իր հետ:

Անետի աչքերը նորից արցունքոտվեցին: Ամեն բառն ասելու հետ հոգին տակնուվրա էր լինում, հիշում էր իր ու Ռոբի սիրահարված ժամանակները, իրենց գեղեցիկ պատմությունն ու ներկայիս խճճված հարաբերությունները: Նանեն նկատեց, որ Անետն իրեն նման չէ: Շատ նրբանկատ ու զգացմունքային աղջիկ էր: Ինքն էլ հուզվեց, որովհետև անհնար էր չտեսնել, որ Անետը ոչ թե ուղղակի խոսում է, այլ ինքն իր մասին է պատմում... Նանեն նորից հարցրեց, թե ինչ է եղել, բայց Անետը ոչինչ չասաց: Նույն րոպեին հեռախոսի ձայնը լսվեց. Ռոբն էր: Աղջիկը չպատասխանեց:

Առաջին հաճախորդի գալով՝ երկուսն էլ մտան օրվա բնականոն հունի մեջ: Երբ սիրածդ գործով ես զբաղվում, ինչքան էլ հոգնես, միևնույն է, հոգիդ խաղաղվում է: Անետի մոտ միշտ այսպես էր: Անգամ ամենածանր աշխատանքային օրերի ավարտին իրեն հոգնած չէր զգում: Իսկ աշխատել միշտ էր ստացվում՝ անկախ տրամադրությունից, որովհետև այսպես էր հանգստանում...

Օրվա վերջին, երբ աշխատանքն ավարտեց, Անետը փակեց սրահը, բայց որոշեց դուրս չգալ: Այսպես հաճախ էր անում, հատկապես

երբ մենակ մնալ ու մտածել էր ուզում: Հանգցնում էր լույսերը, նստում սրահի մի անկյունում ու ապակե պատերից դուրս էր նայում: Քաղաքը հետզհետե կորում էր մթի մեջ, երևում էին միայն անցորդների դեմքերն ու մեքենաների լույսերը: Մտքերի մեջ ընկած՝ դուրս էր նայում, երբ Ռոբի մեքենան կանգ առավ նորաձևության տան դիմաց: Անետը զղջաց, որ ներսում է մնացել, մտածեց, որ Ռոբի հետ հանդիպումն անխուսափելի է: Սպասում էր, որ Ռոբը կիջնի մեքենայից ու ներս կմտնի, բայց այդպես չեղավ: Մեքենան մի քանի վայրկյան կանգնեց ու սլացավ երկար փողոցով:

– Անգամ չգիտես, որ աշխատանքից հետո լույսը հաճախ եմ հանգցնում ու մնում էստեղ...,– շշնջաց Անետը,– չնայած ավելի լավ, որ չգիտես, ես դեռ պատրաստ չեմ մեր խոսակցությանը:

Մի քանի րոպե էլ Անետը մնաց սրահում ու դուրս եկավ. կարող էր հանգիստ քայլել իր սիրած մայթերով. այժմ Ռոբին այս կողմերում հանդիպելու վտանգ չկար:

***

Երբ Անետը տուն մտավ ու զգաց, որ լռություն է, միանգամից գլխի ընկավ՝ տանը ոչ ոք չկա: Սուրճ պատրաստեց ու գնաց հյուրասենյակ, նստեց ճոճաթոռին՝ գլուխը թիկնակին հենելով: Ահագին նույն դիրքում մնաց՝ աչքերը փակած դանդաղ հետ ու առաջ օրորվելով: Երբ աչքերը բացեց, հայացքն ընկավ դիմացի պատին կախված իր դիմանկարին: Ընկերներից մեկն էր նկարել ու իրեն նվիրել: Մի քանի տարի է, ինչ նկարն այս սենյակում էր ու հաճախ էր Անետի մենախոսությունների վկան դառնում, որովհետև երբ աղջիկը տանը մենակ էր լինում, բարձրաձայն խոսում էր իր դիմանկարի հետ ու իրեն թվում էր, թե նկարն էլ իր հետ է զրուցում: Արդյունքում ինքն իր հետ էր հարց ու պատասխանի մեջ մտնում՝ միաժամանակ և՛ սրտով, և՛ուղեղով դատելով: Վերջինը սովորաբար դիմանկարն էր անում, որովհետև ինքդ նախ սրտով ես խոսում, հետո նոր մտքով հակադարձում ասածներիդ...

– Գիտե՞ս՝ ես խճճվել եմ,– շշնջաց Անետը՝ նկարին նայելով:

– Գիտեմ, բայց ելք միշտ էլ կա,– լսվեց պատասխանը, որը միայն Անետն էր կարողանում լսել:

– Չեմ կարողանում հասկանալ, թե որն է ճիշտը: Մեկ–մեկ ուզում եմ մոռանալ ամեն ինչ, էս մտքերը հանել գլխից ու փորձել թեթև ապրել, մեկ–մեկ էլ ուզում եմ այլևս երբեք չտեսնել Ռոբին, ուզում եմ հեռու լինել իրենից, ձայնը չլսել, ոչինչ չիմանալ նրա մասին, որովհետև իր վերաբերմունքով ինձ շատ է ցավեցրել:

– Ուրեմն քեզ դեռ ժամանակ է պետք՝ որոշում կայացնելու համար:

– Բայց օրեր առաջ էնքան վստահ էի, որ ճիշտ եմ վարվում:

– Ուրեմն ի՞նչը խանգարեց, որ էս պատմության վերջակետը դնես:

– Վախենում եմ, որ կպակասեմ իրեն, չի կարողանա առանց ինձ, կարիքս կունենա:

– Թե՞ վախենում ես, որ ինքը քեզ կպակասի:

Անետը լռեց: Սուրճից մի կում արեց. արդեն սառն էր:

– Պատասխան չունե՞ս,– լսվեց նորից ծանոթ ձայնը:

– Չգիտեմ: Իհարկե, դժվար կլինի, բայց ի՞նչն է հեշտ լինում: Մեր ամենաուժեղ օրգանը սիրտն է: Եվ եթե աչքերը միայն տեսնում են, ականջները՝ միայն լսում, ապա սիրտն ամեն ինչ կարող է անել: Եվ տեսնել ու լսել, և՛ զգալ ու սիրել, և՛ ատել ու համակերպվել: Մարդիկ շուտ են ամեն ինչի հետ համակերպվում: Չուզենալով անգամ... Անկախ իրենց կամքից... Նույնիսկ մարդու ֆիզիկական կորստից հետո շարունակում են ապրել, որովհետև կան, շնչում են...

– Ճիշտ ես: Համաձայն եմ:

– Մի՞թե շատ բան եմ ուզում: Ընդամենը ժամանակ ու ուշադրություն:

– Երևի ոչ թե շատ բան ես պահանջում, այլ սխալ մարդուց...

– Էս մեկը հաստատ չէ... Իմ կողքին ուրիշ մեկին չեմ կարող պատկերացնել:

– Դեռ բնական է, իսկ հետոն հետո կտեսնենք: Անփոխարինելի մարդիկ չկան: Կան մարդիկ, առանց ում մենք չենք ուզում լինել... Օգնե՞մ քեզ որոշում կայացնելու հարցում: Եթե պատրաստ ես օրերից մի օր նրա կողքին մեկ ուրիշի տեսնել ու թեթև սրտով ընդունել դա, ուրեմն պատրաստ ես բաժանմանը: Իսկ եթե այդ մասին մտածելիս անգամ խելագարվում ես, մի կողմ դիր ամեն ինչ. դուք պետք եք իրար:

– Բարդ բան ես ասում, ավելի խճճվեցի...

– Բայց ամենաճիշտ բանն է, որ քեզ կարող է ուղղություն ցույց տալ: Ու մի բան էլ կա: Հենց քեզ ավելի շատ սիրես, քան նրան,

կկարողանաս ճիշտ որոշում կայացնել: Հաճախ պետք է ամեն ինչ մի կողմ դնել: Մտքերը, գործերը, ամեն բան, որ ծանրաբեռնում է քեզ: Պետք է ուղղակի քայլել սիրելի քաղաքի մայթերով, նստել ու նայել շուրջը, նկատել գեղեցիկը կամ ուղղակի տանը մնալ, հանգստանալ, թեթևանալ, լիցքաթափվել, արձակուրդ վերցնել առօրեական հոգսերից: Այսպիսի օրերն այնքան հաճախ են պետք, բայց այնքան հազվադեպ ենք մեզ դրանք թույլ տալիս: Միշտ ինչ-որ գործեր ունենք, կարևոր հանդիպումներ, մինչդեռ մեզ դատարկ օրեր են պետք, ուղղակի դատարկ, ոչնչով չծանրաբեռնված օրեր՝ խաղաղվելու ու ուժ հավաքելու համար... Կյանքում ընդմիջումներ են պետք: Եթե ոչինչ չի գոհացնում, պիտի ուղղակի կանգ առնես, կանգ առնես ու հանգստանաս: Քեզ հենց սա է անհրաժեշտ:

– Անտանելի է... Մենք էնքան սիրուն օրեր ենք ապրել միասին: Մինչ օրս մարմնավս դող է անցնում, երբ հիշում եմ մեր առաջին հանդիպումը ու դեմքիս ժպիտ է հայտնվում, երբ աչքերիս առաջ է գալիս իր սիրո խոստովանությունը:

– Իսկ ներկան: Ի՞նչ ես զգում ձեր ներկայիս հարաբերությունները վերլուծելիս... Չի կարելի մարդուց չհեռանալ միայն նրա համար, որ դուք ընդհանուր անցյալ ունեք: Եթե ձեր ներկան ձեզ չի գոհացնում, ուրեմն ապագան ավելի հիասթափեցնող է լինելու: Սկզբում դժվար կլինի, հետո...

– Հետո անցյալ կդառնա...

– Որը երբեք հանգիստ չի տա քեզ:

– Ես կպայքարեմ, ուժ կգտնեմ հաստատ:

– Դա ոչ բոլորի մոտ է ստացվում: Վստահ եմ, որ կհամակերպվես, բայց չես մոռանա: Այն, ինչ հոգում է բռնկվում, մարելը դժվար է, գրեթե անհնար... Սրտի վրա թողնված խոր վերքերը երբեք չեն անցնում... Բայց վաղ թե ուշ ամեն ինչ ավարտվում է, ու այն, ինչը տանջել է քեզ մի ժամանակ, մասերի բաժանել, ավելի ուշ-ուշ կհիշեցնի իր մասին, որովհետև մեզ հետ կատարվող ոչինչն էլ հավերժ չէ:

Անետը լռեց, նորից ցանկություն առաջացավ ամեն ինչ մի կողմ դնելու, ցանկություն առաջացավ նորից փորձելու, բայց հանկարծ աչքերի առաջ եկավ Ռոբը՝ ուրիշ աղջկա արցունքները խնամքով սրբելիս, ու նորից վիրավորանքը հաղթեց.

– Չէ, ես պիտի որոշում կայացնեմ: Էսպես էլ չի կարող շարունակվել:

– Դու երբեք լիարժեք պատրաստ չես լինի: Միշտ էլ ինչ-որ բան խանգարելու է: Մեկ հանգամանքներն են ստիպելու հետ կանգնել որոշումից, մեկ ինքդ քեզ չես կարողանալու հասկանալ, մեկ հետևանքներից ես վախենալու: Դրա համար էլ մի՛ ձգձգիր: Անորոշությունն ամենացավեցնող երևույթներից է: Որոշում կայացրու ու վերջ: Ամենահարմար պահը գուցե երբեք էլ չգա, պահը դու պիտի ստեղծես: Վախերդ խանգարում են, բայց ժամանակն անցնում է: Պիտի կարողանաս հեռանալ: Սա արվեստի նման մի բան է, շատ նուրբ ու ոչ բոլորին հասու: Արժանավայել հեռանալ քչերն են կարող: Իսկ մնալը ելք չէ, երբ ուշ թե շուտ գնալու ես: Գնա այնտեղից, ուր զգում ես, որ քեզ չեն սպասում: Հեռացիր նրանից, ում կողքին քիչ ես ժպտում, քեզ հանգիստ չես զգում: Պիտի կարողանաս շրջանցել այն վայրերը, որոնք քեզ հիշեցնում են, որ երբևէ այդտեղ երջանիկ ես եղել: Նոր վայրեր փնտրիր, նոր տեղեր, որոնք քեզ նորից կերջանկացնեն: Ներկայում... ոչ թե անցյալում: Անցյալում եղածը վերջացած է. դրանից օգուտ չկա՝ բացի վերքերից: Պիտի թողնես այն մարդկանց, ում հետ ոչ մի հոգևոր կապ չես զգում: Կապվածությունը սրա հետ կապ չունի: Կապվածությունը հարաբերությունների առաջին թշնամին է, որովհետև հարատև չէ, իսկ եթե սիրո փոխարեն է ընկալվում, շատ ավելի կարճ կյանք ունի: Կապվածությունը սեր չէ, իսկ կախվածությունը ուշ թե շուտ հիվանդություն է դառնում, որի բուժումը բաժանման որոշում կայացնելն է: Սա ամենաբարդն է...

– Մի ժամանակ էնքան հարազատ էր ինձ թվում: Բայց հարազատ մարդուն նախ հոգով են զգում: Նա կարող է կողքիդ չլինել, բայց դու ամեն վայրկյան զգաս նրա ներկայությունը քո կողքին: Ոչ թե կողքիդ լինի, բայց դու ոչինչ չզգաս՝ ցավեցնող սառնությունից բացի...

– Հա, դու գնալու քո պատճառներն ունես, ու հոգ չէ, որ շատերի համար դրանք կարող են աննշան թվալ: Շատերը չեն ապրում քո կյանքը, դու՛ ես ապրում: Քեզ քանի՞ անգամ պիտի ցավեցնեն, որ զգաս՝ աշխարհդ նեղացել է: Աշխարհդ քո սիրտն է, որ ամեն ցավից կծկվում ու փոքրանում է... Ներսումդ անընդհատ քաոս է, մանրուքներից նեղվում ես, որովհետև քեզ տված մեծ ցավի մասին չես կարող բարձրաձայնել... Իսկ քանի չես բարձրաձայնել, չես կարող մոռանալ: Հա, մոռանալ, ոչ թե ներել:

Հաստատ երբևէ չես մտածել, որ մարդկանց ոչ թե ներում ես, այլ կարճ ժամանակ անց մոռանում, որ վիրավորվել են քեզ... Այդ մասին հիշում ես միայն նոր ցավ ստանալուց: Վերքդ նորոգվում է, սկսում մրմռալ...Դու փորձում ես մոռանալ, որովհետև վիրավորանքը հիշելով խաղաղ չեն ապրում: Բայց քանի՞ անգամ մոռանաս...

– Իսկ սերը...

– Սերը... Գրողի տարած սերը: Միշտ էլ ամենամեծ ցավը տալիս է նա, ում ամենաշատն ենք սիրում:

Միշտ էլ այդ ցավը փորձում ենք անտեսել. չէ՞ որ սիրում ենք...

Միշտ էլ չի ստացվում, որովհետև ցավը սրտում հանգիստ ապրել անհնար է. պիտի դուրս գա, որ խաղաղ շնչես:

– Չէ, պիտի թողնեմ Ռոբին, հանգիստ թողնեմ նրան էլ, մեր սերն էլ: Բայց եթե անկեղծ ասեմ, հետաքրքիր է, թե ինչ է անելու:

– Բաց ես թողնում, որ տեսնես կվերադառնա, թե չէ՞: Չի կարելի, սխալ ես անում: Բա որ քեզնից համառ լինի ու հետ չգա՞, չե՞ս զղջա արածիդ համար:

– Չէ, կհասկանամ, որ ճիշտ եմ արել: Սերը պիտի ամեն ինչին հաղթի, եթե չի հաղթում, ուրեմն ուժեղ չէ...

Անետն իրոք խճճվել էր, ինքն էլ չգիտեր, թե ինչ էր ուզում, բայց ներքին ձայնը ճիշտ էր հուշում: Սերը փորձել չի կարելի... Բաց թողեք իրար՝ առանց իրար մեղադրելու, ճիշտ ու սխալ որոշելու, լուռ բաց թողեք ու փորձեք գնալ յուրաքանչյուրդ ձեր ճանապարհով: Բաց թողեք, եթե միասին եք, բայց միայն ֆիզիկապես, եթե կողք կողքի եք, բայց ձեզ կապող ոչինչ չկա, հույսեր չկան, սեր չկա: Բաց թողեք ու շարժվեք առաջ: Եթե դուք իրոք իրար համար եք ստեղծված, նորից կվերադառնաք իրար մոտ: Դա ճակատագիրը կանի, դուք ինքներդ, թե պատահականությունները, այդքան էլ էական չէ: Նա, ով քեզ համար է ստեղծված, ինչքան էլ հեռու գնա, նորից մոտդ է գալու, իսկ նրանք ովքեր ժամանակավոր են մեր կյանքում, որքան էլ ջանք գործադրենք, մեր կողքին չեն մնա:

Իսկ եթե չվերադառնաք իրար մոտ, ուրեմն ամենաճիշտ որոշումը հեռանալն էր, որովհետև հարկադրված միասին չեն լինում, միայն սիրուն անցյալի համար իրար կողք չեն մնում ու կապվածությունը հաղթահարելու վախի պատճառով չեն զրկվում երջանկությունից, որի մասին

երազել են, բայց որը չկա և վստահ են, որ չի լինելու... Այդպես չի կարելի:

Բաց թող ու շարունակիր առաջ գնալ: Խաղաղ ապրիր ինքդ քեզ հետ: Մնացածը կունենաս: Քո հոգու մեջ հանգստություն գտիր ու կտեսնես, որ այն, ինչի կարիքն ունես, ինքն իրեն քեզ մոտ կգա: Անկեղծ եղիր ինքդ քեզ հետ. միայն այդ ժամանակ կկարողանաս ճանաչել քեզ ու զգալ, թե ինչ ես ուզում: Մենք միշտ սպասում ենք ինչ-որ բանի: Սպասում ենք, որ կգտնենք մեկին, ում հետ երջանիկ կլինենք, սպասում ենք, որ սիրելի աշխատանք կունենանք, որ մի անկյուն կգտնենք, որտեղ մեզ հանգիստ ու խաղաղված կզգանք: Բայց երբեք չենք մտածում, որ ոչինչ գտնել պետք չէ՝ բացի մեր ես-ից: Յուրաքանչյուրս հենց մե՛զ պիտի գտնենք, դարձնենք մեզ այնպիսին, որ առանց ինչ-որ մեկի ներկայության էլ երջանիկ լինենք, զբաղվենք մեր սիրած գործով, անգամ եթե բոլորը դեմ են կամ շատ եկամուտ չի բերում: Կարևորը հոգին է հանգստացնում: Կարողանանք ամենափոքր տանն էլ խաղաղություն ստեղծել: Շքեղության ու հարմարավետության մեջ չէ երջանկությունը... Ու վերջապես, ոչ թե երջանկությունն է մի օր գալիս, այլ այն տեսնելու ու հասկանալու կարողությունը:

Դռան ձայնը լսվեց: Անետը ցնցվեց, որովհետև հանկարծակիի եկավ. ծնողներին այսքան շուտ չէր սպասում: Վեր կացավ, դիմավորեց նրանց, ու իր և մի ուրիշ Անետի զրույցը կիսատ մնաց: Չհասցրեց իրեն տանջող այլ հարցերը ևս բարձրաձայնել, բայց մտքում դեռ շարունակում էր խոսել ինքն իր հետ: Թվում էր՝ իր կյանքի վերջին անորոշ ժամերն է ապրում: Ուզում էր վերջնականապես ազատվել իրեն խաղաղությունից զրկած բոլոր հարցերից, ուզում էր նայել Ռոբի աչքերին ու ասել, որ ինքն էլ առաջվանը չէ: Հարմար բառեր էր ընտրում խոսակցությունը սկսելու համար, բայց հաճախ մտքի թելը կտրվում էր, նորից ընկնում էր հիշողությունների գիրկը, նորից կասկածներով էր լցվում: Գուցե ճիշտ չի անում, գուցե չափազանցնում է ամեն ինչ, գուցե իր մեջ է խնդիրը: Հարցերը գնալով շատանում էին, պատասխաններ չկային, որոշում կայացնելն էլ օդի պես անհրաժեշտ էր: Սերը փակուղու առաջ է հայտնվում մի օր: Այս իրավիճակում հայտնվում են գրեթե բոլորը: Նրանք, ովքեր սիրել են ուժգին, սիրել անմնացորդ, բայց այդ սիրուց գրեթե ոչինչ չի մնացել, ու

չեն համարձակվում իրենք իրենց անգամ դա խոստովանել: Նրանք, ովքեր դեռ սիրում են՝ չնայած նրան, որ փոխադարձ ոչ մի վերաբերմունք չեն ստանում այն մարդուց, ով ամենակարևորն է իրենց համար... Նրանք, ովքեր սառնությունից ու անտարբերությունից բացի ոչինչ չեն ստանում իրենց սիրած մարդուց ու նրանք, ում համար սիրո մասին խոսելն ու լսելը չէ կարևորը, այլ դա զգալն է օդի պես անհրաժեշտ, բայց չեն զգում...

14

Սերը սկսում է վախենալ, երբ իր գոյությունը կասկածի տակ են առնում, իսկ կորցնելու վախն ամենաուժեղներից է՝ ու արագ է սթափեցնում:

***

Սերը ժամանակի հետ թուլանում է, որովհետև թույլ են նրանք, ովքեր կապվածությունը սիրո հետ են շփոթում: Բայց՝ ոչ ոք էլ՝ չգիտի՝ արդյո՞ք մեկի հանդեպ սեր կզգայինք, եթե կախվածություն չունենայինք նրանից, կամ եթե ունենք, արդյո՞ք սա՛ չէ՝ սերը:

Աշունն աստիճանաբար ցույց էր տալիս, որ իր թագավորած ժամանակահատվածի կեսը, մեղմ ասած, տաք չէ: Ցրտից կարմրած այտերը մատներով շփելով՝ Անետը մոտեցավ սրահի աստիճաններին ու միանգամից կանգ առավ. Ռոբը դռան մոտ կանգնած էր:

– Քեզ թվում է՝ մի ամբողջ կյանք խուսափելու՞ ես ինձնից,– ասաց Ռոբը՝ Անետի աչքերի մեջ նայելով:

Անետն առանց պատասխանելու բարձրացավ աստիճաններն ու մոտեցավ դռանը: Աչքն ընկավ Ռոբի վիրակապած ձեռքերին ու, անհանգստությունը թաքցնել չկարողանալով, միանգամից հարցրեց.

– Ձեռքերդ ի՞նչ են եղել:

– Կարևոր չէ:

– Կարևոր է:

– Դուռը բաց, պիտի խոսենք:

– Հարմար ժամանակ չես ընտրել:

– Իսկ ե՞րբ է հարմար ժամանակը: Աշխատանքից հետո՞, երբ սրահը սովորականից շուտ ես փակում, թե՞ ձեր տանը: Ի՞նչ է կատարվում քեզ հետ, Անե՛տ, ինչի՞ ես խուսափում ինձնից:

– Որովհետև դեռ պատրաստ չեմ հետդ խոսելու:

– Ինչ-որ բան կա, որ ես չգիտեմ: Ի՞նչ խնդիր կա, արի խոսենք, հասկանանք իրար: Լռելով ու խուսափելով հարցեր չեն լուծվում:

– Գիտեմ, ահագին ժամանակ է, ինչ հասկացել եմ: Արդեն իսկ շատ եմ լռել...

– Ի՞նչ նկատի ունես:

– Լռել եմ, որ հասկանայի, թե ինչ եմ ուզում:

– Ավելի պարզ կխոսե՞ս:

– Հիմա՞:

– Հա:

– Բա աշխատանքդ:

– Գրողի ծոցը թող գնա: Էլ չեմ համբերում, անտանելի է անտարբերությունդ ու էս հարցականները:

Անետը քմծիծաղ տվեց ու գնաց դեպի գրասեղանը:

– Կխոսե՞ս վերջապես:

– Մենք վաղուց առաջվանը չենք, Ռո՛բ: Մի շարք հանգամանքներ ստիպել են, որ փոխվի ամեն ինչ, ու արդյունքում մեր սերն էլ առաջվա ուժգնությունը չունի: Իսկ եթե չես զգում, որ ամեն օր նույն շնչով ես սիրում, ուրեմն զգացմունքներդ գնալով սառում են:

Ռոբի դեմքին մի քանի տարբեր հայացքներ իջան: Մեկ զարմացած էր թվում, մեկ՝ բարկացած, մեկ թեթև ժպիտ էր նկատվում, որով կարծես ուզում էր ասել, որ Անետը սխալվում է, բայց չհասցրեց:

– Ռո՛բ, ինձ թվում է՝ մենք պիտի բաժանվենք:

– Գժվե՞լ ես, ի՞նչ ես խոսում,– իրեն ինքնակառավարել չկարողանալով՝ պոռթկաց Ռոբը:

– Չեմ գժվել, շատ լուրջ եմ խոսում: Երկար եմ մտածել քեզ ասելուց առաջ:

– Երևում է՝ ինչքան ես մտածել: Որ երկար մտածեիր, նման բան չէիր ասի: Դու ընդհանրապես չե՞ս մտածել:

Ռոբը սկսեց անկանոն քայլել սենյակում: Տեղը չէր գտնում, թվում էր՝ իր ականջները չէին, որ այսպիսի բառեր էին լսում:

– Բաժանվել... Ու ինչի՞ համար: Մի աղջկա պատճառով, ով

շնորհակալություն հայտնելու համար գրկում է ինձ, հուզվում է, ու դու տեսնո՞ւմ ես դա: Ես չգիտեի, որ տասնվեց տարեկան ենք: Իր ներկայությամբ կարող ենք խոսել, թող անձամբ ասի՝ ինչու ես նման տեսարանի ականատես եղել:

– Ճիշտ է, շատ ազդվեցի տեսածիցս, մինչև հիմա էլ աչքերիս առաջ է, թե ոնց էիր զգուշությամբ արցունքները սրբում, բայց բաժանման որոշում կայացնելուս պատճառը վերջին դեպքերը չեն:

– Ավելի վատ: Ուրեմն ինչո՞ւմ է խնդիրը:

– Պատճառները շատ են, Ռո՛բ:

–Լսում եմ քեզ, սկսի՛ր: Ասա՝ ինչ է կատարվում: Չնայած, ինչ էլ ասես, մեկ է, էս որոշումդ սխալ է: Առանց քեզ լսելու էլ կարող եմ ասել:

– Ի՞նչ գիտես: Էնքան ես միշտ ամեն ինչ իմ փոխարեն որոշել, որ կարծում ես՝ որոշումներ ընդունել չե՞մ կարող:

Ռոբի դեմքին ժպիտ երևաց.

– Ինձ ինչ-որ բան ապացուցելու համար ես էսպես անում, հա՞:

– Բոլորովին:

– Բա էլ ինչի՞ համար: Մարդիկ չեն բաժանվում, եթե սիրում են իրար: Մնացած բոլոր պատճառներն անընդունելի են միշտ: Հա, ես գիտեմ՝ մենք տարբեր ենք, բայց սիրում ենք իրար, միթե կարևորը դա չէ:

Անետը լսում էր: Ռոբը մոտեցավ նրան ու հարցրեց.

– Թե՞ սխալվում եմ:

Անետը չպատասխանեց, գլուխը կախած կանգնած էր՝ պատին հենված:

– Քեզ հետ եմ, Անե՛տ, ինչի՞ ես լռում:

– Ի՞նչ ես ուզում, որ ասեմ: Ասեմ՝ սիրում եմ, որ մյուս բոլոր պատճառների վրա աչք փակենք ու առաջ անցնենք, ինչպես միշտ է եղել:

– Չէ, ուզում եմ իմանալ, թե ինչն է փոխվել:

– Դու՛ ես փոխվել:

Ռոբի աչքերը հարցական արտահայտություն ստացան: Զարմացած նայեց Անետին ու ավելի մոտեցավ նրան:

– Ե՞ս, ի՞նչ եմ արել, ի՞նչը քո սրտով չէ: Ասա՛, կշտկենք: Դրանցից սկսիր, ոչ թե միանգամից բաժանվելուց:

– Քո անտարբերությունը մեզ կործանեց, մեր սերը միշտ հետին պլան մղող բնավորությունդ, որի հետ ես երբեք չէի կարողանա հաշտվել: Մեզ կործանեց մտածելդ, որ ես միշտ կամ, այսօր չզանգես ինձ, վաղը կզանգես, երկու օր չտեսնես ինձ, երրորդ օրը ինքս կգամ քեզ մոտ... Քո անտարբերությունն ու իմ՝ քեզնից սպասած վերաբերմունքը չստանալն օր օրի քայքայեցին ինձ: Ես ամիսներ շարունակ քեզնից մի հասարակ ուշադրություն, մի ջերմ վերաբերմունք եմ սպասել, որն այնքա՜ն չնչին բան է, երբ ՍԻՐՈՒՄ ենք իրար... Ու չեմ ստացել, Ռո՛բ: Վերաբերմունք ցույց ես տվել, երբ նեղացել եմ, ցույց ես տվել, որ հաշտվենք, բայց ինձ համար դա չեղածին հավասար է: Պիտի զգաս, որ նեղացած եմ ու նո՛ր զգացմունքներդ ցույց տաս, պիտի վիճենք, որ որպես հաշտության առաջարկ ծաղիկնե՛ր բերես, թե՛ պիտի ես ինքս ինձ քեզնից հեռու պահեմ, որ նոր սկսես հաճախակի հանդիպումներ փնտրել: Ու դու սիրուց ես խոսում, բայց դա քեզ համար չի, որովհետև սիրելու ձևը չգիտեն նրանք, ովքեր ժամանակ չեն հատկացնում իրենց զգացմունքներին... Մոռանում են զանգել, որովհետև կարևոր չես, չեն գրում, որովհետև կարևոր չես, հանդիպում չեն փնտրում, որովհետև կարևոր չես: Այլ տարբերակ չկա, ինչքան էլ որ ցավոտ է գիտակցելը: Կարևորներին չեն մոռանում երբեք:

– Անե՛տ...

– Թող խոսեմ, Ռո՛բ, հետո գուցե չկարողանամ: Էնքան ասելիք է կուտակվել, որ չգիտեմ, թե որն ասեմ սկզբում, որ իրավիճակի լրջությունն ավելի լավ պատկերացնես: Երևի սխալ եմ եղել, որ էսքան ժամանակ լռել եմ, բայց մյուս կողմից էլ ուզում էի վստահ լինել, որ ճիշտ եմ վարվում: Երբ զգացի, որ ճիշտ եմ, նոր որոշեցի հետդ խոսել:

Ռոբը լռեց, զգաց, թե Անետի համար ինչքան կարևոր է ամբողջությամբ սրտում եղածն ասելը: Լռեց ու սկսեց ավելի ուշադիր լսել, մտածել ամեն մի բառի շուրջ:

– Քո անտարբերությունն ինձ էլ է անտարբեր դարձրել,– շարունակեց Անետը,– ես քո զանգին էլ չեմ սպասում էնպես, ինչպես առաջ, որովհետև զանգում ես զուտ նրա համար, որ չասեմ, թե չես զանգում: Երկու–երեք հարց ու պատասխա՛ն է իրենից ներկայացնում ՄԻՐՈՂ մարդկանց հեռախոսագրույցը: Մեր հանդիպումներն ինձ էլ չեն ջերմացնում, ինչպես առաջ: Մենք նստում ու լռում ենք միասին... Ես խեղդվում եմ այդ լռությունից... Առաջ ինձ լռելն էլ էր հերիք, միայն թե կողքիդ լինեի... Մենք մի քանի բառ ենք ասում, ու մեզ կապող թեմաները սպառվում են: Առաջ, եթե խոսելու բան էլ չունենայինք, ապագայից կխոսեինք... Տարբերությունը զգում ես, չէ՞: Հիմա մենք սիրո՛ւմ ենք իրար, թե՛ պարտավորված շփվում ենք, որ չցավեցնենք մեկս մյուսիս, մինչդեռ էսպես ավելի շատ ենք ցավեցնում... Ես զգում եմ, որ անտարբեր եմ դարձել ամեն ինչի նկատմամբ՝ իմ շրջապատի, ընկերների, քո... Միայն աշխատանքի վայրում եմ փոքր–ինչ հանգստանում, որովհետև գիտեմ, որ տանը փակվելով ավելի վատ կլինի:

Անետը ճիշտ էր: Իրենց խնդիրների մեծագույն պատճառն անտարբերությունն էր, որով մեկը մյուսին վարակել էին: Բոլորը խոսում են սիրուց դեպի ատելություն եղած կարճ ճանապարհի մասին, մինչդեռ սիրուց՝ այս տաք զգացմունքից, դեպի անտարբերություն տանող ուղին ավելի կարճ է: Այն այնքան աննկատ է սկսվում ու ավարտվում, որ դրանով անցնողն անգամ չի զգում, թե ինչ է կատարվում իր հետ: Այժմ Անետը փորձում էր նկարագրել իր ապրումները ու Ռոբը, նրան լսելով, չէր կարողանում հասկանալ, թե ինչպես են հասել այս օրվան:

– Ա՛ն... Ի՜նչ անտարբերություն: Ես սիրում եմ քեզ, աշխարհում ամեն ինչից շատ: Չգիտե՞ս:

– Քո սխալը հենց էստեղից է սկսվում: Պիտի ոչ թե իմանամ, այլ զգամ: Եթե չեմ զգում, ուրեմն սեր չկա: Որովհետև սերը քիչ չի լինում: Ինչ-որ մի բան կամ ինչ-որ մեկին մի քիչ չեն սիրում, որ կիսով չափ ցույց տան զգացածը: Կամ սիրում են, կամ ատում, կամ անտարբեր են... Սերը չեն հորինում, հատկապես այստեղ, որտեղ այն չկա: Իսկ չկա, որովհետև չի երևում: Լինելու դեպքում աչքի կընկներ, կերևար. սերը թաքնվել չի սիրում: Հիշո՞ւմ ես՝ երբ նոր էինք ծանոթացել, ամեն կերպ փորձում էիր զգացմունքներդ ցույց տալ, որ գիտենամ դրանց մասին: Հետո ի՞նչը քեզ խանգարեց, ի՞նչը հասցրեց մեր հարաբերությունները էս վիճակին: Ամեն ինչ կարող էր լավ լինել, եթե չփոխվեիր... Դու ուրիշ մարդ ես, ես քեզ չեմ ճանաչում... Կամ էլ սկզբում չէի ճանաչում, հիմա ես այնպիսին, ինչպիսին կաս իրականում:

– Էս հանելուկներն ինչի՞ համար են:

– Հանելուկ չկա, պարզ է ամեն ինչ:

– Չէ, Ա՛նետ:

– Ի՞նչ ես զգում իմ հանդեպ, Ռո՛բ: Զգացածդ նույնն է, ինչ երեք տարի առա՞ջ:

– Հա, նույնն է:

– Ոչինչ էլ նույնը չէ: Մենք օտարացել ենք իրարից...

– Ա՛ն, ես գիտեմ, որ զբաղվածությունս մեզ շատ է խանգարում, ու քեզ երբեք էլ դուր չի եկել, բայց դա իմ աշխատանքն է ու չեմ կարող թողնել:

– Երբեք չեմ էլ ուզեցել, որ թողնես: Բայց մի ժամանակ և՛ աշխատանքդ էիր հասցնում, և՛ մեզ էիր ժամանակ հատկացնում: Ուրեմն հնարավոր է համատեղել, միայն ցանկություն է պետք: Իսկ եթե չես համատեղում, ուրեմն ցանկություն չկա: Հավատա՝ քեզ չեմ մեղադրում: Իրոք հոգնում ես, բայց, վերջիվերջո, դու աշխարհի միակ բժիշկը չես, որ ծանրաբեռնվածությունից շատ է հոգնում: Մի՞թե սիրած մարդու կողքին չեն հանգստանում ծանր աշխատանքային օրվանից հետո, մի՞թե նրա հետ քայլելը չէ սրտին ու մարմնին ամենաշատ թեթևություն բերող զբաղմունքը: Հիշո՞ւմ ես՝ մենք երբ ենք վերջին անգամ քայլել միասին, հա, ուղղակի քայլել... Չես հիշում, չէ՞, որովհետև վաղուց չի եղել նման բան...

– Դու ճիշտ ես, Ա՛ն,– հոգոց հանելով ասաց Ռոբը,– չգիտեմ էլ, թե ինչպես է միշտ էնպես ստացվել, որ հոգնածությունը խանգարել է մեզ:

– Իսկ ես գիտեմ: Մարդն ինքն է ընտրում իր հանգստի ձևը, որովհետև իրենից լավ ոչ ոք չգիտի, թե ինչն է իրեն լիցքաթափում ու թեթևացնում, ինչն է իր համար հաճելի ու օգտակար: Դու էլ գիտես: Ու եթե ինձ հետ ժամանակ անցկացնելով չէ, որ հանգստանում ես, ուրեմն արդեն իսկ առաջվանը չենք... Ստիպողաբար չեն հանգստանում մեկի կողքին, ոչ էլ ստիպողաբար կողք կողքի նստել կամ քայլել կլինի... Փորձում ես, բայց ոչ իրական է ստացվում, կեղծ, ու դրանից է՛լ ավելի ենք հեռանում իրարից:

– Չկա նման բան: Քո կողքին ես ինձ իրոք հանգիստ եմ զգում: Իմ միակ հանգստությունն ես էս անհանգիստ աշխարհում... Բայց այն, որ մարմինս էլ հանգստի կարիք ունի, չեմ կարող հերքել:

– Դրա համար էլ մի քանի րոպեով տեսնվում ենք ու շտապում ես տուն, որ հանգստանաս: Ասածս հենց սա է: Դու տանն ես հանգստանում՝ մենակության մեջ, բայց ոչ իմ կողքին:

– Շատ ես չափազանցնում: Սրա շուրջ էսքան խոսել պետք չի:

– Ճիշտ ես, բոլոր պատճառներն էլ չնչին են:

– Ա՛ն, ես հասկանում եմ, որ սա ինձ համար էն խնդիրը չի, որի շուրջ կարելի է էսքան ծավալվել, բայց հասկանում եմ նաև, որ քեզ համար սա անգամ բաժանման լուրջ պատճառ է: Արի էսպես անենք: Ինձ ժամանակ տուր, ու մեր հարաբերությունները նորից առաջվանը կլինեն:

– Մի անգամ արդեն ասել ես նույն բառերը: Հավատացել եմ ու զղջում եմ, որովհետև կարճ ժամանակ անց նորից ամեն ինչ նույնը դարձավ, նորից անտարբերություն, կցկտուր խոսակցություններ, պարտադրված հանդիպումներ...

– Չէ, Անե՛տ, խոստանում եմ՝ էս անգամ ամեն ինչ ուրիշ կլինի:

– Կներես, բայց էլ չեմ հավատում...

– Մի՛ ասա էսպես: Դու գիտես, որ նեղվում եմ, երբ ինձ չեն վստահում, հատկապես մոտ մարդիկ:

– Առաջին անգամը չէ ախր: Ոնց որ երկու տարբեր ուղիղներ լինենք, որոնց հատվելու հավանականությունն այնքան է, որքան այն, որ երբևէ երկինքն ու երկիրը կմոտենան իրար:

– Բայց այդքան մոտ էինք...

– Հա, շատ:

– Իսկ ինչ պատահեց:

– Քեզ հարցրու:

– Դժվար է քեզ համար, բայց խնդրում եմ, ընդամենը մի հնարավորություն տուր մեզ:

– Ռո՛ք, արի սիրուն թողնենք իրար:

– Չէ, դու գժվել ես: Ի՞նչ սիրուն, Անե՛տ, մտածո՞ւմ ես՝ ինչ ես խոսում: Շունչս կտրվում է, սիրտս ուր որ է դուրս կթռչի տեղից, դու ասում ես՝ սիրուն բաժանվենք: Ձեռք ես առնում:

– Չէ: Ինձ համար էլ հեշտ չի եղել այս բառերն ինքս ինձ հասկացնելը ու բարձրաձայնելն էլ հեշտ չէ, բայց միասին անհնար է:

– Չկա՛ նման բան, չի՛ լինի: Նոր էջից կսկսենք ամեն ինչ: Վերջին անգամ եմ ասում. թող նորից փորձենք, խոստանում եմ, որ եթե չստացվի, ինքս լուռ կգնամ քո կյանքից:

– Անկեղծ եմ ասում՝ կուզենայի իմաստ տեսնել շարունակելու մեջ, բայց չկա, չեմ տեսնում: Մենք հեռացել ենք իրարից, ինչքան էլ որ կողք կողքի ենք եղել:

– Ուրեմն էլ չես սիրում: Ուրիշ պատասխան լինել չի կարող:

– Ոչ թե քեզ եմ դադարել սիրել, այլ ինձ եմ սկսել ավելի շատ գնահատել: Քո կողքին էլ ինձ լիարժեք չեմ զգում: Ուշադրության ու լավ վերաբերմունքի պակասն էնքան են խորացրել ամեն ինչ, որ ինձ թվում է՝ դրանց բացակայության պատճառով ունեցած ապրումներս երբեք չեմ մոռանալու: Գուցե քեզ դրանք չնչին են թվում, բայց ես ահագին ժամանակ է, ինչ ամեն օր քնում ու արթնանում եմ էս մտքերով: Դու շատ բան ես փոխել՝ գուցե քո կամքից անկախ... Քեզ, ինձ ու մեր սերը... Ու հիմա ես վստահ եմ, որ երկու տարբեր մարդիկ ենք, իրար հետ ոչ մի կապող թել չունեցող՝ բացի մի անցյալից, որն էնքան սիրուն է եղել, որ ափսոսում ենք կորցնել...

Երկուսն էլ լռեցին մի պահ, հետո Անետը խորը շունչ քաշեց ու հազիվ լսելի ձայնով ասաց.

–Մենք միասին չենք կարող:

–Չեմ հավատում:

–Ախր ինքդ էլ գիտես...

–Բայց առանց իրար էլ անհնար է:

– Մեր միջև էնքան բայցեր կան:

– Հա, բայց սեր էլ կա:

Ռոբը մոտեցավ ու ձեռքը երկարացրեց, որ աղջկա դեմքին դիպչի: Ամետը հեռու գնաց:

– Ես առանց քեզ չեմ կարող, Ամե՛տ:

– Կարող ես: Պիտի կարողանաս: Ուժ գտիր ու պայքարիր, որովհետև ես թույլ մարդկանց չեմ հարգում: Կկարողանաս ու կապացուցես ինձ, որ ուժեղ ես: Գիտեմ, որ ամենաշատը սերն է ցավեցնում մարդուն: Անգամ ֆիզիկապես ամենաուժեղ մարդն է իրեն կորցնում սեր կորցնելուց: Դու միակը չես: Դրա համար էլ կկարողանաս հաղթահարել:

– Խաղ ու պար է քեզ համար...

– Համ էլ հիվանդներդ քեզ կօգնեն... Հոգ կտանես նրանց մասին, բացակայությունս շատ չես զգա...

– Համբերությունս ես փորձում,– հունից դուրս եկավ Ռոբը,– քեզ քանի՞ անգամ ասեմ նույնը, ինչքա՞ն ասեմ, որ հասկանաս...

– Ինչքան էլ ասես, իմ տեսածին ու զգացածին եմ հավատալու:

Դուռը բացվեց. Ռոբի խոսքը կիսատ մնաց: Նանեն էր: Աղջիկն անակնկալի եկավ, երբ Ռոբին այս ժամին սրահում տեսավ: Առաջ գալով բարևեց ու քայլեց դեպի իր աշխատասեղանը:

– Նանե՛ ջան, եթե հնարավոր է, մեզ երկու րոպեով մենակ կթողնե՞ս,– ասաց Ռոբը՝ Նանեին դառնալով:

– Չէ,– արագ միջամտեց Ամետը,– հիմա հաճախորդ է գալու, խոսելն էլ անիմաստ է: Օրերով կարող ենք խոսել, բայց նույնի մասին: Չի կարելի է էդպես: Գնա՛, Ռո՛բ:

– Երեկոյան կգամ: Չփակես սրահը, մինչև գամ: Ու լավ մտածիր:

Ռոբն արագ քայլեց դեպի դուռը ու դուրս եկավ սրահից: Ամետը, գլուխը ափերի մեջ առած, նստեց բազմոցին: Իր պատկերացրածից էլ բարդ էր ամեն ինչ... Հեշտ լինել չէր էլ կարող, որովհետև երբ բաժանման որոշումը միասին չի կայացվում, մեկը մյուսին պիտի ապացուցի, որ դա է ճիշտը, իսկ սրան հավատալ ոչ բոլորն են կարող...

***

Սիրելի փողոցներում քայլելուց ու մտքերը մայթերի հետ կիսելուց հետո Ամետը դանդաղ քայլերով մոտեցավ իրենց տանը: Ամեն անգամ, երբ մոտենում էր տան դարպասներին, իրեն խաղաղված էր զգում: Գիտեր, որ վայրկյաններ անց ապահով է լինելու դրսի աղմուկից, խառնաշփոթից,

միայն թե մտքերը դռան մյուս կողմում չէր կարող թողնել ներս մտնելուց առաջ: Դուռը բացեց, ներս մտավ, արագ գնաց իր սենյակ: Վերարկուն նոր էր հանել, երբ հեռախոսը զանգեց. չպատասխանեց: Մի րոպե չանցած՝ հաղորդագրություն եկավ. «Ներս գամ, թե՞ դու կգաս»: Անետն արագ վերցրեց վերարկուն ու դուրս եկավ սենյակից:

– Ինչի՞ ես եկել,– հարցրեց Անետը՝ Ռոբին տեսնելուն պես:

– Մեր խոսակցությունը կիսատ մնաց: Ասացի՝ սրահը չփակես, բայց մինչև գնացի, փակ էր արդեն: Միտումնավո՞ր ես անում:

– Ես ասելու բան չունեմ, Ռո՛բ: Փորձիր հասկանալ ու ընդունել որոշումս:

– Չեմ կարող: Նման որոշումները երկուսով են կայացնում:

– Խնդրում եմ, արի նորից նույն բառերը չասենք, առանց այն էլ դժվար է երկուսիս համար էլ: Սա է ելքը: Ժամանակ կանցնի, ու կհամակերպվենք:

– Չէ, գրո՛ղը տանի, սա՛ չէ ելքը: Չի՛ լինելու էդպես: Ես քեզ չեմ կարող կորցնել:

– Իրականում կորցրել ես արդեն, ուղղակի ես չեմ բարձրաձայնել, դու էլ չես նկատել...

– Չէ, չասես էդպես:

Ռոբը կորցրեց իրեն, նյարդերը տեղի տվեցին: Առանց այն էլ ամբողջ օրը լարված էր եղել, ականջներում անընդհատ Անետի բառերն էին հնչել, եկել էր այստեղ՝ ինչ-որ բան հարթելու հույսով, բայց լսում էր առավոտյան ասած բառերի շարունակությունը: Բարկությունից ձեռքով խփեց պատին: Անետը վախից աչքերն ամուր փակեց: Երբ բացեց, Ռոբը շրջվել էր դեպի փողոցը:

– Թող տեսնեմ,– շշնջաց Անետը՝ նրան մոտենալով ու ձեռքն ուսին դնելով, որ դեպի իրեն շրջվի:

Ռոբը շրջվեց ու Անետին անծանոթ հայացքով նայեց նրա աչքերին: Այդ հայացքի մեջ բարկություն կար, հույզերի փոթորիկ, անզորություն, զղջում ու խնդրանք: Այնքա՜ն բան կար այդ հայացքի մեջ...

– Էսպես մի՛ արա, Ա՛ն: Ճիշտ չես անում,– ասաց Ռոբը՝ մի քանի վայրկյան լռելուց հետո՝ գլուխն աջ ու ձախ տարուբերելով:

– Ձեռքիցդ արյուն է գալիս, թող նայեմ,– անհանգստացած ասաց Անետը:

– Սրտիցս է արյուն գալիս, դու ձեռքիցս ես խոսում,– բղավեց Ռոբը՝ դեպի հետ քայլելով, որ աղջիկն իր ձեռքին չդիպչի:

Արյունը հոսում էր բաց վերքից, բայց Ռոբն իրոք ցավ չէր զգում. ցավը ներսից էր...

Անետի աչքերն արցունքոտվեցին, ափերը դրեց ծոծրակին ու անցավ դիմացի մայթը: Ռոբը հետևեց նրան:

– Ինչի՞ ես լալիս: Էնպիսի տպավորություն է, ոնց որ պարտադրված ենք բաժանվում: Եթե չես ուզում, ինչի՞ ես ստիպում, որ սրա միջով անցնենք: Լավ, ինձ ես պատժում, բա դու՛: Եթե արցունքներդ չտեսնեի, կմտածեի, որ քեզ համար հեշտ է:

Անետը գլուխը տարուբերելով հեգնական ժպտաց: Ռոբն ուղղակի չգիտեր, թե ինչ է կատարվում իր ներսում...

– Հեշտ չէ, բայց քեզ մի բան կասեմ. ես էլ, դու էլ սիրո համար չէ, որ տանջվում ենք: Երկուսիս էլ կապվածությունը հաղթահարելու վախն է անհանգստացնում: Երկուսս էլ չգիտենք՝ դրան կկարողանա՞նք հաղթել, թե՞ չէ:

– Ի՞նչ կապվածություն, ես սիրում եմ քեզ: Ավելի ճիշտ, կապվածություն կա, որովհետև սիրում եմ:

– Ուղղակի սովորել ես, որ քո կողքին պիտի լինեմ, դա սեր չի:

– Սեր է...

– Իսկ դու ի՞նչն ես սեր անվանում: Սերը ի՞նչ է քեզ համար: Այն, ինչ ահագին ժամանակ է կատարվում է մեզ հետ, սեր է:

– Ի՞նչ ես ուզում ասել:

– Ինձ թվում է՝ արդեն վաղուց սեր չկա մեր միջև: Սերը սկզբում էր, երբ ամեն վայրկյան դեպի ինձ էիր ձգտում, ես էլ գործերս թողնում էի՝ քո կողքին մնալու համար: Իսկ հիմա սեր չկա, ուղղակի կապվածություն է մեր միջև, որը մեզ ստիպում է պարտավորված զգալ մեկս մյուսի հանդեպ:

– Չէ, դու իրոք գժվել ես: Դու չգիտեմ ՝ոնց, բայց ես քեզ սիրում եմ: Դու՛ պիտի ինձ բացատրես, թե ինչ եմ զգում քո հանդեպ: Տասնհինգ տարեկա՞ն եմ: Ես չեմ կարող ասել, թե քեզ ինչի եմ սիրում: Դա բացատրելն էնքան էլ հեշտ չէ: Ուղղակի սիրում եմ ու վերջ:

– Սիրում ես, որովհետև ուրիշ տարբերակ չկա՞:

– Հա, մենակ դու ես:

– Թե՛ նրա համար, որ մեկը պիտի լիներ կողքիդ, ու որ ես կամ, էլ ուրիշը պետք չէ:

– Դու գի՛ժ ես: Վա՛մ է, որ էպես է:

– Նայած՝ որ տեսանկյունից: Վատ է, եթե երջանիկ չենք ու դու համակերպվում ես դրա հետ միայն նրա համար, որ էքսան ժամանակ միասին ենք, ու բաժանվելը ճիշտ չի լինի:

– Չէ, ես քեզ իրոք չեմ հասկանում...

– Դու երջանի՞կ ես ինձ հետ, իմ կողքին քեզ լիարժե՞ք ես զգում:

– Չգիտե՛ս:

– Չէ:

– Հա, երջանիկ եմ:

– Իսկ ես երջանիկ չեմ: Ուրեմն մի բան սխալ է, չէ՞:

Ռոբը սխալ չէր ասում, Անետն էլ էր ճիշտ, բայց ընդհանուր հայտարարի չէին կարողանում գալ, որովհետև երկուսի պատկերացրած սերը, երջանկությունն ու, առհասարակ, հարաբերությունները այլ էին: Գուցե Ռոբն իրոք Անետին սիրելու ու իր կողքին պահելու պատճառներ ուներ, կամ գուցե ինքն էլ չգիտեր, թե ինչու չի ուզում բաց թողնել աղջկան, բայց մի բան հաստատ էր՝ սիրում էր, չէր հասկանում նրան, բայց սիրում էր...

– Անե՛տ, հավատա, որ ոչինչ չի փոխվել զգացմունքներիս մեջ էս տարիների ընթացքում: Քեզ սիրում եմ նույն ուժով, ինչպես երեք տարի առաջ: Հա, թերացել եմ շատ, հասկանում եմ, բայց գժվում եմ էն մտքից, որ կարող ես հեռու լինել ինձնից, որ երբ ուզեմ, չեմ կարողանա զանգել, երբ զանգեմ, չպիտի հանդիպենք... Էդպես չի կարող լինել:

– Տե՛ս, երկուսս էլ միայն կախվածություն ենք զգում, երկուսս էլ կապված ենք իրար: Մեզ մեր սիրուն անցյալն է կապում, մեր ծանոթության՝ ֆիլմի նմանվող պատմությունն ու...

– Ու ապագայի հետ կապված մեր երազանքները... Ինչի՞ չես ասում: Քի՞չ ենք միասին ապագայի մասին խոսել:

– Չեմ ասում, որովհետև արդեն անիմաստ է:

– Ի՞նչն է անիմաստ,– նորից բորբոքվեց Ռոբը: Ինչե՞ր ես խոսում, ոնց որ դու չլինես: Ասում էիր՝ ամենացուրտ տանն էլ կապրես հետս: Ո՞նց կարող էր ամեն ինչ էսքան արագ փուլ գալ:

– Տան մեջ նախքան ջերմությունը սեր պիտի լինի, որը սրտից է գալիս, իսկ եթե այն չկա, տաքությունը երբեք սիրտը ջերմացնել չի կարող...

Հասել էին այն կանգառի մոտ, որտեղ օրեր առաջ Ռոբը պատի վրա գրություն էր թողել Անետի համար: Նստեցին նստարանին, լռեցին երկուսն էլ: Հետո Ռոբը հանկարծակի դարձավ աղջկան ու հարցրեց.

– Մոռացե՞լ ես՝ ոնց էիր սիրում:

– Չեմ մոռացել, բայց ուզում եմ մոռանալ. դրանից օգուտ չկա:

– Չպիտի մոռանաս, չպիտի ուզենաս մոռանալ: Ինչ-որ գործողություն չէ սերը, որ միանգամից որոշես դադարեցնել:

– Միանգամից չէ: Մենք դանդաղ ենք անցել սրա միջով, չենք էլ հասկացել, թե ինչքան ժամանակ կամ ինչպես: Մնացել է միայն կապվածությունն հաղթահարելը: Ես իմ անունից կարող եմ խոսել: Քիչ-քիչ ու տևական ժամանակ հասցրած թեկուզ փոքր ցավերը մոռանալն ավելի դժվար է, քան անակնկալ ստացած մեծ հարվածը: Այն, ինչ դանդաղ է մեզ տանջում, ավելի մեծ ցավ է տալիս, քան մի կրակոցը: Մեզ կապող թելերը կտրվել են: Կտրվել են այն օրվանից, երբ դու որոշեցիր լռել, ես էլ լռեցի, որովհետև դու չէիր խոսում: Ու այսպես շարունակ, ամիսներ շարունակ...

Անետը խոսում էր գրեթե աննկատելիորեն իրարից հեռանալու մասին: Այո, մենք կորցնում ենք մեր մտերիմ մարդկանց հետ մեզ կապող թելերը: Կորցնում ենք ժամանակի հետ, ժամանակի մեջ, կորցնում ենք աննկատ, առանց գլխի ընկնելու, որ հեռանում ենք իրարից:

– Հասկացա... Միայն մի բան չեմ կարողանում հասկանալ. Ո՞նց եմ կարողացել քեզ էսքան ցավեցնել: Քե՛զ, որ աշխարհում բոլորից շատ եմ սիրում... Եթե իմանայի, որ քեզ էսքան ցավեցնելու եմ, կնախընտրեի երբեք կյանքումդ չհայտնվել:

– Էդպես չի լինում, մենք ապագան չենք կարող գուշակել:

– Հա, բայց ներկան է մեր ձեռքերում:

– Հա...

– Ու ես բաց եմ թողել այն ձեռքիցս, քեզ էլ եմ բաց թողել...

Անետի աչքերից նորից արցունքներ գլորվեցին: Ռոբը մոտեցավ, որ սրբի դրանք: Աղջիկը հեռու քաշվեց:

– Թող սրբեմ արցունքներդ:

– Չէ, ինձ ուրիշ տեսարան է հիշեցնում:

– Չես կարողանում մոռանալ, չէ՞: Ու դեռ ասում ես, որ դա չի ազդել էս որոշմանդ վրա:

– Ազդել է, բայց առանց դրա էլ մի օր էս կետին հասնելու էինք...

– Ա՛ն, իմ մեծ սիրո ճիշտ ձևը չեմ կարողացել ցույց տալ, բայց ուզում եմ իմանաս, որ միակն ես իմ կյանքում, քեզ ոչ ոքի հետ չեմ փոխի...

– Բառերով չէ, որ պիտի սերը զգան: Քեզ երբևէ ասե՞լ եմ, որ զգացմունքներիցդ խոսես, խնդրե՞լ եմ սերդ նկարագրես: Չէ... Որովհետև ինձ համար կարևորը սերը զգալն է, ոչ թե դրա մասին լսելը...

– Իմ սերն էնքան մեծ է, որքան մեղքիս բաժինը... Ես քիչ-քիչ կորցրել եմ քեզ՝ կողքիս պահելով հանդերձ:

– Հա, մեր կյանքում միայն ինչ-որ մեկի ներկայությունը, ֆիզիկական գոյությունը ոչ միշտ է բավական: Մենք կողք կողքի նստած հեռու էինք իրարից:

Այո, ո՞վ չգիտի, որ կնոջը միայն ֆիզիկապես չեն լքում: Նրան ժամանակ ու ուշադրություն չհատկացնելն արդեն իսկ լքել է համարվում: Կինն այսպես է մտածում, ինչքան էլ որ հակառակը համոզեն:

– Բայց արի մեղավորներ չփնտրենք, Ռո՛բ: Գուցե չհավատաս, բայց քեզ չեմ մեղադրում: Քո դեմ ոչինչ չունեմ: Չարացած չեմ, ու ինձ համար կարևոր է, որ հավատաս: Արի ուղղակի հասուն մարդկանց նման հանգիստ թողնենք իրար: Առաջին զույգը չենք, որ պիտի բաժանվենք...

– Պիտի՞: Պարտադի՞ր է:

– Հա, արդեն պարտադիր է:

– Ա՛ն, արի ժամանակ տանք իրար, թող օրեր անցնեն, թեկուզ շաբաթներ, բայց էսպես վստահ մի՛ ասա՝ պիտի բաժանվենք: Քեզ չեմ անհանգստացնի որոշ ժամանակ, հետո կորոշենք, թե ինչ անենք:

– Իսկ եթե ժամանակ անցնի, ու որոշումս չփոխվի: Ավելի դժվար չի՞ լինի հուսադրող անորոշությունից հետո բաժանվելը:

– Իսկ եթե փոխե՞ս որոշումդ: Կամուրջներն ինչի՞ ես այրում: Էդքան վստա՞հ ես, որ կհաղթահարես էդ շրջանը:

– Դրա մասին փորձում եմ չմտածել:

– Խաբու՛մ ես,– նորից ձայնը բարձրացրեց Ռոբը՝ նստած տեղից վեր կենալով,– խաբում ես, դու էլ ես դրանից վախենում, ուղղակի չես

բարձրաձայնում: Դու էլ չես պատկերացնում, թե ինչպես պիտի օրդ առանց ինձ անցնի:

– Մենակությունից վախենալով՝ հարաբերություններ չեն պահում, գիտես: Ահագին ժամանակ հենց դրա համար էի լռում, բայց հասկացա, որ սխալ եմ:

– Լռելու փոխարեն կարող էիր խոսել հետս:

– Չե՞նք խոսել:

– Նորից խոսեիր:

– Կատակո՞ւմ ես: Ժամանակ առ ժամանակ քեզ հիշեցնեմ, որ ինձ վրա պետք է ուշադրությո՞ւն դարձնես, դու փոխվես մի քանի ամսով, հետո նորից նույն անտարբերությո՞ւնը ստանամ քեզնից: Դա սեր չի ախր...

– Ես գիտեմ, որ սխալ եմ եղել: Ինչ էլ ասեմ, արդարացում չունի, ուղղակի չգիտեմ, թե ինչպես է էդպես ստացվել, ինչպես ենք հասել էս օրվան: Երբեք չեմ մտածել, որ մի օր իրարից հեռանալու մասին խոսակցություն կունենանք ես ու դու:

– Սխալը հենց դրա մասին չմտածելդ է: Մարդիկ ամբողջ կյանքի համար չեն: Սիրելիին չեն ընտրում, որ ուղղակի կողքին մեկը լինի, երբ ազատ լինեն, ժամանակ հատկացնեն, երբ հոգնեն, հեռու մնան նրանից կամ իրենց մեղավոր զգան՝ նրան թողնելու համար, որովհետև ընտրել են մի օր... Պարտավորված հարաբերություններն անտանելի են ուղղակի: Ինձ համար անընդունելի են դրանք: Ես չգիտեմ, թե ինչի համար պիտի շարունակեմ քո կողքին տանջվել, միայն նրա համար, որ քեզնից հեռու լինելը դժվա՞ր է: Էդպես չի կարելի...

– Ասում էիր՝ ինձ ես ընտրել ու կողքիս կլինես միշտ:

– Ասում էի, բայց դու ոչինչ չարեցիր, որ չմտափոխվեմ: Իսկ հիմա ինձ եմ ընտրում: Հա, մեր միջից ես ինձ եմ ընտրում, որովհետև քո կողքին չեմ ապրում, տանջվում եմ: Դու էլ էիր ասում, որ միշտ կողքիս կլինես: Չեղար, չէ՞: Դա լինել չէր...

– Ա՛ն, խնդրում եմ...

– Ես պիտի գնամ: Ուշ է արդեն: Խնդրում եմ, էլ հանդիպում չփնտրես: Արա դա հանուն մեր սիրուն անցյալի:

Ռոբը լռում էր:

– Խոստացի՛ր:

– Չեմ կարող, Անե՛տ: Գիտես, որ խոստումներս երբեք չեմ դրժում, դրա համա՞ր ես ստիպում, որ խոստանամ: Մտածում ես՝ էդպես միանգամից կվերջանա՞ ամեն ինչ...

– Խոստացի՛ր, որ երկուսիս համար էլ հեշտ լինի:

– Անհնար է: Ես քեզ հետ եմ, որովհետև սիրտս ամեն վայրկյան քո մասին է աղմկում: Քեզ կթողնեմ, երբ սիրտս լռի: Մոլորակները կմոլորվեն վերևներում, բայց քեզ երբեք իմ կամքով բաց չեմ թողնի:

– Ուրեմն մեզ կապող ոչինչ էլ չկա, անգամ անցյալը, որը հիշելիս միշտ երկուսս էլ ժպտալու ենք: Խոստացիր թեկուզ հանուն ինձ: Եթե զգամ, որ անհնար է, ինքս կգամ քեզ մոտ...

– Խոստանում եմ:

Անետը շրջվեց ու գրեթե վազելով գնաց եկած ճանապարհով: Դրսում խաղաղ երեկո էր, բայց այ անցորդների հոգիներում ոչ ոք չգիտեր, թե ինչ փոթորիկներ էին բարձրանում...

15

Սերն ուշ թե շուտ զիջում է իր դիրքերը, երբ երկուսից միշտ մեկն է զիջողի դերում, որովհետև ջրի մեջ փոքր քարեր գցելիս հակահարված չենք ստանում, իսկ երբ մեծ քարերի ենք անցնում, թրջվում ենք:

Ուշ գիշեր էր, երբ Ռոբը տուն մտավ: Սովորության համաձայն՝ քույրը հյուրասենյակում գիրք էր կարդում: Դուռը բացվելուն պես Ինեսը հայացքով ուշադիր զննեց ներս մտնողին, բայց ոչինչ չասաց: Ռոբը հոգնած քայլերով առաջ եկավ ու նստեց բազմոցին: Քույրը գլուխը վերև հանեց, նորից նայեց եղբորը ու, չիմանալով, թե ինչ ասել, ուղղակի հարցրեց.

– Եկա՞ր:

– Եկա...,– լսվեց Ռոբի խուլ պատասխանը, որն այնպիսի հուսահատ, հոգնած ու անզոր տոնայնությամբ ասվեց, որ Ինեսը միանգամից հասկացավ, թե որտեղից է գալիս եղբայրը:

Վերջինս փորձեց շարունակել կարդալը, բայց արդեն ոչինչ չէր հասկանում, ոչ թե գիրքն էր կարդում, այլ եղբոր դեմքի միմիկաներն ու մարմնի լարված շարժումները: Իհարկե, Ռոբին փորձում էր զգացնել չտալ, որ ուշիուշով իրեն է հետևում, ոչ թե կարդացած տողերին: Ռոբն անհանգիստ նստած էր՝ մարմնով դեպի առաջ թեքված, արմունկները՝ ծնկներին հենած: Մի ձեռքի բռունցքով մյուսի ափին էր հարվածում՝ փորձելով նյարդերը հանգստացնել, բայց ոչինչ չէր ստացվում: Մի պահ փոշմանեց, որ տուն է եկել, ոտքի կանգնեց, մտածեց, որ ավելի լավ կլինի, եթե մարզասրահ գնա, հետո կտրուկ նստեց: Ինեսն ուզում էր խոսել, բայց մտածում էր, որ եթե եղբայրը խոսել ուզենա, անձամբ զրույցը կսկսի, բայց Ռոբը համառորեն լռում էր: Գլուխը հենել էր բազմոցին, աչքերը փակել էր ու մատներով շրջանաձև օղակներով անելով քունքերն էր դանդաղ շոշափում՝ երևի գլխացավը մեղմելու համար: Ապա առաջ թեքվեց, գլուխն առավ ափերի մեջ ու սկսեց նստած վիճակում գրեթե աննկատ մարմնով հետ ու առաջ օրորվել: Եվս մի քանի րոպե, և թափ առավ, որ կանգնի, բայց լսեց քրոջ ձայնը: Վերջինս զգաց, որ Ռոբն ուզում է խոսել, բայց չգիտի, թե ինչպես սկսի, որովհետև հակառակ դեպքում միանգամից իր սենյակ կգնար:

– Տեղդ չե՞ս գտնում: Հո բան չի՞ եղել:

Ռոբն ուսերը թոթվեց:

– Գլխացա՞վ ունես:

– Գլուխս ուր որ է կպայթի:

– Կուզե՞ս՝ թունդ սուրճ սարքեմ:

– Էս ժամի՞ն: Քնել է պետք:

– Որ խդիրներից փախչես...

Ռոբը բարկացած հայացքով նայեց քրոջ երեսին, բայց ոչինչ չասաց:

– Իսկ քաղցր թեյ կամ ցավազրկող:

– Ոչինչ չեմ ուզում:

– Պիտի թողնես, որ ցավը քեզ հաղթի: Ինչի՞ չկանխես, եթե հնարավոր է: Չնայած դու միշտ համակերպվում ես ամեն ինչի հետ, չես փորձում հակառակն անել...

Ռոբը ցնցվեց, միանգամից հասկացավ, թե քույրը դեպի որ ուղղությամբ է տանում խոսակցությունը: Աչքերը գցեց քրոջ դեմքին: Ինեսն էլ կարծես սրան էր սպասում: Նույնպիսի հայացքով նայեց եղբորը: Երկուսի աչքերն էլ նույնն էին՝ սև ու ասես միշտ լայնացած բիբերով: Ռոբը մի քանի վայրկյան մտածեց, թե ինչպես պատասխանի, հետո որոշեց ոչինչ չասել, ոտքի ելավ, ձեռքը թափ տվեց ու շրջվեց դեպի դուռը:

– Սխա՞լ եմ,– նորից լսեց քրոջ ձայնը:

– Ի՞նչ ես ուզում, Ինե՛ս,– դարձավ Ռոբը քրոջը:

– Ուզում եմ ասես, թե ինչ է կատարվում հետդ:

– Իսկ դու չգիտե՞ս:

– Գիտեմ, բայց չեմ հասկանում, թե ինչու ես մի սխալը մյուսի հետևից անում:

«Ինքս էլ չգիտեմ»,– ուզում էր ասել Ռոբը, բայց նորից լռեց, եկավ ու նստեց քրոջ կողքին: Ինեսը զգաց, որ եղբայրն օգնության կարիք ունի, խոսելու, լսելու կարիք ունի, բայց, այնուամենայնիվ, չուզեց միանգամից կատարվածի մասին հարցեր տալ, մոտեցավ եղբորը, ձեռքը դրեց իրեն այդքան ծանոթ ուսին ու հարցրեց.

– Պիտի խոսես, որ թեթևանաս: Քեզ է՛լ ավելի մի տանջիր:

– Բաժանվեցինք...

Ինեսը հոգոց հանեց: Այս բառը չէր ուզում լսել, իսկ եթե լսում էր, ուրեմն ամեն ինչ ավելի լուրջ էր, քան պատկերացնում էր:

– Շատ ծանր խոսակցություն ենք ունեցել: Ինձ թվում է՝ էս ամեն ինչը մեզ հետ չի կատարվում:

– Չէի՞ր կարող փոխել իրավիճակը:

Ռոբը գլուխը տարուբերեց:

– Իրո՞ք ամեն ինչ էսքան լուրջ է:

– Անետն իմաստ չի տեսնում շարունակելու մեջ:

– Բա դո՞ւ:

– Ես՝ ի՞նչ: Պիտի ստիպեմ, որ կողքիս մնա:

– Չէ, խոսեիք, անկեղծանայիք, ելքեր գտնեիք:

– Պարզվում է՝ շատ ենք ուշացել անկեղծանալու համար:

– Հա՛ որ: Երբեք էլ ուշ չէ:

– Անետին որ լսեիր, էսպես չէիր ասի: Ասում՝ է արդեն իսկ շատ է տանջվել կողքիս ու ավելին էլ չի ուզում, իսկ փոփոխություններին չի հավատում էլ...

– Որովհետև մի անգամ արդեն հիասթափեցրել ես:

Ռոբը հուսահատ գլխով արեց:

– Չասացի՞ր, որ սիրում ես:

– Դա էդքան էլ էական չէր: Դրանից էլ եմ ուշացել:

– Էնպես ես խոսում, ոնց որ ծեր եք արդեն ու ո՛չ ժամանակ, ո՛չ էլ հնարավորություն չունեք սխալներն ուղղելու:

– Ինձ՝, սխալները միայն իմն են: Անետին շատ եմ հիասթափեցրել: Հաստատ ինձնից լավ մարդու է արժանի, եթե իմ կողքին երջանիկ չէ, թող հեռու լինի ինձնից, ապրի էնպես, ոնց որ հանգիստ է զգում իրեն, առանց ամեն րոպե սիրտը տանջող խնդիրների: Թող երջանիկ լինի... Ես չկարողացա երջանկացնել:

– Չկարողացա՞ր, թե՞ չփորձեցիր:

– Չհասցրի...

– Ինչի՞: Երեք տարին քի՞չ էր, որ ցույց տայիր, թե ինչքան երջանիկ կարող եք լինել միասին: Պիտի ցույց տայիր, որ վստահ լիներ, թե իր ապագան ինչպիսի է լինելու: Կինն ուզում է միշտ վստահ լինել, որ այն, ինչ զգում է հիմա, ապագայի համար էլ է: Ուզում է միայն ներկայով չբավարարվել: Իր կողքի մարդուն, նրա վերաբերմունքը տեսնելով՝ ուզում է պատկերացնել, թե ինչպիսին է լինելու իր կյանքը ապագայում, իսկ երբ ներկայում իրեն երջանիկ չի զգում, ապագան սկսում է վախեցնել: Գուցե իրոք ժամանակդ չի ներել, որ ավելին անես, բայց ամենակարևորի համար միշտ էլ ժամանակ գտնում են, ու չհասցնելն ամենասովորական արդարացումներից մեկն է: Չհասցնելը բնավորություն է, ուրիշ ոչինչ: Դրա տակ կամ չուզենալն է թաքնված կամ չկարողանալը: Ինքդ մտածիր, թե դու ինչու չես հասցրել...

– Չգիտեմ, չգիտեմ՝ ինչն եմ սխալ արել:

– Իսկ ինձ թվում է՝ գիտես:

– Լավ էլի, Ինեա:

– Չես ուզում, չեմ շարունակի, բայց պիտի սխալներիդ հետ առերեսվես, ընդունես դրանք, հասկանաս, թե ինչու ես թույլ տվել, որ լուծումներ գտնես, որ Անետին իրական խոստումներ կարողանաս տալ, ոչ թե ձևական:

– Ախր դու չես խոսում, մի գլուխ քննադատում ես:

– Ոչ թե քննադատում եմ, այլ ճիշտն եմ ասում, որ սթափեցնեմ քեզ, աչքերդ բացեմ, քանի շատ ուշ չէ: Մի օր, իրոք, չափազանց ուշ կլինի՝ ինչ-որ բան փոխելու համար, որովհետև ոչ ժամանակն է տեղում կանգնած մնում, որ մեզ սպասի, ոչ էլ մարդիկ են միշտ նույն տեղում կանգնած մեր քայլերին սպասում:

Ռոբը լուռ լսում էր: Ինեսը զգաց, որ այդ լռությունից կարող է օգտվել ու շարունակեց ասելիքը.

– Չհասցրիր ասել, որ քո սրտի ամբողջ չափով ես սիրում նրան: Ախր պիտի ցույց տայիր սերդ. չէ՞ որ այս ամենապարզ ու մաքուր զգացմունքը նաև ամենանուրբն է, եթե ոչ միանգամից, ապա աստիճանաբար կարող է կոտրվել: Իսկ բեկորները հավաքելով անհնար է երջանիկ լինել:

– Էնքան հեշտ եք խոսում, մեղադրում՝ առանց դիմացինի դրության մեջ մտնել փորձելու, առանց պատճառներն ու հանգամանքները հաշվի առնելու:

– Դե մի պատճառ ասա, մի հանգամանք մատնացույց արա, որը կարդարացնի Անետի հանդեպ ցույց տված սառը վերաբերմունքդ:

Ռոբը չկարողացավ ոչինչ ասել: Մի քանի րոպե լռեցին երկուսն էլ, հետո եղբայրը կանգնեց ու քայլեց դեպի երկրորդ հարկ տանող աստիճանները: Նստեց դրանց վրա ու թեթև ժպտալով ասաց.

– Ինձ իրոք հավատում էր: Ասեի, որ սար եմ շուռ տալու, էլի կհավատար, կասեր, որ կկարողանամ: Ու դա ինձ ուժ էր տալիս, վստահություն, ինքս էլ էի հավատում, որ կարող եմ:

– Իսկ դու՝ իրե՞ն:

– Ինքն իր ծրագրերից գրեթե չի խոսում, լուռ է աշխատում միշտ, գիտեմ, որ խնդիրներ չունի, ունենա էլ, կհարթի: Դրանք միայն մասնագիտական կարող են լինել:

– Ի՞նչ գիտես: Ախր էնքան քիչ եք խոսել իրար մասին: Ինձ թվում է՝ իրեն լիարժեք չես էլ ճանաչում: Մինչդեռ իրար ամբողջությամբ ճանաչելը, վստահելն ու հավատալն ամենակարևորն է: Մի աշխարհ արժե այն վստահությունը, որ քեզ հավատում են, որ չեն թողնի ոչ մի դեպքում, անգամ եթե ողջ աշխարհն էլ քո դեմ դուրս գա:

– Ճանաչում եմ, Ինե՛ս, բայց ոչ միշտ եմ հասկանում: Բարդ աղջիկ է Անետը:

– Իսկ քեզ հասկանալը հե՞շտ է: Դժվար է, բայց ինքը փորձում էր: Դու էլ ամեն գնով նույնը պիտի անեիր, որ ամեն ինչ ներդաշնակ լիներ: Սերն ամեն ինչում հավասարություն է սիրում: Քեզ ուժ է տալիս, դու էլ իրեն պիտի ուժ տաս, հավատում է քեզ, դու էլ պիտի հավատաս, վստահես, նվիրվես, եթե նույնն ես ստանում: Հակառակ դեպքում մի օր կվերանա սերը: Ավելի ճիշտ, քեզ կթվա, թե մի օրում է վերացել, բայց այդպես չի լինում: Զույգը միասին մի ամբողջություն պիտի լինի: Մեկը երբ թույլ զգա իրեն, մյուսը պիտի ուժ տա, մեկը երբ սպառված լինի, մյուսը պիտի լիցքեր հաղորդի, ժպտալ ստիպի: Ես գիտեմ, որ էսպիսին էիք, բայց միայն սկզբում... Ի՞նչ փոխվեց, ինչի՞ ամեն ինչ սովորական դարձավ: Ախր սերը սովորական չպիտի դառնա: Երբ չես խնամում, խռովում է քեզնից: Հենց էսպես էլ սկսվում է սիրելուց հետո եղած ճանապարհը: Սկսվում է ու ինքն իրեն երկարում: Մի օր էլ զգում ես, որ վաղուց այն չես, ինչ առաջ, իսկ անսահման թվացող սերը, որից գլուխդ կորցրել էիր մի ժամանակ, առօրեական մի բան է դարձել, երբեմն՝ պարտականություն, երբեմն էլ՝ բեռ:

Ռոբը լուռ լսում էր, գլուխը դրել էր ծնկներին ու քրոջ ասած ամեն մի արտահայտությունը կլանում էր՝ զգալով, որ սենյակում և ոչ մի սխալ բառ չէր հնչում:

– Դու սերդ չխնամեցիր, դրա համար էլ շուտ թառամեց, խռովեց քեզնից: Քեզնից հեռու գնաց, որ իրեն բեռ չհամարես: Քեզ մենակ թողեց, որ մտածես՝ ունեի՞ր իր կարիքը, թե՞ չէ, կամ ծանր ու թեթև անես՝ դա սեր էր, թե՞ մի այլ բան:

Պիտի սերը զգայիր, ոչ թե աշխատեիր ցույց տալ... Պիտի սիրով լցնեիր նրա աչքերն ու հոգին... Պիտի ձեռքից բռնած հետևիցդ տանեիր միշտ, որ իրեն պաշտպանված ու ապահով զգար միշտ: Պիտի ցույց տայիր, որ ամենակարևորն է քեզ համար, միշտ պիտի զգար դա, ոչ թե միայն վեճերից հետո ներողություն խնդրելուց... Պիտի սեր շաղ

տայիր ձեր օրերի վրա, անկեղծ ու անապ սեր, որ օրացույցի թերթերն աննկատելի արագ պոկվեին՝ ձեր սրտերի ջերմությունից հալչելով: Պիտի այնպես անեիր, որ նա, ով քեզ համար իրոք թանկ էր, երբեք չմտածեր քեզնից հեռու ապրել փորձելու մասին... Չարեցիր, չէ՞, այսպես: Ժամանակդ չէ՞ր ներում, աշխատանքդ էր պատճառը, հոգնածությունդ: Ի՞նչը կարող էր խանգարել, որ բավական երկար ժամանակ էդքան քիչ ուշադրություն հատկացնեիր Անետին, նրան, ում ինքդ ես ընտրել ու ամեն ինչ արել ես, որ ինքն էլ քեզ ընտրի...

– Բոլոր թվարկածներդ էլ խանգարել են միշտ:

– Ու ուրիշ ոչի՞նչ:

– Չգիտեմ...

– Անետը պատմել է այն աղջկա մասին:

– Սոնային էս պատմությանը չխառնե՛ք: Ինքն իմ հիվանդներից է ու ոչ մի կապ չունի իմ անձնական կյանքի հետ:

– Բայց Անետն ասում էր, որ էդ աղջիկը...

– Գիտեմ՝ ինչ պիտի ասես: Մի՛ շարունակիր:

– Գուցե քեզ համար սովորական հիվանդ է, բայց դու իր համար...

– Սոնան իմ հիվանդն է, գիտի, որ ընտրած աղջիկ ունեմ ու վերջ,– ընդհատեց Ռոբը՝ ձայնը բարձրացնելով:

Ինեսը մի անսովոր բան զգաց այդ տոնայնության մեջ: Հավատաց եղբորը, հասկացավ, որ չի խաբում, բայց մի բան էլ զգաց, որը միայն հարազատ մարդիկ կարող են զգալ... Ռոբը պաշտպանում էր Սոնային, որ ոչ ոք նրա մասին վատը չխոսի...

– Գիտե՞ս՝ ես չեմ մեղադրում քեզ:

– Հըմ, Անետն էլ չի մեղադրում,– քմծիծաղ տվեց Ռոբը,– փոխարենը ես եմ ինձ մեղադրում, ե՛ս:

– Ինքդ քեզ մեղադրելով՝ ոչնչի չես հասնի:

– Ես գնամ քնելու,– կտրուկ ասաց Ռոբն ու վեր կացավ:

– Գնա, բայց մի բան ասեմ՝ դու գիտես, թե որտեղ ես թերացել: Գուցե մինչ երեկ կամ անգամ մինչև հիմա չգիտեիր, բայց երբ պառկես, հասկանալու ես, թե ինչի են ձեր հարաբերությունները հասել էս օրվան: Բնականաբար, առանց գիտակցելու ես սխալներ թույլ տվել, սխալներ, որոնք չես էլ նկատել, բայց դրանք էլ չես փոխի: Ժամանակը հետ չի պտտվում, փոխարենը կարող ես սխալներդ ուղղելու ճանապարհներ

փնտրել: Արա ամեն բան, որ կարող է փրկել ձեր սերը: Անետն ինչ-քան էլ հակառակը պնդի, սիրում է քեզ: Թեկուզ թող ժամանակ անցնի, կխոսեք, կհասկանաք իրար: Կսերի քեզ, չեն ներում նրանց, ովքեր չեն զղջում, իսկ դու սխալներդ ընդունում ես, չէ՞:

Ռոբը գլխով արեց:

– Ամեն ինչ քեզնից է կախված: Մտածիր, ելքեր գտիր ու գործիր: Կյանքը չափազանց կարճ է ինչ-որ բան մտածելու, բայց մտածածը հետոյի թողնելու համար:

– Անետին խոստացել եմ, որ էլ հանդիպում չեմ փնտրելու:

– Գժվե՞լ ես:

– Չէի կարող չխոստանալ:

– Լավ, մի բան կանենք: Գնա, հանգստացիր:

Ռոբը գնաց իր սենյակ, պառկեց անկողնուն: Հայացքը գցեց Անետի դիմանկարին:

– Ժամերով նստեմ ու նայեմ աչքերիդ...,– շշնջաց Ռոբը, հիշեց, որ Անետին բազում անգամներ ասել է այս բառերը, հիշեց ու խոր ցավ զգաց, որ նորից դրանք իր սիրած աղջկան ասելու համար մեծ փորձություններ միջով է պետք անցնել:

Կյանքը տարօրինակ բան է: Այն, ինչ ունես, երբեք չես գնահատում: Քեզ թվում է՝ դա ունես, որովհետև արժանի ես դրան կամ որովհետև այն քոնը պիտի լինի, ուրիշ տարբերակ չկա: Իսկ երբ կորցնում ես ունեցածդ, նոր ես հասկանում, թե ինչքան թանկ է եղել քեզ համար:

Ռոբի ականջներում քրոջ ասած բառերն էին: Մտածել էր պետք, մտածել ու հասկանալ, թե ինչպես կարելի է ելք գտնել այս բարդ իրավիճակից, որում իր կամքին անկախ էր հայտնվել ու որից միայն ինքը կարող էր ելք գտնել: Այո, մենք ընկնելուց առաջ չենք մտածում, որովհետև բոլոր սայթաքումներն էլ անակնկալ են լինում: Հաճախ չենք մտածում, որովհետև չենք պատկերացնում, որ հենց ընկնելու ճանապարհին ենք: Միշտ էլ սայթաքելուց հետո ենք հասկանում, որ սա այն ճանապարհն էր, որը չպիտի ընտրեինք: Ու միշտ էլ ընտրած ճանապարհը դասեր է տալիս՝ անկախ նրանից, թե ում մոտ է մեզ տանում...

Սենյակում դասական երաժշտություն էր հնչում: Մեղեդու հնչյունները լուծվում էին օդի մասնիկների հետ ու շուրջը հանգստություն սփռում: Անետը պառկած էր մահճակալին՝ աչքերը դեպի առաստաղը հառած: Անթարթ նայում էր մի կետի, խաղաղ տեսք ուներ, բայց հոգում իսկական փոթորիկ էր: Ուզում էր ինքն իրեն համոզել, որ ճիշտ է վարվել, ուզում էր վստահ լինել, որ երբեք չի զղջա արածի համար, բայց չէր ստացվում: Միշտ թվում է, թե ամենադժվարը որոշում կայացնելն է, բայց դրան հաջորդում է այն ճանապարհը, որն անցնելու ենք, ուզենք, թե ոչ: Իսկ այդ ճանապարհով առաջ գնալը հաճախ ավելի դժվար է լինում, քան անորոշության մեջ անցկացրած ժամանակը, որը, թվում էր, ամենաանտանելին է:

Դուռը թակեցին, բացվեց, և ներս մտավ Ինեսը: Ընկերուհիները գրկախառնվեցին ու նստեցին մահճակալին: Ինեսը, նկատեց Անետի թախծոտ հայացքը, գլուխը տարուբերեց.

– Էս ի՞նչ եք անում, Ա՛ն: Դու էստեղ ես տանջվում, Ռոբի մասին՝ էլ չասեմ: Վերջը արեցիր մտածածդ:

Անետը գլխով արեց:

– Բայց մտքերի մեջ էիր, էսքան շուտ արժե՞ր նման լուրջ որոշում ընդունել:

– Ամիսներ եմ մտածել...

– Բա ինչի՞ չէիր համարձակվում ավելի շուտ էս քայլին գնալ:

– Առաջ վախենում էի, որ շատ կցավեցնեմ, չի կարողանա առանց ինձ: Հիմա զգում եմ, որ սխալվել եմ: Ավելի շուտ էր պետք այս որոշումը կայացնել: Եթե կարող է օրերով չտեսնել ինձ, բավարարվել կցկտուր հեռախոսազանգերով կամ հանդիպելիս էնպես պահել իրեն, կարծես մի ժամ առաջ ենք միասին եղել, ուրեմն ավելի հեշտ կհամակերպվի: Էսպես թե էնպես ժամանակի հետ օտարացել էինք... Եթե իր ասած սերն այն է, ինչ տալիս է ինձ, ես չեմ ուզում էդ սերը: Ինձ քիչ է շատ, չի հերիքում: Ու ոչ թե շատերի նման ունեմ, բայց ավելիին եմ ձգտում, այլ չեմ զգում ոչինչ, նրանից եկող ոչ մի զգացմունք ու էներգիա չեմ զգում: Ես էդպես չեմ կարող: Էդպես չեն սիրում:

Ինեսը չկարողացավ ինչ-որ բան ասել:

– Հետո ավելի շատ էինք տանջվելու,– ավելացրեց Անետը՝ մազերը ափերով հետ տանելով:

– Էնքան վստահ ես խոսում, ասես ամեն ինչ գիտես ապագայի մասին: Ախր յուրաքանչյուր հաջորդ վայրկյանն անկանխատեսելի է: Ո՞նց կարող ես իմանալ, թե ձեզ ինչ էր սպասվում որոշ ժամանակ անց:

– Լավ էլի, Ինե՛ս: Ես կայացրել եմ իմ որոշումը, երևի թե դա է ճիշտը: Անիմաստ է վերլուծելը:

– Երևի՞... Ուրեմն դեռ վստահ չես:

– Չգիտեմ:

– Քեզ խնդրեցի, որ լավ մտածես, որ նորից փորձես խոսել հետը՝ նախքան որոշում կայացնելդ: Ասացիր՝ մի անգամ արդեն խոսել եք, երկրորդն անիմաստ է, բայց ախր սա ուրիշ էր... Այն անգամ բաժանման հարց չկար, իսկ հիմա: Կարող էիր, չէ՞, ավելի լուրջ խոսել հետը, անկեղծանալ մինչև վերջ: Այսպես վաղուց պիտի անեիր, ամեն անգամ, երբ նեղվեիր ինչ-որ բանից, երբ տանջող հարցեր լինեին, ոչ թե սպասեիր այնքան, մինչև ամեն ինչ կուտակվեր ու հասներ այս աստիճանի:

– Ի՞նձ ես մեղադրում

–Մենակ քեզ չէ, երկուսդ եք մեղավոր սրա համար, ու առաջին հերթին մեղավոր եք հենց ձեր սիրո առաջ, որովհետև չկարողացաք այն պահել, որովհետև ժամանակին ոչինչ չեք արել այն փրկելու համար: Երկուսիդ մեղավորությունն է, որ ամուր կապված չեք իրար, որ խորը հաղորդակցում չկա ձեր միջև: Իմիջիայլոց, շատ զույգեր ամբողջ օրը միասին են, շատ են շփվում, բայց էլի հոգեպես կապված չեն իրար, կենցաղից ու առօրյայից բացի նրանց կապող ոչինչ չկա:

– Մենք, առհասարակ, շփվել չենք կարող...

– Անընդհատ դա ես կրկնում, Անե՛տ, իսկ երբևէ ինքդ քեզ հարցրե՞լ ես, թե դու ինչ կարող ես անել՝ այս հարցում ինչ-որ բան փոխելու համար: Փորձե՞լ ես նրան ասել, որ քեզ անհանգստացնում է ձեր քիչ շփվելը, ասել, որ ուզում ես ավելի շատ ժամանակ անցկացնել նրա հետ, որ կարոտել ես ձեր անցյալը, ուզում ես ամեն ինչ առաջվանը լինի: Ասե՞լ ես, որ չես ուզում՝ ձեր սերը, հարաբերությունները սովորական դառնան: Չես ասել, չէ՞:

Անետը լուռ լսում էր: Նրա համար դժվար էր ընդունելը, որ այս հարցում ինքն էլ իր մեղքի բաժինն ունի, որովհետև մենք մեր բացերը դժվարությամբ ենք ընդունում, սխալները միայն դիմացինի վրա բարդելը շատ հեշտ է, բայց ոչ միշտ է, որ միայն դիմացինն է մեղավոր:

– Որովհետև վախենում ես մինչև վերջ անկեղծանալուց, հոգին ամբողջությամբ բացելուց: Կարծում ես՝ չէ՞ր հասկանա քեզ, փոփոխություն չէ՞ր լինի, եթե ասեիր, որ քեզ համար շատ կարևոր են նրա ուշադրությունն ու հոգատարությունը: Ես վստահ եմ, որ կլիներ: Ոռբը շատ նուրբ սիրտ ունի, քո բացված հոգին հաստատ քնքշորեն կընդուներ: Հա՛, նա թերացել է, որ քեզ շատ ժամանակ չի հատկացրել, բայց դու էլ թերացել ես, որ չես խոսել դրա մասին, չես ասել, որ այդ ժամանակը շատ կարևոր է: Այ էսպես է ամեն ինչ սովորական դառնում, էսպես են զգացմունքները սառչում, ու մի օր կանգնում են մեծ խնդրի առաջ, անգամ՝ ամուսնությունից հետո:

Անետը գլուխը կախեց, դեմքը ափերով փակեց ու փորձեց բառ առ բառ ընկալել ընկերուհու ասածները:

Ինեսը զգաց, որ անտեղի չի խոսում ու որոշեց շարունակել.

– Ա՛ն, ես շատ չստացված ընտանիքներ եմ տեսել, որոնց խնդիրներից առաջնայինը հոգևոր կապի բացակայությունն է, բայց ինձ ծանոթ երջանիկ ընտանիքներն էլ են շատ: Ու բոլորովին էլ իդեալական չեն վերջիններս: Նրանց մեջ էլ լիքը խնդիրներ ու տարաձայնություններ կան, բայց ամենակարևորն ունեն նրանք՝ իրար հասկանալու, լսելու, զիջելու, օգնելու ցանկություն: Ուրիշ ոչինչ պետք չէ սրանցից բացի, եթե, իհարկե, սերն ու հարգանքն էլ կան: Ընտանիքի անդամներից միայն մեկը ոչինչ չի կարող անել, մինչդեռ յուրաքանչյուրն իր հերթին կարող է էնպես անել, որ տաք ու սիրալիր մթնոլորտում ապրի: Նույնն էլ ձեր պարագայում է, ընդամենը պիտի խոսեիք ու համատեղ ուժերով կկարողանայիք հաղթահարել այս շրջանը:

– Կկարողանայինք, հա՛, բայց ինձ չե՞ս փորձում հասկանալ: Ես ինձ անկարևոր էի զգում, մտածում էի՝ էլ հետաքրքիր չեմ նրա համար, սովորական եմ դարձել, որ չի ձգտում ինձ տեսնել, խոսել հետս: Պիտի սեր ու ուշադրությո՞ւն խնդրեի:

– Հասկանում եմ, կինը միշտ վստահ է, որ ճիշտ է մտածում, բայց եթե մտածածդ նրան ասեիր, հաստատ հակառակում կհամոզեր: Ձեր բոլոր սխալները իրար հետ չկիսվելուց են գալիս: Կարծում ես՝ միայն սե՞րն է կապում զույգին: Չէ, մի ավելի կարևոր կապ կա, որ սիրուց ուժեղ է: Չգիտեմ՝ դա փոխադարձ վստահությունն է, իրար լսելու կարողությունը, թե հոգևոր մտերմությունը, բայց այս երեքը միասին հարաբերություններն ավելի կայուն ու ամուր են դարձնում:

– Երևի, բայց արդեն ուշ է:

– Չէ, ուշ չէ, ընդամենը մի քանի բառ, ու նորից ամեն ինչ առաջվանը կլինի: Երբեք էլ ուշ չէ:

– Իսկ ինձ պետք չի, որ առաջվանը լինի:

– Վիրավորված ես, Ա՛ն, հասկանում եմ, բայց ամեն ինչ էդքան էլ վատ չէր, որ սրան հասնեիք:

– Իսկ ե՞րբ վատ կլիներ: Երբ օրերով անհետանար ու հանկարծակի հայտնվե՞ր, երբ իմ թիկունքում ուրիշ սերեր ունենա՞ր, խաղամո՞ղ լիներ: Եթե էսպիսին չէ, ուրեմն բաժանման պատճառը չնչի՞ն է: Էդ պատճառներն ո՞վ է սահմանում: Օրենսգի՞րք կա, թե՞ բոլորը բոլորի փոխարեն են ապրում, բոլորը զգում են այն, ինչ ես, դիմացինը, մեկ ուրիշը... Հեշտ է թվում, չէ՞: Ես սպասում էի, որ շատերն այս կերպ կարձագանքեն:

– Մի նեղացիր, հեշտ չի թվում, միայն դու գիտես, թե ինչն է ստիպել, որ հարաբերություններն այս ավարտին բերես, բայց ուզում եմ ասել, որ այլ տարբերակներ կարելի էր գտնել:

– Ուշ էր... Ինձ ասում էին՝ երբ սիրես, կմոռանաս մնացած բոլորին ու ամեն ինչ: Ճիշտ էին, բայց ես նույնը չստացա երբեք: Ինձ ոչ մի անգամ չհիշեցին բոլորի փոխարեն, ու ոչ մի օր զգացնել չտվեցին կարևորությունս: Փաստորեն չգրված օրենքներն էլ բացառություններ ունեն կամ ինձ այն սիրով չէին սիրում, ինչ ես...

Ինձ ասում էին՝ սերն անսպառ չէ ու վերջանում է մի օր. ես չէի հավատում, բայց հիմա զգում եմ դա մաշկիս վրա: Սերն աստիճանաբար է մարում՝ հաճախ առանց լուրջ վեճերի ու խոսակցությունների, լռության մեջ, այնպես, ինչպես ծաղկամանում դրված փունջն է ժամ ժամի թառամում...

Հիմա ասում ես՝ ամեն ինչ կանցնի, ու ես չգիտեմ՝ հավատա՞մ, թե՞ չէ...

– Գիտե՞ս՝ մի օր բոլորն էլ հեռանում են... Սիրած մարդուց, սիրած տնից, սիրած երկրից, իրենք իրենցից... Բայց երանելին կարոտով չմնալն է, որովհետև երջանիկ չեն նրանք, ովքեր միշտ կարոտում են... սիրած աչքերին, սիրած պատերին, սիրած փողոցներին, իրենց նախկին ես-ին:

– Կարոտով չմնա՞լ, չկարոտե՞լ այսինքն: Երբ կախվածությունն անցնի, կարոտն էլ կմեղմանա...

– Հա, եթե անցնի, կմեղմանա...

– Միտումնավոր ես էսպես ասում: Ուզում ես՝ ավելի շատ հուսահատվեմ:

– Հավատա՝ չէ: Ուզում եմ՝ հասկանաս, որ հեշտ չի լինելու:

– Դա արդեն գիտեմ: Բայց հասկացել եմ, որ նրա կողքին ու նրանից հեռու տանջվելու միջև պիտի ընտրեմ երկրորդը:

– Նույնն էլ Ռոբին եմ ասել:

– Լավ է:

– Եթե ասեմ՝ հա, կհավատաս:

Անետը լռեց, վեր կացավ ու գնաց պատուհանի մոտ:

– Իրեն ուժ տուր,– ասաց Անետը,– ասա, որ ամեն ինչ լավ կլինի, կհաղթահարի դժվարությունները, համոզիր, որ հնարավորինս շուտ մոռանա ինձ ու նոր կյանք սկսի, որտեղ ոչինչ պարտադրված չի անի:

– Չէ, դու իրոք գժվել ես: Ինչ համոզել: Միթե մեկին հնարավոր է համոզել, որ մոռանա իր սիրած մարդուն: Կմոռանա, եթե սիրտը թույլ տա:

– Կմոռանա, եթե մտածի, որ իրար համար չէինք ստեղծված:

– Դու էդպես ես մտածում: Օգնում է, ստացվում է մոռանալ:

Ինեսը նկատեց, որ բարձի տակ լուսանկարների ալբոմ է դրված: Վերցրեց ու սկսեց թերթել: Ռոբի ու Անետի նկարներն էին:

– Էս ալբոմը թերթելով՝ հաստատ կմոռանաս ձեր սերը, ու շատ շուտ:

– Չէ, դու իրոք եկել ես ինձ ավելի շատ ցավեցնելու համար:

– Ոչ մի նման բան, ուղղակի ուզում եմ հասկանալ՝ որոշումդ վերջնականն է կամ քեզ գոհացնում է, թե չէ:

Անետը նորից լռեց:

– Ինքդ էլ չգիտես,– նորից հարցրեց Ինեսը:

– Վերջնական է, Ինե՛ս: Ես երկար եմ մտածել ու հաստատ չեմ զղջա: Ես չեմ կարող մնալ մի մարդու կողքին, ով մտքերով միշտ հեռու է ինձնից: Չեմ կարող միշտ ուշադրության սպասել ու չարժանանալ դրան: Ինձ համար դժվար է գիտակցելը, որ այն վերաբերմունքը, որ ստանում էի մեր շփման սկզբում, ժամանակավոր է եղել ու էլ չի կրկնվելու: Մերը տաք զգացմունք է, սառնությունը ոչ մի լավ բանի չի կարող հանգեցնել: Ու վերջապես, ես հոգնել եմ մեր սերը փրկելուց: Թվում է՝ միշտ միայն ինձ համար է այն պահպանելն առաջնային եղել:

– Ռոբն էլ է պայքարում, որ ամեն ինչ էս վերջաբանը չունենա:

– Հիմա՞: Հիմա ուշ է արդեն: Ժամանակին էր պետք էնպես անել, որ այս օրերը չապրեինք...

– Ես քեզ չեմ մեղադրում, Անե՛տ, Ռոբն իր մեղքի բաժինը ունի, բայց շատ է զղջում:

– Մեղավորներ փնտրել պետք չէ: Դա ոչինչ չի փոխի:

– Չգիտեմ՝ ինչ ասեմ:

Անետը, որ այսքան ժամանակ պատուհանից դուրս էր նայում, եկավ ու նստեց ընկերուհու կողքին:

– Դու իրոք ուժեղ ես, Ա՛ն, կհաղթահարես ամեն ինչ: Ռոբի մասին նույնը ասել չեմ կարող, բայց, հուսով եմ, ժամանակի հետ կստացվի առաջ նայել: Ես գնամ, շտապում եմ, ուղղակի չէի կարող չգալ: Կխոսենք էլի:

Անետի մայրը ներս մտավ՝ թխվածքով ու սուրճի բաժակներով սկուտեղը ձեռքին:

– Էս ո՞ւր, Ինե՛ս ջան, քո սիրած թխվածքից եմ բերել:

– Մի ուրիշ անգամ, տիկին Արմինե, շատ եմ շտապում:

– Քո պատրաստածներին չի համնի հաստատ, բայց լավ է ստացվել:

– Չեմ կասկածում, որ ընտիր է: Համարեք, որ փորձել եմ:

Ինեսը գրկեց ընկերուհուն, ուզեց ինչ-որ բան ասել, բայց մտածեց, որ ինչ էլ ասի, ավելորդ կլինի, հաջողություն մաղթեց ու դուրս եկավ սենյակից: Մենակ մնալուն պես Անետը նորից ձեռքն առավ լուսանկարների ալբոմը ու սկսեց թերթել արդեն հազարերորդ անգամ: Ամեն մի նկարին նայելիս հիշում էր իրենց երջանիկ օրերը ու սիրտը թրթռում էր մեկ երանությունից, որ ինքն ապրել է պահեր, որոնք մոռանալ չի լինի, մեկ ափսոսանքից, որ դրանք էլ երբեք չեն կրկնվի...

Երբ դու ես հեռանում մեկից, համակերպվելն ավելի հեշտ է: Միայն այն միտքը, որ ինքդ ես ընդունել այդ որոշումը, քեզ սթափեցնում է, պայքարելու ուժ տալիս: Իսկ երբ քեզ են լքում, կատարվածի հետ հաշտվելու հավանականությունն այնքան է, որքան հասուն տարիքում նոր կյանք սկսելը: Կիսատ մնացած ներկայով ապագա կառուցել չի լինում, եթե համաձայն չես, որ անցյալին վերջակետ պիտի դրվի:

Մոտ երկու շաբաթ էր անցել Ռոբի ու Անետի վերջին հանդիպումից: Ռոբը մեծ դժվարությամբ, բայց փորձում էր Անետի հետ հանդիպում չփնտրել, որովհետև խոստացել էր: Աշխատանքից հետո հաճախ գնում էր նորաձևության սրահի մոտ, հեռվից նայում էր Անետին, բայց չէր մոտենում: Երբեմն մտածում էր, որ Անետն արդեն համակերպվել է առանց իրեն ապրելուն, բայց դրա համար միայն իրեն էր մեղադրում, որովհետև սերը պակասած է եղել, եթե հնարավոր է դարձել շուտ համակերպվել բաժանման հետ: Ցավը գնալով խորանում էր. չէ՞ որ մարդու համար ամենացավոտը տեսնելն է, որ իրեն դադարել են սիրել՝ իր իսկ պատճառով, իր քայլերի, վերաբերմունքի, սխալների արդյունքում: Դրա համար էլ իր տեղը չէր կարողանում գտնել, ու մեղքի զգացումը գնալով սաստկանում էր: Ականջներում շարունակ Անետի ասած բառերն էին հնչում, անընդհատ նույնը մտածելուց ու վերլուծելուց գլխացավեր էր ունենում: Տանից փախչում էր, որ փակ տարածություն չլինի, չհիշի Անետի արած արտահայտությունները, բայց ստացվում էր միայն առաջին րոպեներին: Երբ ականջները հարմարվում էին դրսի աղմուկին, ուղեղը նորից սկսում էր նույն ուղղությամբ մտածել: Ու էլի բառեր, բառեր, բառեր... Գուցե Անետն ավելի զգույշ լիներ արտահայտություններ ընտրելիս, եթե իմանար, թե Ռոբը ինչպես է ազդվելու դրանցից: Ախր բառերի հետ այնքան զգույշ է պետք լինել: Երբեք չգիտենք, թե մեր ասածն ինչ-որ մեկի գլխում քանի անգամ է արձագանքելու ու կրկնվելու: Բայց այս մասին աղջիկը չէր մտածել: Ծանր ու թեթև չէր արել, երբ ասաց, որ չի դադարել Ռոբին սիրել, ուղղակի ինքն իրեն է սկսել ավելի շատ գնահատել, չէր մտածել, երբ ասաց, որ ինքն իրեն է կորցնում՝ Ռոբի կողքին մնալով, մինչդեռ սիրած մարդու մեջ իրենց գտնում են, ոչ թե կորցնում... Առանց մտածելու էր ասել, թե Ռոբն իրեն չի սիրում, զգացածն ուղղակի կապվածություն

է: Անետը չգիտեր, թե ինչպես է բառերով խոցում Ռոբին, կամ գուցե գիտեր, բայց ցավեցնելու իր հերթն էր եկել...

Սիրո մեջ ամենադաժան զգացողություններից մեկն այն է, երբ զույգից մեկը բաժանման որոշում է կայացնում, ու մյուսը ստիպված է հաշտվել դրա հետ, որովհետև այլ տարբերակ չունի: Հաշտվելու է իր մենակության, անցյալի հիշողությունների, գուցե և սխալների հետ: Հաշտվելն անհնար է, երբ չես ուզում, որ պատմությունը նման ավարտ ունենա, բայց ելք չես տեսնում ու օր օրի էլ ավելի ես հուսահատվում: Ռոբն աշխատանքի վայրում մի կերպ էր կարողանում մնալ: Նախորդ օրերի վիրահատություններից հրաժարվել էր, հիվանդներից մի քանիսի պատմությունները փոխանցել էր կոլեգաներից մեկին, որովհետև ոչ մի դեպքում թերանալ չէր կարելի, իսկ այս վիճակում լուրջ խնդիրներ լուծել չէր կարող: Տանն ամեն ինչ այլ էր: Գալիս էր տուն ու մենակ մնում ինքն իր հուշերի, դատարկության ու ցավի հետ: Հաճախ ինքն իրեն բռնեցնում էր այն բանի վրա, որ խոսում է Անետի հետ: Սենյակում ոչ մի ձայն չէր լսվում, բայց մտքում խոսում էր իր սիրելիի հետ, արդարանում, վիճում կամ ուղղակի կիսվում հետը:

«Հեռանալդ միշտ աչքիս առաջ է. գնալով փոքրանում էիր: Ես գիտեի, որ վերջին անգամն ես գնում ինձնից, որովհետև ստիպեցիր, որ էլ չգամ: Եթե գամ, նորից կգնաս, եթե գամ, կասես, որ մեր անցյալն էլ ինձ համար թանկ չէ, որովհետև պարտադրեցիր խոստանալ... Խոստանալ մի բան, որն անկարող եմ անել, բայց ինքս իմ դեմ կռվելով՝ անում եմ, որ խոսքիս տերը լինեմ:

Ինձ ինչ հիշում եմ՝ դու մտքիս մեջ ես: Մեկ-մեկ մտածում եմ, որ ամեն վայրկյան կողքիս ես, զգում եմ ներկայությունդ, հետո հասկանում եմ, որ իրականում հեռու ես ինձնից, ու ինքս եմ ինձ քեզնից զրկել: Զրկել եմ առանց հասկանալու, առանց հետևանքների մասին մտածելու: Իսկ ամենածանր հետևանքը կարոտն է, որ ժամ առ ժամ խեղճացնում է ինձ ու ես եմ, որ մնացել եմ առանց քեզ... Սրտիս մեջ մի տիեզերք կարոտ կա ու ծովաչափ զղջում... Ես ուժասպառ եմ: Գրկիս մեջ հուշեր են՝ քո փոխարեն, մտքիս մեջ՝ ժպիտդ, որ աչքերիս առաջ պիտի լիներ: Բացակադ խաղում է հոգուս հետ ու ամեն վայրկյան ապտակում ինձ՝ քեզ բաց թողնելու համար... Ինձ ներել չեմ կարողանում»:

Այո, սերն ամենակարևորն է կյանքում, բայց մոռացկոտ, մի քիչ էլ նեղացկոտ է, ուզում է անընդհատ իրեն զգացնել տաս, խոսես իր մասին, ցույց տաս իրեն... Հակառակ դեպքում կմարի քիչ-քիչ, անցյալ կդառնա՝ թողնելով միայն կարոտ, որն օր օրի սաստկանում է... Երևի զգացողություններից ամենածանրը կարոտն է: Չէ, մի բան էլ կա. կարոտելու հետ գիտակցելը, որ ուշացել ես ու պատիժդ ես կրում կարոտի տեսքով: Ռոբն այժմ մեկ առ մեկ գիտեր, թե որտեղ է սխալվել, գիտեր, թե ինչ պիտի աներ, որ չէր արել, բայց հնարավորություն չուներ ինչ-որ բան փոխելու, ուշացել էր... Մի փոքր հանգստանում էր միայն Անետի հետ մտքում խոսելով, իրեն թվում էր, թե Անետը լսում է իրեն...

«Սենյակիս ամբողջ տարածությունը դու ես: Ի՞նչ թանաքով ես գրվել օրերիս մեջ, որ չես անցնում ոչ մի կերպ: Ծխելը թողնելն ավելի հեշտ է, քան կարոտից ազատվելը: Երանի նրանց, ովքեր հաղթահարում են սա, որովհետև երբ չեն կարոտում, մոռանում էլ են... Կարոտից տեղս չեմ գտնում, քեզ հետ էլ լեզու չեմ գտնում: Ես հիմա ի՞նչ անեմ...»:

Ռոբը գիտակցում էր, որ ինքն իրեն տանջելով ոչնչի չի հասնի, ոչինչ չի փոխվի, բայց այլ կերպ վարվել առայժմ չէր կարող: Գիտեր, որ անցյալին հաղթում են, երբ մոռանում են այն, բայց հաճախ էր կրկնում. «Ես քեզ ո՞նց մոռանամ: Ուզենամ էլ՝ չեմ կարող: Քեզ մտքիցս ո՞նց հանեմ, եթե սրտի՛ս մեջ ես»:

Չէր սխալվում: Այն, ինչ սրտում է արդեն, երբեք չի փոշիանում: Աշխարհը շարունակում է առաջ շարժվել, բայց դու տեղիցդ չես շարժվում: Քեզ թվում է՝ ամեն ինչ կանգ է առել ու լռել է, իսկ գլխումդ շարունակ մի անուն է...

«Անետ... Ես քո անունն այլ հնչեղությամբ եմ արտասանում: Միշտ էլ այդպես է եղել: Ուղղակի հիմա, երբ ինձնից հեռու ես, անունդ տալն ու ձայնդ չլսելը պատիժ է դարձել, իմ Անետ...»:

Այ սրա մասին է պետք ժամանակին մտածել, որ խուսափենք նման ապրումներից: Ուղղակի երբ պատմությունն ավարտվում է, նոր ենք սկսում ամեն ինչ հասկանալ, երբ կորցնում ենք, նոր ենք սկսում գնահատել, երբ հեռանում են մեզնից, նոր ենք զգում, որ պիտի պահեինք ամեն գնով... Դառնության համը երկար է մնում քիմքին, քաղցրինը՝ չէ: Երջանիկ պահերը չենք զգում, ցավ զգալիս մեզ ամենադժբախտն ենք

համարում: Ու վերջապես, վերքերի տեղն է հոգու վրա երկար մնում, ոչ թե ժպիտներինը: Մենք երբեք չենք զգում, որ երջանիկ ենք: Մարդիկ երջանկության համը զգում են այն ժամանակ, երբ արդեն կորցրել են այն: Երբ իրապես երջանիկ ենք, հազվադեպ ենք խոստովանում դա, որովհետև չենք էլ նկատում, իսկ երբ դժվար պահեր են լինում, կորուստներ ենք ունենում, հասկանում ենք, որ մի ժամանակ երջանիկ ենք եղել:

Մենյակ մտնելուն պես Ռոբը գնաց պատշգամբ, զգաց, որ շնչելու օդ չկա չորս պատի մեջ: Երկար մնաց այստեղ, փորձեց ուղեղն այլ մտքերով զբաղեցնել: Մտքով գնաց այն օրերը, երբ նույն պատշգամբում կանգնած երկար զրուցում էր Անետի հետ: Խոսում էին ամենատարբեր թեմաներից, իսկ երբ խոսելու բան չէր մնում, ուղղակի լռում էին... Բարկացած ներս մտավ, նստեց մահճակալին՝ ինքն իր հետ խոսելով.

– Դու գնացիր աշունը դեռ չվերջացած: Ու հիմա չգիտեմ՝ քեզ ինչքա՞ն սպասեմ: Քանի՞ եղանակ պիտի անցնի առանց քեզ, որ քամիները նորից քեզ ինձ մոտ քշեն: Քանի՞ անձրև պիտի կաթկթա սենյակիս տանիքին, մինչև որ սկսեմ չհաշվել կաթիլները, որովհետև առաջ մանրուքներին ուշադրություն չէի դարձնում, իսկ հիմա ժամացույցի սլաքների ձայնն էլ եմ լսում:

Աչքն ընկավ ժամացույցին, հետո՝ սենյակի անկյունում դրված աթոռին: Վեր կացավ, մոտեցավ դրան ու բացելով աթոռը՝ նստեց դրա դիմաց: Աթոռի ներսում փոքր դարակ էր, հուշերի մի ամբողջ արկղիկ: Ձեռքն առավ լուսանկարների ալբոմն ու բացեց այն: Նույն նկարներն էին, որոնք օրեր առաջ Անետն էր նայում: Առաջին նկարում Անետը լայն ժպիտով է: Այսպես ժպտալիս աչքերը միշտ կկոցում էր: Ռոբը նորից հիշեց, որ երկար ժամանակ չի տեսել այդ ժպիտը ու ժպիտ չի նկարել սիրած աղջկա դեմքին:

–Կարոտը հատել է իր բոլոր սահմանները. ես չկամ առանց քեզ,– շշնջաց Ռոբը:

Մատները սահեցին լուսանկարի վրայով՝ շոշափելով Անետի ժպիտը: Ապա սենյակում մի ձայն լսվեց: Այդպես միայն ցավից են մռնչում.

– Ինչի՞, գրողը տանի, ինչի՞ պիտի կորցնեի, որ նոր հասկանայի, թե ով ես ինձ համար:

Ռոբն իր ձայնից սթափված՝ ալբոմը մի կողմ դրեց, ձեռքը դրեց աթոռին, որ կանգնի ու աչքը մի ծրարի վրա ընկավ: Զգուշությամբ

բացեց այն. լուսանկարների կապոց էր, որում Սոնան էր: Աղջիկը բնորդ էր եղել՝ լուսանկարչության ոլորտում ուժերը նոր փորձող երիտասարդի համար: Նկարները թերթեց անտարբեր հայացքով, նորից ծրարի մեջ դրեց՝ նետելով աթոռի մեջ: Հետո նորից վերցրեց, որոշեց Սոնային տալ, բայց փոշմանեց. ինչ կարիք կար այսքան տարիներ անց նրան հիշեցնել, թե ինչպիսի ժամանակներ են ապրել միասին, եթե, իհարկե, Սոնան մոռացել էր: «Չգիտեմ էլ՝ իմ կյանքում լինելդ էր ճիշտ, թե չլինելդ,– մտածեց Ռոբը,– բայց էսքան ժամանակ անց միտումնավոր կամ ոչ ինձ հակահարված տվեցիր, արածիս պատասխանը ստացա: Հիմա նույն իրավիճակում եմ, ինչ դու՝ տարիներ առաջ: Ճիշտ է, պատճառը միայն դու չես, բայց գուցե ամեն ինչ այլ լիներ, եթե Անետը քեզ չտեսներ իմ աշխատասենյակում»: Ռոբը չգիտեր, որ հենց այդ պահին մեկն Անետին պատմում է այն, ինչը վերջին շաբաթների ընթացքում խնամքով թաքցնում էր իրենից: Թաքցրել էր ոչ նրա համար, որ թաքցնելու բան կար, այլ նրա, որ վստահ չէր, որ իրեն կհավատան:

Ինչքան էլ որ հերքեն, կյանքը բումերանգ է: Քեզ միշտ վերադառնում է այն, ինչն ուրիշին ես տվել: Քեզ լքում են, եթե դու ես այդպես լքել մեկին, քեզ չեն խնայում մի օր, եթե մեկին դու՛ չես խնայել, քեզ չեն լսում ու հնարավորություն չեն տալիս, եթե մի օր մեկին ինքդ խոսել ու ուղղվել թույլ չես տվել:

Ռոբը ծրարը պահեց աթոռի մեջ սարքած դարակի խորքերում ու դուրս եկավ սենյակից:

***

Անետն աչքերին չհավատաց, երբ սրահ մտավ այն աղջիկը, որին օրեր առաջ տեսել էր Ռոբի աշխատասենյակում: Մինչ տարօրինակ այցելուն քայլում էր դեպի Անետը, վերջինիս մտքով տարբեր պատճառներ էին անցնում նրա՝ այստեղ գալը մեկնաբանելու համար: «Գուցե պատահական է եկել հենց իմ սրահ, զգեստ կարելու կամ ձևափոխելու կարիք ունի, հարյուրավոր այլ այցելուների նման»,– ինքն իրեն հանգստացնում էր Անետը, երբ հյուրը մոտեցավ իրեն, բարևեց ու ասաց, որ ուզում է խոսել իր հետ: Անետը միանգամից շփոթվեց, վայրկյաններ առաջ մտածած տարբերակները հօդս ցնդեցին:

– Ինչ հարցով,– անհանգստությունը մի կերպ թաքցնելով՝ հարցրեց Անետը:

– Քո ու Ռոբի...

– Ռոբի՞,– մտքում կրկնեց Անետը,– Ռոբ ու ոչ թե Արամյան: Ուրեմն բոլորովին էլ բժիշկ ու հիվանդ հարաբերություններ չեն...

– Ձենք կարող առանձին խոսել, թեկուզ սրահից դուրս,– հարցրեց հյուրը:

– Կարող ենք,– հետաքրքրությունից այրվելով՝ պատասխանեց Անետը, ճանապարհեց հաճախորդին, Նանեին մի քանի ցուցումներ տվեց, ու դուրս եկան սրահից:

Հյուրն առաջարկեց մի սրճարանում նստել, բայց Անետը նախընտրեց քայլելը: Քայլեցին դեպի դիմացի զբոսայգին:

– Անունս Սոնա է: Վերջերս Ռոբի մոտ եմ վիրահատվել: Երկու անգամ անհարմար բան ստացվեց, դու ներս մտար ու տեսար, որ գրկել եմ ընկերոջդ: Ուզում եմ ասել, որ մեր միջև ոչինչ չկա: Նրան գրկելով ուրախությունս ու շնորհակալությունս էի ուզում հայտնել: Առաջին օրը, որ տեսաք մեզ, նոր էի իմացել, որ կան սարքավորումներ, որոնք ինձ լիարժեք տեսնելու հնարավորություն կտան, իսկ երկրորդ անգամ, երբ տեսաք ինձ Ռոբի աշխատասենյակում, վիրահատվել էի նախորդ օրը ու եկել էի շնորհակալություն հայտնելու:

– Իսկ բժշկին բոլոր հիվանդները ն անունով դիմում, թե՞ միայն ծանոթները:

– Ձեմ կարծում, որ հանցանք եմ գործում՝ նրան այդպես դիմելով... Արդարանալ պետք չէ դրա համար:

– Չէ, ուղղակի տարօրինակ է շատ:

– Քեզ ոչինչ չի տա նրան՝ ինձ այդպես դիմելու պատճառն իմանալը: Միայն ուզում եմ վստահ լինես, որ իմ բժիշկն է, ուրիշ ոչինչ: Փրկել է ինձ, նվիրել է ամենակարևորը, որից զրկված եմ եղել երկար ժամանակ: Իր խոստման տերն է եղել:

– Ինչ խոստում:

– Դա էլ էական չէ:

– Ձեք կարծում, որ ինձ հետ խոսելիս կամ պիտի ամեն ինչ ասեք կամ չգայիք: Եկել եք հարցականները շատացնելու՞, թե՞ օգնելու համար:

– Օգնելու, որովհետև Ռոբը լավ մարդ է:

– Ուրեմն ամեն ինչ ասեք: Հաստատ հիվանդանոցի պատերից դուրս ծանոթ եք իրար:

– Շատ հետաքրքրասեր ես, ախր իրոք պետք չի փորփրել անցյալը:

– Ռոբին վաղուց եք ճանաչում:

Հարցը կտրուկ էր: Սոնան մի քանի վայրկյան լռեց, հետո մտածեց, որ չպատասխանելով աղջկան իրոք պիտի ավելի շատ մտքերի մեջ գցի. չէ՞ որ հոգին տանջող ամենավատ երևույթը կասկածն է: Երբ սա կա, հանգստություն գտնելը գրեթե անհնար է: Սոնան հազիվ լսելի ձայնով շշնջաց.

– Շատ վաղուց...

Անետը գույնը գցեց: Միայն այս երկու բառը բավական էր, որ հասկանար՝ Ռոբը խաբել էր իրեն:

– Ռոբը չէր ասել, չէ՞: Այդպես էլ գիտեի, դրա համար էլ չէի ուզում ինքս ասել: Չնայած մեծ բան չի, բայց եթե չի ասել, ուրեմն վստահ չի եղել, որ կհասկանաս իրեն:

– Այդքան լավ եք ճանաչում նրան:

Սոնան գլխով արեց: Անետն ավելի լարվեց: Վայրկյան առաջ ուզում էր իմանալ, թե ինչ կապ ունեն Ռոբն ու այս աղջիկը իրար հետ, բայց վերջինս լռում էր:

– Կխոսեք վերջապես:

Սոնան մտքերի մեջ էր: Մոտեցավ մի նստարանի ու նստեց՝ մտքերի հետ հաշվի նստելու համար: Գուցե խոսելը սխալ էր: Եթե ամեն ինչ պատմեր Անետին, վերջինս կմեղադրեր Ռոբին, որ իրենից թաքցրել է ճշմարտությունը, իսկ եթե չպատմեր, աղջիկը ստիպված կլիներ Ռոբից հարցնել, ով էլ, այլ ելք չունենալով, կբացեր խաղաքարտերը ու նորից մեղավոր դուրս կգար, որովհետև լռել էր այսքան ժամանակ:

– Եթե ուզում եք օգնել, խոսեք, խնդրում եմ,– նորից ասաց Անետը՝ աչքերը խնդրող հայացքով գցելով Սոնայի երեսին, իսկ վերջինս իրոք օգնել էր ուզում, դրա համար էլ սկսեց խոսել.

– Ես սիրել եմ Ռոբին, ու շատ...

Անետը ցնցվեց: Մարմնով դող անցավ:Երբեք նման զգացողություն չէր ունեցել: Երբեք մտքով անգամ չէր անցել, որ օրերից մի օր մի աղջկանից նման բառեր կլսի:

– Շատ ժամանակ է անցել, ամեն ինչ անցյալում է: Կարող ես հանգիստ լինել,– ավելացրեց Սոնան, երբ տեսավ Անետի այլայլված

դեմքը,– նոր էինք ընդունվել համալսարան, մի քանի ամիս է, ինչ ուսանող էինք, երբ ծանոթացանք: Շատ ընդհանուր հետաքրքրություններ ունեինք, լսում էինք նույն երաժշտությունը, հավանում էինք նույն փողոցներն ու սրճարանները, իսկ նոր-նոր մեծ կյանք մտնող մարդու համար դրանք մեծ առավելություններ էին թվում՝ հարաբերություններ սկսելու համար: Կարճ ժամանակ անց մտերմացանք ու սկսեցինք ընկերություն անել: Շատ սիրուն օրեր ենք ունեցել միասին, լիքը երազանքներ ու նպատակներ ունեինք... Ես երազում էի մանկաբույժ դառնալ, Ռոբը՝ ակնաբույժ, միայն նրա համար, որ ես կարճատես էի ու շատ էի նեղվում դրանից: Խոստացել էր, որ երբ ակնաբույժ դառնա, անձամբ պիտի ինձ վիրահատի, որովհետև միասին բժշկի մոտ էինք եղել, ու հետազոտություններից պարզվել էր, որ բացի բարձր աստիճանի կարճատեսությունից աչքի այլ հիվանդություն էլ ունեմ, որն անբուժելի էր: Հենց այդ օրն էլ խոստացավ, որ ամեն բան անելու է, որ ես լիարժեք տեսնեմ, ոչ թե հնարավորի մի չնչին մասով: Ասաց՝ ժամանակը կապ չունի, գուցե տարիներ անցնեն, անգամ միասին չլինենք, բայց ինքն է ինձ վիրահատելու ու տեսնելու եմ այնպես, ինչպես բոլորը:

Անետի աչքերից արցունքներ հոսեցին, չհասկացավ, թե դրանք ինչի համար են թափվում: Լաց էր լինում նրա համար, որ մեկն իրեն Ռոբի ու իր սիրո՞ւց էր պատմում, թե՞ նրա, որ Ռոբն այդքան մեծ սիրտ, հավատ ու ձգտում է ունեցել:

– Այդ օրից ամիսներ անցան, ու մենք բաժանվեցինք,– շարունակեց Սոնան,– մեր վերջին հանդիպումից հետո երկուսս էլ իրար տեսնելու ոչ մի առիթ չփնտրեցինք: Ես գիտեի, որ ինձ տեսնել չի ուզում, դե ինքն էլ անձամբ էր ասել, որ էլ ոչ մի հանդիպում չփնտրեմ իր հետ: Ութ տարի է անցել... Չեմ կարող ասել, որ մոռացել էի իրեն, բայց սերը շուտ էր անցել՝ բաժանումից մոտ մեկ տարի անց: Չգիտեմ էլ՝ դա սեր էր, թե մի ուրիշ բան, բայց անցավ... Փոխարենը խոստումը միշտ հիշում էի: Պարբերաբար տարբեր ակնաբույժների մոտ էի գնում, ասում էին, որ վիրահատելն անհնար է, խնդիրը բուժվող չէ, իսկ կարճատեսության շտկում նման իրավիճակում թույլատրելի չէ: Մոտ մեկ ամիս առաջ Ռոբից հաղորդագրություն ստացա: Ինձ իր մոտ էր կանչում: Ութ տարիների մեջ առաջին անգամն էր ինձ գրում: Չգիտեի էլ, թե որտեղ է աշխատում: Հասցեն ասաց, գնացի, տեսնվեցինք:

Անետն աչքերն ամուր փակել էր: Արցունքները խեղդում էին: Ռոբը, իր թիկունքում: Ախր մարդը մի գիրկ ունի, մի քանիսին ոնց են սիրում: Չէր կարող նման բան լինել: Անետն ավելի շուտ կարող էր մեկ ուրիշի սիրահարվել, քան հավատալ նրան, որ Ռոբը հավատարիմ չէ իրեն: Սա կլիներ ամենամեծ հարվածը, հարված թիկունքից, հարված, որի մասին երբեք չէր մտածել, անգամ այն բանից հետո, երբ երկու անգամ Սոնային ու Ռոբին գրկախառնված տեսավ: Անետի համար հավատարմությունն արժեքներից ամենակարևորն էր: Չէ՞ որ դրանից բացի ոչինչ ավելի ուժեղ չէր կապել իրեն Ռոբից: Չէ՞ որ դա էր ուժ տվել, որ փորձի հաղթահարել բոլոր դժվարությունները, որովհետև գիտեր, որ հավատարիմների եզակիներն են հանդիպում...

– Մի հուզվիր, քեզ բառ առ բառ կարող եմ պատմել, թե ինչ ենք խոսել ու կպատմեմ: Անցյալի մասին ոչ մի նախադասություն չի հնչել սենյակում: Ճիշտ է, իր բարկությունն էր անցել տարների հետ, իմ էլ՝ ներվելու ցանկությունս, բայց երկուսիս սրտում էլ առաջվա սիրուց ոչինչ չէր մնացել: Հին ծանոթներ էինք ուղղակի, ծանոթներ, որոնք ժամանակին ամեն ինչ գիտեին իրար մասին, իսկ հիմա՝ ոչինչ: Տեսողությունիցս հարցրեց, ասացի, որ փոփոխություն չկա: Պատմեց, թե ինչ սարքավորումներ են ունենալու շուտով, որոնք կարող են բուժել հիվանդությունս ու թույլ տալ ինձ լիարժեք տեսնել: Աշխարհով մեկ եղա, նախ այն պատճառով, որ միշտ բոլոր բժիշկները հակառակն էին ասել, հետո նրա համար, որ իր խոստումը չէր մոռացել: Այդ տարիների ընթացքում հաճախ էի հիշում իր խոստման մասին: Մեկ–մեկ մտածում էի, որ ինքը մոռացած կլինի, բայց հոգու խորքում վստահ էի, որ հիշում է, որովհետև երբ մի բան խոստանում էր, անպայման կատարում էր դա:

– Գիտեմ...

– Ուրախությունից չգիտեի, թե ինչ անեի: Հույզերս կառավարել չկարողացա, վեր կացա նստածս տեղից ու գրկեցի նրան: Գրկելուց ոչինչ չզգացի: Ամեն ինչ ուրիշ էր՝ իր բույրից մինչև թիկունքի չափերը, իմ սրտի զգացածից մինչև իր շփոթված պահվածքը, իմ երբեմնի սիրուց մինչև այդ պահի անսահման երախտագիտությունս: Ոնց որ ուրիշ մարդու գրկեի, մի ծանոթ–անծանոթ մարդու, որը կյանքումս ամենաշատն է օգնելու ինձ, որին իմացել եմ, բայց կարծես չեմ ճանաչում: Ու գրկել էի ոչ թե կարոտից կամ անցյալը հիշելու ցանկությունից ելնելով, այլ անկեղծ

ուրախությունից, որը ներսս տակնուվրա արեց: Ռոբը չպատասխանեց գրկելուս: Ես զգում էի, ձեռքերն օդում էին, հետո մի պահ թեթևակի կպան մեջքիս: Հենց այդ պահին դու ներս մտար: Դե, իսկ երկրորդ անգամ վիրահատությունն արդեն արել էինք: Գնացել էի տպավորություններովս կիսվելու, վերջում թևնոց նվիրեցի ու գրկեցի, որ շնորհակալություն հայտնեմ իր արածի համար, որն այնքա՛ն մեծ բան էր ինձ համար: Գուցե ճիշտ չհասկանաս, բայց չէի կարող չգրկել: Ու դու նորից դուռը բացեցիր:

Անետի համար ամեն ինչ պարզ դարձավ: Ռոբը ճիշտ էր ասել իրեն, Սոնան պարզապես իր հիվանդն էր, միայն թե անցյալը շրջանցել էր՝ գուցե վախենալով, որ աղջիկը ճիշտ չի հասկանա իրեն:

– Հիմա արդեն ամեն ինչ գիտես,– ասաց Սոնան:

– Իսկ ինչի՞ համար եք բաժանվել:

– Դրա մասին չխոսենք, քեզ ոչին չի տա դրա պատճառն իմանալը: Իմ մեղքով է եղել: Սխալ էի թույլ տվել, ու Ռոբը չլսեց ինձ, չուզեց հավատալ, հնարավորություն տալ: Ճակատագրի հեգնանքն է: Ինքն ինձ չի հավատացել, բայց ես օգնում եմ քեզ, որ դու՛ իրեն հավատաս:

– Դու բարի սիրտ ունես,– շշնջաց Անետը՝ ժպիտով նայելով Սոնային:

– Ռոբն էլ, հաշտվեք, սա այն հարցը չի, որի համար կարելի է բաժանվել:

– Բաժանման պատճառները շատ են, սա ուղղակի ավելի արագացրեց ամեն ինչ:

– Ինչ էլ որ եղած լինի, ելք միշտ էլ կա:

– Ուրեմն ինչո՞ւ տարիներ առաջ ելք չգտաք:

– Դա ուրիշ պատմություն էր...

– Շատ շնորհակալ եմ քեզ: Չգիտեմ՝ սա կազդի որոշմանս վրա, թե չէ, բայց մտածել է պետք:

– Շնորհակալ լինելու կարիք չկա: Ես պարտավոր էի քեզ հետ խոսել ու ուրախ կլինեմ, եթե ձեզ մոտ ամեն ինչ կարգավորվի: Կարծում եմ՝ կարիք չկա կրկնելու, որ Ռոբի հանդեպ բացի անսահման երախտագիտությունից ուրիշ ոչինչ չեմ զգում, բայց ուզում եմ, որ երջանիկ լինի, որովհետև արժանի է դրան: Նախ նրա համար, որ գիտեմ, թե ինչ սիրտ ունի, և հետո, ինչպե՞ս կարող եմ երջանկություն չցանկանալ մի մարդու, ով աչքերիս լույս է նվիրել...

– Հասկանում եմ:

– Բաց չթողնեք իրար, եթե վստահ չեք, որ առանց մեկդ մյուսի ավելի դժվար չի լինելու, քան հիմա է:

– Իսկ ես հակառակն եմ մտածում: Ավելի լավ է հիմա վերջ դնել ամեն ինչին, քան հետո, երբ մեզ կապող թելերն ավելի շատ լինեն, իսկ իրար հասկանալու պահերը՝ քիչ:

– Ոչ բոլորն են հասկանալով սիրում իրար... Ռոբը կուրորեն սիրել գիտի, գուցե թերությունները շատ են կամ այլ խոչընդոտներ էլ ունեք, բայց եթե միասին եք, ուրեմն իրոք սիրում է քեզ: Մարդուն հենց էնպես իր կողքին պահել չի սիրում:

– Իրոք լավ ես ճանաչում նրան...

– Դե հա, դժվար թե էնքան փոխված լինի, որ սխալվեմ: Ես գնամ, իսկ դու լավ մտածիր ինչ-որ բան անելուց առաջ: Անկեղծ սեր գտնելը շատ դժվար է, եթե գտել ես արդեն, բաց թողնելն անմտություն է:

Անետն ուզում էր ասել, որ իր կարծած սերն ավելի շատ կապվածություն է, բայց լռեց՝ զգալով, որ խճճվել է ու մտածել է պետք: Սոնան հաջողություն մաղթեց ու գնաց, Անետը մնաց նստարանին նստած: Գլխում հազար ու մի մտքեր էին: Թվում էր՝ ոչնչի մասին մտածել չի կարող, որովհետև մտքերն այնքան շատ էին, որ վայրկյանական իրենց մասին հիշեցնում ու տեղը զիջում էին մեկ ուրիշի: Անետը երկար մնաց զբոսայգում: Ուղեղը քիչ-քիչ հանդարտվեց, զգաց, որ ուզում է խոսել Ռոբի հետ, բայց արագ փորձեց ուրիշ մտքերով զբաղեցնել ուղեղը, որովհետև միայն այն, որ Սոնայի մասին ամեն ինչ գիտեր, բավական չէր, որ իր ու Ռոբի տարաձայնությունները հարթվեին, բայց այն, որ ինչ-որ բան փոխվեց ներսում, դա հաստատ էր: Երևի սերը սկսում է նորից գլուխ բարձրացնել, երբ զգում ես, որ այն, ինչ քոնն է, կարող էր ուրիշինը լինել, այդ ժամանակ սթափվում ես ու սկսում հարցերին այլ տեսանկյունից նայել:

18

Զգացմունքները միշտ էլ ծանր իրավիճակներից հետո են սրանում: Սիրեք իրար, որովհետև հետո զղջալու եք անիմաստ անցած ամեն մի վայրկյանի համար...

Մի քանի օր էր անցել Անետի ու Սոնայի խոսակցությունից: Այս օրերի ընթացքում Անետն ամեն ժամ մտածել էր Ռոբին զանգելու ու նրա հետ հանդիպելու մասին, բայց միշտ մի բան խանգարել էր: Երրորդ օրն արդեն զգաց, որ ցանկությունը քիչ-քիչ հետ է նահանջել, ու ասելու բան էլ չունի. չէ՞ որ զգացողություններն առաջին օրերին են գունեղ, ու ասելիքն էլ գնալով քչանում է, երբ ժամանակը րոպեներն առաջ է պտտում: Հանգստյան օրը մոտենում էր ավարտին: Անետը, մի քանի ժամ է, ինչ սենյակի պահարաններն ու դարակներն էր դասավորում: Ռոբի գրքերից ու թղթապանակներից էլ էր գտել: Մտածեց, որ գուցե դրանք պետք գան, իսկ ինքը Ռոբին ստիպել է խոստանալ, որ հանդիպում չփնտրի:

–Երևի զանգեմ,– հերթական անգամ մտածեց Անետը՝ այս անգամ ավելի լուրջ դրդապատճառ ունենալով,– թղթապանակները կփոխանցեմ, ու եթե հարմար լինի՝ զգալ կտամ, որ Սոնայի մասին ամեն ինչ գիտեմ, բայց և որոշմանս մեջ ոչինչ չի փոխվել...

Հեռախոսը վերցրեց ու զանգեց Ռոբին: Մեկ, երկու, երեք, զանգերը գնում էին, պատասխան չկար: Անետն անջատեց հեռախոսը ու նայեց ժամացույցին: Ռոբի ազատ օրն էլ էր:

– Մի բան եղած չլինի՞,– անհանգստացավ Անետը՝ փորձելով թղթապանակներն ու գրքերը մի պարկի մեջ տեղավորել:

Մի քանի րոպե չանցած՝ հեռախոսի ձայնը լսվեց: Անետը միանգամից պատասխանեց. Ռոբն էր:

– Անե՛տ, աչքերիս չհավատացի, երբ տեսա, որ զանգել ես: Պատշգամբում էի, հեռախոսը սենյակում էր մնացել: Ես գիտեի, որ կզանգես, կմտածես, կհասկանաս, թե ինչ ես ուզում ու կզանգես:

– Իրականում ուրիշ բանի համար եմ զանգել: Ինձ մոտ մի քանի գիրք ու թղթապանակ ունես: Մտածեցի՝ գուցե պետք գան, կարող ես վերցնել:

Ռոբը լռեց: Վայրկյանների ընթացքում հույս էր արթնացել, որ ամեն ինչ փոխվելու է, բայց նորից հույսերը հօդս ցնդեցին: Ռոբը փրփուրներ էր ման գալիս՝ դրանցից կախվելու համար, բայց երբ ինքդ ես շնչահեղձ արել սերդ, դրան նորից շունչ տալն ավելի բարդ է, գրեթե անհնար:

– Ռո՛բ:

– Հա:

– Լսո՞ւմ ես:
– Լսում եմ: Երբ կարող եմ վերցնել:
– Երբ հարմար է:
– Հիմա կարո՞ղ ենք հանդիպել:
– Արի տան մոտ, մի պահ դուրս կգամ, կփոխանցեմ:
– Լավ, քիչ հետո կզանգեմ: Թե՞ էլի չի կարելի:
– Ընդամենը քո իրերն եմ քեզ տալու:
– Լավ, լավ:

Ռոբն արագ հագնվեց ու դուրս եկավ տնից: Ճիշտ է, գիտեր, որ Անետը համառ է, ու նրա հետ դժվար կլինի նորից խոսակցություն սկսելը, բայց հավատում էր, որ երբ այսքան օրեր անց իրար տեսնեն, սառույցը կհալվի... Կես ժամ անց Անետը հաղորդագրություն ստացավ. «Մեր սրճարանում եմ, քեզ եմ սպասում»:

– Ես չեմ գա, մի՛ սպասիր,– գրեց Անետը:
– Ես կսպասեմ, մի վերջին անգամ:

Պատասխան չեղավ...

Տաք շոկոլադը սառավ: Հետո ևս մեկը: Անետը գոլ վիճակում էր սիրում այս ըմպելիքը: Ռոբը պատվիրեց, որ մինչև աղջկա գալը շոկոլադը խմելու համար հարմար լինի: Բայց Անետը չկար... Մի քանի րոպե էլ նստեց Ռոբն ու դուրս եկավ սրճարանից: Հազիվ էր մի քանի քայլ արել, երբ Անետը կանգնեց իր դիմաց:

– Գիտեի, որ կգաս,– խաղաղված ժպտալով ասաց Ռոբը:
– Մեծ հաշվով տարբերություն չկար՝ դո՞ւ կգայիր սրանց հետևից, թե՞ ես կբերեի,– ասաց Անետը՝ ձեռքի պարկը մեկնելով Ռոբին,– կրիչդ էլ է էստեղ: Երևի ման եկած կլինես:
– Հա, փնտրում էի,– ասաց Ռոբը՝ Անետի ձեռքից պարկը վերցնելով:

Մատները նորից հպվեցին իրեն այդքա՛ն ծանոթ սառնությանը, որն այժմ հեռու ու խորթ էր թվում:

– Կգա՞ս նստենք մի քիչ,– համարձակվեց հարցնել Ռոբը:
– Չէ, ես գնամ:

Անետը շրջվեց, բայց չհասցրեց քայլ անել: Ռոբը ձեռքից բռնեց ու նորից հետ շրջեց աղջկան:

– Թող գնամ, էնպես մի արա, որ զղջամ գալուս համար:
– Հակառակը, ուզում եմ գալուցդ մի օգուտ լինի... Արի ներս մտնենք:

– Չեմ ուզում, Ռո՛բ, մի՛ ստիպիր:

– Ես եմ ուզում, գոնե մեքենան նստենք, քեզ տուն կտանեմ: Չեմ ստիպում, խնդրում եմ:

Անետը հանձնվեց՝ գլխով համաձայնության նշան անելով: Քայլեցին դեպի մեքենան: Մեքենան նստելուն պես Ռոբը միանգամից պատուհանն իջեցրեց: Օդը չէր հերիքում: Շատ լարված էր ու անհանգիստ, Անետն էլ իրեն լավ չէր զգում: Փորձում էր Ռոբին չնայել: Չգիտեր՝ դա բարկությունի՞ց է, վիրավորանքի՞ց, թե՞ վախից, որ կարող էր ամեն ինչ մոռանալ ու գրկել նրան, ինչպես տասնյակ անգամներ էր եղել: Հանկարծ հիշեց, որ երբ առաջին անգամ էր նստել Ռոբի մեքենան, նորից վախենում էր նրա կողմը նայել: Ինչքա՜ն բան էր փոխվել այս տարիների ընթացքում, նրան չնայելու ինչքա՜ն պատճառներ ու հանգամանքներ էին փոխվել: Մեքենան արագ սլանում էր: Անետը նայում էր ուղիղ դիմացը, բայց Ռոբի լարվածությունը չնկատել չէր կարողանում: Ձեռքերն այնքան ամուր էին բռնել ղեկը, որ թվում էր՝ ուր որ է այն հարյուր կտոր են անելու...

Քաղաքը կորել էր մառախուղի մեջ: Մի քանի օր է, ինչ ամեն ինչ մշուշոտ էր՝ հենց Ռոբի ու Անետի հարաբերությունների նման: Լռությունը գնալով ավելի ճնշող էր դառնում: Երկուսն էլ մեկ ուզում էին այն խախտել, մեկ վախենում էին, որ նորից իրար չպիտի հասկանան: Մի քանի րոպե ևս լռելուց հետո Ռոբը արգելակեց մեքենան ու մարմնով թեքվելով դեպի Անետը՝ ասաց նրան.

– Ա՛ն, էսպես էլ չի կարող շարունակվել: Անհնար է, էլ չեմ դիմանում: Ինչքա՜ն եմ քեզ ցավեցրել, որ ինձ էսպես տանջում ես:

Անետի դեմքին մի հեգնական ժպիտ հայտնվեց:

– Ես չեմ ընտրել էս ճանապարհը: Դու՛ ես ընտրել:

– Մեղավոր եմ, Ա՛ն, գիտեմ, հասկացել եմ սխալներս ու շատ եմ ափսոսում: Ամեն վայրկյան մտքիս մեջ ես: Չեմ կարողանում աշխատել, քնել, հանգստանալ: Ամենուր դու ես: Սենյակիս մեջ չեմ կարողանում մնալ: Պատերը ոնց որ անունդ տան: Դուրս եմ գալիս, էլի տեղս չեմ գտնում: Ա՛ն, խնդրում եմ, ինչ պետք էր, հասկացել եմ, մի բան էլ ավել: Էլ դիմանալու չէ:

– Քեզ թվում է՝ միտումնավո՞ր եմ տանջում կամ պատժում քեզ: Չկա նման բան:

– Չգիտեմ՝ ինչ է թվում, միայն մի բան գիտեմ, որ էսպես էլ հնարավոր չէ: Պիտի վերջ դնենք էս ամեն ինչին: Արի նորից սկսենք: Երդվում եմ՝ հաստատ չես զղջա հնարավորություն տալու համար:

– Ես չեմ ուզում նորից սկսել, Ռոբ: Վերքերով նորից չեն սկսում: Դրանք անընդհատ պիտի հիշեցնեն իրենց մասին:

– Ժամանակի հետ կկարգավորվի ամեն ինչ, հետո չենք էլ հիշի էս օրերը:

– Դու գուցե կկարողանաս, քեզ համար էդպես հեշտ կլինի, բայց ես երբեք չեմ մոռանա այն, ինչն ինձ երկար ժամանակ ցավեցրել է: Ինձ թվում է՝ մի ամբողջ հավերժություն քո կողքին եմ եղել, բայց չես նկատել ինձ: Զգում էի, որ կան բաներ, որոնց դեմ պայքարելն անհնար է, բայց պարանի նման ձգում էի օրերը, որ չհասնեին վերջինին: Թուլություններիս դեմ պայքարել չէի կարողանում: Թուլությունս դու էիր... Բայց դու ինձ համար չէիր. գնացողները երբեք էլ մերը չեն լինում: Ուղղակի սա միշտ ուշ ենք հասկանում:

– Գժվեցի՞ր: Ե՞ս եմ գնացել:

– Հա, դու կողքիս էիր, բայց մտքերով միշտ հեռու էիր ինձնից...

– Ախր...

– Սխա՛լ եմ

– Չէ՛, Անե՛տ, էդպես չէ, էդպես չէր... Ուղղակի հիմարի պես քեզ կորցնելուց հետո նոր զգացի, որ ժամանակս ամենակարևորի վրա պիտի ծախսեի:

– Չէ՛, ուղղակի ուշ հասկացար, թե քեզ համար ամենակարևորը ինչն է: Ուզում եմ հիշել, թե ինչպես ամեն ինչ սկսվեց, ինչպես էս սերը գլուխ բերեցիր, ինչպես սիրտս քեզնով արեցիր ու քիչ-քիչ հեռացար ինձնից՝ կողքիս մնալով: Ուզում եմ հիշել, բայց թվում է՝ տասնյակ տարիներ են անցել...

– Ոչ մի բան էլ չի անցել: Ես սիրում եմ քեզ: Ինչքա՞ն ասեմ, որ հասկանաս:

– Ասել պետք չէ, ցույց տալ էր պետք... Չկարողացար:

– Ճիշտ ես, պիտի կարողանայի...

– Պիտի սրտիցդ գար իմ հանդեպ ուշադրությունը: Եթե չի գալիս, ուրեմն չկա, որովհետև սերը հոգատարություն է, ուշադրություն ու նվիրում: Սրանք կան՝ սերը կա, չկան, ուրեմն պետք չէ սիրուց խոսել:

– Էդպես մի ասա: Աշխարհի չափ սիրել եմ քեզ ու հիմա էլ եմ սիրում:

– Էդպես չի լինում, Ռոբ:

– Ա՛ն, խնդրում եմ... Կարոտդ շարվել է կոկորդիս ու առաջ չի գնում:

– Կարոտ չէ, կախվածությունը չես հաղթահարում:

– Դու ի՞նչ գիտես՝ ես ինչ եմ զգում: Մի վերջին հնարավորություն տուր, կփոխեմ ամեն ինչ, երդվում եմ:

– Մի՛ երդվիր: Գիտես, որ չեմ սիրում:

– Բա ի՞նչ անեմ: Գոնե ժամանակ առ ժամանակ հանդիպենք, խոսենք, տեսնեմ քեզ, հետո ժամանակը ցույց կտա, թե ինչ կլինի մեզ հետ, բայց էսպես կտրուկ մի ասա, թե բաժանվում ենք:

– Դու էս բառի՞ց ես վախենում: Ուրիշ բառ կարող ենք օգտագործել սա նկարագրելու համար, բայց իմաստը նույնն է լինելու: Մենք միասին էլ չենք կարող:

– Մի՛ ասա էսպես:

– Չենք կարող, հասկացի՛ր, չենք կա–րող:

Մեքենայի շարժիչը միացավ, անիվներն աջ ու ձախ պտտվեցին ու սլացան առաջ: Անետը միանգամից ցնցվեց.

– Ո՞ւր ես գնում, կանգնի՛ր:

– Կանգնել չկա:

– Չեմ ուզում ոչ մի տեղ գնալ, կանգնի՛ր:

– Ես եմ ուզում:

– Շատ արագ ես վարում, Ռո՛բ:

Ռոբը ոչինչ չէր լսում: Արագությունը թույլատրելիից շատ ավելի էր, իսկ դիմացը գրեթե ոչինչ չէր երևում. մառախուղը չէր ուզում նահանջել:

– Կանգնի՛ր, խնդրում եմ, վախենում եմ արագությունից:

– Միասին չենք կարող, հա՛, չենք կարո՞ղ: Հիմա կգնանք էնտեղ, որտեղ առաջին անգամ ասացիր, որ սիրում ես ինձ, էն տեղը, որտեղ ժամերով նստում էինք ու չէինք ուզում վեր կենալ: Կգնանք, կնայես աչքերիս մեջ ու կասես, որ էլ չես սիրում: Ես էլ քեզ հանգիստ կթողնեմ: Միայն էն դեպքում հեռու կմնամ քեզնից, երբ լսեմ, որ ինձ չես սիրում:

– Ռո՛բ, խնդրում եմ, պետք չէ, մի՛ տանջիր երկուսիս էլ: Առանց այն էլ հեշտ չէ:

– Քեզ համար լավ էլ հեշտ է, համակերպվել ես արդեն: Կասես, որ էլ չես սիրում, ու վերջ կդնենք էս ամեն ինչին:

– Ռո՛բ, արագ է շատ:

– Ասա՛, ասա՛, որ էլ չես սիրում:

– Ռո՛բ...

Իր բարձր ձայնից խլացած՝ Անետն աչքերն ամուր փակեց, ապա ճակատի հատվածում ուժեղ ցավ զգաց: Երբ ուշքի եկավ, շտապօգնության մեքենայի մեջ էր, ուժեղ գլխացավ ուներ: Փորձեց վեր կենալ, բայց չկարողացավ. պարանոցը ֆիքսել էին, որ չշարժի:

– Ի՞նչ է եղել,– հազիվ կարողացավ հարցնել բժշկին:

– Վթարի եք ենթարկվել, բայց վախենալու բան չկա: Ամենայն հավանականությամբ թեթև մնասվածք է: Երկու րոպեից հիվանդանոցում կլինենք, ու մանրամասն զննում կանցնեք: Ճակատից արյուն էր գալիս, բուժքույրն անընդհատ սրբում էր վերքը: Անետը հիշեց, որ մեքենայի մեջ էին, ու արագ ընթացքը միանգամից կանգ առավ:

– Ռոբը... Ռոբն ո՞ւր է:

– Ձեր հետի տղայի՞ն նկատի ունեք:

– Հա, ասեք, որ ամեն ինչ կարգին է նրա հետ:

– Գլուխն է մնասվել: Բոպեներ առաջ դեռ գիտակցության չէր եկել:

Անետն աչքերն ամուր փակեց: Ասես երազի մեջ լիներ, ուզում էր արթնանալ ու տեսնել, որ այս ամենն իր հետ չի կատարվում, բայց գիտեր, որ այդպես չէ: Աչքից արցունք հոսեց... Մեքենան կանգ առավ:

***

Լուսավոր հիվանդասենյակում մի մահճակալ էր դրված, կողքին՝ մի աթոռ: Քիչ հեռու մի մոխրագույն պահարան կար, վերևում՝ հեռուստացույց: Ռոբը հենց նոր էր աչքերը բացել ու շուրջն էր ուսումնասիրում: Երբ հիշեց, թե ինչ է եղել, աչքերը նորից փակեց, հետո փորձեց վեր կենալ, բայց զգաց, որ շատ թույլ է: Նույն պահին լսեց, որ պատուհանն են թակում: Գլուխը աջ դարձրեց. Անետն էր: Աղջիկը ձգվեց վեր ու հրելով բացեց վերևի փոքրիկ պատուհանը: Պատուհանից մաքուր օդը ներս եկավ՝ քիչ-քիչ սթափեցնելով Ռոբին: Անետի ձայնն էլ օդի հետ ներս լցվեց.

– Ռո՛բ, ո՞նց ես:

– Չգիտեմ, դու լա՞վ ես: Դա է կարևորը:

– Ես լավ եմ:

– Ճակատդ ի՞նչ է եղել:

– Դատարկ բան է, քերծվել է մի թեթև:

– Ինչի՞ ներս չես գալիս:

– Համավարակի պատճառով հիվանդասենյակ ոչ ոքի չեն թողնում, բայց սպասեցի էնքան, մինչև արթնանաս:

– Դե տուն գնա, հերիք է: Ես լավ եմ: Երբ դուրս գրվեմ, կխոսենք:

– Դժվար թե շուտ դուրս գրեն:

– Ինչի՞:

– Գլուխդ ես մնասել:

– Լուրջ բան չկա, ես կխոսեմ բժշկի հետ, ամենաուշը վաղը կգամ հետևիցդ:

– Ռո՛բ...

– Կարևորը, որ քեզ ոչինչ չի եղել, թե չէ ինձ երբեք չէի ների... Կներես, Ա՛ն, կներես, որ իմ պատճառով անցնում ես էս ամենի միջով:

– Ռո՛բ, քեզ հանգիստ է պետք, ուղեղդ մի՛ ծանրաբեռնիր: Աշխատիր քնել, որ շուտ կազդուրվես: Կուզե՞ս՝ կանչեմ բուժքրոջը՝ հանգստացնող ներարկի:

– Չէ՛, ուզում եմ արթուն մնալ: Դու գնա տուն, քեզ ավելի շատ է հանգստանալ պետք:

– Չէ՛, էստեղ կմնամ: Բա որ հանկարծ մի բան պետք լինի:

– Ես հիվանդանոցում եմ՝ բժիշկների հսկողության տակ: Ինչ էլ որ պետք լինի, նրանց եմ դիմելու: Դու գնա տուն, էդպես ավելի հանգիստ կլինեմ:

Անետը համոզվեց, ձեռքը վերև հանեց, մատները թեթև շարժելով հաջողություն մաղթեց ու գնաց պատուհանի մոտից:

Ռոբը մնաց մենակ: Գլուխն անտանելի ցավում էր, անգամ աչքերն աջ ու ձախ դարձնելիս գլխացավն ուժեղանում էր, բայց բուժքրոջը դեռ չէր ուզում կանչել, որովհետև մտածել էր ուզում: Եղածն այնքան անսպասելի էր, որքան Անետի վերաբերմունքը որպեսներ առաջ: Ռոբն ուզում էր հասկանալ՝ դա աղջկա սե՞ռն էր, որ չէր կարողանում ցույց չտալ, թե՞ ուղղակի վախն էր, որ կարող էր ամեն ինչ ավելի վատ լինել:

***

Ահագին ուշ էր, երբ Անետը տուն մտավ: Ծնողները հյուրասենյակում նրան էին սպասում: Ասել էր, որ ընկերուհիներից մեկի ծննդյան խնջույքին է մասնակցում, բայց այժմ ստիպված էր պատմել ամեն

ինչ, որովհետև ճակատի սպեղանին տեսնելուն պես նրան միանգամից հարցախեղդ արեցին: Փորձեց մի քանի րոպեում պատմել կատարվածը, կցկտուր պատասխանել հարցերին ու անմիջապես գնաց իր սենյակ: Օդի պես մենակության կարիք ուներ: Պառկելով անկողնուն՝ հիշեց իր ու Ռոբի ծանր խոսակցությունը, մեքենայի արագությունը, վթարը, իրեն՝ Ռոբի հիվանդասենյակի պատուհանի մոտ կանգնած: Հիշեց ու թվաց, թե այսքանը մի քանի օրում է տեղի ունեցել, մինչդեռ ընդամենը ժամեր առաջ էին մեքենայի մեջ: Տարօրինակ զգացողություն ուներ Անետը: Ասես տնից դուրս էր եկել այլ ուղեղով, բայց հետ էր եկել միանգամայն այլ մարդ դարձած: Դժվարությամբ, բայց ինքն իրեն խոստովանեց, որ Ռոբի հանդեպ այլևս չարացած չէ: Ընդունում էր, որ վիրավորանքն էլ այլևս առաջվա նման շատ չէ, բայց դժվարանում էր հավատալ, որ սա վթարի ու Ռոբին ֆիզիկապես կորցնելու վախից եղավ, մինչդեռ շատ լավ գիտակցում էր, որ իրեն կորցնում էր միայն այն մտքից, որ Ռոբի հետ կարող է ինչ-որ բան լինել: Այժմ Անետն այլ հայացքով էր նայում կյանքին: Այո՛, մի վայրկյանում կարող է ամեն ինչ փոխվել... Մի վայրկյանում սիրահարվում են, ու կյանքը նոր գույներ է ստանում, մի վայրկյանում սեր են կորցնում, ու աշխարհն ամբողջովին փոխվում է: Մի վայրկյանում մայրանում են՝ համոզվելով, որ բոլոր զգացողությունները ոչինչ են փոքրիկին առաջին անգամ գրկելիս ունեցած ապրումների դիմաց: Մի վայրկյանում դժբախտ պատահար է լինում, որից հետո կյանքին ուրիշ աչքերով են նայում, որովհետև հասկանում են, որ կարող էին այլևս երբեք աչքերը չբացել...

– Բա որ կորցնեի քեզ... Ես չէի դիմանա...,– շշնջաց Անետը՝ բարձով երեսը ծածկելով:

Լուսինն ուր որ է անհետանալու էր՝ տեղը զիջելով արեգակին: Հիվանդանոցում խաղաղ լռություն էր, գուցե ոմանք արթուն էին, բայց միջանցքներում շարժ չկար: Ասես ամբողջ քաղաքն էր նույն լռության մեջ թաղված:

– Արագ ես վարում, Ռո՛բ: Կա՛նգ առ, Ռո՛բ...

Ռոբը ցնցվեց ու կտրուկ բացեց աչքերը: Մղձավանջ էր, իրականության պատառիկ, որ թվում էր՝ դեռ երկար ժամանակ հանգիստ չի տալու իրեն: Փորձեց վեր կենալ, բայց զգաց, որ դեռ թույլ է: Հեռախոսը վերցրեց ու զանգեց ընկերոջը, որ այս հիվանդանոցում բժիշկ էր:

– Ա՛րտ ջան, բարի լույս, հո քնած չէի՞ր:

– Չէ՛, հերթապահ էի գիշերը:

– Ինձ պիտիր օգնես, ուզում եմ հենց հիմա դուրս գրվել, էլ չեմ կարող էստեղ մնալ:

– Գժվեցի՞ր: Դեռ հետազոտությունների պատասխաններն էլ պատրաստ չեն:

– Գիտեմ, բայց լուրջ բան չի լինի: Դուրս գրվեմ, երբ պատասխանները լինեն, կգամ կխոսենք:

– Շատ թույլ ես, Ռո՛բ:

– Հավատա, պառկելով ավելի կթուլանամ: Պիտի Անետին տեսնեմ:

– Ինձ թվում է՝ քայլել էլ չես կարողանա:

– Կկարողանամ, հանգիստ եղիր:

– Ի՞նչ ասեմ, սպասիր, կես ժամից կգամ փաստաթղթերը կկարգավորենք:

– Այ ապրես, կսպասեմ:

***

Մոտ մեկ ժամ չանցած՝ Ռոբն արդեն տաքսիի մեջ էր: Նստելուն պես վարորդին ասաց Անետի տան հասցեն: Ուզում էր վայրկյան առաջ տեսնել աղջկան: Ոտպեներ անց մեքենան կանգ առավ ասված հասցեում: Ռոբը դժվարությամբ իջավ մեքենայից ու սեղմեց զանգի կոճակը: Դուռը բացեց Անետի մայրը, որը շատ անհանգստացավ՝ տղայի գլխի վիրակապը տեսնելով:

– Բարև Ձեզ,– ասաց Ռոբը՝ նկատելով կնոջ անհանգստությունը,– ինձ հետ ամեն ինչ կարգին է, ուզում եմ Անետին տեսնել:

– Բայց հիվանդանոցում չպիտի՞ լինեիր,– զարմացած հարցրեց Անետի մայրը:

– Դուրս գրեցին, կարո՞ղ եմ Ձեր աղջկան տեսնել:

– Անետը դեռ չի արթնացել: Շատ հոգնած էր:

– Կարելի՞ է նրա սենյակ բարձրանալ: Խոստանում եմ՝ չեմ արթնացնի: Կնստեմ, մինչև աչքերը բացի:

Կինը ժպիտը դեմքին, առանց մի բառ ասելու դուռը լայն բացեց, որ Ռոբը ներս մտնի ու ուղեկցեց տղային Անետի սենյակ:

Ռոբը զգուշությամբ դուռը բացեց, սկզբում՝ շատ փոքր, որ համոզվի՝ քնած է աղջիկը, հետո՝ ավելի լայն, որ կարողանա ներս մտնել: Ոտնաթաթերի վրա առաջ եկավ ու կռացավ Անետի մահճակալի կողքին: Աղջիկն այնպես խաղաղ էր քնած, ասես նախորդ օրն իր հետ ոչինչ չէր պատահել ու, առհասարակ, երբեք ոչ մի դժվարության չէր հանդիպել: Ռոբն ուշադիր նայում էր իր սիրած աղջկա երեսին ու ինքն իրեն հարց տալիս, թե ինչպես կարող էր թեկուզ մեկ անգամ ցավեցնել նրան: Մինչդեռ ցավեցրել էր ու շատ... Նայում էր Անետին ու հասկանում, որ ոչ մի օր չի կարող ապրել առանց նրա ու որ ամեն ինչի պատրաստ է՝ ամեն օր այս խաղաղ քունը հսկելու համար: Զգուշությամբ բռնեց աղջկա ձեռքը: Բարեբախտաբար, Անետը ոչինչ չզգաց: Շոյեց ձեռքը, համբուրեց, ամուր բռնեց ու գլուխը դրեց փափուկ անկողնուն: Չհասկացավ էլ, թե ինչպես, բայց բոպեների ընթացքում այդպես հատակին կիսանստած էլ քուն մտավ:

Երբ Անետն աչքերը բացեց, արևն արդեն շերտավարագույրից ներս էր ընկել: Դժվարությամբ արթնացավ ու զգաց, որ մի բան այն չէ: Գլուխը վերև հանեց, տեսավ Ռոբին ու աչքերը զարմանքից խոշորացան: Աղջիկը նայեց նրան, նորից հիշեց կատարվածն ու գլուխը դարձրեց դեպի պատուհանը: Անետի գլխում իսկական քաոս էր: Չէր զղջում իր որոշման համար, գիտեր, որ դժվար է լինելու, բայց հիմա՝ այս պատահարից հետո, վստահ էր, որ Ռոբն իրեն հանգիստ չի թողնի: Նայում էր Ռոբին, ու աչքերի առաջ իրենց գեղեցիկ անցյալից տեսարաններ էին հայտնվում: Ահա իրենց առաջին հանդիպումը՝ երթուղայինի աստիճաններին, հետո՝ նորաձևության տանը: Ահա Անետի շփոթված հայացքը, երբ Ռոբը տեսավ իր այցեքարտն աղջկա ձեռքին: Հետո հիշեց,

թե ինչպես քորոցով մատը ծակեց, ինչպես խցանման մեջ հայտնվեցին, Ռոբն իրեն հերթական անգամ շփոթեցրեց, ինչպես բրոշն ընկավ սրահի հատակին, ու միասին գտան այն: Հիշեց, թե ինչպես առաջին անգամ Ռոբին ասաց, որ ինքն էլ նրա նկատմամբ անտարբեր չէ, այն տեղում, ուր գնում էին երեկ վթարի ենթարկվելիս: Մի կամրջի վրա էին, երբ Անետը, ի զարմանս Ռոբի, սկսեց խոսել իր զգացմունքների մասին: Անետը հիշեց Ռոբի աչքերի փայլն այդ պահին, նրա գոհունակ ժպիտը, ու սիրտը ցավ զգաց... Հետո աչքերի առջևով վազեցին իրենց հանդիպումները, մոտոցիկլետով զբոսանքները, այն լուսանկարները, որոնք անում էր Ռոբը, իրենց ընդմիջումները, որոնցից հետո ինքը միշտ ուշացած էր աշխատանքի հասնում, որովհետև մեկ ժամը շատ քիչ էր՝ Ռոբից կարոտն առնելու համար: Գլուխն աջ ու ձախ տարուբերեց, ձեռքը զգուշությամբ հանեց վերև ու դրեց ճակատին: Աչքն ընկավ դաստակի դաջվածքին: Միանգամից հիշեց, թե ինչպես Ռոբին դժվարությամբ համոզեց, ու գնացին իրենց դաստակներին դաջվածք անելու: Ինչ խոսք, ցավից վախենում էր, բայց ցանկությունը վախից մեծ էր, ուզում էր իրենց կապող հնարավորինս շատ խորհրդանիշներ ունենալ: Ձեռքը մոտեցրեց ու նայեց դաստակին: Անվերջության նշանը հիշեցրեց իր ապրումները դաջվածքն անելու ժամանակ: Հիշեցրեց նաև Ռոբի հանգստացնող խոսքերն ու այն, թե ինչպես էր իր ձեռքը բռնել, որ չվախենա: Անետն իրոք ուժ էր ստացել ու շշնջացել Ռոբի ականջին.

– Ձեռքդ բռնած աշխարհի ծայրն էլ կգնամ... Ու քեզ հետ բոլոր ցավերն ավելի մեղմ են թվում, բոլոր դժվարությունները՝ հաղթահարելի:

«Աստվա՛ծ իմ, մի՞թե էս մեծ սիրուց ոչինչ չի մնացել: Հնարավոր չէ, էսպես չէր կարող լինել: Ինչի՞ է վերածվել իմ զգացած մեծ սերը, որ չեմ կարողանում հասկանալ, թե ինչ եմ զգում Ռոբի հանդեպ: Մի՞թե վիրավորանքը կարող էր էսքան խլացնել զգացմունքներս»,– ինքնիրեն մտածելով՝ Անետը ձեռքը տարավ դեպի այտը՝ արցունքները սրբելու: Երբ մատները Ռոբի ձեռքից դուրս սահեցին, վերջինս վայրկյանական գլուխը վերև հանեց:

– Ո՞նց ես քեզ զգում,– տեսնելով, որ Անետն արթնացել է՝ միանգամից հարցրեց Ռոբը:

– Լավ եմ, բայց դու էստեղ ի՞նչ ես անում:

– Եկել եմ քեզ տեսնելու:

– Հա, բայց հիվանդանոցում պիտի լինեիր, վիրակապդ արյունոտվել է:

– Դատարկ բան է, ինձ դուրս են գրել արդեն: Քիչ հետո կգնամ, կփոխեն վիրակապը:

– Հետազոտությունների պատասխանները պատրաստ էին:

– Դեռ չէ:

– Քեզ հաստատ դուրս են գրել:

– Լավ էլի, դու ասա՝ ոնց քնեցիր, գոնե մի քիչ հանգստացա՞ր:

– Հա...

– Էնքան խաղաղ էիր քնած: Ցանկացած մեկին կսպանեի, եթե քունդ խանգարվեր:

Անետի աչքից նորից արցունք հոսեց:

– Ինչի՞ ես լաց լինում:

Աղջիկն ուսերը թոթվեց:

– Չեմ ուզում, որ աչքերդ թրջվեն: Էնքա՜ն բան չեմ ուզել, բայց թույլ եմ տվել, որ տեղի ունենա: Սրանից հետո ամեն ինչ ուրիշ է լինելու: Եղածները հերիք են արդեն: Քնած ժամանակ ոնց որ հրեշտակ լինես: Դու պիտի միշտ իմ կողքին լինես: Ես չգիտեմ, թե ինչպես եմ առանց գիտակցելու քեզ էսքան ցավ պատճառել, դու էլ որ ներես, ինքս ինձ ներել չեմ կարողանալու, անգամ եթե հաշտվենք: Ինձ կներեմ միայն էն ժամանակ, երբ ինքդ ասես, որ իմ կողքին քեզ երջանիկ ես զգում:

– Ռո՛ք... Կլինի՞ գնաս, հետո կխոսենք:

– Չէ՛, ինչ ասես կանեմ, մենակ ոչ դա: Անե՛տ, գուցե սա նշան էր, որ չպիտի թողնենք իրար: Մի հնարավորություն տուր երկուսիս: Սխալներ իրար հետևից ես եմ արել, բայց ամենամեծ սխալը դու՛ թույլ կտաս, եթե երկուսիս մի հնարավորություն չտաս: Շատ ենք խոսել, նույն բառերը չեմ ուզում ասել: Միայն գիտեմ, որ ոչինչ պատահական չի լինում: Պիտի բաժանվեինք, որ հասկանայի, թե ով ես ինձ համար, պիտի հեռու լինեի քեզնից, որ զգայի, թե ինչքան կարևոր ես...

– Պարտադիր պիտի էսպե՞ս լիներ, որ հասկանայիր:

– Չգիտեմ... Հիմա քեզ ավելի շատ եմ սիրում, քան առաջ: Ոչ մի րոպե չեմ ուզում ինձնից հեռու լինես, ինչքան եղել ես, հերիք է: Նորից եմ սիրահարվել քեզ, Անե՛տ, նորից ու ավելի թունդ...

Անետի աչքերը նորից թրջվեցին:

Ռոբը վեր կացավ ու սկսեց անհանգիստ քայլել սենյակում: Մի քանի րոպե լռություն տիրեց: Ծանր լռություն էր, ինչպիսին լինում է ճակատագրական որոշումներից առաջ...

– Ես ավելացնելու բան չունեմ,– մոտեցավ Ռոբն Անետին,– ասա «գնա՛», ու կգնամ, էլ երբեք ինձ չես տեսնի: Կհամոզվեմ, որ չես սիրում: Հակառակ դեպքում չեն թողնում սիրած մարդուն: Գուցե ինքս եմ քեզ հասցրել նրան, որ դադարել ես սիրել, բայց էական չէ: Սերը մնալն է ու պայքարելը, անգամ եթե սիրտդ բղավում է, որ փախչես որքան հնարավոր է հեռու:

– Դրա համար էլ տարիներ առաջ սիրտդ բղավում էր, որ մնաս, բայց դու գնացիր Սոնայից՝ սիրելով հանդերձ...

Ռոբի գլխին ասես սառը ջուր լցրին: Զարմանքից քարացավ, չգիտեր, թե ինչ ասեր:

– Ես գիտեմ ամեն ինչ, Սոնան է ինձ պատմել:

– Ո՞ւ:

– Թաքցնելու ինչ կար, որ լռում էիր: Ավելի լավ չէ՞ր լինի խոսեիր՝ կասկածների առիթ տալու փոխարեն:

– Իհարկե լավ կլիներ, բայց կհավատայի՞ր ինձ, պատմություն չէի՞ր սարքի: Ես վստահ էի, որ նորից վեճ կլիներ այն բանի համար, որ տարիներ առաջ սիրածս աղջկա աչքերն եմ վիրահատելու: Դրա համար էլ ոչինչ չասացի քեզ:

Անետը գլուխը կախեց:

– Դու էլ ես վստահ, չէ՞, հաստատ նեղանալու էիր: Միշտ էնքան կասկածամիտ ես եղել, որ ավելի շատ վիճել ենք, քան ապրել:

– Ուրեմն ի՞նձ ես մեղադրում:

– Չէ, բացարձակ:

– Սոնան շատ լավ աղջիկ է, ամեն ինչ արեց, որ ճիշտն իմանամ, որ անտեղի կասկածներ չունենամ: Ու օգնեց էնքանով, որ քեզ ավելի լավ ճանաչեմ, ճանաչեմ այլ կողմերից ևս: Դու իրոք մեծ սիրտ ունես, շատ ճիշտ ես վարվել:

– Հիմա դա՞ պիտի քննարկենք:

– Չէ՞, ուղղակի ուզում էի իմանաս, որ գիտեմ արդեն: Ու տեղին էր ասելս, որովհետև գնացողներն ավելի քիչ չեն սիրում, քան մնացողները: Սիրելով ես թողել նրան, չէ՞:

– Ես անցյալից չեմ սիրում խոսել, Անե՛տ, քեզ էլ խորհուրդ կտամ չանդրադառնալ էս թեմային: Ամեն ինչ վաղուց անցել է, ու իմաստ չկա դրա մասին խոսելու մեջ: Դեռ երկա՛ր ես մտածելու:

Անետը իրոք չգիտեր, թե ինչ ասեր: Նրա մեջ ասես երկու մարդ կար, որ պայքարում էին իրար դեմ: Մեկն ուզում էր հեռանալ Ռոբից, որովհետև ամիսներ շարունակ տանջվել էր նրա պատճառով, մյուսն ուզում էր նորից փորձել, որովհետև այսօրը կարող էր չգալ, կարող էին հիմա դեմ դիմաց նստած չլինել, ու վերջապես, Անետն ազդվել էր Ինեսի ասածներից, իր մեղքի բաժինն էլ էր արդեն տեսնում կատարվածի մեջ, բայց, իհարկե, հպարտությունն ու համառությունը չէին ուզում զիջել իրենց դիրքերը, ինչն ամենասխալն է հարաբերություններում:

«Իսկ եթե ասեմ «մի՛ գնա» ու ժամանակ անց հասկանամ, որ ամեն ինչ նույնն է: Որքա՞ն կզղջամ այդ հրաման-խնդրանքն ասելու համար: Այդ մի բառի համար, որի մեջ այնքա՞ն հույս ու սեր կա... Իսկ եթե ասեմ «Գնա՛» ու հետո զղջամ՝ նրան բաց թողնելուս համար. չէ՞ որ այդ բառով համաձայնությունս կտամ, որ վերջ դնենք ամեն ինչին: Ու այդ երեք տառի մեջ ապագա չկա, հայացքներ չկան, ջերմություն չկա: Չէ՛, պիտի էնպես անեմ, որ հետո ինքս ինձ չմեղադրեմ՝ ինչ-որ բան չստացվելու համար: Պիտի մինչև վերջ անկեղծ լինեմ հետը: Հպարտության ժամանակը չէ»,– մտքում ասաց Անետն ու Ռոբին խնդրեց դուրս գալ սենյակից՝ ասելով, որ քայլել է ուզում ու մի քանի րոպեից կմիանա նրան:

Դրսում հաճելի եղանակ էր: Օդի մեջ դուրեկան սառնություն կար, իսկ նախորդ օրերի մառախուղը դեռ չէր անցել: Հեռուն գրեթե չէր երևում: Քայլում էին լուռ, առանց որևէ բառ ասելու, բայց մի տարօրինակ բան կար այդ լռության մեջ: Երկար դադարից հետո սա առաջին անգամն էր, որ առանց վիճելու էին քայլում... Ու հետաքրքիրն այն էր, որ նրանցից և ոչ մեկը չէր ձանձրանում այդ լռությունից: Երկուսի գլխում էլ խառնաշփոթ էր, տասնյակ հարցեր: Երկուսն էլ չէին ուզում խախտել այս լռությունը, որը հանդգնաբար խախտվում էր միայն ոտքերի տակ ընկնող տերևների խշշոցից ու մեքենաների ձայնից: Ռոբը քայլերն ուղղեց դեպի այն տեղը, ուր գնում էին երեկ՝ վթարից առաջ: Անետը զգաց, թե ուր է տանում ճանապարհը, ու չհակաճառեց: Կամրջի վրա անցուդարձ գրեթե չկար: Սա այն վայրն էր, որտեղ Անետն առաջին անգամ

Ռոբին ասել էր իր զգացմունքների մասին: Ռոբը պատանեկան տարիներին ունեցած աստղադիտակով հրավիրել էր աստղերին նայելու, հետո հերթական անգամ խոսել էր Անետի հանդեպ ունեցած իր սիրուց, իսկ աղջիկը անկախ իրենից սկսել էր իր զգացածից խոսել: Սա Ռոբի կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն էր, իսկ Անետը ահագին ժամանակ ամաչելով էր հիշում այդ տեսարանը: Սկզբում հաճախակի էին գալիս այստեղ, հետո սկսեցին էլ չգալ: Երկուսի մտքում էլ այժմ այս տեսարանն էր: Ռոբը հիշեց, թե ինչպես էր Անետին ուրախությունից գրկել, ու պտտվում էին՝ առանց կանգ առնելու:

– Հիշո՞ւմ ես՝ ինչքան երջանիկ ենք եղել էստեղ,– հարցրեց հանկարծ Ռոբը:

Անետը գլխով արեց:

– Իսկ հիշո՞ւմ ես, որ մի անգամ կամրջից իջնելիս սայթաքեցիր ու ընկար ուղիղ գրկիս մեջ:

Անետը ժպտաց:

– Հիշո՞ւմ ես, թե ոնց էինք անձրևի տակ էստեղ ժամերով կանգնում:

– Հիշում եմ...

– Բա որ ասացիր, որ սիրում ես ինձ...

Անետը նորից գլխով արեց:

– Ի՞նչ փոխվեց, Ա՞ն, էլ չե՞ս սիրում:

– Սիրում եմ...

Աշխարհը նորից նվիրեցին Ռոբին, գուցե սա ավելի մեծ երջանկություն էր, քան այն, որը զգացել էր Անետի առաջին խոստովանության ժամանակ: Սկսեց անկանոն շնչել, որովհետև վերջին շաբաթների ընթացքում սա նրան տանջող առաջին հարցն էր, որի պատասխանը ստացավ: Մեծ հաշվով, Անետն էլ էր նոր հասկացել, որ իր սերը չի անցել և ոչ մի օր: Նախորդ օրվա դեպքերը ստիպեցին, որ տեսնի ու զգա այն, ինչը ամիսներ շարունակ կապվածություն էր համարում:

– Բա՞:

– Նորից չեմ ուզում ասել...

– Ե՞ս:

– Գուցե ես էլ...

Ռոբը մի պահ զարմացավ: Առաջին անգամ էր Անետը նման բան ասում:

– Դու՝ անկախ քեզնից, ես՝ քո պատճառով,– շարունակեց Անետը,– արդյունքում կորցրինք այն, ինչը չպիտի կորցնեինք...

– Դեռ չենք կորցրել բայց:

– Սա կորցնել չէ՞ր:

Անետը մի քանի վայրկյան լռեց, հայացքը գցեց դեպի հեռուն: Քաղաքը նորից մառախուղի մեջ էր, տեսարանը գրեթե չէր երևում:

– Ես երջանիկ եմ եղել քո կողքին,– հազիվ լսելի ձայնով ասաց Անետը,– մեր հանդիպման առաջին իսկ օրվանից սկսած: Դրա համար էլ շատ դժվար ու ցավոտ էր գիտակցելը, որ էլ երջանիկ չեմ: Ես ամեն օր հիշել եմ մեզ, մեր խոստովանությունները, գրկախառնությունները, էն մեծ սերը, որով փորձում էի ապրել, երբ այլևս չէի զգում դա: Ու հիշելով ավելի էի տանջվում, որովհետև կարոտից ու ափսոսանքից բացի ինձ ոչինչ չէին տալիս դրանք: Ես հաճախ էի հիշում մեր հանդիպումները, որոնցից հետո տուն գնալիս միշտ ժպտալով էի քայլում, հա, հա, ժպտալով: Ու շատերն ինձ ու ժպիտիս էին նայում, երևի մտածում էին խնդիրներ ունեմ, բայց ես չէի կարողանում չժպտալ, որովհետև քեզ հետ անասելի հաճելի էր, ես ինձ երջանիկ էի զգում. դու էիր ինձ երջանկացնում: Ամեն ինչ էնքան սիրուն էր, երբեմն հավատալս չէր գալիս, որ ինձ հետ է կատարվում: Ինձ համար էնքան թանկ էր մեր անցյալը, մեր սիրո պատմությունը, բոլոր հուշերը՝ մեկ առ մեկ վերցրած: Էնքան կարևոր էր քեզ համար կարևոր լինելս, դա զգալը, տեսնելը: Կարևոր էր նաև երբեք էս օրվան չհասնելը, բայց չկարողացանք, ինչի մեջ ես էլ իմ մեղքի բաժինը ունեմ: Պիտի ասեի քեզ, որ վախենում եմ մեր սիրո սովորական դառնալուց, ասեի, որ չեմ ուզում հեռանանք իրարից՝ կողք կողքի մնալով: Պիտի խոսեի հետդ, գուցե ամեն ինչ ուրիշ լիներ:

– Եղածը եղած է, չէ՞: Ոչինչ չենք կարող անել, կարևորը՝ ընդունում ենք մեր սխալները, որոնք դժվար թե կրկնենք, եթե ճակատագիրը մեզ միասին լինելու ևս մեկ հնարավորություն տա:

– Ճակատագի՞րը:

– Հա՛, կամ դու, եթե իմ պարագայում երկուսն էլ դու չես...

Անետի դեմքին ժպիտ երևաց: Ռոբն էլ հուսադրվեց այդ ժպիտից:

– Վաղուց չէի տեսել ժպիտդ... Չգիտեի՞ր, որ իմ ճակատագիրն ես: Կողքիս կլինես, թե չէ, կապ չունի:

Անետը հայացքը գցեց Ռոբի դեմքին: Հանգիստ էր տղան, խաղաղված, մի տեսակ պատրաստ էր ցանկացած որոշում ընդունելու: Գլխի վիրակապն ավելի էր արյունոտվել, բայց ցավ բացարձակ չէր զգում: Անետը նկատեց, որ տղայի վերարկուի գրպանում ինչ-որ բան կար, որն անընդհատ ձեռքի մեջ էր: Ռոբն ասես կարդաց աղջկա մտքերը, գրպանից հանեց ձեռքն ու բացեց ափը:

– Նորից կոտրվել է, մնացել եմ առանց բրոշի, առանց դրա ինձ սովորական բժիշկ եմ զգում, իսկ երբ դա գրպանիս է ամրացրած, այլ զգացողություններ ունեմ,– ասաց Ռոբը՝ ուշադիր Անետի աչքերին նայելով, որոնց մեջ թախիծ կար, բայց ոչ վախ ու վիրավորանք:

– Հիշո՞ւմ ես՝ ոնց առաջին անգամ ամրացրիր բրոշը,– հարցրեց Ռոբը՝ դեպի հեռուն նայելով:

– Հա, գետնին ընկնելն էլ եմ հիշում:

– Իսկ հիշո՞ւմ ես, որ հետ եկա սրահ հեռախոսս վերցնելու, տեսա, որ այցեքարտս ձեռքիդ ժպտում ես:

– Հա, մի՛ հիշեցրու...

– Բա որ խցանման մեջ էինք, ու ուզում էիր հենց փողոցում իջնել մեքենայից:

– Որովհետև քեզ ճիշտ չէիր պահում:

– Դե, սիրահարվել էի արդեն... Բա որ քեզ առաջին անգամ ժամադրության հրավիրեցի:

– Հա, ու մոտոցիկլետով: Ահավոր էր:

– Ի՞նչն էր ահավոր, միտումնավոր էի դրանով եկել, որ չուզենայիր էլ, նստելիս ստիպված գրկեիր ինձ:

– Հենց դա էր ահավորը: Բա որ շենքերի տանիքներից մեկին նստած քնել էինք, ու երբ արթնացանք, ահագին ժամանակ էր անցել:

– Երանելի ժամանակներ էին, ուղղակի չէի գնահատում... Սա ամենամեծ սխալն է հարաբերություններում: Երբեք չգիտես, թե ո՛ր հանդիպումը կարող է վերջինը լինել, ո՛ր բառերը կարող են հնչել վերջին անգամ: Պիտի կարողանաս ապրել պահով ու գնահատել այն, որպեսզի օրերից մի օր չափսոսաս բաց թողած և ոչ մի վայրկյանի համար:

Անետը դանդաղ գլխով արեց: Ռոբի հետ լիովին համաձայն էր:

Երկնքից մի փաթիլ իջավ ու նստեց Անետի այտին, հետո՝ ևս մեկը: Ռոբը շրջվեց դեպի աղջիկն, ու ինքն էլ նկատեց ձյան իջնելը: Ձեռքը տարավ դեպի Անետի այտը՝ մեղմ շոյելով մաքրելով թաց փաթիլների հետքերը: Անետն աչքերը փակեց ու զգաց Ռոբի մատների արտասովոր ջերմությունը, որին, ինչ խոսք, կարոտել էր...

Սա տարվա առաջին ձյունն էր, որն ասես գալիս էր ամեն ինչ մաքրելու...

– ՎԵՐՋ –

Գոհար Նավասարդյան

ՍԻՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Խմբագիր, սրբագրիչ՝ Անսա Վարդանյան
Սրբագրիչ՝ Անահիտ Մկրտչյան
Համակարգչային էջադրող՝ Արփինե Գուլոյան
Կազմի ձևավորող՝ Վիկա Ավագյան

թվագրված է 1915-ին հետ կապված

Չափսը՝ 70 x 100 $^{1}/_{16}$: Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ 80 գ/քմ.:
Տպագրության եղանակը՝ օֆսեթ: